

Ա. Հարություն

Ա

ՄԵՐՄՈՒ Ա. Բ.



ՀԱՅՈՏԱԿԱՆ

Ա. Ա. Ա.

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗДН
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

891.59.09

11025

3-41

Зирнерупт, Г. Г., и.

История Франции.

192.

ԱՌԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

891.99.09

3-41

ՏԱՐԻ 1961 Տ ՀԱՐՄԱՆ

44095 A 31020

ԱՄԲԻԱՆԻ ՎՐԱ



ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ


1947

СУРЕН АРУТЮНЯН
На кафедре
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1947.

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Այս գրքում ամփոփված են 1943—1946 թ. թ. կարգացած հրապարակային զեկուցումները՝ նվիրված մի կողմից՝ Սայաթ-Նովային,
Ա. Խոահակյանին, Վ. Վաղարշյանին, Նրանց հոբելյանների առթիվ և
մյուս կողմից, սովետահայ թատրոնի և դրամատուրգիայի խնդիրներին:

Գահպանված են զեկուցումների ոճական առանձնահատկությունները:



ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

(Մահվան 150-ամյակի առիվ)

I

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՍՏԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովրդի ճակատագրեց ծնված՝ խմաստուն և դառն է եղել Սայաթ-Նովայի կյանքը։ Հայրենի հողին ձգառդ հայ ժողովրդի թափառական հատվածները Սայաթ-Նովային հայր են տվել Հալեպից, մայր են տվել Կովկասի հայությունից։

«Մերըս հավլաբարցի, հերըս հալաբլու», — ասել է նա իր մասին։

Կցկտուր է Սայաթ-Նովայի մեզ հասած կենսագրությունը։ Հարություն։ Սայադյանցը սկզբում ջուլհակ է, ասլա և ջուլհակ-մեքենավար։ Ճորա, ապա և ականջը սազին լսել է մազողի ոփթմիկ ձայնը և դեղդեղել իր հորինած երդը։ Մեր մատենադիրների պես Արութինը դավթարում փորագրում է բառեր, որոնց ամեն մեկի դիմաց դգացված էր, մի ժանրաքաշ իրականություն։ Խոսքը նրա համար դառնում է կախարդանք և իր սեփական հնչյունների հետ Արութինին մղում քաղաքի հրապարակ։ Արութինը դառնում է Սայաթ-Նովա, որ կնշանակի «երգասացությունների արքա»։ Արքա, որ սակայն չարունակում էր ստրուկ մնալ։ Մի կողմից մեջլիս ու քաղաք, մյուս կողմից բերդ ու տմոց։ Սայաթ-Նովան ընկնում է Հերակլ II թագավորի պալատը և դառնում պալատական երգիչ ու բանաստեղծ։ Այտեղ ու աղնվականության միջամայում նա ճամաչում է մի այլ աշխարհ։ Նրա ոիրո առարկան՝ Աննան պատկանելիս

է եղել այդ աշխարհին։ Սրան բանաստեղծը հռչակեց իր
մեծ սրտի սպեղանի՝ կյանքի հակասություններին ընդդեմ։
Բայց Սայաթ-Նովան սիրուց անբավարար մնաց։ Պալատի
ու ազնվական միաջավայրի և Սայաթ-Նովայի միջև եղած
կոնֆլիկտը խորանում է, և նրան հալածելով պալատից, ա-
ռաջարկում են ընդունել հոգեւոր կոչում։

Մնում է խարույկի վրա տառապանքի բոցը երկինք
հասցնող Սայաթ-Նովայի հոգին։ Նրան սպասում էին Հայո-
պատի վանքի խավարանիստ պատերը։ Դուցե թե փրկվեր
այդ հոգին։ Բայց այդ խավարում ավելի պայծառ էր եթե-
վում ետևում թողած խարույկը, ու Սայաթ-Նովան թողեց
վանքը, որ մանիք քաղաք, ուր չոքել էր Աղա-Մամեդ խանի
արհավիրքը։ Իր եղերական մահվանից մի քանի վայրկյան
առաջ նա փրկում է զավակներին և հետո, հայ ժողովրդի
մարտիրոսացած հերոսների նման, տալիս իր կյանքը հայ-
ըենիքին, նրա պատվին և հողարտությանը։ Խոկ որդիները
տարել էին իրենց հետ ու փրկել, ի երջանկություն մարդ-
կության, մեծ զոհի իմաստության ու հավերժական սիրո
մատյանը։ Հայ զեղանկար տանյակ հազարավոր ձեռա-
դրերին ավելացել էր ժայռակուռ խոռքի ևս մի ձեռադիր,
որի լույսընծայումը, մեր պատմության բնը ունի, կապ-
ված էր հայ ժողովրդի նոր գարթոնքի հետ՝ XIX դարում։

Զարմանք բան է ահա քանի սերունդ կարդում է Սա-
յաթ-Նովային և նորից ծարավ է նրան։

Սայաթ-Նովայից շռայլաբար գովք է բխել՝ ուղղված
ըստությանը, արվեստին, սիրուն, մարդուն։ Փոխարենը նա
ստացել է մարդկային սերունդների գովքը՝ ուղղված
իրեն։ Երգերից մեկում նա ասում է, թե սիրած էակին
նվիրված գովքի գերքը փիղ է պետք, որ տանի։ Մենք
դժվարանում ենք տսել, թե ի՞նչ է պետք՝ մեր գովքը
նրան տանելու համար։

Բայց ի՞նչ է այդ գովքի հիմքը և հիմնավորումը։

Սայաթ-Նովան շատ է կապված հողին, իր արմատին,
մեր պատմական, սոցիալական և ազգային գոյավիճակնե-

րին : Դա ինքը թանձրացյալ կյանքն է « Քիչ է ասել ուստի իրմ . պետք է ասել նրա կատարյալը , գեռազանց լմբոնուղությունը դոյլի , կեցության : Սայաթ-Նովան ունի հայրենիքի և ժողովրդի վիտակցությունը . նա դառը գանդատվում է , որ սիրուհին դրկել է իրեն վաթանից ու ժողովրդից , որից դուրս արդեն օտարություն է :

Սայաթ-Նովան ժամանակի ամենակրթված ժարդկանցից էր : Նա գիտեր եվրոպայի և եվրոպական ժողովությների մասին : Նա ունեց ենի դունյայի , ոյսինքն Նոր աշխարհի՝ Ամերիկայի լուրը : Սայաթ-Նովան իր լայն ու խոր հայացքի տակ առավ և հայ ժողովրդի իրականությունը և ամենայն համոզչությամբ տեսավ սուլթանին առանձին , շահին առանձին , վալիներին ու թավաղներին : Նա ապրեց ճորտատիբությունը և թագավորի բռունցքն ու գիտեց ազնվականության քայլայման պատկերը . « Քսանն մե զուլ չին պահում , — աղերումն բեկարիլ իմ » : Նա ունի թաղալորի լիակատար ըմբանումը և կարող է մատնանշել , թե ի՞նչ է նաև ինքնակալ թագավորը , որ միահեծան է . « Թաքալուր իս , զուլ ըսպանող » : Թող որ Սայաթ-Նովան չիմանա ֆրեկին , բայց նա դառտում է ֆրիկի նման .

Վուրբն ալիկատ , վուրբն օսկով մե զանգին .

Մեկին դամ ու վայիլք , մեկին ցավ ու սուք :

Երկու բան կա , որ թշնամի են միմյանց հավիտյան , ասում է Սայաթ-Նովան : Եվ սոցիալական ներհակություններին նա միահյուսում է նաև կյանքի ու մահվան կորիվը : Եվ ազաներին նախազգուշացնում էր Սայաթ-Նովան , թե « սրանց առջիվ հետի զուրում կու չոքի » : Ու դժոխքի դեմ նա երազում է « ջաննաթը » , որովհետեւ կարծում էր , որ նախ :

« Մարթը թե վուր հալալ ըլի ,

Կալից կառնե միշտ օրահաց » , և ապա՝ « ճշմարտության դուռըն միշտ բաց է » :

Սայաթ-Նովայի դիտած և հասկացած « արար-աշխարհը » անարդարության հետևանքով կորցնում է իր մեծությու-

ՆԸ — Փեղիկապես կրկին մեծ մնալով՝ երդչի տչքում բարոյապես այն դառնուամ էոկ մի «փանջարա», վորը ու ճընշում:

Ընդհանրացումներ են սրանք, որ չափաղանց հողեղեն են :

Այսուղի մենք սոխարված ենք մի դիտողություն անել: Մեզ նախորդած պատմագրության մեջ Սայաթ-Նովան առնվազում էր իրբեւ աշուղ և որպես այդպիսին առանձնացվում ու կղղիացվում: Այդ պատմագրությունը կաշկանդված էր արվեստի տեսակների սխալ ըմբռնումով: Դա ժողորդություն էր: Սայաթ-Նովան հենց ինքը ժխտումն է ամենայն սահմանափակության և մեր մշակույթի մեջ նատեսվարն է արվեստների սինթեզի և ներկայացնում: Է իր դարացքանի բովանդակությունը հանճարեղ ձեւի մեջ:

Եվ ի՞նչ իմաստ ուներ պատմության մեջ Սայաթ-Նովայի համար դիր և տեղ որոնելը, երբ թե՛ մեկը և թե՛ մյուսը արդեն վերապահված էր նրան մեր կլասիկ գրականության ամբողջ գարգացումով, իրբեւ հայկական վերածնունդի մի վերջին, փառահեղ արքափայլություն և նորագրարի սկզբնավորում, իբրեւ XVLIII դարի ռուսական ու հվերապական գրականության ու պոեզիայի հայկական գորդանեռ, իբրեւ Արքովյանի գործի ու նոր վերածնունդի ծովով մեջ թափվող մի հորդառատ հոսանք:

Ամենեկին կարևորություն չուտանք Սայաթ-Նովայի լեզվի բարբառ լինելուն, որովհետեւ որպես աշխարհիկ կենդանի ժողովրդական լեզվի սկզբունք, այդ բարբառը իր դարացքանում գրաբարին հակոտնյա ուժ էր և հին վերածնության ու նոր զարթոնքի աշխարհագիտական մեջ հիմք՝ թե՛ Գրիգորիս Ախթամարցու ու Քուշակ Նահապետի և թե՛ Արտովյանի համար: Սայաթ-Նովան լեզուն հրաշադործեց՝ հաղորդելով նրան լեզվի և հայ լեզվի պատմության մեջ աներեակայելի հատկություններ, ամենից առաջ տարով այդ լեզվին էր պարզությամբ հանդերձ խորունկ բովանդակություն.

Թե վուր սարերուն հաճդիբիս, կու հաղիս մուժի
ցըման.

Կամ՝ Աշխարհս աշխարհով կըշտացավ, իմ սիրտը
տեղնից ոռվ մընաց.

և Թե վուր հօգուտ կամքն իս անում, մարմինդ
բեդամաղ է ըլում...

Գաղափարներ՝ ու պատկերացումներ են որանք, որոնք
արտահայտելու համար բարբառն անզոր էր, բայց Սայաթ-
Նովայի գրչի տակ այդ հնարավոր է դարձել, և այդպիսի
հրաշագործ լեզու է նրա ամբողջ պոեզիայի լեզուն։ Սա-
յաթ-Նովան խոսքի հետ կախարդի նման իւաղ է անում և
տալիս է խոսքին բյուրափոր երանդներ՝ ապշեցնելով ըն-
թերցողին։ Եվ լեզվական հրաշագործությամբ նա հանում
է բարձրագույն երաժշտականության, ուրախի հատկու-
թյամբ քչերն են օժտված.

Ասիր «Չեյրան իմ»։ Բուդ ֆի սե'յը անիմ. յա՛ր, մըտիկ!
անիմ.

Մուտ բաղչեն նազով, ֆիզ գովիմ սազով, յա՛ր իլքի-
մազով։

Կամ՝ Թե մանիշակ ասիմ՝ սարեմեն կոսին,

Թե ջալահիր ասիմ՝ քարեմեն կոսին,

Թե վուր լուսին ասիմ՝ տարեմեն կոսին, —

Արեգակի օրման փարա իս, գոզա՛լ։

Խարսխոված մարդկային հոգեբանության ոիշմի ամե-
նանուբը զգացողությունների վրա, — մի զգացողության,
որ Սայաթ-Նովային համակել է ամբողջությամբ և լիո-
վին, — նրա խոսքը դառնում է մեղեղի՝ արթնացնող, ողիա-
ցնող և կենսախինդ դարձնող։ Սայաթ-Նովայի լեզուն
միտք է և զգացմունք, խոսք է և մեղեղի։ Կուլտուրական,
հոգեբանական լեզվական մեծ արվեստի այս արժանիքնե-
րով օժտված նա վերցրել և յուրացրել է «Հովտաց չուշո-
նի» — երդ-երգոցի զբարարի տարրը, վրաց լեզվի տարրը,
Փարսերեն, արաբերեն՝ մի ընդարձակ լեզվապաշտու

Ախահայ բարբառը այդ ամենով նրա գրչի տակ հնչում է որպես լայն հորիզոններով մի լեզու։ Սայաթ-Նովան զբել և երգել է նաև վրացերեն և աղբբեջաններեն։ Սվելին։ Նրա վրացերենի զգացողությունը այսօր էլ այժմեական է, այսինքն համարյա ժամանակակից վրաց լեզուն է։ Լեզվական այս հենքի վրա Սայաթ-Նովան թևակոխել է Կովկասի կուլտուրական աշխարհը, այդ հենքի վրա նա յուրացրել է այդ աշխարհի և արևելյան կլասիկ պոեզիայի մեջ տարրալուծված Փոլկորի ու պոետական ընդհանուր մոռիվները՝ Լելլի-Մեջնունի, Ռոստոմ Զալի և Ռաշ Զելյանի մոտիվներ։

Հայկական վերածնունդի սղին, աշխարհիկ լեզվից բացի, ուղղակի հարաշերություն ունի Սայաթ-Նովայի սղուն։

Վերածնունդ, այսինքն կենդանացում մահվան դեմ, արև խամփարել դեմ։ Բնություն—և մարդը բնության զարդն ու զափնեպսակը։ Արյուն երակների մեջ՝ խուցերի մամուռատ սառնությանը ներհակ։ Մարդկային ողու ողնծացում, նրա մաքի և կենսաբաղդ զգացումների խոյանքներ։ Կապանքների և մուայլության զնդանի դեմ։ Բնության, տիեզերքի և մարդկության ճանաչողության ծարավ, որ ծառակում էր խորտակելու կույր վիճակներն և մարդուն վերադարձնելու նրա իրավունքը՝ վայելելու իրական կյանքը հանուն կյանքի։ Սա էր հայկական վերածնունդի սղին և Սայաթ-Նովայի սղին։ Դա մի նոր կենսազդացողություն էր՝ իր էությամբ բանաստեղծական։ Եվ իսկական պոետիան, իրեն երջանկության ու վայելքի աշխարհատեսություն, բխում էր վերածնունդի արյունից և նրա այրող արեից, որը և հզոր չերմություն էր հաղորդում այդ գրականության մեջ վետինտող բլբուլին և վարդին, Երպնկացիների, Գրիգորիս Ախթամարցու անվերջ գարուններին և սիրատոչոր տաղերին։

Գիճով եմ, գիճով, հարքել եմ սիրով.

Գիճով եմ, գիճով գիշերս երազով։

Սայաթ-Նովայի լալ բադեշխանն ու ծովեմեն հանած
անդին ջալահիրը, նրա մանուշակը՝ բաց արած հովին,
նրա ունանը— նրանից գարեր առաջ ողի առած թափառում
էին Ախթամարցու արևակալած աշխարհներում՝ կապելով
«ծիրանի ծովի երկնակամարը»։ Իսկ Դավիթ Սալածորցու
ծաղկաբանական լայնարձակ կոնցեսցիաները գալիս հա-
նում էին Սայաթ-Նովայի ունաճ-ուանդ սմբուլ ու չուշան-
ներին, վարդին ու մեխակին։ Նահապետ Քուչակը այսպես
է ասել.

Սկզբ երբ ի յաշխարս եկաւ, եկաւ իմ սիրառ քառեցաւ.
Հապա իմ սրտիս ի դուրս երկրէ երկիր քափեցաւ.

Նկատ ի գլուխս ելաւ և յըղեղս ելաւ քառեցաւ,
Ծիցս արտասուժ ուզեց, ետ արիւն ի վար վաքեցաւ։

Աս արդեն Սայաթ-Նովայի կերպարի հանճարեղ կան-
խառնումն էր, նրա էության, նրա պատկերային աշխարհ
ընդդրկող մտածողության նախօրինակը. մեզանում։ Բնու-
թյան բոլոր ուժերը իր կամքին ևնթարկելու Քուչակ նա-
հապետի մտածությունը, որ համակել է և Սայաթ-Նովային։
Երբ Քուչակը ուզում է, որ նունուֆարի ջուրը մտնի,
կորի այն, ծաղիկը չորանա, իր աչքերից առռներ հանի
որ նունուֆարին ջուր տա՛ պայծառանա, Սայաթ-Նովան
երազում այրվում, պաղատում է, որ զոհի իրեն սիրո մե-
ծաղորությանը և նա ևս մի ցանկություն ունի.

Դարսու ունիմ՝ քու խաքրաւ ինձ սըպանին.

Ճենչաք ըլի, յա՞ր, զաս իմ գերեզմանին,—

Ածիս խողըն վրբես ափով, նազանի։

Բայց եթե Երդնկացիների, Ախթամարցու և Քուչակ
նահապետի ուագերի տակ համեմատաբար ամուր էր վերա-
ծնունդի ուեալ հողը, Սայաթ-Նովայի ուագերի տակից պատ-
մությունը հանել էր այդ պատվանդանը, որովհետեւ հայ-
կական վերածնունդը նրա ժամանակներում արդեն անցնելու

վրա էր, ևթե չասենք որ արդեն անցել էր, և չեծ բանաւոտեղծին մնում էր կառչել անցնող Փորմաժիային, որոնել պատմական ու սոցիալական նոր ուժեր, գտնել այդ ուժերը, ճենվել գրանց ու ինքնազիտակցության բերել: Եղ Սայաթ-Նովան ոչ այնքան գեղի ետ դնաց, որքան ընդառաջ լուսավորության ըրջանին, որը դեռ պետք է գար, որը դեռ պետք է նախապատրաստվեր: Անցած վերածնունդի հենարանը Ամեն էր, Կիլիկիայի պետականությունն էր, քաղաքներն էին ու աշխարհներ անցնող քարավանների հերոսները: Սայաթ-Նովայի գարաշըջանի հիմնական կոնֆլիկտը երկու կողմ ուներ՝ ներքին խավերի հակադրություն՝ ընդդեմ, ինչպես Սայաթ-Նովան է ասում, «գեղում՝ մելիք սահմուտերի, քաղքում՝ սուլթան ու խանի» և իշխանության ու անհատի միջև: Խմորվում էր բոլորվին մի այլ կեցություն, որ սաղմնային վիճակի մեջ էր Սայաթ-Նովայի էպոխայում, բայց որը լիակատար կերպարանք կատանար մի քանի տասնամյակ հետո և մարդարեական են հնչում բանաստեղծի այն խոսքերը, թե՝

«Իս էն Սայաթ-Նովասին չի՞մ, վուր ավզի վրա հիմնանամ»:

Այս ասում էր ինքնազիտակցության եկած անհատը, որի մեջ խոսում էր իրականում ամուր հիմք ստեղծելու, բայց և ազադային իր «ուրիշ գրերն» հասցնելու մարդը:

Դեռ չկա հայկական XVIII դարի միասնական պրոցեսի ուսումնասիրությունը: Միթարյանների վենետիկյան միարանության հիմնադրմանը հետեւ է կուլտուրական այլ գաղութների գործունեությունը, որոնց մեջ հնդկահայ գաղութը ներկայացնում էր եվրոպական ռեօլուցիայի մտքի հայկական այլատեսակությունը, իսկ արևելյան Հայաստանում մենք տեսնում ենք գեղի Ռուսիան դիվանագիտորեն և ռազմականորեն դիմադարձ եղած հայկական ազատագրական չարժում:

Հատկապես ուշադրավ է Սայաթ-Նովայի դարաշըջանին ամբողջապես համընկնող Հովսեփի կմինի գործունեու-

թյունը, Անդրկովկասի բաղմալեզու միջաշարքի գիտակցումով, որի մի այլ արտահայտությունը նույն այդ կուլտուրաների հետ շփմբելու և այդ միջավայրը յուրացնելու իմաստով՝ հանդիսանում է դրականության մեջ Սայաթ-Նովայի օրինակը։ Նազաշ Հովնաթանից հետո Սայաթ-Նովան էր, որ իր բաղմալեզու քնարերդությամբ կատարեց Կովկասի ըմբռնման դեղաբվեստական սիրազործ քայլը և վերցրեց իր մեջ այն ուժին ու բնույթը, որ մշակվում էր XVIII դարում հայության համալաներով։

Սայաթ-Նովայի ստեղծագործությունը անջնջելի մտքի և անանցանելի զգացմունքի ձուլածու հավերժական մի կերպածք է։ Սայաթ-Նովան շատ է գործածում «փիր», «ուսուադ», բայց և ուղղակի «իմաստուն», «իմաստոնասիրաց» հասկացողությունները։ Իր քնարերդության մեջ նա որքան և ջերմածերք է ու կիզիչ, նույնքան և խոհուն։ Նա ասում է, որ ամենաթանդ վճարը մտքի համար արվող վճարն է։ Ինտելեկտի դերադրասկան աստիճանի այս ուշաշուղանությունը հասցրել է նրան ճանաչողության խորիութանինը, որտեղից նա երջանիկ եղրահանդումների չի եկել. «իմաստունիրըն չը տեսան է» աշխարիս հուսոն ու համբըն...»։

Վայելքի համար ծնված Սայաթ-Նովան իր բանականի միջոցով հասավ դառնաղի իրականության իմացությանը և մի պահ ամփոփեց այն հարցը, թե ինչ որ իրական է՝ ինչի՞ն է շահ։ Աշխարհի նեռը սատանայի կերպարանքով նստել է չորս գլխանի ուաշի վրա և ջարդում է մարդու հակատպիքն և տարածում իր չարության որոմք։ Ողբում է մանումը, որովհեան բաժնանված է մորից, ողբում է սամիկը, որովհեան «կաշ անիլն ինչի՞ն է շահ», չուռ է եկել «չարիսի փալաղը և ում հագին հին շալ ին տեսնում, էլ չին ասում թե էս ով ա»։ Ի՞նչ կա տարակուսելի, եթե Սայաթ-Նովայի աչքում շարժումը երբեմն պատկերանում է իմրեւ ոչնչացման տանող մի վիճակ, որովհեան կեզծիքը տիրող է զարձել։

Սայաթ-Նովան որքան և անկուշտ է աշխարհը ճանաչելու մեջ, նույնքան և ընդունակ զարմանքի և զմայլանքի: Աստղերը երկնքի հրաշքն են, իսկ մարդը բնության: Բայց մարդու վզին թուր է դրած, այն մարդուն, որին երկրպագում է Սայաթ-Նովան և ասում

«Կրրակ էլ տաս, ճըշմարիտին մահ չը կա»:

«Անդուռ, անհիրթ մե հուջոս է միք հոքին»: այսքան մեծ դիտելով մարդու ներքնաշխարհը՝ Սայաթ-Նովան բնականաբար իրեն տեսնում էր գիշեր-ցերեկ մտքի ծովում, վերջ ի վերջո հավատալով, որ աշխարհում չար մարդ չպիտի մնա: Ավելին: Նա աղատագրված է տեսնում իրեն սորկությունից, որովհետև սորկացնող ուժերը տեսնել չեն ուզում: Կա մի ապավեն՝ եթե իրականությունը ապավեն չէ և մինչեւ որ «իմաստնասովաց իսաբարով» աշխարհը չտելիք, պետք է գիրը սիրել, զալամը սիրել, հոգին սիրել և սիրել բանականը, կուռք դարձնել մարդեղենը, նրա զգացումը:

Մեզ անհայտ է, թե ի՞նչ է մտածել Սայաթ-Նովան իր վախճանի մասին: Զգացե՞լ է նա երբեք և որևէ կերպ, որ կընկնի արյունոտ յաթաղանից, որ կիզլի նրա կյանքը վայրենի միջամտությամբ: Բայց քնարերդության մեջ նա ունի զոհի գիտակցությունը.

Ղարիբ իմ, արուն իմ լալի,
Դժար դարի հանդիբելով,
Տեր իմ կանչում կըսկծալի,
Կինքում չարի հանդիբելով:

Կամավոր մահ վերցնելը հանուն մարդու սիրուն՝ Սայաթ-Նովայի հումանիստական աշխարհազդացողության կողմերից մեկն է:

Ողորմի տալով աշխարհ ու կամուրջ շինողներին՝ Սայաթ-Նովան մտահոգված է եղել այն հոգսով, թե ո՞ւր կդնա նրա անձնագոհությունը, և հայրենիքի եզերքին ապ-

բելով՝ զգացել է իր մեջ վախանի կարութը, ասելով թե ևս
էլ սարեր անցաւ եկա՛ իմ աղիզ վաթանն եմ ուզում, և դա-
րեր բլրութի մոտիվը դուցե թե ունի իր հարաբերությունը
հայրենիքին, որովհետեւ միանդամայն անկարսկած է, որ
խալիսի նոքարը իր խակ խոստովանությամբ խալիսի համար
«կինը է մաշել ու ջան տվել» և զոհարերության գիտակ-
ցությունը նրա երդերում բազմաթիվ երանգներ ունի՝ դե-
պի կինը, մարդը, զոհարերություն խալիսին ու վաթանին:

Բայց ահա՛ սերը՝ նրա քնարերգության ակեղքը և վախ-
ճանը, սե՛ր, որ ընդունել է իր մեջ ստեղծադորձության
բովանդակությունը և տօլել վերջինիս հաղարավոր դույներ:
«Եշխն վուր կա հաղար բարախ հանգ ունե», «Եշխն հաղար
ծաղիկ ունե», ասում է բահաստեղծը: Եվ Սայաթ-Նովան
հավաքում է արեելքի ամբողջ բնությունը, տիեզերքը,
սրանցից առաջացող պատկերները և, ամենը արամադրում
ոիրո գովքին: Սերն էլ աշխարհ է բռնում:

Մե նաղշբդ Արար անցկացավ, մե նաղշբդ Հընդոսան
գնաց.

Մե նաղշբդ Դըրիմ անցկացավ, մե նաղշբդ Դաղստան
գնաց,

Մե նաղշբդ Ռւրումել կացավ, մեկըն Փըռանգստան
գնաց,—

Ով քու առարաքըն տեսնում է, ասում է՝ քահարիդ
երգեկ:

Սերո զգացմունքը, իր աշխարհակալության պես, ա-
ճում ծավալվում է՝ կազմելով ծով և օվկիանոս և Սայաթ-
Նովան էշխի ծովի մեջ ընկած՝ մաշվում է նրա խորքերում:
Սերը սակայն իր դարդով էլ վայելքի նման անսահման է
ու, Սայաթ-Նովան մեկ վազում է նրա երջանկությանը,
մեկ իր կուրծքը դեմ տալիս էշխի դաշույնին:

Սիրո նադանքը և սիրո ճեմը Սայաթ-Նովան երդել է
ապշեցուցիչ նվադայնությամբ՝ ստեղծելով գրանց լիակա-
տար պատրանքը.

Համիտ զարըն ալ իս արի .

Բըլրուկի եկոյ լաց իս արի
Բարկ երեսիդ խալ իս արի .

Խալ իս արի .

Զկա քիզի նման , չկա քիզի նման .

Քիզ նման , քիզ նման .—

Դուն իս անհման :

Անհայտ է , թե անձամբ Սայաթ-Նովան սիրել է «իրիք
քսան ու տաս խալ» ունեցող կնոջ , բայց նրա պետքիան
վերցնում է այդ խալերն իր վկա , ինչպես նաև՝ դաշտերի ,
սարերի և պարտեզների բոլոր բույսերն ու ծաղիկները , ա-
վելացրած աստղեր , արեւ և լուսին , ծով և աշխարհներ :
Աշխարհը մեկ է , յարը մեկ .—

Թամամ աշխար պըտուտ եկա , չքողի Հարաշ ,

Եագանի . . .

Զը տեսա քու դիդարի պես՝ դուն դիփունին թաշ ,

Եագանի :

Սերը կյանք է , սերը մահ է : Իբականությունը տարրա-
լուծվում է սիրո մեջ և սիրո ծովից առաջանում է մի նոր
իրականություն՝ ամենալավը : Սերը կայրի , կոչնչացնի իր
մեջ աշխարհի նեռը և կծնի մի նոր կյանք : Ուրեմն կա և
«սիրո ջաննաթ» , սիրո դրախտ . սրան է ճգտում Սայաթ-
Նովան : Էջմիածի թրով սիրոտը պատառող Սայաթ-Նովան սիրո
վարդի մեջ տեսնում է իրականության վրա սիրված նրա
գույնը և , վարդը վարդ է , և ինչ վարդ “չէ՝ դարձյալ
վարդ է .

Աչքը վարք է , ունքը վարք , գեմքը վարք ,

Սպիտակը վարք , կանանչը վարք , ալը վարք .

Բառը վարք է , լիզուց վարք , խընդալը վարք ,

Գոշը վարք է , ծոցը վարք է , շալը վարք .

Հուրը վարք է , կըրակը վարք , սերը վարք :

Ամեն ինչ վարդացած է ոչ միայն դույնով, այլ և էությամբ, մաքրված և ազնվացած վարդի թաղավորության մեջ։ Սայաթ-Նովան — սա է կարևորը — իր երևակայության մեջ ժխտեց հրամաններ արձակող և մահ տարածող սուլթանին և շահին և դահ բարձրացրեց սիրո արքային, որ ունի համելի բանության բոլոր կապանքներն ու շղթաները, և ազատված ճորտությունից՝ դիմադարձ ազնվականությունից՝ նա ճորտագրվեց սիրուհուն, որպես զարիբ բլուլը ոսկի վանդակին և կանգնեց յարի դուսը որպես նրա դուլը։

Որպես հանճարեղ անհատականություն՝ Սայաթ-Նովան ունեցել է անմահության դիտակցությունը։ «Յեղուղ անմահութին ուղիս, սիրով կուճարիմ քիզ համար», առել է նա սիրուհուն։ Սայաթ-Նովայի կյանքն ինքնին մարտիրոսություն էր, իսկ նրա ստեղծագործությունը՝ ժողովրդի սիրագործություն արվեստի բնադավառում։ Նա հորինել է երգը և լուծել է կուլտուրայի ամենաբարդ խնդիրներից մեկը — հավիտենապես ապրող երգի առեղծվածը, դրանով իսկ նպաստելով մարդու հոգեկան կյանքի անդորրությանը։ Սայաթ-Նովայի երգը դաստիարակում է ներդաշնակության դրացումներ, ոիթմի բնազդն է արմատավորում մեր մեջ, ոիթմ, որ դորեղ գործոն է մարդու հոգեկան աշխարհը կադմակերպելու արվեստում։ Այսպիսի անքնին ճանապարհներով նա թափանցում է բոլորս ներքնաշխարհը, բարոյակը թում և կատարելագործում մեզ։ Սայաթ-Նովայի իմաստության և սիրո գալուցի մեջ սերունդներն ստացել են և անչափելի ժամանակներ գեռ կստանան էսթետիկական ամենապնիվ դաստիարակություն։ Եվ ազնիվ հայացքը կյանքի վրա, որ բխում է այդ էսթետիկայից, հպարտ է պահում մարդուն, հպարտ է դարձնում մի ամբողջ ժողովուրդ։

Սայաթ-Նովան տիպարն է այն մեծության, որ կարող է հայ ժողովրդի պատասխանատվությունը կրել մարդկության կուլտուրայի հանդեպ։ Ծնվեց նա, որ դա դեպի իր



ժողովուրդը։ Եվ այդ նա արավ։ Խոշորացավ և հզորացավ ժողովրդի պատմության ընդերքում, ստացավ ժողովրդական հանճարի խմաստուն կերպարանքը, կանգնեց նրա արժեքների մակարդակին և սեր տարածելով դեպի հոգին, սեր դեպի սերը, դպրությունը, ստեղծագործությունը, ազնվությունը, պատիվը և արդարությունը, սեր դեպի բարի աղնու հացը, տառապյալը, հզարտ սեր հանուն ճշմարտության՝ գնաց իր ժողովրդի անունով այս ամեն վսեմությունները հայտնելու հարեան ժողովուրդներին և ներկայացնելու նրան մարդկության առաջ։ Սայաթ-Նովային ճանաչեցին Կովկասում, Ռուսիայում։

II

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ ԳՐԱԿԱՆԳԻՏԱԿԱՆ ՄԾՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՍԵԶ

Ի թիվս այլ հարցերի, գրականագիտական մտքի պատմության մեջ առաջացել է ևս մի հարց, որ այնուհետև կոչվել է «Սայաթ-Նովայի» հարց դրանից էլ աճել է սայաթնովագիտությունը։ Սայաթ-Նովայի հարցը իր հերթին անցել է զարդացման մի զգալի ուղի։ Օրինակ՝ պրոֆ. Լ. Մելիքոսեթ-բեկի կարծիքով Սայաթ-Նովայի հարցն անցել է երեք էտապ. 1) 1852—1903 թ. թ., 2) 1913—1924 թ. թ. և 3) 1926 թվից հետո։ Այստեղ նկատի է առնված բանասիրական-հետադրուտական, փաստերի հայտաբերման ժամանակագրությունը և ոչ թե դրանց ներքին բովանդակության քննությունը։ Այդ պատճառով դժվար է գրադաշիւա անցկացնել այդ էտապների որոշակիությունը պարզելու համար։ Բայց եթե հնարավոր չէ խոսել Սայաթ-Նովայի հարցի պատմության բազմաթիվ էտապների մասին՝ կարելի է և պետք է խոսել այն մասին, որ նրանով երբեմն տարվել են համուռն թափով, պատահել է, որ նրան անուշադրության են մատնել, հետո կրկին ողեալորվել և

այդպիս պարբերաբար մինչև մեր օրերը, երբ ստեղծվեցին սովետական պետականության կողմից տրված բոլոր հնարքորությունները Սայաթ-Նովայի ժառանգության նկատմամբ սիստեմատիկ աշխատանք տանելու համար:

Բայց ի՞նչ է Սայաթ-Նովայի հարցը:

Լեռն այսպես է պատասխանում՝

«Սայաթ-Նովայի հարցը:

Կա, այո՛, և այսպիսի հարց: Եվ այսօր չէ, որ նա իջնում է հրապարակ: Մոտ 75 տարի է, որ նյութեր են կուտակված այդ հարցի համար: Բայց վերջնական մարմնավորում նա դտավ վերջին երկու տասնամյակի ընթացքում, երբ Սայաթ-Նովան իրեն մեծ ժողովրդական երգիչ, արժանապես դարձավ մեզանում դրական պաշտամունք: Այսօր Սայաթ-Նովայի հարցը մի անհրաժեշտություն է, որ հասունացել է վաղուց, մասնավոր այն օրից, երբ իրականություն դարձավ կովկասյան երեք հանրապետությունների Փեղերացիան:

Ի՞նչ հարց է այդ:

Այն՝ որ մեր ունեցած Սայաթ-Նովան ամբողջական Սայաթ-Նովա չէ, իսկ մենք պարտավոր ենք ունենալ ամբողջական Սայաթ-Նովա: Այսպես են մեզ պարտավորեցնում մեր ամբողջ մշակութը, մեր անցյալն ու ներկան» («Խորհրդային Հայաստան», 1926 թ., № 2):

Լեռն խոսում է Սայաթ-Նովայի ամբողջական հրատարակության մասին: Այդ հարցն էլ նա համարում է քաղաքացիություն ստացած «Սայաթ-Նովայի հարց»: Ամենենին կասկածի տեղիք չի կարող տալ Սայաթ-Նովայի աղբբեջանական երգերի հրատարակության խնդիրը: Դա շատ կարևոր է: Սակայն Լեռն սահմանափակվել է երգերի լիակատար հրատարակության հարցով, մինչեւ Սայաթ-Նովայի հարցը շատ ավելի լայն շրջանակներ պետք է ունենար՝ դիտելով Սայաթ-Նովային XVIII դարի սոցիալական ու պատմական պայմաններում, արժեքավորելով նրան որպես աշխարհիկ կուլտուրայի ներկայացուցչի՝ ավատական Փորձ:

մացիայի տիրապետության պայմաններում, գիտական հիմնալորտում տալով Սայաթ-Նովայի կենսագրության պրոբ-ըմբներին, քննելով Սայաթ-Նովայի տեղը և դերը հայ գրականության մեջ, ինչպես նաև աղբբեջանական ու վրացական գրականությունների մեջ և այլն, և այլն:

Անդրադառնալով գրականագիտական մտքի վերաբեր-մունքին դեպի Սայաթ-Նովան՝ ամենից առաջ պետք է խո-սել այն մասին, թե ե՞րբ կարող էր երևան գալ Սայաթ-Նո-վայի հարցը: Դա կարպում է XIX դարի առաջին կետին հա-սարակական զարգացման բուրժուական վուլը թեսուխած երևույթների հետ: Արդեն նախապատրաստվում էր նոր զարթոնք, նոր հետաքրքրություն դեպի ժողովրդական ստեղծագործությունը, կուլտուրայի աշխարհիկ տարրերը, աշուղական արվեստը և այլն: Խաչատուր Աբովյանը արդեն ծրագրել էր մի գրականության ստեղծում, որը պետք է ծառայիր «Հարիր Հազարի»: Եթե Աբովյանի ուշա-դրության կենտրոնը նույն այդ ծրագրի համաձայն դառ-նում է իրեն ժամանակակից ժողովրդական ստեղծագործու-թյունը, մի այլ հայ մտավորական՝ Մկրտիչ Էմինը աշ-խարհիկ հոգեւոր կուլտուրայի տարրերը փնտառում է պատ-մական Հայաստանի իրականության մեջ՝ Մովսես Խորենա-ցու պատմության մեջ: Պաշտպանելով աղջային կուլտու-րայի ինքնուրույնության ոկզբունքը՝ էմինը կամեցել է ապացուցել, որ չին ժամանակներից ի վեր հայ ժողովուր-դը ևս ապրել է հոգեւոր ստեղծագործության ինքնուրույն կյանք: Նա պախարակում է «Ի հայրենի ժառանգութենէ» հրաժարվողներին և իր աշխատանքով նպատակ է ունեցել ի մի ժողովել ժողովրդական հին բանահյուսությունը: Նույն պահանջին էր արձագանքում Գ. Պատկանյանի «Արա-լատը», որը մասնավորապես 1851 թվին տեղեկություններ է տպագրում տւղակի Սայաթ-Նովյանց տան մասին. «Սա-յաթ-Նովյանց տանեն, — գրում է «Արարատը», — հարյուր տարիեն ավելի է, որ բանաստեղծական հոգին երբեք պակասած չէ, համարյա թե որդուց որդիս ժառանգու-

թյամբ դալիս է այն շնորհը։ Հարյուր տարի ասացի, որովհետեւ այսքան ժամանակվա արձանադրերն այժմ հայտնի կան թե՛ մեր ձեռքն և թե՛ այլ բանասիրաց ձեռքն, որ մեծավ՝ աղղասիրության հոգվով վառված կամենում են լույս ընծայել։ Ինչպես տեսնում ենք՝ «Արարատ»-ը տեղյակ է Գ. Հախվերդյանի Սայաթ-Նովայի երգերի վրա կատարած աշխատանքին։ Նույն այս մթնոլորտի արտահայտություն պետք է համարել 1852 թվին լույս տեսած «Հայոց երդ ուսմկականք» Ալլշանի լույս ընծայած դիրքը և գուսանական երգերի մի քանի տետրակների հրատարակություններ։

Հայ գրականության այս թարմացումը դրավել էր նաև ոռւս բանաստեղծ Յակով Պոլոնսկուն, որը դարձյալ Հախվերդյանի միջոցով ծանոթանալով Սայաթ-Նովային և նրա երգերին՝ առաջինն է լինում, որ ոռւս հասարակությունը ծանոթացնում է նրա հետ։ Պոլոնսկին, հարկ է ասել, ընդունաբար է գնահատել Սայաթ-Նովային, զերմությամբ է խոսել Սայաթ-Նովայի անսահման ժողովրդականության մասին և կանխադուշակել նրա ստեղծագործության անվախճան կյանքը աղղաղայում։

Գ. Հախվերդյանի աշխատանքը մեծարվել է «Մասյաց Աղավնու» էջերում, մի տարբերական, որ այդ աշխատանքը համարել է «հանճարեղ», «իմաստուն»։ «Մասյաց Աղավնին» 1855 թվին իր էջերում լույս է ընծայում Հախվերդյանի առաջարանը արևմտահայերենի վերածված և Փրանսերեն թարգմանությամբ՝ նույն կերպ վարդելով Սայաթ-Նովայի մի քանի երգերի հետ։

Բայց ի՞նչ էր Հախվերդյանի դործը։

Մասնաղիտությամբ և կրթությամբ բժիշկ, Ռուսաստանին և ոռւս կուլտուրային քաջատեղյակ Գ. Հախվերդյանը շատ լուրջ ու տեալիսն ուշադրություն է ցուցաբերում Կովկասի կուլտուրական կյանքին և նրա տնտեսական ու քաղաքական անշուրարձին։ Հայտնի է Գ. Հախվերդյանի միջամտությունը ընդդեմ ցարիզմի տնտեսական քաղաքական

նության՝ կայումացնելու համբարությունները Կովկասում:

Գիտնական հետազոտող Հախվերդյանի աշխատանքը սկսվել էր վաղ ժամանակից: Նա հմտությամբ ուսումնառիրել էր նաև Հայաստանի պատմությունը, հայ լեզուն, բանահյուսությունը: Հախվերդյանի անունը հոչակվում է Թբիլիսիում և Թբիլիսիից դուրս: Նա դառնում է բանասիրական, բանահավաքման աշխատանքի մի կենտրոն, մի տեսակ հետազոտական «ինստիտուտ»: որից շատ սպասելիքներ է ունեցել հայ մտավորականությունը:

Հախվերդյանի ջանքերով Սայաթ-Նովայի ձեռագիրը պրեկտուրա կորուստից: Սա է նրա անգնահատելի առաջին դուրսը: Դրանից հետո անհրաժեշտ էր ունենալ Հախվերդյանի լեզվագիտական և լեզվաբանական մեծ հմտությունը, որպեսզի Սայաթ-Նովայի տեքստը հասկացվեր: Եվ Հախվերդյանը բառ առ բառ կարդում է Սայաթ-Նովայի վրացատառ հայերեն երգերը: Հախվերդյանն իր ընթերցանության ժամանակ վերականգնում է աշուղական տաղաչափությունը՝ այդ տաղաչափության կանոններով վերծանելով Սայաթ-Նովայի երգերը: Նա վերջինիս տեքստի մեջ մտցնում է իր կետաղբությունը:

Հախվերդյանը մեղանում ստեղծեց դիտական տեքստուրոգիայի տրամադրյան, որը և դարձավ նրա երկրորդ դործը: Հետազոտության դիմավոր առարկաներից մեկը համարելով Թբիլիսիի հայ բարբառի ուսումնասիրությունը և նրա գիտական բացարությունը՝ Հախվերդյանը կազմեց դրա քերականությունը, ասաց առաջին լուրջ խոսքը այդ բարբառի մասին: Իր լեզվաբանական հետազոտություններով Հախվերդյանը հիմնադրեց Թբիլիսիի հայ բարբառի գիտությունը, որը վատահելի աղբյուր հանդիսացավ մեր բոլոր լեզվաբանների և հետազար բոլոր սայաթ-Նովագիտակաների համար: Սա նրա երրորդ դործն էր: Հախվերդյանը սկզբունքային նշանակություն է տվել ժողովրդական բանահյուսությանը և աշուղական ստեղծագործությանը՝ համարելով իր

աշխատանքը հայ ազգության ժամանակակից վեճակին ծառնոթանալու մի անհրաժեշտություն։ Հախվերդյանը ստեղծեց աշուղների «խալիսի նոքար» լինելու տեսությունը և ցույց տվեց, որ դրանք «անց են կացրել բոլոր կյանքն խաղաղ տնելում, ավանդել են մեզ իրենց սրտի ցավերն ու տարփանքը ու վարքն ժողովրդի։ Էնդուր էլ սրանց մի քանի խաղերից ավելի ենք նկատում ազգային հոգին ու ոճն, քան թե պատմազբական հաստ-հաստ գրքերիցն։ Էս վերջի հանգամանքն ավելի հորդորում է ինձ, որ հաղորդեմ ազգակեցներու մեր աշուղներու երդերն՝ սկսելով Սայաթ-Նովու խաղերիցն։ սրանցից կու հայտնի մեզ ազգի ճաշակը, աղդային բանաստեղծներու մտաց աճումն ու օտարական ազդեցությունը»։

Բացի վերսկչյալից, Հախվերդյանը տվել է մեզ Սայաթ-Նովայի առաջին կենսագրությունը։ Հետազա բոլոր հետազոտությունները նկատի են ունեցել այդ կենսագրությունը և մինչեւ այժմ որքան էլ հարստացել է Սայաթ-Նովային վերաբերող գրականությունը՝ այնուհանդերձ հիմքը մնում է նույն Հախվերդյանի կաղմած և աշխատությանը կցված Սայաթ-Նովայի կենսագրությունը։

Հախվերդյանն է եղել նաև Սայաթ-Նովայի առաջին գննադատը և շատ բարձր է զնահատել նրան՝ մատնանշելով ժողովրդի անհուն սերը գեպի բանաստեղծը, նրա հարցադատությունը խալիսի ամենալայն խալիքին։ «Հանճարեղ հանկարծախոս» աշուղնի երդերի գաղափարական ու բարոյախոսական կողմը նույնպես նշել է Հախվերդյանը։ Առանձ նապես նա շեշտել է Սայաթ-Նովայի աշխատյժ ու «սիրատենչական» հոգու անդրադարձումը նրա երդերում։ Քննադատի աչքից չի վրխալել Սայաթ-Նովայի աճող ողբերդությունը շրջապատի պայմաններում, երբ «դուրթն ճամփա՛ գնում, էնդուր վուր շատացել է խալիսի սուտն»։

«Զենք մեղանչիլ, եթե պնդենք, — դրում է «Ազգագրական Հանդեսի» խմբադրությունը Հախվերդյանի մասին, նրա «Հայ աշուղներ» գրքի հառաջաբանում, — որ 60-ական

թվականներին Ռուսաստանից ողողող գրական ուղղությունը հայի մեջ մակարդակիցավ Հայովերդյանի «մառանում»։ Սա չափազանց կարևոր դիտողություն է և լույս է սփռում Հայովերդյանի կատարած աշխատանքի վրա։ Մեծ էր Հայովերդյանի աղղեցությունը նաև բանասերների հետաղա սերունդների վրա, և եթե հիշելու լինենք լոկ մի վաստ՝ Գ. Տեր-Աղեքասանդրյանի հայտնի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» աշխատությունը, ապա կտեսնենք, որ այդ գիրքը նը վիրված է Գ. Հայովերդյանի «անմոռանալի հիշատակին», առեղծված է նրա, ինչպես նաև Խաչատրւուր Արովյանի գործի աղղեցության տակ։ Գ. Հայովերդյանի աղղեցությունը համուռմ է մինչև Գ. Լեռնյան, Գ. Ասատուր, Մորու Հասրաթյան, Լ. Մելիքսեթրեկ և ուրիշներ, որոնք և զնացել են նրա ճահապարհներով՝ ավելի կամ պակաս չափով հարստացրել Հայովերդյանի ժառանգությունը։

Գ. Հայովերդյանի աշխատանքը չի վրխուել Միքայել Նալբանդյանի աչքից։ Մասնավորապես «Հյուսիսափայլի» շրջանում Նալբանդյանը գրականության ու բանահյուսության մեջ փնտռել է ժողովրդական առողջ ոգի՝ աղտադրված ծխական աղքայնականությունից և կղերական մտայնությունից։ Նալբանդյանի ինտելեկտուալ հսկայական պահանջներին, եղել է մի շրջան, երբ պահպանողական կողմեր ունեցող աշուղները չէին կարող բավարարություն տալ։ Եվ Նալբանդյանը այդ շրջանում քննադատում է դրանց։ Նալբանդյանը կարծում էր, որ «ինչպես աղզն է, աղզի կյանքն, այնպես է և նորա պատմությունը, իսկ ինչպես սպատմությունն է, այնպես է և նորա բանաստեղծությունը»։ Նալբանդյանը կենդանի, կենսաբուխ ստեղծակործությունը պաշտպան է, բայց միաժամանակ դտնում է, որ բանաստեղծությունը բարձրանում է իրականից դեպք մի այլ անչափելի տարածությամբ լայն աշխարհ, մի անյունի կամ հոգեկան աշխարհ։

Գործունեության հետաղա տարիներին վորխեց Նալբանդյանի վերաբերմունքը դեպի աշուղական և ժողովրդա-

դական ստեղծագործությունը։ 1863 թվին եղբորը բանտից գրած նամակում նա խնդրում էր ուղարկել իրեն Գ. Հախվերդյանի Սայաթ-Նովայի երդարանը։ Նաըբանդյանի եղբայրն ուղարկում է մեկ ուրիշ գիրք։ Այդ առթիվ Միքայելը գրում է. «Քո ուղարկած այս չնչին ոտանակորները դրված են ոչ թե մի որևէ գրականական բարբառով բառիս բուն իմաստով, այլ որևէ բնագործությունից գուրկ աղճատված լեզվով։ Այնինչ Սայաթ-Նովայի Երդարանը գրված է լրջորեն, բացառապես այն բարբառով, որով խոսում են՝ Վրաստանի հայերը։ Սայաթ-Նովա որ ասում են, գա 1853-ին թե՞ 54 թվականին (պետք է լինի 1852 թ. Ս. Հ.) Մոսկվայում տպագրված մի բավականին մեծածավալ դիրք է, որի մեջ գետեղված է նաև Յուրի (Գեորգ) Ախմետյանի հիշյալ բարբառի վերլուծությունը»։ (Ե. Շահաղիզ—«Դիվ. Մ. Ն.-ի», էջ 274—275)։

Առավել ևս հետաքրքրական է դառնում այս փաստն այն պատճառով, որ մեզ հայտնի են ուկոլուցիոն-դհմոկրատ Նալբանդյանի աշխատանքի եղրակացությունները շարադրված «Կրիտիկայի» ամբողջական հրատարակության մեջ, որտեղ այլևս չենք գտնում «Մեռելահարցուկի» դասողությունները ժողովրդական և աշուղական ստեղծագործությունը ժիտելու մասին։ Բերդից դրած նամակում գնահատության դրական խոսք ասելով Հախվերդյանի հրատարակության առիթով՝ «Կրիտիկայի» մեջ Նալբանդյանը դանում էր, որ նոր լեզվի ցանկալի համազարյան միությանը հասնելու ուղիներից է նաև բարբառների օդնությունը այդ լեզվին։ Կասկած չկա, որ Սայաթ-Նովայի լեզուն այն գրական երեսույթ է Նալբանդյանի աչքում, իսկ նրա սկզբիան մտնում էր հրապարակախոսի հետաքրքրության լայն շրջանակների մեջ։

1870—80—90 թվականներին հետաքրքրությունը դեպի Սայաթ-Նովան նվազել էր։ Մամուլը չի հետաքրքրում, հաբցեր ու խնդիրներ չեն հարուցվում։ Բայց արդեն 1905 թ. ուկոլուցիայից առաջ՝ 1903 թվին հետաքրքրություն

նը դեպի Սայաթ-Նովան սկսում է նորից աճել: Նրա մասին զբում են պատմաբանները, Սայաթ-Նովան երեսում է երգաբաններում, նրա մասին հոդվածներ են տպվում պարգևերական ժամուլում: 1903 թվին Գ. Ասատուրը հայտաբերեց Սայաթ-Նովայի նոր երգեր և տվեց Գիտությունների Ակադեմիայի ձեռագրերի մեջ գտնվող աշուղի դավթարի նկարագրությունը: Սա արդեն մի նոր քայլ էր Սայաթ-Նովայի անհայտ ժառանգությունը լույս աշխարհ հանելու ուղղությամբ: Գ. Ասատուրի ջանքերով մենք ստացանք Սայաթ-Նովայի հայերեն ութ նոր երգ, երկու բաղմակեզդու երգ և ծանոթ մի քանի երգերի վարիանտներ: Քնարերգութիւն երգերի հետագա հրատարակությունների մեջ դրանք այնուհետև դրվել են Հայսլերդյանի հրատարակած երգերի շաբթը:

Սակայն առանձնապես ուշադրություն պետք է դարձնել այն խնդրին, թե ի՞նչ են ասել հայ դրականության պատմաբանները Սայաթ-Նովայի մասին: Վեցնենք Լեոփ «Ռուսահայոց գրականություն» աշխատությունը:

«...1852 թվին Մոսկվայում լույս տեսավ Սայաթ-Նովայի երգերի ժողովածուն: Հրատարակողը և լուսաբանողը երիտասարդ գիտնական Ախմակովյանն էր, որ մի սիրուն իմաստալից առաջաբանում բացատրում էր, թե ի՞նչ են եղել ժողովրդական երգիչները, աշուղները մեր այնքան տխուր պատմական անցյալում: Սայաթ-Նովա, Թիֆլիսի մի հասարակ արհեստավոր, ապրում և երգում էր 18-րդ դարի 2-րդ կեսում: Դա տաղանդավոր աշուղ էր: Ոչ տղիտությունը, ոչ լեզվի աղքատությունը չեն կարողանում խլացնել երկնային չնորհքը նրա մեջ և նա հյուսում է պարզ, անարմեստ տողեր...»: Ահա և ամբողջը: Գրականության պատմագրության մեջ քիչ թե շատ ուշադրության արժանի տեսություն ունի Վ. Բթանես Փափազյանը: Սա փորձ է արել մոտենալ դուսանական պոետիայի հարցի մեկնաբանությանը՝ քննելով գրաբար և աշխարհիկ սոեղծաղործության փոխհարաբերության հարցը

և կարևորություն տալով այն մտքին, որ ժողովրդական սահմանադրությունը սերտ հարաբերություն ունի ժողովրդական կյանքի հետ։ Բայց Փափառյանը նույնպես ի վեճակի չի եղել լուրջ կերպով մեկնաբանելու Սայաթ-Նովայի սրեղիայի էսթետիկական հատկությունները։ Կղերական մտայնությունը Սայաթ-Նովայի հարցում արտահայտված է «Բազմավեպ» ամսագրում, որտեղ, օրինակ, կարդում ենք այսպիսի տողեր Սայաթ-Նովայի վերաբերյալ. «Ծրատականը, բարոյականը երգեր է ժամին գուռը կուճ եկած մուրացկանի ողորմուկ ու պարզուկ համեստ սրինգով։ Հայնակապետական սիրուն խրատներ են ասոնք, որոնք դյութող կրնային ըլլալ, եթե Սայաթ տար անոնց քերթողական կրակ, հրապույր, քաղցրություն, բանաստեղծական նեկտարով համեմված...»։ Բնականաբար «Բազմավեպի» հետ մենք և ոչ մի եղբ չենք դանում։ Ավելին. Սայաթ-Նովան իր ամբողջ էությամբ բողոքում է այդ բնութագրության գիւմ։

Անցավ մի քանի տարի և 1912 թվին պարբերական մամուլում ապագրովեց Սայաթ-Նովայի երկու անտիպ խաղ։ Սկսվում էր հետաքրքրության այն բուռն շրջանը, որ 1913, 1914, 1915 թվերին դլխավորեց Թումանյանը։ Թումանյանը հրապարակ բերեց Սայաթ-Նովայի հետ կապված բազմաթիվ հարցեր, հրատարակեց մի նոր ժողովածու, կազմակերպեց երեկույթներ, տպադրեց հոդվածներ։ Մտավորականությանը հետաքրքրում էր Սայաթ-Նովային մահարձան կանգնեցնելու հարցը, որի առիթով նկարիչ և արձակադիր Գ. Բաշինջալյանը հրապարակ եկավ մամուլում՝ ուղղելով մի «կոչ հայ ժողովրդին»։ Թումանյանը և Բաշինջալյանը մեղադրում էին հայ ինտելիգենցիային, որ մեղք է դորձված Սայաթ-Նովայի հիշատակի հանդեպ։ «Էսքան հոյակապ մի տաղանդ, էսքան խորունկ մի հողի, էսքան աղնիվ ու կենդանի սիրտ ու էսքան մոռացված մի գերեզման»։ Բայց Թումանյանի՝ Սայաթ-Նովան ծառայություններ է մատուցել թե՛ իբրև լիրիկ, թե՛ իբրև բարոյական հղոր մի ուժ,

ու թե իբրև մի մեծ անուն : Թումանյանը ստեղծում է Սայաթ-Նովայի մի նոր պաշտամունք : Սայաթ-Նովայի հարցը առիթ է դառնում , որպեսպի թումանյանը և նրա հետ միասին պըոդբեսիլ մտավորականությունը վերստին երևան բերեն հայ ժողովրդի ճակատազրի հետ կապված հիմնական խնդիրներ ու խմանելիսական առաջին պատերազմի հախօրյակին և այդ պատերազմի առաջին տարիներին մի չոցներ դանեն պաշտամանելու հայ ժողովրդի իրավունքները : Հոգեսոր արժեքների հավաքագրումը , ինչպես նաև Սայաթ-Նովայի վերածնուռմը , մեր կարծեքով , ուներ հենց այն խմաստը , որ հայ ժողովրդին պետք է ներկայացներ որ սկս բարոյական ու դադախարական բարձր հատկություններով օժոված : Հայ իրականությունից այս հետաքրքրությունը , որ ստեղծվել էր Սայաթ-Նովայի նըկատմամբ , տարածվեց նաև վրաց և ոռւս ինտելիգենցիայի շրջանակներում : Այդպես ծագեց ի . Գրիշաշվիլու ցանկությունը՝ լույս աշխարհ հանելու Սայաթ-Նովայի վրացերեն երգերը , որը և պետք է հիմք դներ վրաց սայաթ-նովազիւտությանը : Այդպիսով Գրիշաշվիլին դառնում էր վրաց Համբերդյանը : Նա դեռևս 1918 թվականին , մենշևիկների տիրապետության օրերին , դառնում էր , որ «Սայաթ-Նովան թունավորված չէ շովինիստական հաշիշով . նա սինթեզի էր ենթարկում Կովկասի միասնությունը» : Վրացական աղբյուրների հիման վրա Գրիշաշվիլին հրատարակեց Սայաթ-Նովայի վրացերեն 28 խաղ , որոնցից տասը նա հանել էր ձեռադրերից , երեքը արտատպել իլլա ձավճարաձեի «Իվերիա» թերթից , որտեղ այդ երդերը տպադրված են եղել 1878 թվին , իսկ մնացած 15 երգը ստացել էր ակադեմիկոս Մառից , որը արտադրել էր այդ երդերը Սայաթ-Նովայի Գիտերություն (Լենինգրադ) գտնված ձեռագիր դավթարից :

Վ . Բրյուսովը անհամեմատ բարձրացրեց Սայաթ-Նովայի հարցը և ափեց նրան թումանյանի ու Գրիշաշվիլու հետ միասին մեծ կարեռություն : Բրյուսովը Սայաթ-Նովային մտցրեց ոռւս ծով գրականության մեջ և իր աննման թարդ-

մանություններով նպաստեց նրա համառուսական հռչակին : Բրյուսովը պաշտպանել է Սայաթ-Նովայի ժողովրդական բանաստեղծ լինելու տեսակետը, միաժամանակ գիտական հիմնավորում տալով բանաստեղծի աղոթիկայի և նրա պատմական դերի հարցերին : Բրյուսովն առաջինն է թերևս դրական պատմագիրների մեջ, որ հմտորեն մատնանշել է Սայաթ-Նովային նախորդող գուսանական ստեղծագործության հետ նրա ունեցած նմանություններն ու տարրերությունները : Զե՞ս որ ոչ մի հայ պատմաբան այդ աշխատանքը չէր կատարել և Բրյուսովն էր, որ Սայաթ-Նովային դիտեց լայն ճանապարհի վրա :

Միանգամայն փոխվում է պատկերը սովետական իրականության մեջ : Թումանյանը Հայաստանի սովետական կառավարությանը հանձնեց Սայաթ-Նովայի մայր գավթարը : 1922 թվին Երևանում Սայաթ-Նովային նվիրված երեկույթի առթիվ լույս է տեսնում նրա 10 խաղից բաղկացած մի ժողովածու, լույս են տեսնում երաժշտական հրատարակություններ, Սայաթ-Նովան մտնում է զասագրքերի մեջ : Բայց այդ բոլորը սկիզբն էր այն մեծ աշխատանքի, որը ծավալվեց հետագայում : Նորից հրատարակ եկալ Սայաթ-Նովայի աղբբեջանական երգերի հրատարակության խնդիրը և այժմ, Մոլուս Հասրաթյանի ջանքերի չնորհիվ, հաջողվել է զգալի չափով լուծել այդ խնդիրը : Սովետական օրերին հրատարակվեցին մի շաբք աշխատություններ Սայաթ-Նովայի մասին, որոնց մեջ լ. Մելիքսեթրեկի, Գ. Լեռնիձեի, Գ. Լեռնյանի և այլոց աշխատությունները նըշանավորեցին մի չտեսնված վերելք ուայաթ-Նովագիտության պատմության մեջ : Արդեն քննության են առնվել տեքստաբանական բազմաթիվ խնդիրներ, լեզվական շատ հարցեր, թարգմանվել են Սայաթ-Նովայի վրացերեն երգերը հայերենի, ինչպես նաև հայերեն երգերը վրացերենի : Այժմ բոլոր հիմքերը կան ստեղծելու Սայաթ-Նովայի ամբողջական հրատարակությունը, մի խնդիր, որ անցյալում համարվում էր հենց «Սայաթ-Նովայի հարց» : Տասնամյակ-

ներ շարունակ ամբողջական Սայաթ-Նովա ունենալու հարցը զբաղեցրել է բաղմաթիվ հետազոտողների և բանասերների և այժմ համարյա թե լուծված է : Սա է սայաթ-Նովագիտության հարյուրամյա պատմության արդյունքներից մեկը :

Այս կարևորագույն աշխատանքի կողքին պետք է հիշատակել նաև այն աշխատանքը, որ սովետական մարքսիստական քննադատությունը ծավալեց Սայաթ-Նովային ըմբռնելու հարցը : Հիրավի Սայաթ-Նովան այժմ դուրս է բերվել անպատմական կացությունից և դիսվում է, հայ գրականության պատմության մեծ ճանապարհների վրա իրուերկու մեծ էպոխաներ զոդող մի դեմք՝ իր արվեստով՝ ուսանելի թե՛ անցյալ, թե՛ ներկա ու առաջարկականության համար : Սայաթ-Նովան մահ է աղջարարել դարեր շարունակ լիրիկան և մարդուն կաշկանդող ֆեոդալիզմին և իր ստեղծագործության մարդկային աշխարհիկ բնույթով նըսպաստել նորի կառուցմանը՝ հայ կուլտուրայի պատմության մեջ :

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԿՅԱՆ

(Ենթան 70-ամյակի առքիվ)

1

Եթե ամեն մի հոբելյան կը ում է իր մեջ մի ավարտված գաղափար, ապա, ուրեմն, Ավետիք Իսահակյանի ծընդյան յոթանասնամյակը հայ կուլտուրայի նշանավոր հօքելյաններից մեկն է: Մի մեծ խոհ է իջած բոլորիս վրա այս հանդիսավոր վայրկյաններին: Այդ խոհը — բնության երջանկավետ բերումով մեզ հետ ապրող Ավետիք Իսահակյանի կյանքի և դործի գիտակցումն է: Եվ որքան էլ դժվար լինի մեր ուղին դեպի բանաստեղծը, բարի ժայլաւը դեմքին նա օդնում է մեզ — մոտենալու իրեն: Փորձենք հասկանալ նրան:

2

Յոթ տասնամյակ առաջ ծնվել է նա, որ ապրի որպես բանաստեղծ և փիլիսոփա: Նա, դեռ պատանի, ծառս է ել նում այն ամենի դեմ, ինչ կազմում է հայ գրողի ճակատագիրը: Իր ամբողջ կյանքում մի օր, մի ժամ նա չի հագել պաշտոնյայի կաշկանդիչ համազգեստ, բայց յոթ տասնամյակ ծառայել է իր մտքին, իր հոգուն: Ինքնիշխան հոգեորդ կյանքը, սակայն, որդեգրել է նրա համար հայրենի երկրի և հայախոս զանգվածների պատմական դառն ճակատագրի դադարիարը և պանդիստի ցուալը ժեռքին թափառել աշխարհ-

ներ՝ օտարությունների մեջ Հայաստանը ներկայացնելու և հարազատներ գտնելու նպատակով։ Եվրոպական տարագ հաղած զաղարապացի Ավոն, մեր ոսկեդարի և միջնադարի վերածնողի թափառաշրջիկ խմաստաօներների սլես, բախել է մաքի բազում դարպասներ, ծեծել է հին Ռուսաստանի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Խոտալիայի, Ավստրիայի, Հունաստանի, Բալկանների, Լեհաստանի դըռները, ունկնդրել նրանց համալսարանների ամբիոնների հարավությունը, որոնք վիճակությալական, հասարակական գիտությունների ու հոսանքների ակունքները, մտածել, խոսել ու զրուցել և ինքն իր համար որոշել, որ «աշխարհը հարց է, մեծ ու խոչըս, անսկիզբ ու անվախնան մի առեղծված»։ Ղաղարապատի ջաղացաքարերից էլ ֆելյան աշտարակը բարձրացած Ավետիք Խոահակյանի մեջ եվրոպան ներծծվեց և մեռավ, որ ապրի Հայաստանը։ Պատմական Շիրակում ու Սմիթ ավերակ պարբռազների տակ, հավերժական Արագածի ու Արարատի մեղմանուշ հովերի եւ ահազնող փոթորիկների մեջ անված Խոահակյանի ազգային բնավորությունն իր այդ կարունությամբ և կարծրությամբ Եվրոպայում հարություն էր տալիս Միսիթար Անրաստացու և Խորայել Օրու ուրիշականներին, գոտեմարտի բոնվելու նոր ժամանակների դաժան հարցագրումների և պայմանների հետ։

Խոահակյանը չի որոշել, թե ինքը կարող և բանաստեղծ լինել։ Նա բանաստեղծ էր ծնվել «աստծո ողորմածությամբ», սակայն մեծագույն չափով զգացել ձմարիտ արվեստի անսպառ նշանակությունը ժողովրդիկ կյանքը հավաքական և վեհիմաստ դարձնելու մեջ։ Բանաստեղծ — մտածող, բանաստեղծ — պատգամախոս, դավակ-ժողովրդի, ընկերը ժողովրդի, նրան ձայնող, նրան ունկնդիր, ժողովուրդը նրան ունկնդրող, — այս հատկությունն ունի Խոահակյանի պոեղիսն։ Եվ ո՞րտեղից եկավ այդ հատկությունը, իրենից։

Յարբս հստել վանքի դըռան
Նուռ ու խնձոր կը ծախս .
Հարս ու աղջիկ քովը կուգան,
Էժան կուտա, կը բաշխն :
Աշխ, յարս ինձեն խռովել է,
Ինձի շատ քանզ կծախս :

Համարյա արձակի աղատ տողերի տողավորություն գոր-
ծող այս ոտանալորը բանաստեղծական է ներքուստ՝ Հե-
ղինակի պարզ ու վճիռ կենսազգացողության շնորհիվ :
Խսահակյանի պոեզիայի կուլտուր-պատմական հսկայա-
կան արժեքը այդ կենսազգացողությունն է, — իրերի, առ-
ուարկաների, հարաբերությունների պոետիկ պանծացումը :

Խսահակյանը իր կյանքը զարդարել է պոեզիայով : Նրա
պոեզիան զարդարում է բոլոր հասակների կյան-
քում, սերունդների դիտակցության մեջ և նրանց ներքնաչ-
խորհում, — կա՛ Խսահակյանի պոեզիան, որպես և՛ սփո-
փանք, և՛ հույս, և՛ սեր, որպես ուսուցիչ և դաստիարակ,
և մեր ստացած քաղաքացիական ու անհատական զաստիա-
րակության մեջ մենք որոշակի զգում և տեսնում ենք այդ
պոեզիայի աղջեցությունը : Արիստոտելի, Բելինսկու,
Նալբանդյանի խստապահանջ էսթետիկայի ողու վրա
հենած Խսահակյանի գեղարվեստական պատկերը գաստիա-
րակել է մեզ դդաստ կենսազգացողության վերաբերմունքով
գեղի իրականությունը և դա է հայ պոեզիայի պատկերայ-
նության էվոլյուցիայի վերջին, տրամաբանական եղբակա-
ցությունը վահագնի երգից մինչ «Մասմա Մհեր» Խսահակ-
յանի վիպերգը, որի տողերը այլևս դրված չեն, այլ վո-
րապերություն, ժեռուս աղառամների վրա :—

«Ով զերկաքն իշխնե՛ իշխանն է մարդուս»—
Հայոնում է Դավիթը տիկին Խանզութին վոքր Մհերի
ծննդյան առթիվ :

Սա է պոետական մտքի ստեղծագործության սահմանը,
որից այն կողմ պարզություն չի կարող լինել :—

ինձնից քռնեցեք, խորտակված մարդիկ,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր.
Զեր խարիսխները ոտքիս տակ ձգեք,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:

Իսահակյանի պողիան իր հավաքականության մեջ այս
խոտաշունչ տողերին ալելացրել է խոսքի ծաղիկներ, ընդու-
նել գույներ, որոնք մեղմելու էին խստաշունչ տողերի ո-
վին, բայց և ներկայացնելու հայրենի բնությունը և երդե-
լու կույսի սերը: «Մարմար Զարոյի» պատկերը իր գույնե-
րով դնում և հասնում էր Գրիգորիս Ախթամարցու երդե-
րին, վարդին և սոխակին: Իսկ արարական բանաստեղծի
քարտվանի միջնադարյան դողանջները լոկ արձադանքն էին
այն հաղթական քայլերի, որոնցով անցնում էր Իսահակյա-
նը բուրժուական հասարակության միջով դեսլի մարդու
արևոտ ապագան:

Ավետիք Իսահակյանի ստեղծադործականի կյանքի մեջ
այսօր բոլորվում և ավարտվում է հայ դասական դրակա-
նության բազմադարյան պատմությունը՝ կանգնած սովե-
տական մարդկության արդարամիտ խոսքի և մեծ խղճի ա-
ռաջ: Ծնվեց «Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպը, որ
ծնվի Իսահակյանի Պրոմեթեո — Մհերը: Առաջ եկավ ժո-
ղովրդական հաղթական հումորը և ծիծաղը, որ Իսահակ-
յանը նրանց առատորեն շաղ տար, նախ և առաջ «Ուստա-
կարոյի» մեջ: Դարերում կանգուն մնացին հայ ճարտարա-
պետության կոթողները, որպեսզի Իսահակյանը տեսներ
մեր անպարտելի ոգին հավիտենական մարմնի մեջ: Անհա-
տի սիրող սիրութ փառավորվեց միջնադարյան տաղերում և
Սայաթ-Նովայի կողմից, որպեսզի Իսահակյանը երգեր այդ
զգացմունքը մարդու նոր պատմության օբերին: Երկարեց
հայկական տառապանքը, որպեսզի նա դժոնի իր ջահակիք
ասպետին՝ Ավետիք Իսահակյանին:

Այսպես, ահա՛, — ապրում է նրա մեջ և՛ պատմիչը, և՛
դուսանը, և՛ ժամանակակից մարդը: Կանգնած է մեր առաջ

բանաստեղծ՝ ի ի լի սովորան, որը դանդաղ քայլերով անցել է և
կտրել ամենամեծ տարածություններ:

3

Բանաստեղծի մտավոր պատկերային կառուցումների
մեջ Շիրակը — իր վաթանը — երկան եկալ որպես մի ու-
րույն աշխարհ: Ավետիք Շիրակացի — այսպես կարող էինք
մենք հասկանալ նրան, որպես հին աշխարհում հասկացել
են Մովսեսին, տալով նրան Խորենացի անունը, Գրիգորին՝
Նարեկացի անունը: Իսահակյանն անմահացրեց Շիրակը և
անմահացավ ինքը: Նրա գյուտարարությունը մեր պոեզիա-
յի մեջ պատկանում է Իսահակյանին: Նա իր ծննդավայրի
հետ կապվել է մանկական և պատանեկական տարիներին
անմիջական տաղավորություններով: տեսել է այնտեղ և՝
դյուդ, և՝ քաղաք, և՝ անցյալ, և՝ ներկա և ապրել իր վա-
թանի ապագայով: Իսահակյանի պրապող մտքի և որոնող
հայացքի համար Շիրակը գտաքրքիր էր անկրկնելի յուրա-
հատկություններով: և Իսահակյանը մեծ ծարավով ըմպել
է Շիրակը՝ նրա կենցաղի, նրա պատմության ու ճարտա-
րապետության, նրա սրամիտ քնակիչների, նրա մով եր-
կընքի ու կապույտ լճերի ու փառահեղ Արագածի պատ-
կերներով ու դարերով եկած ու հարստացած սրտառուչ
Փոլլուրով: Շիրակի մեջ Իսահակյանը գտել և կառուցել է
մի պոետական շքեղ ապարանք և բազմել այնտեղ, որպես
նրա տերն ու արքան: Ահա ինչու Շիրակի յուրահատկու-
թյունը դարձել է Իսահակյանի պոեզիայի յուրահատկու-
թյունը:

Մի զգացմունք, մի տիրապետող ոգի կա շիրակյան պո-
եզիայի մեջ — դա Իսահակյանի օղեղեն, երկնային վերա-
բերմունքն է իր վաթանին: «Մաքուր ու ջինջ», «Վարդ ու
արոտ», «զուլալ», հեքյաթային է նաև — վաթանը: Ուժան-
տիրակի գերազըական աստիճանն է սա — անհաս սիրո և
մաքրության ու բախտավորության երգը, երբ մի համբույր
կարող է աշխարհ լեցնել. —

կդ համբույրեն մի հաս էլ տուր,
Տանիմ աշխարիս մաք տամ.
Ինչքան դառն սրտեր տեսնեմ՝
Տամ, հոտն առնին, անուշնան:

Զմբուխտե և աղամանդե աշխարհն է դա, ուր ոինամ
Հավերը կթուչեն ու կտանեն քրտղ հեռուներ: Մարդու
Կրազացած ծիրանալառ թաղուհիների մեջ կլսե ոսկի հեք-
յաթ աշխարհներեն դյութական: Մարդու անեացման զգա-
ցողությունն է սա, երբ ամեն ինչ չքանում է դարունների,
բուրմունքի, արեի շողերի և սիրո բույրերի մեջ:

Սարի գիշե՛ր, սիրուն գիշե՛ր,
Մեղը կիշնի ասողերեն.

Ողիացած է, հիրավի, բանաստեղծի վերաբերմունքը
գեպի իր վաթանը. իրենից այդ վերաբերմունքը նա տարա-
ծում է ողջ բնության վրա և բնությունն ամբողջությամբ,
մինչև վերջին շյուղ; ապրում է ողեշարժ այդ հերքը.—

Ծի՛վ-ծի՛վ հավեր կտուց՝ կտցի,
Ծաղկունքի մեջ, քուն մտան.
Հավերի պես ե՛կ, ծոց ծոցի,
Ի՞մ հազար սեր սիրելան,
Խմենք երկեցի մեղրագինին,
Ծաղկունքի մեջ քուն մտնենք,
Լուս նայելով վառ աստղերին՝
Աստղերի մեջ քուն մտնենք:
Իրար զրկած՝ ես ու դուն՝
Երազներով հովերու,
Հավերժ բոչինք ես ու դուն՝
Աստղերեն ասող, ու հեռու...

Մարդկային ապլումների ամենակատարյալ նրբա-
ցումն էր այս զգացողությունը, մի զգացողու-
թյուն, որ համակել էր Ռուսաստանի և արևմտյան Եվրո-

սպայի, դեմքի արվեստը գերազանցապես թեքված սուեղծաւործական ինտելիգենցիային և որի հարկ ու պատշաճ ու բարձր արտահայտությունը մեղանում հանդիսացավ Ավետիք Իսահակյանի զգացողությունն իր վաթանի ոռմանտիկ դյուտարարության նկատմամբ պոեզիայի մեջ:

Բայց այս գյուտարարությունն Ավետիք Իսահակյանի համար ունեցավ երկու հետեւանք. մեկը — միշտ թարմ սերը գեղի վաթանը, որ աճեց և կազմեց մի բարդ ու խոչչոր դաշտափար և դարձավ զոմինանտ զգացմունք և երկրորդը — որպես նոր քաղաքակրթության բանաստեղծ, նազգաց, որ անհատն արագորեն կատարելագործվում է իր մեջ, դառնում խիստ անհանդիստ ու գիտակցելով տիրապետառող բուրժուական հասարակության նկատմամբ ունեցած իր բարոյական առավելությունները, պատրաստվում է զարնվել նրա հետ, բախվել և գոտեմարտել:

¶

Ավետիք Իսահակյանը համապարփակ անհատականությունն է:

Ի՞նչպես կարող էր անհատը դառնալ համապարփակ: Մեր պատմության հասունությամբ: 19-րդ դարի առաջին կիսին հայ վերածնունդը մարմնավորվեց Աքովյանի և Նալբանդյանի մեջ: 19-րդ դարի երկրորդ կիսին բանաստեղծությունն ապրում էր նոր վերածնունդի դժվար երկունք: Հովհաննիսյանով սկիզբ առած, նոր վերածնունդը Թումանյանի մեջ նշանավորվեց վերապանցապես էպիկական պոետիայի հաղթանակով: Իսահակյանը որոնեց ուղին ուղին վերածնունդը դարաշրջանի անհատական բեկմամբ: Եվ եթե «մեծ Օհաննեսը» ինչպես հաճախ սիրում է ասել Իսահակյանը, լայնահույ ընթացքով գնաց գեղի վերածնունդ, Իսահակյանն ընկալ մարդկային գոյության և մտքի խորիտրատներ, քրքրեց մարդկային հասարակության վերքերը, երգեց այդ վերքերը և ափ դուրս եկավ, վաստակելով:

իր բառերով ասած «քըքըված սիլու»։ Ուրեմն և դժվարին
պետք է լիներ նրա ապաքինումը։ «Լերմոնտովը իմ սրտի
վերքն է»։ — ասում է Իսահակյանը զրուցների ժամանակ։
Վերքի պատկերը Իսահակյանի ստեղծագործության մեջ
արտացոլումն է այն ողբերգության, որ ապրել է նա Փեռ-
զալիքմի մասցորդներն իր մեջ ընդունած բուրժուական-
քաղքենիական հասարակության մեջ։ Այդպիսին է եղել
իսահակյանին շրջապատող կացությունը, որ պահպանվում
էր բանաստեղծին ազգային վիրավորանք և վիշտ պատճա-
ռող ցարական բիրտ պաշտոնեությամբ։ Քնարական
հոգի — և չուղունե ծանրությամբ այդ հոգու վրա իջած
պետականություն, որ իրենը չեր նույնքան խորթ կլիներ,
եթե իրենը լիներ։ Հայ, ոռուս և եվրոպական հին և հուման
նոր կուլտուրան իր մեջ վերցրած բանաստեղծը կանգնած
էր պատմական որբան նոր, նույնքան և հին հասարակական
ու պետական կյանքի հակասական շերտավորումների բարդ
և անլուծելի հանգույցների առաջ, և սակայն, ձգտում է
լուծել այդ հանգույցները, ձգտում է ներդաշնակության և
նորոգ կյանքի։ Առավել ևս խորանում և ընդարձակվում էր
իսահակյանի ստեղծագործական անհատականության նշա-
նակությունը, և հայ իրականության համար նրա քնարեր-
պությունը ստանձնում էր կարեւորագույն մի խնդիր — վա-
րել հայ գեղարվեստական խոսքը և կյանքի վրա նրա ունե-
ցած ներդորժությունը «հայոց վշտի» ու բաղմաերախ բըռ-
ցած ներդորժությունների բոլոր նավաբեկումներով, վերք տալ
նակալությունների բոլոր նավաբեկումներով, վերք տալ
վերք առնել, և լալ, և ինդալ, և նզուլել ու նզուվիլ,
և մարդարեանալ ու հողեղեն դպալ, և «անիծել մարդուն,
որի հույսն է մարդը», և լինել այնպես, որ մահվան
վայրկյաններին անդամ քաղցր թվա իմաստասիրության
նոր լույսը։

Իսահակյանը մեկ անհատականություն է, բայց նրա մեջ
բեկված է բազմաթիվ շերտավորումներով, հակասություն-
ներով ու հանգույցներով, չնի և նորի, նորից նորի և հնի
սլայքարներով ապրող մեր հասարակական գիտակցությունն

ու մինչ-սոցիալիստական պատմական դոյավորմակը : Այդ
գոյավիճակի ինքնաղիտակցությունը դառած մեծ անհատա-
կանությունը (զարմանալին հենց այս է), — ժամանակի
վերքերը հռչակել է իրու իր վերքեր . նա որոնել և դտել
է իսկապես այն համապարփակ շրջադիմը, որ բոլորին և
ամեն ինչ՝ իրենց բոլոր և ամեն ցավերով ու վշտերով,
պետք է առներ իր մեջ և աշխարհի ցավը պատսպարեր իր
սրտի տակ : Բանաստեղծն ասում է . . .

— Սիրտըս երկինք է . . .

Ամեն արարած

Ասող ունի այնտեղ —

Գահ ունի այնտեղ :

— Սիրտըս երկինք է . . .

Բույր կուտա ծաղկին,

Սեր կուտա կույսին,

Կյանք կուտա անկյանք,

Զոր անապատին —

Ամայի սրտին . . .

— Սիրտըս երկինք է . . .

Նույնիսկ կես դար այս տողերից հետո Իսահակյանը
ոփեղերքի ծանրությունը կվերցնի իր վրա, որպեսզի տիե-
զերքը փոխադարձարար կախված լինի իրենից . . .

Տիեզերքն այս անսահման

իր ծանրությամբ ահազին

կալսված է սոսկ մի մազից, —

Եվ այդ մազն է իմ հոգին :

Սակայն խոցված անհատի, սորկացված աղդության և
«աշխարհի խորթ տղերքի» ու «դառը դատած, դատարկ
նստած» . սոցիալական ճշացող անհավասարությունների
բանաստեղծը իրական մարդ էր և տիեզերքի անհունությու-
նից դիտեր սլանալ դեպի երկիր ու տառապազին դիտել . . .

Մարդն հողեղեն լսեղն նիմու է,
Հողի վրա միշտ պիտ սողա.

Ավետիք Իսահակյանն առլրել է ստեղծագործական ան-
հատականության ամենամեծ վիշտը — մենակությունը՝
Դա այն խարազանն է եղել, որով տիրող հին հասարակու-
թյունն ու բանակալությունները կամեցել են ջարդել նրան,
ինչել նրանից նրա ջերմ կենսաղացողությունը։ Եվ Իսա-
հակյանի մեջ մենք կկարգանք անհատի մեծ ողբերգության
արյուն-արցունքու բաղմաթիվ տողեր, որ թափել է նա
իրեւ մենակության դառն հատուցում. —

Մեկը չեղավ, որ իմանար վշտերս,
Քենուշ ձեռքով դարման աներ վերքերիս . . .

Եվ ահա. —

Իմ հոգին տարագիր մի քոչուն՝

Մրրկով զարնված, քեաբափ.

Հողմերն են հեզ զլլիխ շառաչում,

Եվ ուղիս անհատնում և անափ։

Ժամանակակից սերունդներին Իսահակյանը մատուցեց
է այն խոշորագույն ծառայությունը, որ անցյալ ժամա-
նակների ճակատին խարակել է այլևս անջնջելի այս դա-
տավճիռը. —

Է՞յ դու մահվան անմահ աշխարհ,
Գերեզմանի պես տիուր,
Բախտ ես կոել մարդուս համար,
Զնդան ամուր, ամբակուու։

Այսպիսի տողեր ծնվում են տասնամյակներ մեկ ան-
գամ, իրեւ պատմությունից արված դաժան եղբակացու-
թյուն, որին հասել էր բոնություններից ու անաղատու-
թյուններից «մրրկով դարնված», բայց աշխարհի ցալով
սեռնված բանաստեղծը. —

Ու օրերիս քարավանը,—

տըխուրատրտում առաջ կերքա.

Հազար ցալով, մարդկանց ցալով

ծանըր բեռնած համբա կերքա:

Մարդու ծանրագին վշտերը որդեղդրած իսահակյանից քնարեւդությունը, այդ վշտերի խորության հետևանքով, փոխակերպվում և ընդարձակվում է տառապանքի էպիկական երգի, լայն և օբեկտիվ հայացքի մարդու նկատմամբ: Մեր արվեստի մեջ սա այն հատկությունն է, որը այսպես կոչված փոքր ձերն տվել է մեծ միտք և այդ միտքն արտահայտելու խոչոր արվեստ:

5

Իր համապարփակ անհատականությունը Ավետիք իսահակյանն ի սովոր դրեց մարդկային ողու ճանաչողությանը, մարդու ձեռքի և մտքի արդասիք հանդիսացող իրականության, առա և բնության և նույնիսկ այն անընդգրկելի տարածության իմացությանը, որ նրա լեզվով կոչվում է տիեզերք: Թո՛ղ նաև ասի թե արեային համակարգությունը կախված է բանաստեղծից: Թո՛ղ որ մյուս գետքում տիեզերքի հանգեց նա դժա իրեն մի անօդնական ձնձուկի: Թո՛ղ որ արեն անզամ անհայտով ու մթությամբ պատաժ լինի: միենույն է — այն ոգին, որ «շնորհ է միշտ՝ քանդելու նորից»: — չէ գերազանց իր «խեղճ հյուլեից»: որին տրված է և՛ դիսակցություն, և՛ տեսօղություն ամենայնինչ ճանաչելու երջանկությունն ապրելու համար: Սակայն իսահակյանի համար ճանաչողությունը կարող էր գալ ճըշմարտության հասնելու դնով: Ճանաչողությունը դիտակցության երջանկությունն է, եթե կա ճշմարտություն: Եվ բանաստեղծի ուղին եղել է ճշմարտության անվերջ որոնումների ուղի: Խարիսակման ու խաթեռության, անդիտակցության աշխարհը նրան թվացել է իսկավար աշխարհ, որին լույս կտա միայն ճշմարտությունը: Ավելի խորունկ զգալ

այդ ուղին, ավելի ճիշտ ճանաչել սեփական կոչումը, քան
այդ դգացել ու ճանաչել է Իսահակյանը 20-րդ դարամուտ-
քին — 1900 թվին, դժվար է պատկերացնել, երբ կարդում
ես այս տողերը —

Զայնըս հնչում է խավարի խորֆից, —

Գըքա՛, հայտնվի՛ր, սուրբ նշմարտուքյուն.

Ես քեզ եմ փնտոել իմ կյանքի շեմքից,

Եվ տե՛ս, քարացա անհուն տանջանքում:

Բյուր ուղիներով ես դիմեցի քեզ,

Քո հետքն ու շուքը նույնիսկ չը գըտա,

Տե՛ս, սբուքյան մեջ, մոլոքուքյան մեջ

Զախշախվեց կյանքը... ու դու չե՞ս գըքա...

Հոգնած եմ հիմա, անուժ ու հիվանդ,

Բայց հավատում եմ — ունիս գոյուքյուն. —

Բայց էլ չը մնաց մի ուղի անհայտ. —

Ա՛խ, երեացիր, մեծ նշմարտուքյուն...

Եվ ես ուժ կառնիմ, կը գոտեպընդվիմ,

Ցուպըս կը վերցնեմ և նամբա կերքամ,

Լույսըդ կավետեմ խավար աշխարհին,

Մոլոք մարդկուքյան վեհ կյանքը կուտամ...

Սա բանաստեղծի ինքնանկարն է, ճշմարտության ան-
հրաժեշտության ինքնագիտակցումը, նրա բյուր ուղինե-
րում անհուն տանջանքով քարանալու ամենաանկեղծ խոս-
տուանությունը: Այս տողերից հառնում է Իսահակյանի
պատկերը, ճշմարտության տառապանքի խորչումները ճա-
կատին:

Մակայն որո՞նք են՝ այդ ուղիները: Մենք ի վիճակի
չենք մեկ առ մեկ թվարկել դրանք. դժվար է նույնիսկ
հասկանալ բանաստեղծի բանականության բոլոր կեռման-
ները: Բայց անկասկած է այն, որ էպիքական խորությամբ
արլած նրա եղբահանդումների մեջ ամենից առաջ բաղխվել

Են կյանքի և մահվան ուղիները։ Եվ որովհետև հին ու
տիրապետով հասարակությունը իսահակյանին կյանքի
ստիմուլներ չի տվել, այլ և սպառնացել է խել նրա ստեղ-
ծագործական կայտառ ուժին, բանաստեղծին մնում էր ան-
վերջ դիմադրել մահվանը և միաժամանակ տեսնել թե ինչ
մեծ է եղել մահվան շարժումը։

Ասես, անձայն,
Մի քարավան
Գիշեր ու զօր
Կերքա՛, կերքա՛...
Ողջ աշխարհը

Կը տրոքե,
Փոշի կանե,
Քամուն կուտա:

Եվ հավիտյան
Կերքա՛ կերքա՛...

Դա մահն է.

Աշխարհն՝ հավիտյան
Մահկան քերանում,
Եվ մահը ճրան
Ծամում է, ծամում:

Համամարդկային վշտակցության դգացումը իսահակ-
յանին օդնում է դուրս դալու լաբիրինթից և ճանաչելով
մահվան ուղին, նա վերստին դառնում է կյանքին։ «Հա-
մայն աշխարհի բախտը սպացող» բանաստեղծը երգում է
«Ասպետի սերը» և «Հավերժական սերը»՝ այսինքը մարդու
բուն իսկ էությունը կազմող զգացմունքներ, որոնք բախ-
վում են մահվան, ոչնչացնում ոչնչացումը։ Հավերժակա-
նը կյանքն է։

Ժամանակը իր վախճանին կհասնի
Եվ արկը մի բուռ մոխիր կդառնա,

թայց իմ սերը վախճան չունի, իուն չունի,
Նու հավերժ է, նու անշեշ է, նու անմահ...

Ուեակցիայի տարիներին դրսված հայ արձակի ամենա-
շնցող երկերից մեկում՝ «Անանդան և մահը» պատմված-
քում, ուր արված է մահվան և կյանքի բախումների փի-
լիսոփայական նկարագիրը, իսահակյանն ընթերցողին բե-
րում էր այս եղբակացությանը՝

«Կյանքն է ամենալորը, հավերժականը և իրականը,
իսկ մահը՝ սոսկ մզձավանջ:... մահը չի կարող անհացը-
նել իմ եսը՝ ժամանակ — տարածությունը:

Ես եմ իրը մշտագոհ, հավերժ ու անփոփոխ, իսկ մա-
հը՝ երեռյթ միայն»:

Եթե կյանքն է հավերժականը, իսահակյանի համար,
ապա, սերը կյանքի սինոնիմն է: Սեր դեպի մարդը, սեր
դեպի բնությունը, իր բովանդակ ծալալով, սեր դեպի
ծովը, ծաղիկը, սեր դեպի անապատը, դեպի հարազատը,
մանուկը. և վերջապես — սեր կնոջ նկատմամբ, որբազան
սեր դեպի մայրը: Իսահակյանի երեակայության մեջ տեղ
ունի ամեն ոք. նրա համապարփակ անհատականությունը
ստեղծագործության մեջ ընդդրեկել է կլասիկ արևելքի պատ-
մությունն ու միտքը, արևմուտքի հոսանքները, անտիկ
աշխարհը, ժամանակակից մարդկությունը, բոլոր ցնցում-
ների ու պատերազմների պահին. և այդ բոլորի մեջ հայ
ժողովուրդը, հայ հայրենիքը որպես երազների կիզակետ:
Ամեն տեղ և մարդու բոլոր հայրենիքներում իսահակյանը
զանել, առանձնացրել, բարձրացրել է մարդկայինը՝ այն,
ինչ միասնացնում է խորհուղ ու փիլիսոփայող, ստեղծող
և առլորդ մարդկությունը: Մեծատառ մարդ, մեծատառ
մարդկություն — այս իդեալն է նաև կոնկրետացրել իր խո-
հական ստեղծագործության մեջ: Ահա! ինչու նրա արվես-
տը ժխտել է աղքային սահմանափակությունը, որպեսզի
աղքայինի արժանապատվությունը մեծարվի համամարդ-
կայնության մեջ: Այդպես էլ նրա սերը: Իսահակյանի սերը

ունիվերսալ գլացմունք է, որը նա շնայլ կերպով դաժանել է բոլորին։ Աեր, որ բխել է մի աղքատութից, բայց գտել բազմերանգ և բազմապիսի արտահայտություններ և դա է պատճառը, որ իսահակյանը ինչի մասին էլ գրի, միշտ հետն է սերը՝ նրա բոլոր հասակներում։ Այդ է պատճառը, որ նրա պոետական տողից անբաժան է անտեսանելի մի սորվեր, մի շղարշ, մի դեփյուս, որ բանաստեղծի սիրուցն է, նրա շոյով զլացմունքից։ Բայց ինչո՞ւ մի մարդու այդքան սեր է տրված։ Այս հարցին պատասխան չկա, որովհետեւ պատասխան չկա այն հարցին թե ինչ կկորցներ կյանքը, եթե սերը չլիներ։ Իսահակյանն աշխարհ և կալ, որ սեր տա, սեր առնի։ Նա պճնեց իր սերը գյուլիստանի բոլոր վարդերով ու արևելյան ապարանքների բոլոր աղամանդներով։ Այդ սիրո համար նա չխնայեց ո՛չ սիրտ, ո՛չ արցունք, ո՛չ ժամանակ և ո՛չ էլ խոսք։ Նա երկար որոնեց այդ սերը, հանուն նրա անձրևներ ու կարկուտ կերակ, մոռացավ իրեն։ Վաթանի հպարտությամբ պարուրեց իր սերը և մի պահ հայտառում էր, որ կա՛, կլինի նա։ Բայց, ամա՞զ, սիրո քաղցրությունը երազ է, չքանում է նա և տեղը մնում տիսրություն, թախիծ։ Մոայլվում է բանատ տեղծի հոգին և նա կոչում է սիրուհուն — հասկանալ եթե ոչ բանաստեղծին, ապա հենց իր կենարար առավելությունը։

Հոգի կուտամ, հոգի սո՛ւր ինձ,
Իմ նազելի աչագեղ։

Սիրոս — սև արտ, սերդ ալ վարդ,
Թո՛ղ բողբնջի նա այնտեղ։

Սիրոլս — զիշեր. սերդ — վառ աստղ,
Թո՛ղ շողշողա նա այնտեղ…

Սակայն, չնայած իսահակյան — պոետի անթիվ ու անհամար խոստովանություններին — լինել ամեն ինչ — սիրո մեջ սփոփելու համար, — սիրուց մնացել են միայն «չոր փշեր»։ Մղվելավ իրական սիրուց դուրս — դեպի ե-

թեր, երազների մեջ անցնում էր սերը օրոր ու շորոր, ինքը լնկած ջարդված ու անհույս։ Իսահակյանի սերը «հասել էր արևներուն», խալ պատասխանուը եղել է սառույցի նման սառը. այս ահագին հակասությունը, բնականաբար, սիրունքերը դարձնում էին դահճի կեռ թուր և նրա հարսանկան հաղուստը սիրող սրտի արյան արտացոլում։

Իր հասունությամբ իսահակյանի սերը վերականգնացնում էր Քուչակ Նահապետին, իր տիրությամբ — Սայաթ-Նովային։ «Սիրոտ արյուն է լալիս», — ասում է Իսահակյանը, — «Արտասուրըս արյուն շինիր» — երգել է տարաբախտ Սայաթ-Նովան։ Թե՛ այս և թե՛ սիրո ընդհանուր հոգեբանությամբ իսահակյանը հավատարիմ էր մնացել հայ պոեզիայի սիրային քնարերգության ուղղակի դարմավոր տրաղեցիաներին։ Բայց մենք պետք է ասենք, որ երկու մոմենտում առանձնանում էր այդ սերը իր դարավոր սկատկերացումից։ Բացի նրանից, որ իսահակյանը գեցեցկությունը հռչակեց հավերժական վշտի աղբյուր։

«Ուրտեղ սիրուն կին կտեսնեմ,
կնորանան դարդերս»։

և սիրո մեջ լուծեց անսահման տարածություններ, —

«Յա՛ր, աչերըդ արեգական
շողբով վառված ծովի նման».

կամ թե, և հենց սիրո համար, —

«Սիրորս ճորեն կալեկոծվի
Ճնդստանու ծովի նման»...

Սակայն մեկ մոմենտն այն է, որ սիրո անհատական տառապանքը խորացրեց բանաստեղծի հասարակական վիշտը և մյուսը — այս դեպքում ևս իսահակյանը փոքր ձևից անցավ էպիքական զգացմունքների և լիրիքական ապրումներից հյուսեց սիրային ողբերգություններ՝ «Ասպետի սերը», «Հավերժական սերը», «Լելլի և Մեջնուն», «Սիրահար Նաղոն» և այլ գրվածքներում։ Այլևս հետաքրքիր չէ դեպքը

և անձը . սերը պետք է ճանաչի օրեկտիլ իրականությունը . սիրո և իրականության բախման մեջ ճանաչվում է աշխարհը և իսահակյանի խոհական կառուցումների մեջ՝ վերջի-վերջո , սիրո տառապանքը միաձուլվում է ընդհանուր տառապանքին և բոլորը մեկ տեղ խորացնում են ժամանակի կնճիռները : Աշխարհը , ապա և արդեն ճանաչված է որպես և՛ սիրո , և՛ մարդու , և՛ կյանքի հակոռնյա ուժ :

Իսահակյանի սիրո իդեալը մայրն է : Սա — Իսահակյանական զգացողություն է , նրան է պատկանում մոր , որպես սիրո աստվածություն հոչակելու պատիվը : Մայրը — անխառը , մաքրամաքուր սերն է : Մայրը օջախ է : Մայրը — հայրենիք է : Մայրը — տառապանքի ողջակեղն է , մայրը հույս է , սիրովանք է , փառոս է , որ իր լույսով կանչում է կենսական ծովի դոս ալիքներին կուլ դնացող զավակներին : Մայրը ինքը հավատարմությունն է և ամենամեծ վիշտը և ամենամեծ ուրախությունը : Զկա մայրերի եսը , բայց կան նրանց պտուղները , որ վայելում է մարզկությունը : Հայ մայրը հավաքել է հայրենիքը՝ հալածանքների ու աշխարհակալությունների գեմ , պահել է մոխիրը և այդ մոխիրների տակ հայրենիքի արթնացման հույսի կը բակը : Մայրն է , որ միացնում է բոլոր հասակները և ծեր մարդուն մանուկ թողնում : Կա մայրական ամենաճանաչ մի բնագդ , որ գտել է հոգեբան իսահակյանը , — ամենայն ինչ , որը նյութական է , կարող է տրմել ում ուղում եք , բայց մայրը կպահի զգացմունքը , կպահի հոգեկանը , որպեսզի չկորցնի ամենահեռավոր պանդուխոտ որդուն անդամ ճանաչելու կարողությունը . —

«Այս , բալա ջան , դարիք բալա ,
կդ դո՞ւն ես» .

Ծով համբերության մեջ մոր սիրու նույնչափ ներուշամիտ է և անհիշաչար : Անվերջ բարություն , անվերջ ներուղամտություն և տառապանքի տապանաքարը հայերժ իր վրա — այսպիսին է իսահակյանական մոր պատկերը մեր

պլոեզիայի մեջ։ Իսահակյանի ստեղծագործության մեկ էջն
է սա, սակայն զարգարուն էջը, որ պատկանում է ամբողջ
կրականությանը։ Անցյալում ճնշված ժողովությունները, ո՞
րոնց թվում և հայ ժողովուրդը, կարող են հասկանալ մոր
պատկերի ձղական ուժի նշանակությունը, հայրենի օջախի
ծուխը վառ պահելու և այն բորբոքելու մեջ։ Նրանք հաս-
կանում են Իսահակյանի կերտած սրտառուչ մայլական
կերպարի բարոյական աղղեցությունը մարդկային հասարա-
կության դաստիարակության գործում։

Բայց ո՞չ հավերժական սիրո խղեալը և ո՞չ մայլական
բարձր կերպարի ըն հասարակության համար չէին։ Այդ
հասարակությունը մերժեց թե՛ մեկը և թե՛ մյուսը, մը բենի
ծաղրով ծաղրելով այդ հավիտենական արժեքները։ Իսա-
հակյանը ստեղծագործում էր տպագայի համար։ Ուրիմն և
ամենի ցանկութ էր դառնալու նրա բողոքը ամեն ինչ առու-
ծախութ հանած հասարակության ու պետականության դեմ։
Սերը վաճառված, կինը վաճառված, մայրը տարարախտ,
որդին պանդուխտ, հայրենիքը թշվառ և պերճ արստավայր
լիրը հարուստների, մարդ, որի սիրտը վերքով է պատած,
մարդկություն, որ ցափով է բեռնված։

Ի՞նչ անել։

Այս բարդ և ծանրագույն իրականությունն ընկալելու
մեջ Իսահակյանը երեան բերեց մի զարմանալի հատկու-
թյուն, այն է — ներանձնավորվեց իբրև ոխակալ անհատ՝
չարիքի ընդդեմ։ Նրա խոսքը դարձավ առնական, նա
դառակ և պատղամարերի, և մեղադբողի լեզու, դիտեց
անշարժությունը, ճաշակեց դրա ամբողջ դառնությունը և
մթնոլորտի թույնն առավ իր մեջ՝ ոչնչացնելու արտաքին
աշխարհի թույնը։ Այս պարագաներում ծնվեց անաղատի
պատկերը։

… Եվ ես ապատում և անապատում
կուր բափառում եմ հոգիս ծանրացած。
Անլույծ խոհերով, վշտով անպատում
Եվ տեսչանքներով տիեզերատարած։

Բանաստեղծը կանգնած է պորչ իրականության վրա և
ահեղ դատաստան է կարդում ամբոխի հասցեին՝ նրա
հոգու մեջ պահապիմելու համար, նրան խայթելու, և՝ քա-
րոզելու, և՝ արտասլելու, և՝ այրվելու... Ամբոխին նա
ավելացնում է «նյութի տաճարում արբած ճոխ սեղանի
մարդկանց» որոնց համար «կվա ովու սով»: Սա այն ջըր-
բաժան գիծն է, որ զատում է ստեղծադրությունը և ողբին
անշարժ ամբոխից ու ուկու հերոսներից, անհատի սեփա-
կանությունը մնալու համար: Մի սահ քարանում է բա-
նաստեղծը սոցիալական իրականության հանդեպ, զարհու-
րած նրա գագանությունից՝

Կյանքն է պայքար զոռ ու դաժան:

Ճգմի՛ր մարդուն և քոփի՛ր վեր.

Իրավունքը ուժն է միայն,

Վա՛յ հաղթվածին, հազար վայեր:

Տեր կամ ըստրուկ պիտի լինիս,

Ճշմարտություն չը կա ուրիշ:

Ուղեմն, —

Չես սպանի, ֆեզ կսպանեն,

Դու սպանի՛ր, ֆեզ չսպանեն:

Սոցիալական անարդար կույլի մեջ բանաստեղծը սուրը
վայր է դնում, որովհետեւ այդ կովում նա չի ուղում, —

Խլել քերանից արնոտ հացը աղքատի,

Վառ քրտինքը ծըծել տանջված նակատի... .

Գտնվել էր վրիարար դադարարին հասնելու ուղին:
Խսահակյանը հենց 1905 թ. առաջին ուկոլուցիայի տա-
րին, լեցված «անհուն վրեժի և ատելության կրակով»,
զրկվածին չի բերում հաշտության դավաճանական խոս-
քը: Նա սրում է թշվառների, անտունիների, անոթինե-
րի, շղթայականների, քրտինքը դառն ծովացրածների
ժանիքը և նրանց քարացած բուռնցքում դնում ահեղ ճը-

մարտի սուլը և վառում աղատության ու իրավումքի խառ-
րույկը։ Սա արդեն կոչ է ուղղված աղատության զանդին, —

Եվ բավական է՝ անարդ լծի տակ
Մենք ստրուկ մնանք՝ ձեռները շպա՛...

Եվ մեզ ամենքիս մըսնչա՛, կոչե՛...

Մահվան ու փառքի դաշտը պայքարի.

Սըրբազան ուազմի շեփորը գոչե՛...

Ընդդեմ բռնուրյան, ամբարիշտ Զարի։

«Բյուր ուղիներ» անցնելով, Իսահակյանը հասել էր
ժողովուրդների եղբայրության գաղափարին՝ ընդում սո-
ցիալական և աղջային բռնության։

Այս մաքառումներում առնականացած նրա մեծ տա-
ղանդը ռեակցիայի տարիներին կանդնեց անհատի համար
զերմարդկային մի մեծաղբույն և ամենածանր խնդրի ար-
ուած — պատկերել տիրող հասարակությունը, նրա բոլոր
ինստիտուտները, նրա հիմնական օրենքները, ծավալել
նրա բոլոր հիմքերի ընդարձակ քննադատությունը։ Իսա-
հակյանը կանդնած էր մասնավոր ռեփականատիցական հա-
սարակարժիք բացասման խնդրի լուծման առջև։

6

Մեծ է Ավետիք Իսահակյանի բացասման ոգին։ Մարդ-
կության անցրակ պատմության նկատմամբ նա ճաշակեց
ամեն ինչ, որ չընդունի ոչինչ։ Նա գաղափեց այն փիլիսո-
փայությունից, որն աղդաբարում էր՝ «քանական է
այն, ինչ իրական է»։ Իսահակյանը, ի լուր աշխարհին,
հայտնեց, որ իրականը չինված է բանականության հա-
կառակ։ Եվ նա չընդունեց, մերժեց, ժխտեց հին հասա-
րակությունների, պետությունների ու աղջությունների
կյանքի իրականությունը, ծառացալ նրանց դեմ ոչ միայն
մեկեկ-մեկեկ, այլ և հավաքականորեն, ամբողջությամբ։
Իսահակյանը չմնաց մի տեղ, մի տարածության վրա, մի

ժամանակի մեջ։ Նա իր երևակայությամբ թևակոխեց ընդհանուր պատմության ոլորտները և գուրս բերեց այն-տեղից բացաման ենթակա մեծ կերպարներ ու ամենայն կրքոտությամբ դատապարտեց դրանց։

Աթենքի ամբոխավար ատյանը մահվան է դատապարտել Սոկրատեսին, որ ձաղկել էր «չար կարդերը պետության» և «փոխարեն օրենքների մարդարավ» իմաստության կատարն էր բարձրացրել խղճի ձայնը, ազատ միութը, գեղեցիկը, ճշմարիտը։

Աթենան բարձրացնում է ահեղ սուրը արևմտյան աշխարհի դեմ։ Նրա բորբոքած խարույկների ամպերը ծածկում էին Եվրոպան։ Աթենան որի քաշնց և հովիվներին, ռամիկներին, ազատներին, գեղջուկներին, թափեց արյան ծովեր և սակայն չհագեցավ նրա սուրը։ Մահվան սարսուռ նա տարածեց աշխարհի չորս կողմ և արյան անհաղ արբեցումի տենչով վառված սուրն ահավոր գործում էր անընդհատ, մինչև որ միարձիւց իրեն իսկ՝ Աթենայի կուրծքը։

Սերբայի դահիճ, ահեղ բռնակալ Արդուլահ կաշան կեռ յաթաղանով սպանում էր արյունաթաթախ եղած ճերմակ Բելգրադն ու նրա շուրջը փալած երկիրը։ Բռնակալությունը ցանում է քամիներ, որ հնձի ժողովրդի ցասման վորթորիկներ։

Եի—Հոհանդ-Տի Բողդիթանը սպանում է Միտքը և Ռուխն, որ աշխարհակալի բիրտ ուժով և մարդու համար ամեն ինչ մնա անդիտության մեջ։

Սուլթան Փաթիհ Մեհմեդը իր արյունոտ տիրակալությունը տարածել է Բալկանների վրա և անրավ ոճիներավ ու մարդարավ խորամանկություններով է պահպանում էշխանությունը։

Չին կայսը՝ Ծին—Շե—Հոհանդ—Թիխ կառուցել է չինական մեծ պարիսպը, նրա տակ կործանելով միլիոնավոր կյանքեր։ Մահվան հողմ է փչում այդ պարսպից ժողովրդի շողում...

Աղղերի արյունով չաղախեց Զինդիզ խանը Դարա-Դո-
բումի պարիսպները և նրա մոայլ կամարների տակ պտը-
վում են արյունլվիկ եղած բյուրավոր գոհերի ուրվական-
ներ :

Այս երկնակամարի վրա երևաց Արու-Լալտ-Մահարու-
կերպարը և կենդանացած կանգնեց բացավող աշխարհի
գեմ-հանդիման : Թող՝ որ Արու-Լալան տասերորդ դարում
ունեցած լինի իր նախատիպը : Խսահակյանի գըչը տակ հա-
րություն էր առնում անձնավորությունը՝ նոր պատմու-
թյան մեջ : Խսահակյանի մեջ լուծվեց հինը և ահագնեց նո-
րը : Եվ Արու-Լալա-Մահարին — բացասման ողին — ժխտեց
բոլոր ժամանակներում ստեղծված և հակասությունների
վրա տապակվող հասարակությունները : Նա ժխտում էր
երրես դերադանց մի անհատականություն, արդարամիտ ու
ցասկոտ : Նրա մեջ խոսում էր սիրո բառը՝ վոխված ա-
տելության, ստելությունը դարձած թույն, խոսք, որ
ծածկել է մարդու հոգու դժոխքը — այսպես է խորհում
առաջին պահերին Բաղդադից հեռացող բանաստեղծը :
Կին, հայրենական տուն, հայրենիք, օրենք, հասարակու-
թյուն, իշխանություն, ամենը պետք է ժխտվեն, որով-
հետեւ չարիք են նյութում : Խսահակյանի բացասման այս
մեծ ընդդրկումներն ունեին իրական ելակետներ : Նա
ճանաչել էր իրականությունը իր կողմտության մեջ և շը-
թաների աշխարհում : Նա վրդովմունքի և բարկության
շանթեր է արձակում բոլոր նրանց, որոնք չունին առաջ-
նորդող միտք և հանդուրժել են կապանք և իշխանություն —
այն բռնի ուժը, — արյան մեջ թալալված սերունդներ
լափող անցյալ հասարակությունների այդ մեծ ավազա-
կին : Բռնակալության հալածող պատկերն է տրված Խսա-
հակյանի դատապարտության տողերով .

«Նա երեշի պես կրծքիս է նստել, բռունցքն է ահեղ
սեղմել նակատիս,
Եվ ամեն քայլիս շղթա է զարկել, փականք է դրել
լեզվիս ու մտքիս :

Նա փշրում է միշտ մեր ուսերը վար, ամենուր
հասնում, ճզմում է մարդուն,
նև իրավունքի դաժան անունով բյուր կառափներից
բուրգիր է կերտում:

Բոլոր կրոնները, կապիտալի տիրակալությունը, նյու-
թին գոհված հասարակությունը, այն որ կլանում է թուշ-
յն ու տկարին — նդոված են, որովհետեւ շղթա են կռում
և կոփում ստրկության զնդաններ: Բոնության, ստրկու-
թյան, խարեռության և կեղծիքի թաղավորությունը ժըս-
տած, իսահակյան — Աբու-Լալա-Մահարին տեսչում էր՝
«լինել անսահման աղաւտ, անողարտք, անիշխան, այլև ա-
նաստված»... տեսչում էր՝ «միմիայն մեծ աղատության՝
անհուն, ահտարտած...» և դա կլիներ արեի թաղավորու-
թյունը: Մոայլ պատկերներին հաջորդում են լույսի կա-
ռաքանության ոսկեծին պատկերներ: Այլեւ արեին է
փարված բանաստեղծը. —

«Դու աստծուց հզոր, դու միակ իմ սեր, դու միակ
իմ մայր, մայրական դու գիրկ,
Դու միայն բարի, դու միայն սուրբ, սուրբ, դու
գերահրաշ, միակ գեղեցիկ»...

Երկրադնդի վրա գոյություն ունեցող իրականու-
թյունն այլեւ ժխտված է իսահակյանի կողմից մեր ուե-
վոլուցիսայից տարիներ առաջ: Մեծ բացասումը աղջա-
րարված էր: Ո՞րն էր լինելու դրա մեծ հակառակությունը,
որովհետեւ իսահակյանի համար ևս պարզ էր, որ Աբու-
Լալա-Մահարու արելը պետք է լեզու առներ և խոսեր
մարդկային կյանքի բարբառով:



Իսահակյանը վաղուց ի վեր գնահատել էր ժողովրդա-
կան ստեղծագործությունը: Իր արլեստի վճիռ ու խո-

բունկ կենսազգացողությամբ ու տրամաբանության պո-
եզիայով նա արդեն շոշափել էր Փոլկլորի հիմերը: Սա-
կայն հարցը միայն այդ չէր: Իսահակյանը նյութեր քա-
ղեց ժողովրդի անանուն ստեղծագործությունից և
գրումեց իր վարպետության կնիքը նրանց վրա: Այդպես
ծնվեց մոր պատկերը, այդ ակունքով եկավ վաթանի գյու-
տարարությունը: Այդ ակունքներով բացվեց նրա առաջ
ժողովրդի մտածողության կոնցեպցիան, որ նոր հենարան
դարձավ աշխարհաճանաչողության դժվար դործի մեջ:
Թոլկլորը տվեց նրան հումոր և Իսահակյանը փոեց ժողո-
վրդի էպիֆական այդ վերաբերմունքը աշխարհի վրա: Ժո-
ղովուրդը երանգավորեց նրա լեզուն և այն ինչ եկավ ժո-
ղովրդից, վերապրվեց նրա մոտ ու վերածնվեց որպես
կուլտուրական բարդ երևույթ: Ժողովուրդը Իսահակյա-
նին — Իսահակյանը ժողովրդին այս փոխհարաբերության
մեջ են նրանք տասնամյակներ շարունակ: Ավելին, Իսա-
հակյանը հագեցած է, ծայրեիծայր լեցուն է Փոլկլորով և
նրա հմի ու զրուցանիրության, նրա ծանր, բայց խորունի
խոսքը, ինչպես նաև ճանաչողության ամենաքննին հատ-
կությունն — ամբողջապես հայ ժողովրդական ծագում
ունի և այդպիսին է:

Հարցի մեթոդաբանական կողմն այն է, որ Փոլկլորը
Իսահակյանի էվոլուցիայի բոլորման ռեալ հիմքը դարձավ:
Իր իգեալների կոնկրետացումը բանաստեղծը տեսավ ժո-
ղովրդական կյանքից ու նրա պատմական դոյլությունից
բախող եղրահանգումների մեջ: Կա իրական զանգվածային
ժի կյանք, իրական պատմական, աղջային, սոցիալական
ընթացքով: Եվ անհատը դուրս չէ այդ ընթացքից: Եվ Իսա-
հակյանը ձուլվեց կենսական օրինաչափություններին:
Սակայն բեկումը պետք է լիներ ցասկոտ՝ ընդդեմ բոլու-
րին, ով կանգնած էր Իսահակյանի և ժողովրդի միջև. և
այդ բեկումը եկավ հանձին Մհերի կերպարի և հայ ժողո-
վրդական վեպի ողաւ, որին ավելացավ հայ ժողովրդի և
ժարդկության նորագույն պատմության փորձի ճանաչու-

ԺԵ : Նորագլույն պատմությունն ու ժողովրդական կյանքի դարավոր անցյալը իսահակյանի զբքի տակ զուգագլխեցին, ստացան նոր արտահայտություն և Մհերը վերստին ծնվեց — այս անգամ որպես ժողովրդական ըմբռուտության դրոշակակիր :

Իսահակյանի Մհերը իրենով նորից էր սկսում ժողովրդական ամենալայն զանգվածների սոցիալական կենսապրությունը և ամենաառողջ բնադրներով ու մտքով ձանաչում բուն ժողովրդական կյանքը .—

Ռամիկ չարարատ
Չոր կուտե,
Հարուստ պարապ-մարդ
Մեղք կուտե :

Ռամկական բառերով արտահայտված էր դարավոր ճշմարտությունը .—

Էս էլ կյանք չէ.
Էս չար մահ է.
Հացն ու ջուրը էս պիղծ տեղի —
Օձու լեղի ...

Մինչեւ «Հացն է աշխարհքիս իսկն աղատություն և ռամիկն է աշխարհ-արարատ պահող շահողը» : Իրական կյանքից իսահակյանը զտում և դեն էր վանում անաշխատությունը և իր Մհերի պես երազում «ռամկի օրենք, ռամկի արդարություն» : Այս հիման վրա իսահակյանը պատմության անցյալն է նետում բոնակալությունը, ճորտությունը և շահագործումը, կոչ ուղղելով կործանել չառ ժողովրդով մեկ .—

Էյ դուք, Սասմա ծոեր ու նետ,
Էյ դուք, զեղզուկ մշակ ու նորտ,
Զեռնել զիտցող նիզակ ու նետ,
Զեռնել զիտցող զուրդ ու զեղարդ .

Թող ամենքը ասպազինվեն,
Գան ինձի հետ —
Քանդենք իմեն աշխարհը չար
Ու ռամկություն քերենք աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա ռամիկն իրեն
Արդար հացին, սուրբ վաստակին:

Ժողովրդական գիտակցության հասունացման հետ մի-
ասին, (մի բան, որ չափազանց շատ է մտահոգել իտո-
հակյանին) Մհերը կազմ ու զրահավորված սպասել է փո-
թուրկի ժամին: Հազար ու հազար ու բյուր հազար մարդ
ու.

Նորեն հազար, հազար ու բյուր
Ճորտ ու ըստրուկ, բանվոր, մշակ.
Ծով կապեցին Մհերի շուրջ,
Ծով կապեցին փոքորկաշունչ.
Դրոհ տվին բոլոր մեկ տեղ՝
Արքաներու, իշխաններու,
Սեպուհներու, ալատներու
Հարուստներու վրա մեկտեղ.

Ավերեցին աշխարհը չար,
Ու ռամկություն քերին աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա ռամիկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին:

Այս է հսահակյանի դրական մեծապույն իդեալը, "որը
նա հակադրեց բացասման ենթարկված աշխարհին և միա-
ժամանակ նրա հաղթական իդեան՝ մեր ռեվոլուցիայից
ծնունդ առած: Այդ իդեալից ծնվեց նոր հայրենիքը, "որի
նախահայրերը, հսահակյանի հղոր պտտկերացմամբ, կռել
ու կոփել էին նրա հավերժական հիմերը — հայրենիքը,
որի «բաւերը անցյալում լող են տվել արուն ծովի մեջ»

իսկ այժմ հպարտությամբ պահում են «հայրենիքի սիրո համար միշտ բարձրացած թուր կայծակին»: Իսահակյանը նոր հայրենիքում երդեց իր ժողովրդի փառքը և նրա իրավունքը իր ժառանդությունը պահպանելու, և հարստացըները վերաբերյալ: Հայ ժողովրդի թշնամիները և ոսոխները նրանից միշտ ցածր են եղել. իսկ այժմ նաև գուանդված է «իր անպարտելի, լուսաբաղձ ուղու» իրականացված երազներով:

Բայց սա միաժամանակ վկայությունն է այն բանի, որ Իսահակյանի համար, ինչպես նաև Թումանյանի և մեր ամբողջ դասական գրականության համար, հայ կյանքի փրկությունը պետք է գալի, որպես ազդային և սոցիալական միասնացած արդարության և ներդաշնակության հետևանք՝ ընդդեմ ազգային և սոցիալական անարդարությունների ու բռնությունների:



Հայ արվեստի տասնօրյակի օրերն էին Մոսկվայում: 1939 թվին: Հիշում ենք, Իսահակյանը ինքն իր մեջ հզանում էր մի ստեղծագործություն և ինքն իր համար շնչում ստեղծագործության բառերը: Հանկարծ ասաց — «վերցրու թուղթ և մատիտ»... և ծայրեիծայր հորինեց այն ստանավորը, որ նվիրված է «Մեծ Ստալինին»:

Բարձրացրել ես դու պատմության սուրբ ահեղ Երկրի վրա՝ ոնիքներով ծանրաբեռ.

Ստեղծագործ խոսքը հզոր և անշեղ
Ողջ աշխարհի սրտում կրակ է վառել:

Մարդկության ապագան բանաստեղծը տեսնում էր մեծ Առաջնորդի մեջ և ստեղծագործորեն կանխատեսում այն համաշխարհային-պատմական իրադարձությունները, որոնց գլուխ պետք է անցներ Առաջնորդը:

Պատերազմն արդեն բռնկվել էր Եվրոպայում: Նրա-

կըակը մոտեցավ մեր սահմաններին ու ելքը սկայթեց, Ա-
վետիք Խսահակյանի համար կրկին և կրկին հրապարակ էր
պալիս հայրենիքի պաշտպանության մեծազոր գաղափարը:
Նա, որ անձամբ տեսել և ճանաչում էր Գերմանիան,
երեան բերեց նորազույն ժամանակի խորը գիտությունը և
իր անդուգական էրուղիցիայով նպաստեց մեզ մեր պայ-
քարին ընդդեմ Փաշիզմի: Խսահակյանի հեղինակալու
խոսքն իր դերը խաղաց նաև մեր երկրի սահմաններից
գուրս՝ համախմբելու պրոգրեսիվ տարրերը: Նա հավա-
տում էր հաղթական ելքին և իր ձայնը միացրած ուներ
ՍՍՌՄ ժողովուրդների լավագույն զավակների ձայնին
հաղթանակի վերաբերյալ: Պատերազմի ծանր օրերին Խսա-
հակյանի այդ ձայնը հնչեց որպես խրոխա մարտակոչ:—

Դեպի ռազմի դաշտ, դեպ հերոսացում,
Դեպի ռազմի դաշտ սուրբ դրոշի տակ,
Դեպի քարձունքը մահի ու փառքի,
Վաճեցեք հեռու քշնամուն վայրագ.
Մեր խրնիքներից, մեր հնածներից,
Մեր արտ ու կալից վաճեցեք հեռու:
Հավերժ պիս մեա հայրենիքը մեր,
Հզոր և ազատ և հալերժ կանգուն,
Մեր իդեալների սուրբ արևի տակ:

Խսահակյանը ոսոխներին շատ լավ էր ճանաչում, ու-
սպեսի այս անգամ առանձին իմաստ ստանային նրա
հայտնի տողերը:—

Զես սպանի, քեզ կապանեն,
Դու սպանիր, քեզ չսպանեն:

Զաթեփ և Հայնեփ երկրում նստած էին մսակործ-
ներ, որոնք արյունատ կացինը ձեռքերին ժայթքում էին
սասաների հակառապության թույնը: Հայ բանաստեղծ Ա-
վետիք Խսահակյանը, մաքրիության քաղաքակը թությունը
մինուղ ուստ ժողովրդի ստեղծագործական հանճարը մար-

մնալորած Պուշկինի և Լեռմոնտովի հետ մասնակցեց պատերազմին, որպեսզի Գյոթեն և Հայնեն վերադարձվեն Երենց երկրին՝ ոճիրներից մաքրվող Գերմանիայում:

Մեղ հետ է Խոահարկյանը — հայ կլասիկ գրականության գեմքը, հայ գրականության նահապետը, համամիութենական սովետական գրականության մեջ առաջ կլասիկ գրականության պատգամաբերը, որի չուրջը կայտառությամբ դորձում է, ահա՛, քանի նոր սերումդ:

1945

ՎԱԴԱՐՁ ՎԱԴԱՐՁԵՄ

(ՄՅԵԿ 50-ամյակի և արտիստական գործունեության 30-ամյակի առքիվ)

Պատմական վայրերից մեկում՝ հինավուրց Շուշի քաղաքում է ծնվել այսօրվա մեր հոբելյարը։ Դա խոկապես խառսությունած մի կյանք է, որ պահպանել է իր ծննդամբայրի, նրա կուլտուրական մակարդակի անդրադարձումները և արտացոլել այն շարժումը, որ կազմված է մինչև ուղացնոն հայ արվեստի հետ։ Անդրկոմիկասում և Հյուսիսային Կովկասում, իսկ գերազանցապես սովորական տարիներին, երբ հեքիաթական արագությամբ հասակ է առնում ապագա ժողովրդական արտիստի փայլուն տաղանդը։ Վաղարշ Վաղարշյանի արվեստը մեծագույն չափով պատկանում է սովորական հայ թատրոնի պատմությանը և նրա բնմական անհատականությունը նշանավորում է այն նորն ու պլոդրեսիվը, որ խթանել է սովորական հայ թատրոնի առաջնապացումը։

Այսօր մենք անտարբերությամբ չենք լսում աբուխտիկ նախագրությունը, երբ նա տակալին ութինն տաքենան՝ հացթուխ նահապետական ծնողներից թաքուն մուտք է ուրոնում Շուշու Խանդամիրյանի թատրոնի դահլիճը, ուր խաղում էր անմահ Սիրանույշը՝ Օրլեանի կույսի տըազիկ դերը։ Մասնուկ Վաղարշ Տեր-Պողոսյանին հայ թատրոնը դիմավորում է բարձր կուլտուրայով և սա արդեն թանկադին ավանդ էր՝ պահպանել նրա արժանապատվությունը նոր սերնդի աչքում։ Սիրանույշը հեռանում է, բայց մնում է սերբ գեղի թատրոնը և Թեմական դպրոցի աշակերտությունը։

ները, Վաղարշի հնարամտությամբ, գտնում են մի ինչ ոք պատշգամ, որի տակ կախում են մի վարագույց և մանկական անմեղ ներկայացման մասնակիցները փայտե դաշտունով մահ են տալիս ու մահ առնում:

Առավել հետաքրքրական չէ՞ այն, որ հայ դերասանական խումբը Ամո Խարազյանի ղեկավարությամբ, արդեն Թբիլիսիում ուսուցչիայից առաջ ամենայն լրջությամբ բեմ է բարձրացնում պատահի Վաղարշյանի «Փող և տապանդ» առաջին պիեսը՝ շարժելով թե՛ Հովկ. Թումանյանի գրական շահագրդությունը և թե՛ հայ թատրոնի վարպետներ Արմեն Արմենյանի և Գալֆայանի ուշադրությունը գեղի խոստումնալից պատճանին: Թբիլիսի—Բաքու—Ղըշլար—Սրմանլիր—Կրամսողար—Մոստովկ, այսպես է սկզբանում Վաղարշ Վաղարշյանի դերասանական կյանքի ընթացքը, երբ վերջապես ուսուցչիոն իրականությունը նրա առաջ բացում է թափառական կյանքի ավարտի և պետականութեն կազմակերպություղ թատրոն ունենալու արդասակը հեռանկարը: Վաղարշյանը նվիրում է իրեն սովետական թատրոնի կառուցմանը՝ 1923 թվին Հրավեր ստանալով փոխարքի Նրեան:

Հայաստանում ազգային թատրոնն արդեն դուրս էր եկել աստանդական վիճակից և սովետական պետականության հաստատուն հողի վրա արվեստի նոր ուղիներ էր զծում: Նոր թատրոնը առաջ էր բերել դադավարական, ոեպերտուարային և վարպետության շատ կարևոր հարցերի հետ նաև դերասանի կերպարի մշակման հարցը: Վաղարշյանը, իր սերնդի միջավայրում լծվում է այդ կերպարի ստեղծման աշխատանքին:

Հայ սովետական թատրոնի համար այս հանդամանքը ցեմենտով նշանակություն է ստանում՝ ապահովելու նրա ավելի քան մեծ առաջդան: Սա մի կողմից ։ Վ. Վաղարշյանը իր ետևում ուներ դերասանական անցյալ՝ կրեչենսկի, Յաղու և այլն, բայց չուներ պրոֆեսիոնալ կրթություն և այդ պակասը նա լրացնում է ոչ միայն համառ ու անդուր աշխա-

տանքով, հասնելով վրայլուն հետևանքների. նա օժտված էր բնական անմարելի ընդունակություններով, իբականությունը դիտելու և այն գեղարվեստորեն յուրացնելու ակնառու հատկությամբ և երկրի զաղափարական կյանքի պլոտպահին հետամուտ լինելու անհագ ծարավով։ Վ. Վ. Պաղարշյանը դառնում է նոր սետականության նոր արվեստը հաստատող և զարդացնող խոհական ներկայացուցիչը մեղանում՝ պահպանելով և բաղմապատկելով այդ թանկապին արժեքները մինչև այսօր։

Իբրև դերասան, նաև սրբազնում է բնմական վարպետության մասին եղած և արդեն քարացած ըմբռնումներն այսորությամբ ամոզված լիբրաթերյալ և կանգնում պատշաճություն և ապրող թատրոնի ու դերասանի դիրքերի վրա։ Հենց առաջին տարիներին հանդիսատեսը նրան դիտում է բարձապան դերերում՝ Տրանյո (Շեքսպիր՝ «Կայակոր կնոջ սանձահարումը»), «Ֆիեսկոյի դավադրության» մեջ Մալք (Շեքսպիր), Խեստակով («Բեկվիզոր»՝ Գոդու), Վալեր (Մուլեր՝ «Ժարտյուֆ»), Բելադուրով («Եկամտարվոր պաշտոն»՝ Օստրովսկի), Տիկոն (Օստրովսկի՝ «Ամպրոպակ»)։

Սովորական հայ թատրոնը արդեն խսկ 1923—29—30 թվականին օրգանագես մերժած է զգում իրեն ուռաւական թատրոնի խնդիրներին և դեղարվեստական իդեալներին, եռոչոր տեղ է հատկացնում Լունաչարսկու, Ֆայկոյի, Տբենյովի, Լալիբենյովի նոր դրամատուրգիային՝ բառի ամենալայն խմաստով բարձրացնելով հայ թատրոնը համամիութենական, զուցե և միջազգային ռեզոնանս ունեցող հարցերի և պրոբլեմների մակարդակին։ Վ. Վ. Պաղարշյանին տեսնում ենք Լունաչարսկու «Կարմիր գիմակ» (Բարոնի դերում) և «Թույն» պիեսների բեմադրությունների մեջ, Ֆայկոյի «Վարժապետ Բուրուս» ներկայացման մեջ, «Մանկատում»՝ «Մերը ծփիների տակ» իրենի դերում, «Խոռվության» մեջ իվանի դերում, «Բեկումի» մեջ Ֆոն-Շտուբենի դերում և այսպիս գուղահեռաբար և զուգընթաց հայ թատրոնի անհականիթաց վերելքին՝ նրա զարդացման բոլոր էտապնե-

Ըում: Ա՞ր հաղվագյուտ տաղանդին կարող էր հաջողվել մի երեկո ստեղծել և հյուսել Մավրի՝ արեւելցու արեառ զույները, մի այլ երեկո շացնել հասարակությանը Խլեստակովի հանձարեղ խաբեռությամբ, երբորդին՝ կերպարանափոխվել՝ չնչելու Օստրովսկու օդը, այսպես անընդհատ մինչ այն աստիճան, որ ժամանակի մամուլը նըշում է, թե վաղարշ Վաղարշյանը «անբոնազբոսիկ էր, ինտոնացիան և միմիկան համապատասխան»: Աչքի էր ընկնում բոլոր դերակատարների մեջ իր նուրբ և թեթև խաղով»: Կամ թելագուրովի մասին՝ Վաղարշյանի «խաղն առաջնակարգ է, էլաստիկ, կուլտուրական, պատկերավորումն անթերի»: Վաղարշ Վաղարշյանի ներկայությամբ մեմբառում է բուռն կրքերի և անդուսպ զգացումների արտահայտության մի վայր, ուր դերասանն ինքն այրմում է դրանց գերազույն լարման ջերմության մեջ:

Վաղարշ Վաղարշյանը կյանք էր դարձնում այն սկզբ-րունքը, որ դերասանի արվեստի մեջ լավը ճշմարիտն է: Հարկարգոր չէ լավ խաղալ, պիտք է ճշմարիտ լինել. դա է բարձր արվեստը և հանձին Վաղարշյանի ու նրան շրջապատող արվեստակից սերնդի հայ թատրոնը սենտիմենտալ-ռոմանտիզման և սիմվոլիստական— դեկադենտական թատրոնի հակառակորդը լինելով՝ կառուցում էր մարդու և մարդկայնության առողջ, կենսախինդ, ռեալիստական ժար-տաշունչ թատրոն:

Այդ գեղարվեստական ճշմարտության հասնելու համար Վ. Վաղարշյանը ընտրում է երեկու ճանապարհ — դերասանական գործի տեխնիկան հասցնել իսկական արտիստիզմի մակարդակին, դիտել սեփական արվեստոն իրեւ բարձրա-կույն հաճույք և ոգեշնչումն: Արտիստ՝ բառի բուն իմաս-տով և դերասան՝ այս բառի ներշնչական կատարելու-թրամբ: Արտիստ Վ. Վաղարշյանը միշտ էքստազի մեջ է և իր խաղընկերներին երեք չե կոչում կինցաղային անուններով. նրանք բոլորը նրա համար արտիստներ են և համարապ-պես բաժանում են բեմի վրա իրենց բաժին ընկած մարդ-

կային սերն ու ատելությունը, խինդն ու վիշտը, անկումն
ու թոփչքը, մահն ու կյանքի հաղթանակը։ Արտիստիզմի
վաղարշյանական պահանջների մեջ ամենաստույգ կետը հի-
բասի մոգական կերպարանափոխությունն է։ Կերպարանա-
փոխի եթե այսօր Խեստակովի դերումն ես, կերպարա-
նափոխի եթե վաղը քեզ է վիճակվել պատկերել դահըն-
կեց արքայի և կամ սլացիկ պատանու դիմանկարը։

Հայ թատրոնը և Վ. Քուրջալյանի ռե-
ժիսուրայի պայմաններում զորավիրուց հանդիսացալ արվեստի
այս բարձր հատկություններով օժտված արտիստ վաղարշ
Վաղարշյանին՝ նրա ստեղծագործական կյանքի հետազա-
րարդ շրջանում։

Այդ բարդությունն սկզբնապես կապված էր ինքնու-
րույն սովորական հայ դրամատուրգիայի ստեղծման և նրա
բեմականացման հետ։ Սովորական հայ թատրոնն ուներ
ուրախության այնպիսի առիթ, որպիսին Դ. Դեմիքճյանի
«Բաջ Նաղարն» էր, որի թատերականացմամբ երջանկորեն
դուդուրդվում էր դեղարվեստական դրամատուրգիան դեղար-
վեստական թատրոնի հետ։

Սովորական հայ թատրոնը անվերջ ցանկություն ուներ
և նրա համար հրամայական պահանջ էր՝ նորաստել դրա-
մատուրգիային առաջ բերելու սեփական դրամատիքական
երկեր։ Պատմական այդ պահանջին ընդառաջում է և ար-
տիստ, բեմին քաջ գիտակ Վաղարշ Վաղարշյանը՝ հրապա-
րակ բերելով «Օղակում» հայտնի ոլիսը։ Մամուլը, քննա-
դատությունը, թատերական և դրական հասարակայնու-
թյունը, հայ թատրոնը՝ Հայաստանում, Աղբբեջանում,
Վրաստանում ողջունեցին «Օղակում»-ի երևան գալը և նրա
տպավորիչ բեմադրությունն Ա. Գուրակյանի կողմից։ Վ.
Վաղարշյանը վերստին դատապարտում էր իմպերիալիզմի
կառքին լծված դաշնակ վարձկաններին՝ որտաղին ջերմու-
թյուն տեսնելով եղբայրական հայ և աղբբեջան գյուղա-
ցիության միջև։ Նա ինքը ողեկորությամբ ստեղծագործում
է փմաստուն, պարզասիրտ և վեհ ծերունի Ասլան Ամու գե-

ըլ, վերասլրելով հայրենի և հարազատ լեռնցու ողին՝ հայ ժողովրդի համար բախտորոշ քաղաքացիական կոփիների օբերին։ Վաղարշյանին այս դերակատարմանը իր մեծ արվեստի ամբողջ թովչանքով արձագանքեց Հովհաննել։ Աբելյանը՝ նույն Առլան Ամու սրտահույդ և հսկայատիալ կերպարի վերստեղծմամբ։

Վարպետության որակական մի աստիճանին գալիս է հաջորդելու վարպետության որակական մի նոր աստիճան։

Երիտասարդ դերասանի նորահայտ Վաղարշ անունը չէր ծառայել նրան հրավիրելու հայաստան։ Զի անցնում երկու-երեք տարի և մամուլն ու հասարակայնությունը միաբերան վկայում են, որ հանձին Վաղարշյանի նորաստեղծ հայ տովետական թատրոնը ձեռք է բերել խոշոր ընդունակություններով մայլող և է՛լ ավելի խոշոր ապագա ունեցող, երկույթ՝ դառնալու կարողությամբ առելցուն մի արտիստի։ Հյուսվում է մի զարմանալի ներդաշնակություն հին և նոր սերնդի միջև։ Գր. Ավետյան, Համբիկ, Գուլազյան, Մանվելյան, Արուս Ռուկանյան, Հր. Ներսիսյան Ավետ Ավետիսյան, Դուրյան Զարիբեկյան, Դ. Մալյան, Սյուզան-Գարագարչ. . . Ստեղծվում են արժեքներ, որոնք համաժողովրդական հոչչակ են ձեռք բերում Հայկական Սովետական Ռեսպուբլիկայի կուլտուրական զարթոնքի ընդհանուր հոսանքի մեջ։ Մաք. Վ. Վաղարշյանի արվեստի հասունության և ճանաչողության նշանալոր մեկ աստիճանն է։

Վաղարշ Վաղարշյանի արվեստը սակայն կանոնած էր հայ թատրոնի տրադիցիաները պահպանելու և նրանց լայն զարդարցման դժվարին խնդրի առջև։ Եվ նա կարողանում է լուծել այդ խնդիրը՝ ընդունելով ամեն արվեստագետի համար կենսական նշանակություն ունեցող իր ձիրքերի և տաղանդի անսահմանսփակ դրսերման ուղին և սկզբունքը։

Վաղարշ Վաղարշյանի տաղանդը ոչ միայն պրովինցիա-լիկ ժխտումն է։ Նա աղջային տաղանդ է. ավելին՝ նա հանդիս է բերել և աղջային սահմանափակությունը հաղ-

թահարելու խոշոր կարողություններ : Վաղաբշյանի արվեստը լընդհանուր մարդկային դժեր ունի և լընդհանուր արվեստի ելակետեր : Եթե չենք մոռացել, նա կենցաղային կոնկրետություն չի դրսեղրում . նրա վրձինը խփում է մեկ այս դրամատիկական երկին, մեկ այն՝ ծայրահեղորին հակառակ կրքերի և մտքերի կերպարներին :

Եվ հայ թատրոնի տրադիցիաների ոլահանումը նրա կողմէց արտահայտվեց նրանով, որ նա ստեղծադրործէց մեր թատրոնի համար բնորոշ և հարազատ հայկական, ողուսական և արևմտահելլոռակական՝ այս երեք ռեպերտուարային ուղղություններով, այն էական տարրերությամբ, որ բոլոր այդ ուղղությունների մեջ դտավ և ամփոփեց նոր բովանդակություն և արվեստի նոր ոգորումներ :

Ինչպիսի՞ ուժգնությամբ արտակայլեց Վաղարշյանի տաղանդը Սուրենի գերում : Դա անմոռանալի է հենց երեն՝ արտիստի համար, դա անմոռանալի է և մեր թատրոնի համար : Այդ առթիվ գրլում է մամուլում այսպիս «գերակատարումը գեղարվեստական տեսակետից մշակված է նրբորեն և խորը : ... Դերասան վ. Վաղարշյանը Սուրենի գերը կատարում է արտիստորեն : Նա մի չնչով կերտում է ճշմարտացի և դունեղ մի կերպար, որի մեջ կյանքը կայտուում է : Նրա ամեն մի մոռաքը բեմը լցնում է դեղարվեստական հմայքով : Նա ճկուն է, թեթև, ոիթմիկ, շարժումները պլաստիկ, ժեստերն անբռնազբոս և արտահայտիչ : Նա իր կերպարը համակել է անմիջական ու անկեղծ զգացումների ջերմությամբ : Նրա խոսքերը, մտքերը բխում են սրտի խորքից, որոնց ճշմարտությանը հանդիսականը հավատում է» («Մ. Հ.», 1939) :

Այդ գերակատարումը ամուր կպել է Վաղարշյանին, ասլրում է նրա հետ և նրա մեջ . այսպիսի եղբակացության է հանդում երկրորդ քննադատը՝ Մարիենտաս Շահինյանը :

Երգեն իսկ լուրջ նախադրյալներ էին ըստեղծված հայկական ռեպերտուարի բեմականացումը մի նոր աստիճանի բարձրացնելու համար : Վաղարշյանը որոնում էր գտնելու

այն հնարիավորությունը, որը նրա տաղանդին և ձիրքեւրին թույլ կտար բացիկ բացարձակ չափով։ Այդ հնարիավորությունը տալիս է Դ. Գեմիրճյանը «Երկիր Հայրենիք» պատմական դրամայով։

Մեր երեակայության մեջ բոլորս փոխադրվում ենք Անիի միջավայրը, արևելյան և արևմտյան աշխարհականություններին դիմագրով հայ ժողովուի պատմական անդրավ՝ հանուն իր անկախության, պատվի և մարդկայնության։ Անին իր ճարտարապետությամբ, արվեստով և կյանքով, ժողովրդի, նրա գոյության, նրա փառքի պերճախոս վկայությունն էր։ Բայց զժվար էին ժամանակները, աշխարհակալությունները սպառնում էին ոչնչացման ահանելի վտանգով։ Եվ հանկարծ Բագրատունի մի պատանի, որպես փրկության ողի, նետում է իրեն ներհակ դրությունների ջրապառյար համախմբելու կենտրոնաձիր ուժերը և ջրատելու կենտրոնախույսներին։ Կշռի մեկ նժարի վրա զրված է հայրենիքի անկախությունը, մյուսում՝ նրա կործանումը։ Ի՞նչ է լինելու հայրենի երկրի ճակատագիրը։ Քաղաքական այս հսկայական հարցին էր նվիրված «Երկիր Հայրենի» ներկայացումը այն որոշակի պատասխանով, որ բանականությամբ, գործի ջանախորությունը և պայքարի ճանապարհով միայն կաղապանությունը և կուտակությունը անկախությունը։ Վաղարշ Վաղարշյանը ստանձնում է Գաղղիկ թագավորի դերը։ Խնդիրը միայն այն չէ, որ հասուն մարդը նորից պետք է վերադառնա պատանեկության գիրկը։ Սովետական Միության մեջ կուցե քիչ կղտնվեն արվեստագետներ, որոնք վառվուն պատասխանությունը ճարպկությամբ և ճկումությամբ հանդես կդան այնպիսի դերում, ինչպիսին Գագիկ թագավորի դերն է։ Վաղարշյանը հաղթահարում է հասակի արդեկքները և դա նրա արտակարգ հաջողության առաջին գրավականն էր «Երկիր Հայրենի» ներկայացման մեջ։ Նրա զերակատարման ընթացքում մենք տեսնում ենք, որ գահը Գագիկի համար նպատակ չէ, Վաղարշյան-Գագիկիը գահին անսովոր

մարդէ է . նա շաբժվում է դահի վլրա՝ ամեն անդամ ստքերին
հենարան գտնելու համար , կամ ցատկում վրայից դեպի
Վեստ-Մարդիսը՝ մոլեգնելով դավաճանի գլխին : Գագիկ-
Վաղարշյանը ներքին առելությամբ է լեցված Բյուզան-
դիայի դեսպանի նկատմամբ , բայց դիտե պահպանել և ար-
տաքին պատշաճությունը՝ որտնեղելով դիմանագետի ծի-
սակատարությունից : Ամբողջ Երեկո Գագիկ-Վաղարշյանին
ուղեկցում է վստահ մարդուն պատշաճով արհամարհանքը
և քմծիծաղը դեպի թշնամիները և տատանվողները , բայց
և սերը , հարդանքն ու պատշաճը դնելի մայրը , Ընկերը
և հարսնացուն : Վաղարշյան-Գագիկը մտքի պայծառատեսու-
թյամբ արժեքավորում է հայ ռամիկի ուժը ազատագրա-
կան պատերազմում՝ հատուցելով իր հարդանքը Զենոն
վարպետին և նրա համհարզներին : Վաղարշյան-Գագիկն
անվերջ շարժման մեջ է : Առհասարակ Վաղարշյանին հա-
տուկ է գործողության զգացողությունը՝ թիկուզ և ան-
շարժության վայրկյաններին : Նա համակ գործողություն
է և շարժում : Շարժվում է մարմնի բոլոր մասերով , աչքե-
րով , դիմով , միշտ դեպի մի նոր դրություն , դեպի մի նոր
վիճակ , նա ուղում է ասել , որ դեռ ամեն ինչ չի առված ,
ուսավել ևս դեռ ամեն ինչ չի արդած , կա սկիզբ , զարգա-
ցում , բայց կա և կուլմինացիա , կա դործողության վախ-
ճան , որին պետք է հասնել , որին պետք է ձգաել :

Այդպիսին է և Գագիկը : Անցնելով կրակի և հրի մի-
ջով՝ Գագիկ-Վաղարշյանին մենք տեսնում ենք հաղթանա-
կի փառքով պսակված , Անմո հաղթական դարպաների
մոտ : Սա է կերպարի քաղաքական-գաղափարական հոյս
կազ էությունը . տրված անջնջելի և մեծաշունչ կտավի
վրա : Դա այն զերերից և բեմական արվեստի այն արժեքը
ներից մեկն էր , որը գրավեց միութենական հասարակայ-
նության սեռուն ուշադրությունը : Ազգային պատմու-
թյան և հայ սովետական դրամատուրգիայի ընձեռած հա-
ռակտորությամբ Վաղարչ Վաղարշյանը ճանապարհ է համ-
թում դեպի միութենական արվեստը : Մոսկվայում

Սունդուկյանի թատրոնի գլասարը լներին Գառդիկի մասին «Պրավդա»-ն գրում էր. «Պիեսում չափազանց ընդգծված Գառդիկի կերպարը, նաև (Վաղարշյանը) պատկերում է խոշոր, երբեմն դիտավորյալ կոպիտ դժերով։ Այդ նրա հերոսի դիմանկարին հազորում է ուժ, ծանրություն, մոնումենտալ հատկություն։ Դերասանի տրամադրությունները և արարքները այնպես անբռնազբոսիկ, պարզ և բնական ձևով են կապված բեմի վրա տեղի ունեցող գործողություններին, որ Գառդիկ-Վաղարշյանին չհավատալ չի կարելի» («Պրավդա», 16 հունիսի, 41 թ.)։

Այսպիսով Գառդիկ թադակորի դերակատարումը կայլուն կերպով ամփոփում է դերասան Վաղարշյանի երկարամյա զորքությունը հայկական կերպարների և հայկական ռեսպերտուարի բեմական-դեղաբալեստական ըստեղծագործության ասպարիզում։

Վաղարշ Վաղարշյանի արտիստական հոգեբանության մեջ ուսուական տարերքը, բուն ուսուականը կենսատու և առաջմղիչ դեր է կատարել։ Ասացինք տարերքը, որովհետեւ շիրավի նրա համար և նրա արվեստի մեջ ուսուականը ըդգացմունք է և միտք միաժամանակ, էություն է և հոգեկիճակ բնականոն կերպով։ Նրա արտիստական տաղանդի լայն դիապազոնը և ուսուական հոգու ավելի քան անեղբուջունը ներդաշնակ են։ Ռուսական տարերքի մեջ ազատ է շնչում Վաղարշյանը և այստեղ էլ նա գործել է որպես ինքնաբուի արվեստագետ։

1938 թիվն է. Պետական թատրոնում բեմադրվում է «Անհանդիսա ծերություն» դրաման, որի հերոսը պրոֆեսոր Պոլեխակն է՝ հոչակալու Տիմիրյաղեկի գրական կերպարը։ Թատրոնի ճպտումն է՝ տեսնել մեծ դիտնականին ու վոլուցիայի հետ, նվաճել նրան ու վոլուցիայի համար։ Ռուս մտածողներին և ռուս հոգուն հատուկ անհանդատությունը, նրանց մտքի խիզախությանը առնչվող քաղաքացիական սիրադործությունը կապվում էին կենցաղի և վարքադիր պարզության և բարոյական ծայրահեղ մաքրու-

թյան հետ : Վաղարշ վաղարշյանին դրավում է և գերում
ինտելեկտը, սուսականը բնավորության մեջ և բնավորու-
թյուն դարձմած : Նա դուքորդում է ժամանկան պարզաբարու-
թյունը մեծ մարդու լրջությանը և ծանրախոհությանը,
ուղղամտությունը նրա անկարչառ վարքագծին : Պրոֆեսոր
Պոլեժաելից Վաղարշյանն ակնածում էր և միաժամանակ
համերաշխ էր նրան՝ դաժան խստությամբ դեպի իր ար-
վեստը, պահանջկոտությամբ գեղի իր անձը և ներքին հա-
վաքվածությամբ իր գործունեության ամբողջ ընթաց-
քում : Ինտելիգենտը իրու դիսցիպլինար մտքի և բարձր
բարյալիանության մարմնավորում . այսպիսին էր Վաղարշ-
յան-Պոլեժաելի և դա աղղում էր և ներգործում : Պոլեժաելի
դերակատարության մեջ ցայտուն կերպով արտահայտվեց
Վաղարշյան-արտիստի ինտելեկտի ուժը և դա կարեոր դեր
խաղաց նրան հասկանալու և այդ ուժը հետագայում և՛ս
օգտագործելու համար : Վաղարշյանն ինտելեկտի իր դա-
շանանքը դրսեորել էր թե՛ մինչ Պոլեժաելը և թե՛ նրանից
Հետո՝ նաև Գաղթեկի մեջ : Վաղարշ Վաղարշյանին է պատ-
կանում Գորկու «Դաստիղաելը և ուրիշները», ինչպես նաև
«Վասոս Ժենեղնովա» պիեսների բնագրության պատիվը
մեր թատրոնում : Ուեժիսյորի համար Գորկին ամենա-
բարդ հեղինակներից էր և Վաղարշյանը դնում է դի-
մադրության ուժեղ ճանապարհով, բեմադրելով Գորկուն :
Բայց այդ հավատը դեպի իր աշխատանքը նրա մեջ առաջ
էր եկել մի շատ ավելի նշանավոր և պատասխանատու-
ստեղծագործության հետեւանքով ...

Խոսքը Եղոր Բուլիչեկի մասին է :

Բուլիչեկը խոչոր իրադարձություն է հայ սովետական
արվեստի պատմության մեջ . դա մի դարաշրջան է հայ
թատրոնի կյանքում, դա դեպի ոռւս մարդը և նրա պատ-
մական ճակատագրի նկատմամբ հայ մարդու ունեցած ան-
միջական և ամենատանկեղծ վերաբերմունքի ջերմագին ար-
տահայտությունն է : Բուլիչեկ-Վաղարշյանն ապացուցեց,

որ հայ և ոռւս մարդու միջն տուածացել և արմատավորվել
են հողեկան անքակտելի կապեր :

Վաղարշյան-Բուլիչելը հասնում է և վայելում իր տի-
րապետությունը իր հասարակարգի վլուզման նախօրեին :
Մի ժամանակ տափաստաններից եկած այդ մարդը մուտք
դործելով զերիշխանության սփերան՝ սեփական կապիտա-
լը ենթարկում է իր խառնվածքին և ոչ թե ենթարկվում
նրան : Բուլիչե-Վաղարշյանն իր մեջ չել խեղդում աղատու-
թյան զդացողությունը, երբ ինքը մեկն է գերիշխողներից
և իր գիրքը դերիշխանության նուրբը գործիք : Բուլիչե-
Վաղարշյանի մեջ առաջանում է կապիտալիզմի առեղծած
քառսի դեմ մաքառելու բուռն շարժում, որովհետեւ արդեն
քանդվում էր Երբեմնի կարգը : Բուլիչե-Վաղարշյանը միա-
պետի պաշտպան է ոչ թե տեսությամբ, այլ որովհետեւ
մոնարիզմի շրջանում նա անհամազստանալու առիթ չուներ :
Հիմար նա ընկել է էքսպրեսիայի մեջ և արթուն դիտակցու-
թյամբ տեսնում և համոզում է, որ ինքը, իր ընտանիքը,
եր բարոյականությունը, հայր Պավլինը և ինքը՝ վերին
դասավորը — բոլորը կանգնած են կործանման անդնդի եղ-
բին : Մի՛թե սա է աստվածության ուժը : Բուլիչե-Վա-
ղարշյանը նետում է իր վրա մահվան, դուցե և պատանքի
կտորներ զգալու, առայժմ միմիայն զգալու, թե ի՞նչ է
մահվան մոտալուս տրամադրությունը և ահազնում է
մահվան դեմ, աստվածության դարավոր հեղինակության
դեմ : Ստեղներում և Վոլգայի ափերին նա կյանք էր տե-
սել . Բուլիչե-Վաղարշյանը շնչել է կյանքը որպես առաջին
կիրք և անհրաժեշտություն : Բուլիչե-Վաղարշյանի համար
ամենաբարսավելին մենակությունն է : Բարձագելոր փոթո-
րիկներ ապրած Բուլիչելը մենակությունից խորշում էր
մահվան չափ... Վերջին պատկերում, երբ մոտ է մաքառ-
ման ավարալ, Բուլիչե-Վաղարշյանը նետում է իրեն մի
սենյակից այլ սենյակ, բարձրանում աստիճաններով, գո-
ռում-կանչում, կարստում մարդ էակին այնպես, ինչպես
զուցե երբեք, գլորվում և պահամիժում, բայց այս ան-

գամ՝ վերջին անդամ... մարդը չկա... ստկայն բաց ոլուտուհանի մուա նստած է նրա սիրելի Շուրեկան, որը և տռաջին ճառագայթներին ողջունում է փողոցներով և հրապարակներով անցնող մեռլուցիոն մասսաներին ... Բուշել մեռավ նոր հասարակարդի շեմքին, որպեսզի ծնունդ տանի նրա խելացի և եռանդուն ու անեղծ մնացած դռւստը: Վաղարշյան-Բուլիչել մարդու կերպարն է, տառապանքը դեմքին, վեշտ ընդունով և վշտի դեմ ընդվզող, երոնիկ, չարածճի, չար և ներող, բայց ամեն տեղ և ամեն դրության մեջ, մերկացնելով իր ներքինը, իր էության նկատմամբ միշտ անկեղծ և ճշմարտության հետամուսում...

Բուլիչելի դերում վաղարշյանը փայլուն կերպով օգտագործում է իր վարպետությունը և հարուստ փորձը: Կուրծքը լայն բաց արած, ինքնիշխան և հաստատ քայլերով այդ մարդը բեմի վրա հայացքի ամբողջ ուժով կենտրոնացնում է իր վրա բոլորի ուշագրությունը: Նա խաղում է ամեն ըստեր, ամեն վայրկյան՝ այսինքն Բուլիչեն է ամեն ակընթարթ: Անկողին նետվելիս անդամ, Գլաֆիրայի թեհրի տակ ընկած, նա քայլում է տարածություն կլանող քայլերով և իր ձայնին՝ բարկության և ցասման պարագաներին հազորդում մի ներքին մտերմություն, մի ինչ-որ թաքուն ներողամտություն: Վաղարշյան-Բուլիչելը դիտե ստհմանագավել բալոր նրանցից, որոնց առում է, և մոտեցնել իրեն բոլոր նրանց, որոնք կարող են կազմիլ իրեն մաքուր զգացումներով: Վաղարշյանի Բուլիչելը չնայած նրա ապրած բղկայիչ հակասություններին՝ իր տիրապետող տրամուդրությամբ հերոսատիպ կերպար է: Հանդիսականից նա կարեկցություն չի կորցում, ինքը ոչ մեկի նկատմամբ խղճահարություն չի զգում և մանավանդ չի արտահայտում: Մենք դորձ ունենք դաժան իրականության հետ և նույնքան դաժան մարդու հետ: բայց Վաղարշյան-Բուլիչելը հերոսանում է անդամ մահվան պարագային: Առհասարակ պետք է դիտել, որ Վաղարշյանի արվեստի, աշխարհագրական աերմինով ստած՝ մեջին բարեխտության դուին

Էքսպրեսիվ հերոսականն է։ Այդ է նրա հիմնական գզացու-
ղությունը և նրա ներքին ոճի շեշտումն տարբեք։ Այդ էքըս-
ոլրեսիվ հերոսականությունը նա հանդիս է եկեղ հայ, ուստի
արևմտաեվրոպական ալիքսներում՝ ասելու իր ուրույն
խոսքը։

Միութենական մամուլը իրավացիորեն նկատում է, որ
Վաղարշյանի Եղոր Բուլիչելը և Վահատանգովի թատրոնի
Շուտկինի նույնքան նշանավոր Բուլիչելը ոչ միայն հակա-
ռեր չեն, այլև իրավադոր և անչափ հետաքրքիր՝ իրեւ-
երկու երեւելի ինքնուրույն ստեղծագործություններ։

Այստեղ վեճ չկա։ Կարենը է այն, որ ուստական՝ դոր-
կիական թատրոնի մեջ Վաղարշյանը ձեռք էր սերում հա-
մամթութենական հոչակի։ Վաղարշյանի Բուլիչելի առիթով
սէտերազմի նախօրյակին «Պրավդա»-ն գրում էր։

«Ստալինյան մրցանակի լառենատ, ժողովրդական ար-
տիստ Վ. Բ. Վաղարշյանը մեկն է բեմի այն նշանավոր
վարպետներից, որոնք ստեղծում են մի որոշ ժամանակա-
ընթանի թատրոն, ստեղծում են իրենց շկոլան, իրենց առ-
նունն են տալիս զբանարտուրդիայի կլասիկ կերպարներին։
Նա մեծ կուլտուրայի արվեստագետ է, և գլխավորը՝ մեծ
հոգու արվեստագետ։ Առաջին խոկ խոսքից նաև նվաճում է
հանդիսականին իր ձայնի, հայացքի, ժեստի բնականու-
թյամբ։ Խաղը մերկում է կյանքին։ Գեղարվեստական կեր-
պարի մեջ կատարած հոգեբանական ներթափանցման խո-
րությամբ և նշանակալիությամբ դերասանը բարձրանում է
նատուրալիստական պարզունակությունից... Վաղարշյանի
խաղով ամբողջ ներկայացումը բարձրացվել է գեղարվես-
տական խոշոր մակարդակի վրա» («Պրավդա», 7 հունիսի
41թ.)։

Վաղարշյանի Բուլիչելը հայ թատրոնի պատմության
երջանկություններից մեկն է, նրա վարպետության բացար-
ձակ դրսերումը։ այլև միանդամայն ակներեւ էր հայ սո-
վետական թատրոնի կողմից միութենական թատերական-

արվեստի դանձաբանը կատարված ներքրման նշանակությունը:

Մեր արվեստն ընդհուպ մոտեցել էր պարտիայի և ժողովրդի առաջնորդների պատկերման դժվարագույն, բայց և ամենաշնորհակալ խնդրին: Այդ ժամանակաշրջանն այնքան էլ հեռու չէ և հիշում ենք, թե ուժերի որպեսի լարում և խոհուն տրամադրությունն էր արիում արվեստի բոլոր բնակավառներում՝ մասնավորապես ինքնուրույն դրամատուրգիայի և թատրոնի ասպարեզում: Երեան է զալիս Գուլակյանի «Մեծ բարեկամություն» պիեսը և բեմադրող Տ. Շամիրիանյանը, Վաղարշ Վաղարշյանի Սուրեն Սպանդարյանի դերակատարումով: Իրեն հատուկ պատասխանավության զգացումով համակված Վաղարշյանը կերտում է Սպանդարյանի կերպարը՝ լիւագես դիտակցելով, որ լավը լավագույնի թշնամին է: Թող վեճեր լինեն, թող ասվի, որ դրամատուրգիան նախնական քայլեր էր կատարում: Բայց Վաղարշյանը Սպանդարյանին կերտելիս, ինչպես զբում էր դարձյալ «Պըրագիա»-ն, «ներքուստ մարմնավորվել է որպես Սպանդարյան, սիրել է նրան, ցանկացել է լինել այդպիսին, ցանկացել է հաղորդել հանդիսականին իր սեփական սերը այդ կերպարին և իր հարգանքը դեպի նա: Եվ դա այն խաղն է, որ հանդիսարահում բարբոքում է հավատի և ջերմության զգացումը, ստիպում մշտապես աչքերով հետեւել Սպանդարյանին բեմի վրա, հավատալ նրան, սովորել նրան» («Պրալգա», 11 հունիսի 41):

1938 թիվն է: Բեմադրվում է «Հրացանավոր մարդը» (բեմադրող Վ. Վարդանյան): Լենինի դերը կատարում է Վաղարշյանը՝ առաջին անդամ հայ բեմի վրա: «Խաղալ մարդկության հանձար վարդիմիր Իլլիչ Լենինի դերը մեծ բախտավորությունն է սովետական արտիստի համար,— առում է Վաղարշյանը: Սակայն խաղալ այն տաղանդավոր դերասաններ Շչովեկինից և Շաբառուխից հետո, կամ նրանց հետ, և այնուամենայնիվ, բավարարել մեր պահանջկոտ

հանդիսականին—մեծ և լազանկություն էր» («Ավանդարդ», 23 նոյեմբեր, 1938 թ.):

Դերակատարմանը նախորդել էր Երկարատև ուսումնա-
սիրական աշխատանք Մոսկվայում, Լենինի թանգարանում,
Թատրոնի միջավայրում: Վաղարշյանը միացնում էր գի-
տական պահանջկոտությունը գեղարվեստական մարմնավոր-
ման հետ:

Մենք սպասում էինք առ առավելն արտաքին նմանու-
թյան և դա նույնուն կոչացներ: Բայց մեծ էր զար-
ժանքը, երբ Վաղարշյանը իր տաղանդի գերադույն լարման
հետեւանքով, արտաքին նմանության հասնելու խնդիրը բա-
րեհաջող կերպով լուծելուց հետո՝ ոչինչ չի խնայել գըտ-
նելու Վաղարշիմիր Իլյիչ Լենինի բնակության գծերը, նրա
խարակտերը՝ ամենաբազմազան գրությունների մեջ: Ուսու-
լուցիայի հանձարի մեծ ինտելեկտան ու խորաթափանցու-
թյունը նա պատկերում է մարդկային պարզության և անմի-
ջականության հետ միաժամանակ: Այս դերակատարության
մեջ՝ ավելի, քան մեկ այլ գետքում Վաղարշյանը երևան է
ընրում կերպարանավորիստելու իր հմայիչ արվեստը: Հիշում
ենք Լենինին ցուցամատը բարձրացրած խոսելիս: Վաղարշ-
յանը իր դերի մեջ չքանում է, տպագորելով այնքան պարզ
Լենինին, ժողովար դեմքին: Վլադիմիր Իլյիչը կանգնած է
Ստալինի կողքին: Տեսարանը վեհ է և անվերջ խմաստալից,
և հանդիսական անսահման շնորհակալ է արտիստներ Վա-
ղարշյանից և Զանիբեկյանից, վարզեսության այլ աստի-
ճան կերպարանավորիստյան համար՝ իրենց մեզ պատճա-
ռած մեծադույն հաճույքով: Երբեք չեր մոռացվելու այն
պատկերը, երբ Վլադիմիր Իլյիչը Վաղարշյանի դերակա-
տարմամբ նստում է խոր բաղկաթոսի մեջ և ոկտում է դրել:
Վարագույրը իջնում է այն պահին, երբ Վլադիմիր Իլյիչն
արագացնում է դիրք. դիրքն արագանում է. խորհում է Լե-
նինը և շարադրում իր մտքերը թղթի վրա. մոռանում ենք,
որ նստած ենք թատրոնում. մենք վերանում ենք, իլյուզի-
ան կատարյալ է և հավատացած ենք, որ գրում է և շտա-

պում Լենինը։ Վարագույրն իջել է, սակայն վլադիմիր Ի-
լլիչը շարունակում է մտածել և զրել մեր երեակայության
մեջ։ Դա շարունակական ստեղծալործություն էր, որ բե-
մից լրացվում էր և ամբողջանում հազարավոր հանդիսա-
կանների վրա արտիստ Վաղարշյանի թողած ուժեղ տպավո-
րությամբ։ Դա ներշնչման արդյունք էր, իսկ ներշնչումը
հասցըել էր նրան ճշմարտության։ Հայ սովորական թատ-
րոնը ցնծում էր։ Նրա բեմհարթակի վրա դանված էր Լենի-
նի կերպարը և դա լեցնում էր հպարտության զգացումով
հանդիսականին, թատրոնը, արտիստին, վերջապես երկե-
րը, որի ծնունդն էր Լենինի դերակատար Վաղարշ Վաղարշ-
յանը։ Այսպիսով, հայ թատրոնը լուծում էր ամենաբարդ
խնդիրներից մեկը՝ ստեղծել էր Լենինի կերպարը։ Սա ևս
միութենական խոչոր ռեզոնանս ստաջ բերեց և բարձրացրեց
հայ թատրոնը մի նոր աստիճանի մը։

Հայրենական պատերազմի նախօրյակին թատրոնը
գտնվում էր Մոսկվայում։ Վաղարշյանը այդ օրերին մի
անգամ ևս զրայից մեծ Միության մայրաքաղաքի հասա-
րակայնության և մամուլի ուշադրությունը, որպես խոչոր
կուլտուրայի տեր արտիստ։ Այդ արդեն նրա, արվեստի
վիակատր ճանաչումն էր և դնահատությունը։

Առաջինը արտիստի ստեղծալործություններից, որ ա-
վարտել է նա պատերազմի պայմաններում, «Համլետն» է։
Այս աշխատանքը շարունակում էր Վաղարշյանի արեմտա-
ելքոսլական ռեպերտուարի բնակավառում ցույց տված
հետաքրքրությունը և ամփոփում այդ ուղղությունը՝ զոնե-
մինչ այդ ժամանակ։ Համլետի դերակատարության համար
արտիստը մեծ չափով օգտագործում է իր ատաղանդի ինտե-
լեկտուալ կարողությունը և տեմպերամենտը։ Նա դնում է
այդ գործի մեջ իր շունչը և ձայնին ու մարմնին տիրելու
փորձը։ Մեր թատրոնի շեքսպիրյան տրագիցիաները և նրա
կուլտուրական ընդհանուր մակարդակը ստեղծում էին լուրջ
նախադիմական վաղարշյանի ձգումն իրականացնելու հա-

մար: Եվ ներկայացումը դառնում է բեմական արվեստի լարձը արտահայտություններից մեկը մեզանում: Այդ բանին խոչոր չափով նպաստում է Վաղարշյանի կուլտուրան: Վաղարշյանը Համլետին դիտում է մաքառումների վայրկաններին, գուցե և միակողմանի:

Վաղարշյանի Համլետը ճշմարտություն չի որոնում. նա կտել է այլ ճշմարտությունը, իսկ այժմ հետապնդում է չարեքը երեան բերելու և ոչնչացնելու փոթորկահույզ միտքը: Բյուրեղային աղնվությամբ դեպի իր նպատակը կատարված ուղացիկ ընթացքով՝ Վաղարշյանը Համլետի դեմքին տալիս է անփարատելի վշտին միախառնված առնականություն: Դա ինքը՝ խոտացած աղնվությունն է, որին աշխարհը բանտ է թվում: Վաղարշյանի դերակատարմամբ առաջանում է ոչ թե այն հարցը, որ Համլետը մենակ է, այլ թե ինչո՞ւ է նա մենակ և որ մենակ լինել չի կարող: Մարդը որի դեպի գարդն է տաելով՝ Վաղարշյանը Համլետին ուղում է տանել դեպի ուրախություն, մի ճանապարհ, որ նրա համար անանցանելի էր հենց իր կատարելության և ժամանակի դաժանության հակառակության հետևանքով:

Այս սուր, բայց և թարմ առեղծվածը կարող էր վեճեր առաջացնել: Սակայն վիճելով հանգերձ, միանդամայն պարզ էր հարցադրման իսկ առանցքալոր և խիզախ էությունը:

Համլետի իերապարը կերտելիս Վաղարշյանը ողբերգականության սկզբունքի մեջ ներմուծում է իրեն հատկանշական էլեմենտներով՝ հերոսական տարրը և դա նրա Համլետն է, որովհետեւ նա՝ արտիստը ըստ երեսութին ցանկացել է տրանզիժիան վերանայել նրան հարստացնելու մի նոր հատկությամբ: Բոլոր մյուս կողմերով չեթափիրյան ներկայացումը ծառայում էր բռնությունը և բարոյական հիմքերի անկումը դատապարտելուն, թեև դա ձեռք էր բերվելու մեծ զոհողությունների գնով:

«Համբէտի» երեանյան բեմադրության արձագանքները հասնում են Միության զանազան վայրեր և նախ և առաջ դարձյալ Մոսկվա՝ այն դիտելու և վերստին արժեքավորելու համար :

Գալիս է սովետական ռազմական դրամատուրգիան : Արտիստ Վաղարշյանի համար թատրոնը ձեռք է րերում նոր իմաստ : Նա հանդես է դալիս Աշոտ Երկաթի դերում : Բայց նրան հարազատ է և ինժեներ Սերգեևը՝ սովետական կառուցողի արժանաւատվության զիտակցությամբ : Վաղարշյանը ժամանելով, բայց առանձին չնորհունակությամբ ստեղծում է Նիկոլայ կայսեր կերպարը դենեբալ Բըռուսիլովին նվիրված ներկայացման մեջ՝ մեն մի շարիխով կենդանություն տալով անկենդան մարմնին : Այս դեսբում արտիստ Վաղարշյանին հետաքրքրում է մանրուքը, որի գյուտարարությունը նրան իսկ խոշոր բավականություն է պատճառում : Դա և դրան հարող կերպարներ Վաղարշյանի տեսադրությունը լոկ չնշն տեղ են բռնում, որովհետեւ արտիստի տաղանդը մնում է դեռևս անօդտագործելի, որովհետեւ նա կարող է ավելին ստեղծել, քան ստեղծում է՝ զրական սահմանափակ նյութի հիման վրա :

Մեղ համար ակնհայտ կարևորություն է ներկայացնում Վաղարշ Վաղարշյանի դերը սովետական մարդու դրական հողերանության դրսեւրման մեջ Միքոն Գոռլովի կերպարը կերտելիս : Արտիստը Փիքսացիայի է ենթարկում նոր մարդկայինը, այն, ինչ մեր հասարակարդի սեփականությունն է : Այս դիմքը նրա արվեստի մեջ սկիզբ է առնում Պոլեմակեց և համառում մինչեւ Միքոն Գոռլովը, երբ վերջինս հակառակ հետամնացության ու ռեակցիայի՝ պաշտպանում է միմիայն պրոդեստրովը և սկզբունքային գործնականությունը :



Մենք շատ բան չասացինք: Վ. Վաղարշյանի դրամատուրգիան և նրա ուժիսուրան լոկ հիշատակվեցին : Սա թե-

բություն է մեզ համար, բայց թերություն չէ նրա համար։
Վաղարշյանի արտիստական գործունեությունը իր ուժեղ
կնիքն է դրել նրա դրամատուրգիայի և նրա ռեժիսուրայի
վրա։ Ճիրքերի բազմակողմանի դրամեորումը ունի մի
սկզբնաղբյուր, որ բոլոր դեպքերում նույն ինքը Վաղարշ-
յանն է։ Նրա կյանքում քաղաքացիական պարտքի դիտակ-
չությունը դարձյալ խոչոր տեղ է բոնում։ Վաղարշյանը
քաղաքացի արտիստ է և ժողովրդական դիտակցական ար-
վեստի վառ ներկայացուցիչը մեղանում։ Սովետական Միու-
թյան գերազույն օրդանի գեղուտատ Վաղարշյանի մեջ ա-
մենից ավելի պայծառ կերպով է դրամեորգում արվեստի
գերը ստալինյան հոյակապ դարաշընանում։ Լենինի-Ստա-
վինի գործի հավատարիմ զինվորը, իր հարազատ ժողովրդ-
ուի արժանավոր զավակը այսօր, իր հոբելյանին ներկայա-
նում է արվեստի մեծադույն սխրագործություններով՝ ի
վասոս հաղթանակող հայրենիքի։

ԵԵՍՊԻՐԸ ԵՎ ՀԱՅ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ *

Հին հայ թատրոնը, հենց իր անողեսական դոյտովյան պայմաններում, խորը հետաքրքրություն է ցուցաբերել գեղակի Շեքսպիրը: Հայտնի է նմանագես, որ Աղամյանի, Սիրանույշի, Արելյանի, Փափաղյանի և մեր մյուս անվանի արտիստների արվեստը հռչակվել է ամենից ավելի շեքսպիրյան դերակատարումների շնորհիվ:

Եեքսպիրի նկատմամբ հայ թատրոնի ցուցաբերած հետաքրքրությունը սովորական ժամանակաշրջանում նոր բնույթ է ստանում: Անգլիական դրամատուրգի ստեղծագործության օգտագործումն այս անդամ զուգաղեղում է վերածնված հայ ժողովրդի կուլտուրայի շինարարությանը:

Հայ հին թատրոնը ստեղծել է շեքսպիրյան մեծ հերոսի բեմական կերպարի տրադիցիա, — Համլետ — Աղամյան, Համլետ—Սիրանույշ, Օթելո—Արելյան, Յօթելո—Փափաղյան, Շայլոկ—Պետրոսյան և այլն: Բայց որովհետեւ հայ հին թատրոնը պետական չէր, այն ի վիճակի չէ եղել շեքսպիրյան անսամբլային ներկայացում ունենալու: Հին թատրոնն ինգիվիդուալիստական թատրոն էր:

Կրելով XIX և XX դարերի մտավոր կյանքի և արվեստի զանազան ուղղությունների ազդեցությունը, հայ հին թատ-

* Թարգմանություն ուսուելի բնագրից

բոնը Շեքսպիրի նկատմամբ արտացոլել է դրանցից բղխող և կը բունքներ : Սովետական հայ թատրոնը, հակառակ հնի հակասական ուղղությունների, ընթացել է ուսալիզմի հաստատման ճանապարհով, ձգտելով շարունակաբար իր արվեստը հարստացնել նորանոր երանդներով : Դրա նպատակն է եղել և այդ նույն աշխատանքի նպատակն է այժմ ավելի խորը, ավելի լայն ըմբռունել Շեքսպիրին :

Ժամանակակից հայ թատրոնը բարդ օրդանիզմ է և Շեքսպիրին նա բնմականացնում է իր կոմպոնենտ տարրերի միասնության մեջ, ունենալով ուժիսյոր, նկարիչ, կոմպոզիտոր, բեմական տեխնիկայի պլոֆեսիոնալ կաղըքը, ուսնվելով հիմնայի թատերական տաճարներում : Կարող էր արդյոք մեծ Աղամյանը երադել այն մասին, որ չկը քըսպիրյան ներկայացումների երաժշտական կոմենտատորների համեստ դերում հանդես կը ան խոշոր կոմպոզիտորներ Ալեքսանդր Սպենդիարյանը, Արամ Խաչատրյանը, կամ Յազույովի վրձինը կօգնի նրան՝ հայ բեմի վարպետին, դունել և կտակին հանձնել ուրախ Վենետիկի կենդանի պատկերներն ու Էլսինորի մոռայլությունը : Հին հայ թատրոնին ծանոթ չեմ ժամանակակից նոր թատերական կենցաղը՝ լայն հասկացողությամբ վերցրած : Աւրեմն, առավել ևս նա սախաված է եղել հենվելու իր անհատական կարողությունների վրա :

Սովետական հայ թատրոնի համար բնմական անցյալ անունները լոկ ուրավականներ չեն . նրանք ուղեկիցների նշանակություն ստացան՝ իրենց անկաշառ վերաբերմունքով գեղագիտական արվեստը, իրենց հայտնի վարպետությամբ : Այդ վարպետությամբ նրանք խորտակել են ազգային սուժանականության շրջանակները և մասնավորապես շեքսպիրյան գերասակատարումներով հայ գերասանությունը բարձրացրել համաշխարհային զարգացման մակարդակի վրա (Աղամյան) : Դա սուաջափոր թատերական մի կուլտուրա էր, սուեղծված Արմելքի և Արևմուտքի խաչաձև ճանապարհներին : Անցյալում հայ թատրոնն աղացուցել է, որ

ոչ արտաքուստ և ոչ ներքուստ ոչ «Համբետը», ոչ «Լիլ
արքան» չպետք է հարմարեցնել արևելյան կենցաղագրու-
թյանը և կամ իջեցնել նրանց մեկնարանության դժվարին
դորձը կենցաղային մտածողության աստիճանին, այլ նույն
«Համբետը» և «Լիլ արքան» գիտել մարդկային հոգեբա-
նության և ինտելեկտի մեծ ընդհանրացումների տեսան-
կյունով:

Հայ հին թատրոնի այս տրադիցիան ևս յուրացրել է
ողբետական թատրոնը, իր մեջ ընդունելով ոչ միայն դրա
գիտակցությունը, այլև ժառանգությունը կրողներին —
Արեւյանին, Արմենյանին, Փափազյանին, Արուս Ռսկանյա-
նին, Գրիգոր Ավետյանին, Միքայել Մանվելյանին, Հաս-
միկին, Օլգա Գուլազյանին, Համբ Խարազյանին:



Սակայն «պահպանել ժառանգությունը — բոլորովին
չեր նշանակում սահմանափակիլել ժառանգությամբ»: Լե-
նինյան այս պատգամը հավասարապես վերաբերում էր ինչ-
պես հին, այնպես էլ հայ թատրոնի նոր սերնդին: Ոեվո-
լուցիցի հենց երկրորդ օրը հայ թատերական խմբերը
չյուսիսային կովկասում, Անդրկովկասում և Հայատա-
նում (սովորական կարգերը հաստատվելու հետ միասին):
Կործել են կլասիկ ռեպերտուրով, որի մեջ Շեքսպիրը աչ-
քի ընկնող տեղ է գրավել: Սովորական իշխանության ա-
ռաջին օրերին միայն Վ. Փափազյանի կատարմամբ հանդի-
սականը հնարավորություն է ստանում դիտելու «Համբե-
տը», «Մակեթը», «Վենետիկի Վաճառականը», «Օթելոն»:
Շեքսպիրի և նրա դրամատուրգիայի նման պրոպագանդ ա-
ռաջ է տարբյում երիտասարդ ռեսպուբլիկայի համարյա բո-
լոր անկյուններում, ռեսպուբլիկա, — ուր այն ժամանակ
սկսել էր փոխադրմակել և կենտրոնանալ հայ ժողովրդի մտա-
վոր, կուլտուրական և տնտեսական ու քաղաքական կյան-
քը: Քիչ ավելի ուշ Շեքսպիրի պրոպագանդայով զբաղվում:

է Հովհաննես, մեծ հմայքով շարունակելով հանդես գալ Սթելլոյի դերում։ Շեքսպիրի և կլասիկների պրոպագանդը դիտվել է որպես առհասարակ յուրաքանչյուր թատրոնի դործունեության հիմնական Փունկցիաներից մեկը և այդ մինչ այն աստիճանն, որ հարցին տրմել է նույնիսկ տեսական բնույթ, օրինակ, Վ. Փափազյանի կողմից, որի կարծիքով «Թատրոնը նախ և առաջ մեծ դրողների դրամատիկական դրականության մեկնարանողն է ու պլրոպագանդիալը. . .»

Այսպիսով, պարզ է մի կացություն, — այն, որ հայ ժողովրդի քաղաքական ազատագրությունը համընկնում է կլասիկների և Շեքսպիրի մշտական և մասսայական պլուստականդի գործի հետ։ Այդ թելագրվել է սովորական գիտողի հողեաոր կյանքի ներքին հասունության պահանջով։ Անկասկած է նաև մի այլ հանդամանք, կլասիկայի և Շեքսպիրի եռանդուն պլուստականդը և նոր դիտողի առողջապահության կազմակերպումը զարգացման խթան հանդիսացան թատրոնի համար։ Ահա թե ինչու Աքելյանի, Փափազյանի, Արուս Ռոկանյանի, Մանվելյանի և մյոււների կերտած կերպարները հարստացվում էին նոր մտածողությամբ և էսթետիկական նոր մեկնարանումներով։ Ժառանդությունը ինքը զարգանում էր և լուսացվում այն կրողների ստեղծած արժեքներով։

Այժմ մենք հնարալոր ենք համարժում իսոսել Վ. Փափազյանի չեքսպիրյան դերակատարության մասին, և դա պատճառով, որ Փափազյանն իրավամբ հանդիսացավ այն պատճառով, չին նոր սելունդները կամըջող դեմք և իր արվեստով, չին և նոր սելունդները կամըջող դեմք և իր արվեստով, անկասկած, խոշորագույնը։ Մյուս կողմից սովորական ժամանակաշրջանում նա այնպիսի ճանապարհ կտրեց և այն առնակալից իր արվեստի զարգացումը, որ նա, քան նշանակալից է նրա արվեստի զարգացումը, որ նա, առհասարակ, լույս է սկիռում չեքսպիրյան հայ թատրոնի վրա։

Անընդեմ զարգացում, հետևողական վերելք դեպի կատարելություն — այս է Փափազյանի տաղանդի առանձնա-

հատկությունը՝ և հատկապես 0թելլոյի դերում։ Փափառ-
յանը «խաղում է» հակառակություն մայրի և վենետիկյան
արքապատկերագույն հաւաքարակապետության միջև։ Նա իր դերը
կառուցել է պատմական իրականության խորը ճանաչողու-
թյունից բղյառ և զբակացությունների հիման վրա, չափ-
ությակցելով, որ Արևելքում ծնունդ առած տաղանդավոր
զրավար 0թելլոն ծառայում է արեմայան պետության,
ուր ստորագասված է իր ռասան։ Բայց նա հագեցած է
զինվորականի պարզապես ցությամբ, անկաշառ է ու իր
կոչմանը նվիրված։ Հոգաբա է Փափառյանի 0թելլոն որպես
հաղթանակ բերող զորավար, հզարա է իր ծագումով և իր
հայրենիքի նկատմամբ ունեցած անձարելի կարուտի զգա-
ցումներով։ Փափառյանի 0թելլոն մեղ տանում է դեպի ա-
նապատ, ուր ամեն ինչ դաժան է և միաժամանակ ազգու-
շենետիկում թե Կիորոս կղզում, Դեղղեմոնայի մոտ և
կամ դոժի պարատում, որտեղ էլ մայր-Փափառյանը գտնվ-
վելիս լինի, ուր կնկատեք և կտեսնեք նրան առանձին
ժմառությամբ և գեղեցկությամբ ներկայացած։ 0թելլո-
Փափառյանը արեային է, նրա մեջ կա մի ինչ-որ բարկ-ա-
րևային հատկություն, որով նա և կյանք և մահ կարող
է տալ։ Այդ բավական չէ, բեմի վրա համարյա թե միշտ
ներկա է անապատի առյօւծը, որը մոնչում է և սիրո վա-
յելքի ճգտում, ու մոնչում է կատաղի, երբ մանավանդ-
հուսախարիլում է նույն սիրո մեջ։ Նա նախապեշտրիմած է
մոր տված թաշկինակի հետ կարված հավատալիքով։ Վե-
նետիկի հասարակապետությանը ծառայելու գիտակցու-
թյունը նրան բերում է ամելի մեծ և ծանր հետեանքների։
Զի՞՞ որ Հայեպատյում 0թելլոն իւղամամահ է անում հա-
սարակապետությանը հայուրող տաճկին և այդ պատ-
մելիս կտրում է իր վեղը։ Գուցե 0թելլո-Փափառյանի
համար անհետաքրքիր չէր լինի իր ժողովրդին տեսնել Վե-
նետիկյան հասարակության կյանքի ձևերը յուլացրած, ո-
րից սերվել է իր Դեղղեմոնան։ Բայց Դեղղեմոնայի կորըս-
տյան հետ միաժամանակ մայրի համար պարզ է դառնում,

որ ազնվությունը տեղ չունի այդաեղ, և Փափառյան — Օթելոն ավելի արագ է գահավիժվում՝ դեպի կործանման անդունդը։ Փափառյանի պատկերմամբ Օթելոն ամենից առաջ մարդ է և նրա ողբերգությունը բավարար է թե քաղաքական և ազգային, պետական և անհատական հակառակ յուների բաղխումներից և թե մարդկային իրարամերժ արամագերություններից։ Օթելոն սիրում է խելագարի պես, որովհետեւ խելացի կերպով սիրել չկարողացավ։ Փափառյանի համար Օթելոն պարզապես մարդ է, որն ուզում է ստանալ «իր բաժին բախտավորությունն արևի տակ և մաքառում է գրա համար մինչեւ մահ»։

Այս մարդասիրական, վեհ, խելական մարդկային կերպարը վ. Փափառյանը կերաել է գեղարվեստական՝ զարդանալի կոնկրետությամբ։ Նա ուսումնասիրել է մայթի և նրա միջավայրի նիստ ու կացը, շարժուձելը։ Փափառյանը արտաքին մեծ հմայք է հաղորդում իր կերպարին՝ դեղեցկություն, զորավարին պատշաճ կեցվածք, խրոխոռություն, և այս բոլորը ներդաշնակած Օթելոյի ներքին աշխարհին, ներքին հարստությանը, նրա բարդ անցումներին՝ մի վեճակից մի այլ վեճակ։

Վ. Փափառյանի Օթելոն սովորական հայ թատրոնի համար մեծ կարևորություն է ներկայացնում։ Դա ուսանելի է դերասանի համար. ուսանելի է դիտողի համար. ուսանելի է կուլտուրայի պատմաբանի համար և խիստ ուսանելի է հոգեբանի համար։

Փափառյանը մեծապես նպաստում է թատրոնի զարգացմանը Սովորական Հայաստանում՝ նրա առաջին շրջանից սկսած։ Բայց նա հեռանում է Երևանի թատրոնից։ Նրան հաջորդում են նոր գերասաններ, մի ամբողջ նոր սերունդ, որի գործունեությունը սկզբունքային նշանակություն ստացավ նույն թատրոնի կյանքում։

1923 թ. գեկտեմբերը նշանավոր ամիս է շեքսալիքյան հայ տարեգրության մեջ։ Այդ ամսի 10-ին թեմազգրվել է «Կամակոր կնոջ սանձահարումը» կատակերգությունը։ Թատրոնի ռեպերտուարում տեսնում ենք «Ռւրիել Ակոստա» (Գուցկովի), «Երկու տիրոջ ծառա» (Գուլլոնիի), «Մոննա Վաննա» և «Սուրբ Անտոնիոսի Հրաշը» (Մետերլինգի), «Մալոմե» (Ռւայլդի), «Երկակայական հիմանդր», (Մոլերի), «Մեվիլզոր» (Գողովի), «Պատվի համար» (Շիրվանզադեի), — այսինքն տարբեր էպոխաների, ուղղությունների և ոճերի բարդ համադրություն միևնույն բեմի վրա, միևնույն ամիսներին։

Եքսալիքի կատակերգությունը ցույց է տրվում այսպիսի շրջապատում, բայց արդեն Պետական Թատրոնում, ուժիսուրայի կողմից, թատրոնի կոմպոնենտ բոլոր տարբերի մասնակցությամբ, հին վարովետների և տաղանդավոր երիտասարդների կողմից՝ իրականացված։ Երիտասարդների թվին էին պատկանում այժմ առաջավոր հանդիսացող գերասանական սերնդի ներկայացուցիչներ վ. Վաղարշյանը, Հը. Ներսիսյանը, Ավ. Ավետիսյանը և ուրիշները։ «Կամակոր կնոջ սանձահարումը» կատակերգությունը բեմադրող Անոն Քալանիթարը ձգտել էր կենսուրախ ներկայացում ստեղծել, հորդահոս ծիծաղի ներկայացում, որ համապատասխանելու շեքսալիքյան կատակերգության և վերածննդի ուղում։ Բեմադրողի ներքին ցանկությունն էր եղել՝ անդը միական դրամատուրգի տված հնարավորությամբ ընդդրիկ այնպիսի կողմեր, որոնք որևէ կերպ առնչություն ունենային հայ ժողովրդի վերածնվող կյանքի հետ։ Եվ Երևանի թատրոնի բեմում կատարինան և Պետրուչիոն, Քրիստովոր Սլայը, Լյուչենցիոն և Գրումեոն — բախտ որոնողների և ուրախ մարդկանց այդ խումբը բարձրացնում էր անբռնադրոս և անսանձ ծիծաղի մի խսկական փոթորիկ։ Կատակերգության ինտերոդուկցիան ծառայել էր որպես բանալի

ներկայացումը կառուցելու անդլիական ու եվրոպական հին
ժողովրդական թատրոնի ոճով, խելահեղ տեմպով, ուրախ
գիմակահանդեսի գլխակոբույս շարժմամբ և ութմով։ Դա
մի խելական և սարսափելի ուժի կատակ էր, մեծահասակ
մարդկանց խաղ պատանեկական սիրային զգացումներով,
որ ոչ մի իշխանություն չի ճանաչում։ Ճնարավոր է, որ
ուեմի վրա կաստրվում էր մի բան, որ նման էր հարբած
Ալայի կողմից իրականության ընկալմանը։ Այլամես ինչպես
բացատրել այն, որ գործող անձինք հրաժարվել էին քաղա-
քակալիքական սովորություններից, և լինելով խստաբարու
որիստոկրատներ, իրենց զգում էին բնության գիրկը վե-
րադարձած և դանակների ու պատռաքաղների վորաբեն
օգտագործում էին ձեռներն ու մատները։

Կատարինան ժողովրդական դերապանուհիներ Արուս
Ռոկանյանի և Հասմիկի խաղով երեան էր բերմիւ տարբեր
չուրահատկություններով։

Արուս Ռոկանյանը իր մեծ կուլտուրայով, սրբազն
վերաբերմունքով դեպի դրամատուրգի խոսքը, հմայիչ ձայ-
նով և զեղեցկությամբ, վարպետորեն պատկերում էր և
համակորություն և՝ կանացիություն ու սրտալի փափկու-
թյուն։ Համմիկը, բեմական խարակտերներ ու տիպեր կեր-
տելու այդ տաղանքը, կատարինային ցուցը էր տալիս նրա
ընական կովալությամբ, անսանձ կամակորությամբ և
արիությամբ։ Սակայն նա խաղն ավարտում էր անսահման
սիրով դեպի Պետրոչիոն, որի սանձահարման արյեսուը
խոստանում էր միայն «խաղաղություն», հանդսություն,
ոել, բարձր իշխանության նկատմամբ հարգանք, կարծ
ամենը, ինչ բախտ է համարվում»։ Ամբողջ ներկայա-
ցումը մի լուրջ զպրոց էր Վ. Վաղարշյանի համար (Տրա-
նիո), Ավ. Ավետիսյանի համար (Գրումիո), Հր. Ներսիս-
յանի համար (Լյուչենցիո), Հ. Խաչանյանի համար (Գրե-
միո)։ Արանք բոլորը պատրաստվում էին չեքսպիրյան լուրջ
ու եպերտուարի համար։

«Կամակոր կնոջ սահճահարումից» անցնում է քսան տարեւեւ։ Հայաստանում թատրոնների ցանց է ստեղծվում։ Բարդանում է թատերական կուլտուրան։ Աչ թե նատուրալիստ և ֆորմալիստական անմիտ «հնարապետվյուն», այլ բովանդակալից արվեստ, մարդկային ճշմարիտ ապրումների թատրոն, — այսպես էր համեստվում խնդիրը, և Շեքսպիրն օգնում էր այդպիսի թատրոն ստեղծելու գործին։ Արևմտակլուպական թատրոնը, հատկապես իմպերիալիստական առաջին պատերազմից հետո, իբրև ինտուիցիայի և թափառող ստեղծների թատրոն, թշնամի էր Շեքսպիրին, նրան խորթ էր զրամատուրդի առողջ սեալիզմը։ Սովորական թատրոնը, ընդհանրակը, ընդունելով սոցիալիստական ռեալիզմը որպես ստեղծագործական հիմնարկան մեջուլ, իրեն ամենի և ավելի մոտ էր զգում Շեքսպիրին։ Ամբողջականության և բազմազանության ձգուման մեջ սովորական թատրոնի համար Շեքսպիրը գտնուում էր հաբազատ հեղինակ և նպաստում հայ ազգային սովորական թատրոնի ոճական առանձնահատկության մշակմանը։ Բայց այս մասին — հետո։

Լենինականի պետական թատրոնում և Ստանիսլավսկու անվան ուսուական պետական թատրոնում բեմադրված «Վենետիկի վաճառականով» Լեվոն Քալանթարը շարունակում էր Շեքսպիրի նոր մեկնաբանության ուղղությամբ կատարված իր աշխատանքը։ Այս անդամ Քալանթարի խնդիրն է մենում՝ ստեղծել կենտրոնական դաշտակարով հագեցած և թատերականութեն լավ կազմակերպված ներկայացւմներ։

Թատրոններում գոյություն ունեցող այն հարցը, թե ո՞ւմ համակրել, — Շայլոկին թե Անտոնիոսին, — Քալանթարը փորձում էր նոր կերպ մեկնաբանել՝ վերադարձնելով Հրեության խնդրին նրա քաղաքական և սոցիալական բովանդակությունը։

«Վենետիկի վաճառականը» ներկայացումը մի սատիրու
էր Անտոնիոյի հասարակական և առհասարակ՝ տիրող բար-
քերի նկատմամբ: Սատիրական ծաղը էր ենթարկվում դա-
տարանը, Շայլոկի ժշտությունը: Այդ ծաղըն արտահայտ-
վում էր ուրախացող, պարող և երդող Վենետիկի բնութա-
վությամբ: Պահպանվում էր, սակայն, քաղաքի ֆոնը,
Միքանդանությամբ արված Պորցիայի ամբողջ գիծը, որը
բերում էր ժամանակի հարցերի ներդաշնակ լուծմանը: Հնա-
րավոր է, որ զերասանական կոլեկտիվները լրիվ չափով
չեն կարողացել իրականացնել բեմադրովի ժամանացումը:
Երեք Շայլոկ միայն Լենինականի թատրոնում — Արմեն-
յան, Ամիրիլյան, Զոհբարյան — բավականաչափ տարբե-
րություններ էին ներմուծում ներկայացման և նշանավոր
դերի կատարման մեջ: Մասնավորապես Արմենյանն այդ
դերը խաղաց սովորական տարիներին, և հիանալի ճանո-
չելով Եվրոպան, մեխանիկորեն չէր ներկայացնում արե-
մտուելիրողական օրինակը: Այժմ էլ մենք լսում ենք նրա
վրիժառու ձայնը, որով նա պահանջում էր հատուցել մուր-
հակի դիմաց ո՛չ առնկ մուրհակի համար, այլ հանուն հրե-
տական դատի պաշտպանության՝ վերջինիս թշնամիների
առաջ: Արմենյանի հարուստ տեխնիկան և վործը նրան
հնարավորություն էին տալիս ստեղծելու Շայլոկի արագո-
դրությունների, արտաքինի և խոհերի բարեկ ամբողջու-
թյուն:

Պորցիայի դերակատարումը Արուս Ասրյանի, Բասանեռ-
յի և Անտոնիոյի դերակատարումները Արտավազդ Փաշայա-
նի և Գեղամ Հարությունյանի կողմից, ինչպես նաև դերա-
սան Կարապետ Արծրունյանը Մարոքի Եշխանի դերում՝
նոր երեկույթ էին կազմում մեր ոհսպութիկայի տաղան-
դայուր երիտասարպության դեղարվեստական դրստիարա-
կության գործում:

Ծեքսպիրի երկրորդ կատակերգությունը, որ բեմադր-
վել է մեզանում, «Վինձորի չարաճնի կանայք»-ն է (Վաս-
պել պատմական գործաքանի գալութիւնը): Երե-
սակ, դերասան գործաքանի գալութիւնը:

վան էր բերվում Թալստաֆի կերպարը : Կատակերգության
ճանաչողական նշանակությունը անչափ խոշոր էր : Ռվա-
խության շատրվան էր խփում Շեքսպիրի պիեսից : Դրան-
դուզընթաց ցույց էր տրված այլառերված ասովեառության,
պատվազուրկ և անբարոյական մարդու կերպարը : Ներկա-
յացումը բոլոր մասերում հավասար չէր : Հիմա, տարիներ
անց, ներկայացման հետ կապված հիշողությունը դժմավո-
րապես ձեր . Ներսեսյանի հետ կապված հիշողությունն է,
նրա Փալստաֆի հետ կապված հիշողությունը : Այս հան-
գումանը առհավատչյա է այն բանի, որ պետք է կատա-
կերգությունը նորից բեմադրել՝ այն իրքեւ ամբողջություն
և նրան լիաբյուն ձևով մատուցելու համար : Ներսիսյանը
սահղում էր կերպարն իր տիպական հատկություններով:
Բացի դրանից, հայ թատրոնը շեքսպիրյան ողբերդությունը
ներից հետո ձևոք էր բերում կատակերգություն բեմադրե-
լու ուսանելի վորձ, այժմ մոնումենտալություն դանելով
կատակերգության մեջ :

Այդ փորձը ներկայումս հարստանում է նոր զծերով՝
պատանի հանդիսատեսի Պետքատրոնում Շեքսպիրի «Ամա-
ռային գիշերվա երազ» կոմեդիայի բեմադրության մեջ :
Տիդրան Շամիրիսանյանի բեմադրությունը հետապնդում էր
խիստ դժվարին մի խնդիր . ներկայացումը կերտել հեքյաթի
ոլլանով, բայց սլահապանելով երկի այն ոճը, որը մոտելի է
«դիմակների» թատրոնին : Ներկայացման երաժշտական հօ-
րակցությունը մասն բեմադրության ընդհանուր հյուսված-
քի մեջ : Երաժշտությունը կատարողական ուժ է : Բացի
դրանից, երաժշտականորեն է տրված հեղինակի տեքտուրը
հայերեն թարդմանությամբ, որ անցյալ դարում կատարել
է հայ հայտնի արվեստագետ Վարդղես Սուլենյանը : Ռտա-
նակուրի հնչեղությունը, նրա երգայնությունը նույնական
ներթափանցված են ներքին երաժշտությամբ : Եթե կարելի
է այսպես արտահայտվել, երաժշտությունը և երաժշտա-
կանությունը — դա ներկայացման որակի կեսն է : «Դիմակ-
ների տիպի» երկում այդպիսի մոմենտ սլահապանելով, Շա-

միքսանյանն այնուհետև իրականացրել է իր մի այլ մտա-
հղացումը, — պարեր և պլաստիկա մտցնելը որպես դեբա-
սանական կատարման մասներա: Այդ ևս բխում է ամբողջ
ներկայացման երաժշտական, ոճային զգացողությունից:
Բայց ներկայացման դիմավոր խնդիրը ընդհանուր ձեւի նրա
այդ հատկությունները չեն: Շամիրիկանյանը և դեբասան-
ների անսամբլը ստեղծեցին լիրիքական հնչունության հեք-
յաթ — Փերիա ներկայացում: Եվ այդ բեմադրության
հիմնական մոտիվը նրանք իմաստավորեցին որպես վեհ սի-
րո մուտիվ: Պատանի հանդիսատեսի Պետքատրոնում
«Ամառային դիչերվա երազը» մի ներկայացում է անհան-
գիստ ու աղնիվ սիրո մասին, որը բարձր նպատակների
հասնելու ճանապարհին հաղթահարում է ամեն տեսակ ան-
ջրպետներ: Կա նաև մի ուրիշ մոմենտ, — ներկայացման
ձևակորումը նրա ընդհանուր զույներով, որ անկասկած
հեքյաթային է և իր մեջ ներծծել է ինչ-որ բան հայ աղղա-
յին էլեմենտներից՝ թե զույների պայծառությամբ և թե հա-
վերժական ուրախության ու բնության բանաստեղծական
ապրումի զգացումով: Այդ էլեմենտն էր լշխում թատրոնի
նախընթաց բեմադրության — «Հազարան Բլուլի» մեջ:
Տվյալ գեղքում այդ ոչ թե մեխանիկական փոխադրում է,
այլ Շեքսպիրի բնութագրած իրազրության ինքնուրույն,
օրիգինալ ըմբռնում:

Կատակերգությունների բեմադրությունների շարքում
աչքի ընկնող տեղ է գրավում «Տասներկուերորդ վիշերվա»
ներկայացումը վ. Աճեմյանի կողմից, Լենինականի ոլետա-
կան թատրոնում:

Այս ներկայացման մեջ պահպանված է հայ թատրոնը
բնորոշող կենսահամատման դիմը: Ուրախ ներկայացում
ոկորուշող կենսահամատման դիմը: Այս ներկայացում, որ
ոկորուշող մինչեւ վերջ: Մի ներկայացում, որ արթնացնում ու
բորբոքում է անօրինակ կայտառություն, ջերմություն և
սիրո անկաշառ դրացումներ: Արամիս է նաև ձեւավորումը,
որ որոշ չափով վերածնում է շեքսպիրյան ժամանակի
ներկայացման արտաքին մասուցման եղանակը:

Այսպիսով ամփոփվում է կատակերդական ներկայաց-
շումների մինչ այժմյան փորձը, որից բղխում է մի հիմ-
նական եզրակացություն, — այն, որ Հայ սովետական թատ-
րունը հետամուտ է եղել՝ գտնելու կատակերդության մեծ
ձեր, նրա, եթե կարելի է առել, մշտնջենական պառղջ
հատկությունը — կենսահաստատման փիլիսոփայությու-
նը:



Եքսպիրի երկերի նոր բեմադրությունների սերիան
կապված է Արշակ Բուրջալյանի ուժիսուրայի հետ: Հայ
թատրունը նորից վերադառնում է իր սիրած ստեղծագործու-
թյուններին: Այս շրջանն ընդգրկում է Համարյա թե երկու
տասնյակ տարի, — սկսած 1924 թվականից, երբ Ար. Բուր-
ջալյանը իրականացնում է «Համլետը» — մինչև 1942. թվա-
կանը, երբ նույն ուժիսուրայով, բայց այլ մեկնարանու-
թյամբ մեր դիտողը կրկին տեսնում է դանիական արքա-
յազն իշխանին՝ Վաղարշյանի, Զանիբեկյանի կատարմամբ:
«Համլետը» Հայ պետական թատրոնի բեմի վրա է: Մի՛ թե երկչուություն չէր զգացվում Սպամյանից և Ար-
մանուչյից հետո Համլետ խաղալու դաշնկության մեջ: Այս:
այդ երկչուությունը գոյություն ուներ, բայց, բարեբախ-
տաբար, այն մեղմանում էր արդեն նրանով, որ Համլետի
դերակատար երիտասարդ արտիստ Հր. Ներսիսյանը չէր
թողնվել բախտի քահաճաճույքին, — դոյցություն ուներ ու-
ժեղ անսամբլ և մեղանում այն ժամանակ «Համլետը» նախ
արգում էր որպես թատերական ներկայացում: Հիշում և
նաև, թե ինչպես հարեւան սկսպուրլիկայում նույն դերում
հանդես էին զայլու՝ Ուշանդի Զինիք և էներ-
գիկ Համլետը, և Դավիթաշվիլին — մարդկության բախ-
տի մասին խառորեն խորհրդածողը, որ դանդաղորեն իջ-
նում էր էլսինորի վերծիր աստիճաններով: Հայ բեմը հենց
այն ժամանակ ճանաչեց Համլետ — խահակ Ալբիսանյանին:

Բայց նա տեսավ նաև Վահրամ Փափազյանին մերթ էպիքականորեն հանդիսաւ և հարուստ ինտելեկտով օժոված երեսասարդ արքայազնի կերպարում, մերթ ժամանակների կառուց հաստատելուն և չարիքը հնագանդեցնելուն տանջակորեն ծարավի Համբետ-Փափազյանին: Փափազյանը դիառավի վրա ուժեղ ազդում էր ոչ միայն արտասանվող Փրազի Հուրական վունավորմամբ և «Համբետիքի» քարոզով, այլև կերպարի ներքին աշխարհի արտաքին արտահայտությամբ, դանելով քանդակման ձևեր մոնումենտալություն պատկերու մեջ:

Օդովելով առաջավոր ոռուսական թատրոնի վորձից, Եր. Բուրջալյանը հիմնականորեն օդինց հայ սովորական թատրոնին՝ կազմակերպելու ներկայացումը որպես ավարտակած ընթական արտադրանք: Բուրջալյանը թշնամի էր բեմական բացառիկությունների, որոնք խախտում են ներկայացման կառուցման միասնական գիծը: Մյուս կողմից նա սրաքար է մզում դերասանական արվեստում կեղծ-ոռման-տիկական պարթոսի գեմ՝ դերասանի արտահայտչական բոլոր միջոցները ևնիմարկելով պարզության և բնականության պահանջներին: Բայց Բուրջալյանը չէր ժիասում ուսմանտիկական ողերումը դերասանի կատարողական մաներացում — նաև չեքապիրյան դերերում՝ հաճախ տարբելով այդ սոմանտիկայով:

Իր բեմագրություններում Արշակ Բուրջալյանը թատերականությունը չեւտում էր զործողությամբ: Գործողություն և շարժում, ոիթմի զգացում և հուզվածություն ենթական արարմումներում — ահա թե ինչն էր հանրեմբական արարմումներում՝ ահա թերականության: Բոտ որում նա չէր հրաժարվում նաև արտաքին զույններից և նույնիսկ զունազեղությունից:

Բուրջալյանը միենույն չափով հոգատար է Շեքսպիրի կոմեդիայի ու արագեղիայի ոիթմը զանելու մեջ: Անսամբլ-լայնության զգացումը հաղորդելով չեքապիրյան ներկայացումներին, Բուրջալյանն այն անց էր կացնում ամբողջ

կոմեդիայում և ամբողջ տրագեդիայում այն միասնական ոլթմով, որ պետք է համապատասխաներ մի դեպքում Շեքսպիրի երկերի կոմեդիականության, մյուս դեպքում՝ տրագեդիականության։ Բուրջալյանի ներկայացումներում զուշ միշտ դդում էք մի առանձին շունչ, տրամադրությունների իր աշխարհը։ «Համբետում» դերասանների հետ եղած տեսարանը — դա թատրոն է, դերեզմանոցի տեսարանը — մի տեղ, ուր մահվան առկայությունն է զգացվում։ «Օթելոյում» Կիպրոսում եղած տեսարանը — դա տագնապահից գիշեր է, որը լնցուն է անցած և հնարավոր ուղմական իրադարձություններով։

Բուրջալյանի բեմադրություններում, ինչպես նաև դրանցից առաջ, բայց հատկապես այդ բեմադրություններում, մի առանձին փայլով է հանդես եկել Արուս Ռոկանյանը։ Եենք կրկին անգամ հիշեցինք նրան Կատարինայից հետո։ Այլ կերպ լինել չի կարող։ Արուս Ռոկանյանն անխոնջ «շեքսպիրական է», բազմավաստակ, թերեւս ամենաբազմավաստակ «շեքսպիրականը» հայ տաղանդավոր դերասանության մեջ։

Ստամբուլ — հին թրիլիսի, նոր թրիլիսի, Անդրկովկաս, Հյուս։ Կոմիաս, Երևան, Մոսկվա, դարձյալ Երևան։ Բեմական բարեկամություն Արելյանի, Սիրանույշի, Փափաղյանի հետ, հանդիպումներ և ուսուցում դերասանուհի Հրաչյայի հետ, աշխատանք նոր սերնդի հետ։ Մի կյանք, որ նվիրված է եղել հայրենական և արևմտա-եվրոպական դրամատուրգիային։ Կատարինա, Պորցիա, Միստրիս Փորդ, ՕՓելիա, Դեզիեմոնա, Լեդի Մակբեթ, ու միենույն ժամանակ Նորա (Իրսեն), Անտիոքունե (Առֆոկլես), Կրուչինիա (Օստրովակի), Ռատուտանգելայն («Ջրառույղ Զանգը»), Մարգարիտ (Շիրվանդաղելի «Պատովի համար»), բարձր ինտելեկտի և բուռն հոգականության կուլտուրա, խոհուն, լուրջ, միշտ ուսյալ և բեմում արմիստի ճշմարտությունը միշտ որոնող, — այսպես է մեր Արուսը։ Նա «ուրբանիստ» էր իր մտածողության ամբողջ կառուց։

Վաճքով և ուրբանիտական մեծ քաղաքակրթության դերասանուհին:

Ինչն է բնութագծում դերասանուհու վերաբերմունքը դեպի շեքապիրյան կերպարը՝ հրաշալի արտաքինի ներկայության և արտաքին մաներայնության բացակայության պայմաններում: Արտաքուստ նա համեստ է, ներքուստ — փառահեղ: Նա կերպարին խորամուխ էր լինում մինչև այդ կերպարն առաջելագույն չափով ապրելը: Նա կերպարը համակում էր սեփական վարպետության միս ու արյունով, նշելով տրամաբանորեն հետեղական վարքագիծը, մինչ չելիակատար վախճան: Լինելով դրամատիկական մեծ դիակազոնի դերասանուհի, նա ուներ թատերական վարպետի ամենաթանկադին հատկությունը — կերպարի ովթմի զգացումն ու դաստիարակումը և շարժման էքսպրեսիվությունը: Բեմի վրա նա անսահմանորեն խմաստուն էր, արէ խմաստությունն առատաձեռնությամբ սփռելով իր հայցքով, ժեստերով, խոսքով, որը նա միշտ համարում էր, եր արվեստի հիմնական գործիքը: Արուս Ռոկանյանը խոսեց հրաշք էր կերտում՝ մանրակրիստորեն դանելով դրա լազմապիտի երանդները: Նա խմաստի, իդեալի, էմոցիայի դերասանուհի էր: Նրա բեմական դերի երաժշտականությունը մինչև պոետիկ վիրտուոզություն:

Հայ թատրոնի պատմության մեջ Արուս Ռոկանյանը միակն է, որը շեքապիրյան կին կերպարների մի ամբողջ պատկերասրահ ստեղծեց:

Կատարինա⁹: Նա կատարինա էր: Պողոցիա: Նա Պորցիա էր: Միստրիա Փողոց: Նա Վինձորի սանամայր էր: Արուս Ռոկանյանն այդ դերերում հիանալի զուգակցում էր Պորցիայի բանաստեղծականությունն ու խոհունությունը, կովարաբությունն ու կանացիությունը, զվարճությունն ու բարոյականությունը: Դերասանուհին ստեղծում էր անաղարառ ու վեհ, բայց և «երկրային» սիրո կերպարներ: Միթե պաշեցուցիչ չէ նրա հրաշանման կարողությունը՝ շեքապիրյան կատարերդական դերերից սուպերի 0ֆելիայի, ապա և

Դեղլեմոնայի ովրելուական տասապանքների ծովը, որպեսպէս
հասուել մռայլ ու արի լեզի Մակրեթին, որ ավելի չար,
ամելի քաջարի է, քան ինքը Մակրեթը: Մարտափելի
հիշել այն հոչակալոր տեսարանը, ուր Արուս Ռոկանյան —
Լեզի Մակրեթը ոչ միայն օրհնում է Մակրեթին՝ սպանու-
թյուն կատարելու, այլև ինքն էլ ավարտում է նրա չարա-
դործությունը՝ երկու արյունուր դաշույնները ձեռքին դուրս
գալով այն սենյակից, ուր կատարված է ոճիրը: Դրա հետ
միասին Մակրեթի մեջ առաջացած խզճի խայթը աճում է
լեզի — Խոկանյանի հոգում: դերասանուհին պատշաճ դույ-
ներ է դառնում կերպարի կանացի բնությունը և դրա նոր
հակասություններն արտահայտելու համար:

Դեղլեմոնա — Արուսն անմռուանալի է բոլորովին այլ
հասկություններով, քան Օֆելիան, էլ չխոտենք լեզի Մակ-
րեթի մասին: Ինչպիսի համբակությամբ էր նա լսում
մոռվի պատմածներն իր կյանքի դաժան օրերի մասին: Նա
Օթելոյին սիրեց նրա հետ համերաշխության դպացումից
դրդված, համակրելով նրան, նրա ժողովրդին, նրա մորը,
որի համար Դեղլեմոնան, վենետիկցի ազնվագարմ այդ աղ-
ջիկը ցանկալի հարս կլիներ: Միայն իր բախտի համար չէ,
որ սենատում Արուս — Դեղլեմոնան անհանդատություն էր
դգում: Նա հայացքով վնարում էր մավրին և վախենում
նրա վեճակի համար: Արուս Ռոկանյանը տեղն ու տեղը,
բնումում սպրում էր երկու կյանքով — մեկը պատկանում էր
ծերունի հորը, մյուսը — մավրին, ողբավարին: Անհանդըս-
տությունն ուժեղանում էր: Դերասանուհին անսուելի ճի-
ղեր էր թափում սենատի առաջ լիակատար պատշաճություն
պահպանելու համար, երջանկություն սպասող անարատ
աղջկա գգացումը ճիշտ և խորը պատկերելու համար:

Եվ երբ հայրը, Բբաբանցիոն անիծում է աղջկան,
մայրին հավատարիմ լինելու պատճառով, Արուսն իր գլու-
խը թեքում է Օթելոյի կրծքին՝ որոնելով փրկություն իր
հակասագրից: Հանուն մարդու հանդեպ ունեցած պարտքին
նա մավրին ինդրում է ներել Կասսիոյին, և դա այնքան

անմեղստկանորեն է կատարում դերասանուհին : Զէ՞ որ ոչ
թե բանականությունը, այլ սրտերի մտերմությունն է Դեղ-
շեմոնային տանում մարտական Կիպրոս : Եվ մավրն ի՞նչ-
պես կարող էր չհավատալ նրա անաղաքառության, որ ա-
ռավելագույն պարզությամբ ցույց է տալիս դերասանուհին :
Դեղդեմոնայի մարդասիրական հոգին ընդունակ էր տառա-
պելու Օթելլոյի համար, Կասսիոյի համար, իր և, բոլոր
նրանց համար, ովքեր պաշտպանության կարիք ունեին :
Մեռնելիս Արուս-Դեղդեմոնան խնդրում է խնայել ոչ թե
իրեն, — ինքը հազար անգամ անմեղ է, — այլ դարձյալ
Կասսիոյին : Սա պետք է ապրի, պետք է ապրին Օթելլոն և
ինքը, ապրեն սիրո և մարդկայնության համար : Սակայն
մահը վաղուց էր հետապնդում Դեղդեմոնային : Դերասա-
նուհին համովիչ կերպով նախապատրաստում էր դործողու-
թյունների սղբերգական ընթացքը, որն արագացվում էր
Յագոյի չարանենդ ձեռքով : Արուս — Դեղդեմոնան անմիշ-
ջական է, մանկան պես մաքուր է մարդկանց հետ ունեցած
փոխհարաբերություններում, նրա դեմքին միշտ զարմանք
է արտահայտվում մավրի տարօրինակ արարմունքների հան-
գել :

Ունեսանսի դարաշրջանի կնոջ կերպարը գերասանուհին
վերաբաշխում էր բացառապես վեհացնող երանդներով :
Նրա կատարմամբ Կատարինան, Պորցիան, Դեղդեմոնան
սուկ միայն հիշեցումներ չեն անցյալի մասին :

Արուսի Դեղդեմոնան, ոչ թե խանդի, այլ սիրո զո-
հըն է : Կատարինայի գերում նա կովարար է ոչ կովարա-
րության համար : Պորցիայի գերում նա բնալ էլ հաշվե-
նեատ կին չէ, որն իր համար վեսացու է ընտրում : Պոե-
տիկությամբ համակված սեր — այս հատկությունը նրա
համար ամենաբնական դրացումն էր, և դերասանուհին
պայքարում է հենց իսկական մարդկային հոգեկան բարձր
հատկությունների համար, որոնք հարկավոր են ոչ թե անց-
յալի, այլ ապագայի մարդկանց : Մեր կարծիքով այս է
Արուս Ռուկանյանի մհջ ծառայությունը հայ բեմում շեքրա-
պիրյան կերպարների ստեղծման բարդ պրոցեսում :

Վերեւում շարադրվածը մի անգամ ևս ցույց է տալիս
ազգային սահմանափակվածության լիակատար հաղթահա-
րումը թատրոնում, արվեստի այն արժեքների ստեղծումը,
որոնք միութենական հասարակայնության ուշադրությունն
են գրավում :

Հայկական շեքսպիրյան թատրոնի գարդացումը ընթացել
է, եթե կարելի է այսպես արտահայտվել, կուլտուրայի
ստեղծման այն ուղիներով, որոնք դեռ հայկական ունե-
սանսի ժամանակներից իրենց էությամբ եղել են հումա-
նիստական՝ Արևմտյան Եվրոպայում Ռենեսանսի բացակա-
յության պայմաններում :

Սովետական ժամանակի հայ թատրոնը հատուկ տեսա-
կետով կաղմակերպվեց որպես մասսաների վրա ներգործող
հոկտեմբերյան ուժ իր արվեստի օրդանիղմով, որ արդեն իսկատ-
րար էր :

1922—23 թ.-թ. առաջին «սաղմային» բեմադրություն-
ներից մինչև «Համլետի» և «Օթելոյի» Փեստիվալային ներ-
կայացումները հայ շեքսպիրյան թատրոնը, հաղթահարելով
հակառակալիստական ազդեցությունները, նորանոր առանձ-
նահատկություններ էր ձեռք բերում և դրսելորվում էր որ-
պես իր հատուկ տեմպերամենտն ունեցող թատրոն : Անցյալի
ժառանգությունը ո՛չ միայն զարդանում էր : Սկսեց իշխել
բեմի նոր վարպետների սովետական սերունդը : Այժմ կա-
րող է խոսք լինել նոր ժառանգությունը պահպանելու և
զարգացնելու մասին :

Այսպիսի հանգամանքներում էր իր շեքսպիրյան ներ-
կայացումներն իրականացնում Արմեն Գուլակյանը :

Շեքսպիրյան նոր ներկայացումների աչքի ընկնող կող-
մը այն էր, որ նրանց մեջ կարելի էր նկատել բեմական
ընդհանուր կուլտուրայի հետագա վերելքը :

Այդ ներկայացումները ուղենիշների նշանակություն-
են ստանում այն իմաստով, որ նույնիսկ «Մակրեթի» բե-

մադրությունը 1930 թ., նրա ամբողջ վիճելիությամբ հանդերձ, և Շեքսպիրը «նոր ձեռվ» տալու ձգուումով, ակտիվորեն միջամտելով դրամատուրգի աշխարհայացքին և տրադերիայի կառուցման սկզբունքին, — կրկնում եմ, նույնիսկ 1930 թ. «Մակրեթը» բուռն հետաքրքրություն առաջացրեց դեպի կլասիկ դրամատուրգիան և Շեքսպիրի ինտերպրետացիան։

«Մակրեթի» բեմադրությամբ վերջ դրվեց այն ընդմիջման, որ եղել էր Շեքսպիրի երկերի վրա կատարմաղ աշխատանքում։ «Մակրեթի» ներկայացմանը, բացի «Ճերերից» մասնակցում էին Հր. Ներսիսյանը (Մակրեթ), Ռուդան Վարդանյանը (Լեդի Մակրեթ), Արուս Ռոկանյանի հետ միասին), Գ. Զանիբեկյանը (Մակրեֆ), Վ. Վարդանյանը (Բանկո), Ավ. Ավետիսյանը (Անդուս)։ Պետք է մատնանշել, որ Ա. Գուլակյանի մեկնաբանությամբ Անդուսի համեմատաբար փոքր դերը մեծ նշանակություն ստացավ։ Արտիստ Ավետիսյանը պայծառությամբ տվեց պալատական խորամանկ ինտրիգանի կերպարը՝ օգտագործելով իր տաղանդի բոլոր միջոցները՝ դեսպոտիզմի անկման ու վերականգնման ներքին պատճառներն արտացոլելու համար։ Վարպետորեն թագցրած չարիքի մարմնավորման սկզբունքով ստեղծված, Անդուս-Ավետիսյանը այդ չարիքի դեմ բողոքի զգացում էր առաջացնում։ Խարակտերի այդ պայծառությունն անմոռանալի է մնում այն լավագույն կերպարների շարքում, որ ստեղծել է հայ շեքսպիրյան թատրոնը։

«Օթելոյի» նոր բեմադրության մեջ Արմեն Գուլակյանը դեկավարվում է մի սկզբունքով — ճանաչել երկն այնպես, ինչպես որ այն կա — դրա ներքին բարդությամբ։ Ոչ թե լայնությամբ, այլ խորությամբ, ոչ թե կոնցեպցիա առանց խարակտերների, այլ կոնցեպցիա խարակտերներում և դրանց շարժման մեջ։

Գուլակյանը մարդուն փնտուամ է նրա առավելապես մարդկային հատկություններում, ըստ որում այն տրա-

մաքանությունը, որով զեկավարվում է նա, պետք է հանգեց ազնիվ մարդկայնության, որն իշխում է չարիքի վրա: Հաղթում է մարդը, այն ամենն, ինչ որ նրա մեջ առաջադիմական է: Գուշակյանի «Օթելոն» նոր մավրեր ու Յազոներ, նոր Դեզդեմոնաներ ու իմիլիաներ է ծնում: Ո՞չ առանց որոշ հապատության կարելի է ասել, որ հազվագյուտու են այն թատրոնները, որոնք Շեքսալիբրի ամենաբարդ տրավեդիան կատարածների գրեթե երեք կազմ ունեն: 1941 թ. ապրիլի 19-ին, 20-ին, 21-ին ուսապուրմիկայի մայրաքաղաքի գիտողը Օթելոյի գերում առավ Փափաղյանին, Զանիբեկյանին և Ներսիսյանին, Յագոյի դերում — Մանվելյանին, Ամետիսյանին, Բեյլերյանին, Դեզդեմոնայի գերում — Սրուս Ռոկանյանին, Ռուզան Վարդանյանին, Էմիլիայի գերում — Աննա Մկրտչյանին, Վարդարա Մելքոնյանին: Այդ ներկայացումներին մասնակցում էին այն գերասանները, որոնք լսությ վորձ ունեին Շեքսալիբրի վրա կատարվող աշխատանքում, օրինակ, Վ. Վարդանյանը Կասսիոյի գերում: Թայտրոնի գերասանական խմբում կային այնպիսի գերասան-գերասանուհիներ (օրինակ, Գարագալիջը, Դավիթ Մալյանը), որոնք հաճախակի մասնակցել էին հայկական շեքսալիբրյան ներկայացումներին:

Օթելո-Զանիբեկյանը և Օթելո-Ներսիսյանը խնդիրը լուծում էին յուրաքանչյուրն օրիգինալ կերպով: Նրանցից յուրաքանչյուրի կատարման մեջ հանդես էր գալիս գերասանական ուրսույն անհատականությունը:

Գ. Զանիբեկյանի գերակատարմամբ Օթելոյի կերպարի մեջ դիտողը տեսնում է, թե ինչպես է սկիզբ առնում նրա ողբերգությունը և իր ներքին արամաբանությամբ գալիս հասնում վախճանին, — այսինքն Օթելոյի հոգեբանության էվոլյուցիան: Հը. Ներսիսյանի գերակատարմամբ ներքին տրամաբանությունը կարծեք խախտված է: Եթե Զանիբեկյանը «զսպում է» կրքերը, Ներսիսյանն «անզուսպ է». մեկը եւխում է իրեն, մյուսը բաց է թողնում կրքերի երասանակը՝ փոթորիկ առաջացնելով: Զանիբեկյանի Օթելոն ամե-

նից առաջ ապրում է մարդով և նրա ապրումներով։ Ներսիսյանը սկզբում բարեհոգի զինվորական է, որ կարող է հետությամբ իրեն հանձնել փոթորիկներին՝ վերջում խելահեղ ցնցումների և կործանման առաջ կանգնելու համար։

Երկու Յաղո — Մանվելյան և Ավետիսյան — նույնպես տարբեր են։ Ավետիսյանն արտաքուստ հանգիստ է և աշխատում է լինել համակրելի։ Մանվելյանը չարագործի գերը խաղում է նախապես որոշած միտումներով, մինչդեռ Ավետիսյանը բացվում է իրեւ չարագործ գործողության ընթացքում։ Մանվելյանի Յաղոն կարծեք միշտ և շարունակ չօքած է իր դոհի հոգուն, մինչդեռ Ավետիսյանն իրեն պահում է Օթելոյից մի որոշ տարածության վրա, որպես վի լինի նուրբ, բայց և արյունաբեռու։

Մակայն անցնենք «Համլետին», որը վերաբեմագրվեց պատերազմի օրերին և նոր նշանակություն ստացավ։

Մեղանում դա ամենակազմակերպված շեքսպիրյան ներկայացումն է իր մասսայական տեսարաններով, իր ձեւագործման սկզբունքով։ Ոչ սովորական մեկնաբանություն էր տրված ուրիշականին։ Երեսում է միայն ուրիշականի գըլլուխը՝ լույսի ճառագայթը երեսին ընկած։ Թվում է թե շարժվում և քայլում է մի գոյսին և ուրիշ ոչինչ, — այն էլ համատարած խավարի մեջ։ Դա աղքում էր դիտողի եւ համարածական վրա, համարյա թե Փիզիքական վախ պատճառելով նըան։

Ներկայացումը մտահղացված էր այն նպատակով, որ ցույց տրվի պալատական կյանքի խժդուժությունը և ըըռցույց արվածության արյունուտ գեմքը, միաժամանակ Համլետը՝ նակալընության արյունուտ գեմք։ Վաղարշյանի Համլետն արդարիսին է, մինչդեռ Զանիրեկյանը վերականգնում էր արագիցիան։ Նա ընդառաջում էր համլետականություն հասկացողությանը, իսկ Վաղարշյանը շեշտում նրա բնավորության ակտիվությունը՝ իծնե ակտիվ եռանգուն բնավորությունը։ «Լինել թիւնել» ոչ այնքան այդ առեղծվածի լուծման հանձնութելու համար՝ հանուն չարիքի պայքարելու համար՝ հանուն չարիքի

ոչնչացման : Վաղարշյանի Համլետը դուրս է պլրծնում հակառակություններից, որպեսզի հաստատի գործելու իր իրավունքը :

Կարելի՞ է վիճել Վաղարշյանի հետ. կարելի է. վիճել են նրա հետ և վեճերը մինչև այսօր չեն դադարում: Կարելի է ասել, որ նա ոգեստիվում է Համլետի բնալորության մեկ կողմով, քիչ և կամ պակաս ուշադրություն դարձնելով այլ կողմերի վրա: Կարելի է ասել, որ նա փիլիսոփա Համլետից գերադասում է գործող Համլետին, բայց անժխտելի է Վաղարշյանի խիզախությունը և իր մտահղացման մեջ ոճի զգացողությունը: Վաղարշյանը կատարում է նաև տեքստի կոմենտատորի դերը՝ կարծեք նա բացարձում, մեկնարանում է տեքստի այս կամ այն հատվածը, և որովհետեւ այդ Փունկցիան կատարում է իր մտածողության ուժով, ապա նա ակտիվ է ոչ միայն ցանկություններից և կամքից դրդված, այլև մտքից և մտածողությունից:

Այժմ հիմք կա փորձել պատասխան տալու այն հարցին, թե ո՞րն է Շեքսպիրի դերը հայ թարտոնի ոճի կազմավորման պլրոցեսում, մասնալորապես նրա զարդացման սովետական շրջանում: Բայց կա նաև մի ուրիշ հարց. հայ իրականության մեջ չկա՞ն արդյոք այն ձևերը և դրանց դրացումը, որոնք զուգակցվեին շեքսպիրյան ոճի մոնումենտալության հետ: Այս հարցը գիտականորեն մշակված չէ և մեր պատասխանը ոչ ակադեմիական բնույթ կկրի:

Այժմ բացատրելու չէ, թե ինչու պետք է վերհիշել այն խորը կիրճը, որ ծածկված է ահեղ անտառով, և նեղ, դժվարանցանելի արահետը հետիւտնի համար, որ հաղթահարվում է մարդու կամքի լարումով, ձգվում է կիրճով դեպի ներքեւ, և ապա վեր, դեպի բաց հորիզոնը, որ կըրթնած է հարթավայրին, իսկ այստեղ հպարտ կանգնած է դեռ չքանդված Տաթևի վանքը — ժողովրդի ողբերգությունների

և բնաւկան աղետների վկան : Բացատրելու չէ, թե չեքսպեր-
յան մոնումենտալության հետ ինչպիսի, թեկուզ հեռավոր
առնչություն կարող է ունենար հայկական բնության այդ
հրաշքը, որ միավորում է անսահմանորեն ահավոր և իր
ծավալով վիթխարի կիրճի երկու կողմերը, — Սատանայի
կամուրջը, որը մարդու ձեռքով չի կառուցված, բայց իր
ծանրությամբ և ներգործման ուժով որոշ տարածության
վրա թափցրել է իր տակ և ստիպել է լուել աղմկալից Որո-
տան գետը : Միայն աղատվելով Սատանայի կամուրջի տի-
րակալությունից, Որոտանը հսկայական վիշտապօծի
նման, ամբողջովին փրփրաղեղ, գալարվում-ձգվում է դեպի
կիրճի խորքը :

Մենք գտնվում ենք վանքի շենության ամենաբարձր
կետում, որտեղից բացվում է բնության հոյակապ պատ-
կերը անտեսանելի ճգողական ուժով, որ կոչում է վեպի
ոչնչացում՝ Հիշաշար քարակույտերի միջև : Այստեղ տեղի
էր ունեցել արյունոտ դատաստան հայ ժողովրդի ազատա-
րաների դեմ : Եվ այստեղ այնպես սարսափելի է, ինչպես
Յակոն ու Ռիշտարը :

Կիրճով ներքեւ ենք իջնում : Մի ուրիշ արահետ : Հան-
կարծ այն հասալ մի հրապարակ, որ նվաճված է նույն
այդ ահեղ բնությունից : Աղատված վայրի մի նեղ շերտում
կանգնած է տիրաբար և ճարտարապետորեն քնքուց բյու-
րեղացած, մեծածավալ խաչքարը, որ իշխում է վիթխարի
ընդացած, մեծածավալ խաչքարը, որ կառում է ներքեում, Որոտան
կիրճի ամբողջ տարածության վրա : Ներքեում, Որոտան
դետի մոտ գտնվում են հնագարյան բերդի ավերակները,
որ ժողովուրդը վերաբերում է մեծ զորավարին, որը վե-
րաբարձրել է իր երկրի անկախությունը : Իսկ վանքի բա-
կում հարաշարժ այսուը, որ կառուցված է մեր նախնիների
ձեռքով, միթե չի ապշեցնում մեզ, ինչպես և հայկական
հրաշալի ճարտարապետության այն բոլոր բեկորները, ո-
րոնք հանդիպում են մեր ճանապարհին և որոնց մոնումեն-
տալ ձևերը այժմ փոխադրված են կառավարական ծան
ամբողջ շենքի և Պետօպերայի շենքի վրա, ուր մտել է

Շեքսպիրն իր Օթելոյի և Դեղլեմոնայի երաժշտական ներկայացման ամբողջ մոնումենտալությամբ :

Այն, ինչ որ շեքսպիրական է, մեղանից է և մեր մեջ է : Միթե մեր թատրոնը չէ, որ յուրացնելու է պատմության մեծ չնչի այդ ոճը : Միթե այդ զգացումները չեն, որ վերակենդանացան Աղամյանի, Սիրանույշի, Աքելանի Փափաղրանի ստեղծած կերպարներում :

Մեր օրերի հայ թատրոնը Շեքսպիրից սովորում է կենսահատառում, զգացումների ազնվություն և խորը միտք չենց այդ էլ նշանակում է ստեղծել ու դաստիարակել այն, հատկությունները, որոնք մոտիկ են հայ ժողովքին :

Մենք հեռու ենք այն մտքից, որ հայ սովետական բեմում Շեքսպիրն անցնում է ոճային առանձնահատկությունների կուտակման պրոցեսից դուրս : Մեր թատրոնի պրակտիկան խոսում է այդ առանձնահատկությունների գոյնության և այն մասին, որ դրանք փոխանցվում են ուրիշ, նոր առանձնահատկությունների : Արտիստների դրեթե չորս սերունդ աշխատում է առանց Աղամյանի ու Երկու սերունդ — առանց Սիրանույշի : Բայց Աղամյանի և Սիրանույշի խաղի պարախտուրան թանգարանային ուսումնամիրության առարկա չի դարձել (նրանց իրերն են գտնվում թանգարանում), — այն գտնվում է մեր ժամանակակից վարպետների կենդանի ստեղծագործության մեջ : Դիմադրելով XIX դարի 80-ական թվականների ռեակցիայի ըլլանի միտտիկային ու ակեսսիմիլյմին, Աղամյանն իր Համելուին հասցնում է ճշմարտության և բարձր մորալի : Աղամյանի ստեղծած կերպարը Սիրանույշի խաղի մեջ մերնոր գիծ է ձեռք բերում — ինտելեկտի ուժը : Աքելյանն Օթելոյին ավեց բանաստեղծականություն, Փափաղյանը՝ Գրեղեն ակմակերամենության մորալի հաղթական, ինտելեկտի ուժ, բանաստեղծականություն, հրեշտականություն և անազարտ սիրո ծարավ, — այսպես է մեկ պատկերանում շեքսպիրյան այն կերպարը, որ ստեղծվել էր գեղութիւնը սովետական ժամանակ : Մինչ սովետական

թատրոնում կլավդիոսը արքայական կոչում կրող սոսկական չարագործից սովետական թատրոնում վերածում է հումանիստ Համլետի դեմ պայքարող ուժի: «Օթելո» տրագեդիան այլևս գոյություն չունի որպես տրագեդիա խանդի մասին, այլ յուրացվում է որպես սիրո և ազնվության տրագեդիա: Մարդկայնությունը դարձավ հայ չեքըսպիրյան ներկայացումների ընդհանուր դիմք: Այս է գործի էությունը: Այս արդեն հաջողություն է: Մենք գնում ենք դեպի միասնական Շեքսպիրի միասնական գիտակցությունը:

Եղբակացություն:

Հայ սովետական թատրոնն աշխատել է չեքսպիրյան ժառանգության պատասխանառու մասի վրա: Նա սիստեմատիկորեն վերադառնում էր այն երկերին, որոնք կազմում են անդլիական դրամատուրգի համաշխարհային փառքը:

Մշտապես առնչվելով Շեքսպիրի հետ, հայ քատրոններելայնեց սեփական ստեղծագործության հորիզոնը:

Շեքսպիրով գաստիարակել են հայ սովետական բեմի վարպետների նոր սերունդները:

Մեր դիտողին դաստիարակել հումանիզմի, սիրո, իդեալների, բարձր բարոյականության, սովետական վերածնունդի էպոխայի մարդու փիլիսոփայական ու գեղարվեստական ձգտումների ոգով՝ սրանումն է կայացել և կայանում է մեր չեղատակի առաջընթացը Շեքսպիրի ժառանգության լիակատար յուրացման ճանապարհին:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅ ԳՐԱՄԱՏԱՒՐԳԻՒՄ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԿՈՒ
ՏԱՐՈՒՄ

ՄԻ ԶՍՆԻ ԽՂԱՔ ՆԵՐԱՋՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Գերմանական Փաշլզմի գեմ մղմղող Հայրենական մեծ
պատերազմը նոր էջ բաց արավ արվեստի, թատրոնի, ինչ-
պես նաև դրամատուրգիայի համար։ Այժմ դրամատուր-
գիան ապրում է նոր էտապ և նրա առաջ ծառացած խըն-
դիրները նոր խնդիրներ են, ամենահուզիչ իդեաներ և է-
մոցիաներ, որ երբեք մարդ իր կյանքում կարող էր ապրել։
Երեան եկալ սովետական մարդուն նոր իրազրության մեջ
նկարագրելու անհրաժեշտությունը և պահանջը։ Հայրենի-
քի պաշտպանության գաղափարի արտացոլումը այս իրա-
դրության մեջ նոր թափ ստացալ։ Գերմանական Փաշլզմի
մերկացման և ոչնչացման խնդիրը դրամատուրգիան՝ պետք
է որդեգրեր իրեւ բարձր խնդիր։

Դրամատուրգի համար գծագրվեցին գաղափարների,
զգացումների, պատկերների նոր հեռանկարներ։ Դրամա-
տուրգի նշանակությունն աճեց և, թեև հեռավոր անցյա-
լում, ինչպես օրինակ՝ Շիլերին թվում էր, որ գրամա-
տուրգի քաղաքական անփորձությունը դույժե նրա բա-
նաստեղծական առավելությունն է, սակայն մենք կարող
ենք ասել, որ այդ պայմանը մերը չէ և լինելով գեղար-
վեստական պատկերի պաշտպան՝ մերժում ենք այն հայե-
ցողական դարձնելու միտումը։ Ինքը՝ Շիլերը եղել է նաև
ակտոր՝ պատկերի գեղարվեստագետ և հրապարակախոս,

Նրբ օրինակ՝ «Ձիեսելոյի դավագրության» մեջ, ի թիվուայլ մտքերի, հայտնել է և այն միտքը, որ եթե գերմանացիները օտար երկրում, ինչպիսին Խոալիան է, բռնակալների կատաղի թշնամիներ են, ապա որպիսի՛ մոլեգնությամբ նրանք կպաշտպանեն բռնակալներին իրենց երկրում...

Հատկապես դրամատուրգիայի ասպարիզում քաղաքական անփորձությունը ոչ միայն բանաստեղծական առավելության համար նախադրյալ լինել չի կարող, այլ և ընդհակառակը, բանաստեղծական առավելություն ձեռք բերելու համար հարկավոր է քաղաքական մտածողություն և փորձառություն ձեռք բերել։ Տարրալուծվելով իր ստեղծած զործող անձանց մեջ՝ դրամատուրգը չի դադարում դատախազ լինելուց և որ նույնպես կարեոր է՝ նա ամենախելացի մարդն է լինելու, քանի նրա բոլոր դործող անձինք և ամենախելացի մարդկանցից մեկը՝ օժտված անպայման պետական ուղեղով։ Նրա դրվածքում երեան է դավա ոչ միայն անհատն իր «Ճակատագրով»։ Նրա գլուխածքում երեան են գալիս մարդկային գանգվածներ, ժողովուրդներ և պետություններ, և կարծեք թե դրամատուրգի ձեռքին է այն մողական գավազանը, որով տնօրինվում և կամ տնօրինվելու է աղքությունների և պետական կարգերի բախտը։ Իհարկե մողական գավազան գոյություն չունի, բայց պետք է լինի ուսալ պետական մտածողություն և դա է թափանցում դրամատիկական երկի էությունը։

Գուցե իսկապես ոչ մի ժամանակ գեղարվեստական պատկերի ակտիվիտետն այնքան բարձր չի եղել, որքան այսուհետեւ ակտիվիտետը մտածողության պետական բնույթն այնքան ակնհայտ, որքան Հայրենական պատերազմի ընթացանում։ Եվ դա հասկանալի է— դրամատուրգիան ոչ միայն գրականություն է, դրամատուրգիան թատրոնի բովանդակությունն է, իսկ թատրոնը կենդանի հանդիսատեսին վերաբարձնում է այն, ինչ դրամատուրգիան վերցրել է իրականությունից։ Այսպիսով, տասնյակ և հարյուր է իրականությունից։

Հազարավոր հանդիսականներ դրամատուրգի շնորհիվ պետում են իրենց հուզող կյանքը՝ անմիջականորեն շվամբով նրա բոլոր կողմերին։ Թատրոնն ստեղծում է դոյցություն ունեցող իրականության պատրանքը, այսինքն նրա երկրորդ գիրականացումը— այժմ արդեն կյանքից բնիք վրա։ Եվ այդ բարդ սղրոցեսի մեջ միշտ էլ վճռական նշանակություն է ստացել դրամատուրգի մտածողությունը և նրա ստեղծած դեղաբալեստական պատկերը։

Սրա գեմ կարծեք թե առարկություն չկա, կամ անհայտ է նույնիսկ թե ի՞նչու պետք է առարկություն լինի։ Բայց երբ դավիս հասնում ենք Հայրենական պատերազմի ժամանակաշրջանի դրամատիկական ստեղծակություն հարցերին՝ ասդա դրամատուրգներից ոմանք մնալ ասում են. «Հիշեցեք հին ասացվածքը— երբ թնդանոթները որոտում են՝ մուսաները լուսմ են», կամ դրամատուրգի համար հիմա կարող է միայն ժամանակավոր դործ լինել։ Ժամանակը շտապում է, մենք նրա հետեւից, միևնույն է չենք հասնի»... Ճեշտ այս հոգեբանությամբ օժտված մարդիկ շտապում են ժամանակից շուտ «սպանել» նույնիսկ այն սակավաթիվ երկերը, որոնց վրա հիրավի կատաղանգավորության դրոշմը, միայն այն պատճառաբանությամբ, բառացիորեն այսպես է ասվում, որ օրվա գրությունը փոխվեց, պետք է վերանայվի նաև «դրվածքի աղիտացիոն նշանակության ակցիան»։

Հետաքրքիր է ոչ այնքան այս դատողությունների ծառման աղբյուրը, որովհետեւ վերջիվերջո դժվար չեկուահել, որ դժանց հեղինակը խորը թիկունքում նստած չի չ անհանգստացող գրողն է։ Մեղ դրազեցնում է մի այլ հարց — թե ի՞նչու թիկունքի դրամատուրգիան ստեղծադործական ոգու լարման այն աստիճանին չպետք է հասնի, ինչ աստիճանի, որ մարդկային ոգին լարվում է պատերազմի պայմաններում։ Պատերազմը արտակարգ սրության է, հասցրել մարդկային միտքը։ Իր տրամաբանական իրաւությունը պատերազմը մարդուն մզում է նորանոր

ինդիւնների։ Այլ պայմաններում գուցե մարդն այնքան արագ չի փոխվում և հասունանում, որքան պատերազմի պայմաններում։ Փոխվում է հետեւապես մարդու գործունեության ուժը, տեղի է ունենում կամքի կենացունացում։ Իսկապես ստեղծագործող անհատը որոնում և գտնում է նոր թոփչքների հնարավորություններ՝ և ապրում է այդ թոփչքները։ Սնհատի ստեղծագործական ոգին աղատագրական արդար պատերազմում խտացնում է իր կարողությունները և այն, ինչ արտահայտվելու էր գիշուք երկար ժամանակի մեջ գրաւորվում է անհամեմատ կարճ ժամանակում և ավելի թանձր վիճակում։ Դաստեղուն ոչ միայն աղատագրական պատերազմի ռազմական արարածայտություններից մեկն է, այլև ստեղծագործական ուժու լարման բարձրագույն գրաւորումն է, որի համար ժեղքը պրվեստի մեջ կունենար իր հարատե կենսական նըշանակությունը։ Զիրուելով դեռևս դրամատուրգի աշխատանքի ժամանակին յուրահատկության մասին, մի բան ստեղծական անկասկած է — որ դրամատուրգի, որպես գրողի համար ավելի քան պարտագիր է ստեղծագործական կարողության կամ ինչպես ասում են ողու լարվածության թարմություն և արթնություն։ Դրամատուրգը նաև ժամանակային յուրահատկության թելադրանքով շարունակ անհայտ է, որոնումների մեջ, հանգույցների մեջ, կոնֆիստ է, որոնումների մեջ, հանգույցների մեջ, կոնֆիստ է, արթուրուն, երեսելթները կապականական կամքի մեջ առաջանում, արթուրուն, Տուրականությունը ծնվեցին ցող։ Պատերազմի անմիջական մթնոլորտում ծնվեցին ցող։ Պատերազմի անմիջական մթնոլորտում ծնվեցին ցող։ Ամսականության շեմատիկան, Տուրականությունը և երենրուրդ հոգին, Վանդակայայի անողոք «Ծիածանը», Միմոնովի ողարդ և վեհ պոկվիան, Լեռնովի «Արշավանքը», Կորնեյչուկի «Ֆրոնտ» դրամատիկական երիկը։ Դրամատուրգի համար ժամանակի տեղողությունը ուղղվի գործոն չէ. որոշիչ գործոնը — տարանդն է, այսինքն անողոք աչքը, արթուրուն միաքը, իրականությունը գեղարվեստորեն կարդալու ունակությունը և ձեի վարպետությունը։

թիչ անհանդստացող դրամատուրգը մոռացության է
մատնում ևս երկու դրություն։ Նախ այն, որ գերմանա-
կան մարդակուլ իմպերիալիզմի դեմ մզկող պատերազմը
արմատական փոփոխություն մտցրեց դրամատուրգիայի
թեմատիկայի և դրամատիկական կոնֆլիկտների մեջ։ Կե-
նաց և մահու բախումներ տեղի ունեցած ժողովուրդների
կյանքում, Եվրոպայում խորտակվեցին պետական հար-
գեր, որոնք ազգայնութեն ինքնորոշվել էին վաղուց ի վեր,
կործանվեցին մարդկային մեծ արժեքներ և կուլտու-
րայի ու աշխատանքի կոթողներ։ տեղահան արվեց
և միլիոններով ոչնչացվեց ժողովրդի մարդը և նրա ընտա-
նիքը։ Դեռ անցյալ դարի 80-ական թվականներին Շչեդրի-
նը դրել է, թե գերմանացին ուղում է աշխարհը խօսել,
իսկ այսօր աշխարհը խօսելու ելած այդ գերմանացին իր
երախը բաց արած ցինիկորեն հայտարարում է։ «Լավ է
գերմանական սուտը, քան մարդկային ճշմարտությունը»։
Սկսվեց ավաղակային արշավանքը Սովետական երկրի
վրա՝ վերացնելու նրա անկախ գոյությունը, ոչնչացնելու,
գերեվարելու և ստրկացնելու մեր ժողովուրդները։ Մարդն
իր նշանակությամբ երբեք այնքան չէր բարձրացել, որ
քան մեր ազատագրական պատերազմում, երբ նրա առաջ
կանգնած էր մարդկային կյանքի կործանման կամ պահ-
պանման, առա և հետաղա շինարարության հարցը։ Զըն-
չել այս մթնոլորտի օդը և չդիտել մարդուն այս կոն-
ֆլիկտների մեջ՝ հետաձելով այդ գործը ինչ-որ հեռավոր
ապագայի — առնվազն անհասկանալի է։

Երկրորդ։ Հայրենական պատերազմի ժամանակաշրջա-
նում թատրոնի դերը անհամեմատ աճեց։ Հանդիսականը
տարբերություն չի գնում թատերական պայմանականու-
թյան և ուշաւ իրականության միջև։ Նա հալատում է բե-
մին այնպես, ինչպես հավատում է իր գոյությանը։ Թատ-
րոնը ձեռք է բերել հանդիսականի վատահությունը և այդ
վստահությունը չպետք է չարաշահվի։ Աննկատելի կեր-
պով թատրոնը դառնում է ուխտատեղի։ — բեմից լավում

և ապարդ խոսքեր պատմության համար ծանրակշոր դեպքերի մասին։ Դերասանը պատկերում է և խորհում, ցուցադրում է և դատապարտում, և՛ ուսուցանում։ Թատրոնը իր ազգեցության ուժով նյութականացնում է իդեաներ և էմոցիաներ։ Թատրոնի ձգական ուժը դահլիճ է բերել հանդիսականի նոր խալեր։ Արտակարդ աշխուժով և խուռներամ այդ հանդիսականը թափանցել է թատերանորած՝ բերելով իր հետ և՛ ուղղադաշտի թարմ տպավորությունը, և՛ թիկունքի լարված միտքը, և՛ դաշտավայրի բուրմունքը, և՛ բռան բքի շունչը։ Նոյեմբերի 7-ը Սունդուկյանի թատրոնում և հունվարի 23-ը Ստանիլավսկու թատրոնում — «Ֆրոնտի» բեմադրության առաջին օրնը — խոր բովանդակությամբ տոնական օրեր էին։ Ղամարը վում նոյեմբերի 28-ին, ներկայացմանը, չնայած ցրտին և այն բանին, որ վարագույրը բացվեց 9-ից անց և փակվեց գիշերվա ժամը մոտ 2-ին — հասարակությունը մինչև վերջ մնաց դահլիճում, խոկ դա այն հասարակությունն էր, որի մի գդալի մասը թատերական նոր և հիանալի շենքում սամայակի լույսը տեսնելուց մի քանի ըստե առաջ գտնվում էր կայարանում և ուղղաճակատ էր ուղարկում իր հարազատներին։ Այսօր սիմվոլիկ նշանակությունն է ստացել որևէ ներկայացում Արագածի լանջերին, երբ Ղփչաղ գյուղի բնակիչը ծափահարում է պատմական հերոսի կեղծամհական կամաց և փայտե թուր գործածող ու հաղթանակող Վահագած և այսօր մեր թատրոնները կունենան միայն բարդացությունների մեջ մեջ։ Ահա աշխատանում ավելի քան մեկ միլիոն հանդիսական։ Ահա մեր կամաց է դիմավորում ժողովուրդը դրամատուրգի թե ի՞նչպես է դիմավորում ժողովուրդը դրամատուրգի թե սա մի՞թե ողեվորության աղբյուր չէ դրամատուրգի համար։ Ոգեստություն կա իհարկե և դրամատուրգի համար։ Ահա մեր կամաց է դիմավորում ժողովուրդներ, արձակագիրներ, քննադատներ, բանականացներ, պատմաբաններ, և՛ ուսանող, և՛ ճարտարապետներ, իրավաբաններ, և՛ համարկի մտավորական... գրվեց ահա իրավաբան, և՛ հիմնարկի մտավորական... գրվեց ահա պիես քան 100 պիես, բեմադրվեց ավելի քան երեք տասնութերության մեջ։

նյակ պիես։ Բայտ երեսութիւն մենք նորից ապլում ենք
«նախնական կուտակման մի շրջան» և այս շարժումը չե
կարող չբերել իր որակական արդյունքն ապագայում և
մեր նպատակն է՝ խնամքով վերաբերվել երեան եկած
երկերին, զբաղվել դրանցով, ոչ այնքան պատճողական
շարադրությամբ, որքան հարցեր հարուցել դրանց մասին
և դրանց առիթով՝ ասելով թե ի՞նչ է, իրերի դրությունը
և ի՞նչ է մեր ցանկությունը։

ԳՐԱՄԱՅՈՒԹԻՒՆ. ԹԵՄԱ. ՏԻՎ. ԿՐԱԿ. ՎՈՒԹՅԱ ՀԱ. ԸՆ. ՌԵ. ՔԵ. ԲՈՒԹՅԱ. ՄՐ

Այս հարցը խիստ հետաքրքրական է, որովհետեւ պար-
զել է պետք, թե իրականության անվերջ բազմազան ար-
տահայտություններից դրամատուրգիան ի՞նչ է «յուրա-
ցըրել» . . . Մի բան ակներեւ է—ա'յն, որ արդիականության
հարցերն ու երևույթները դրամատուրգիայի ճնշող և գե-
րազանց նյութն են կազմում։ 100-ից անցնող պիեսների
թեմատիկան զգալի չափով հայրենական պատերազմն է։
Մենք կարծես թե իրավունք չունենք գանդատվելու և ա-
սելու, որ դրամատուրգը ըստ մեծի մասի լուել է և անտե-
սել ներկա իրադրությունը։ Ուեպերտուարում այդ պըռ-
դուկցիան զգալի տեղ է բոնում և նկատի ունենալով դրա-
մատուրգիայի արդիական թեմատիկան՝ ասվում է նաև
այն, որ թատրոնները նույնական շրջադարձ են կատարել։
Հերակլի դրամատուրգիան վորքը ձեւից մեզանում անցավ
և նշուր ձեմի և վերջին շրջանում մենք ստացանք երկեր, ո-
րոնք բեմադրվեցին մեր կենտրոնական թատրոններում։
Դա անկատակած դրամատուրգիայի հաջողությունն է։ Եվ
մենք սկսում ենք հանդստանալ, բայց հարկավոր չէ այն-
քան էլ շրջահայաց լինել հասկանալու համար, որ թեմա-
տիկան դեռևս ամեն ինչ չէ, որ թեման դեռևս դրվագքի
եղեան չէ, որ եղեան իր հերթին գեղարվեստական կեր-
պար չէ, ուրեմն և քեմայից մինչև գեղարվեստական

ասեղծագործություն ահազին ճանապարհ կա անցնելու։ Թեման ինքնին նախնական մի նշում է՝ էմպիրիկ նյութի մակարդակից քիչ ավելի բարձր, սակայն գրամատուրգների խնդիրն է ո՛չ միայն միմյանց չկրկնել, այլ լայնացնել ընդդրկվող նյութի սահմանները։ Երբ գրողը չի գնում ըստ խորության, ապա նա պարտավոր է գոնե ըստ լայնության քայլել և չկրկնել գրամատուրգիայում արդեն բազմիցս չոշափված նյութը։ Մինչեռ տեսեք ի՞նչպիսի պատկեր և ստացվում — գրամատիկական ներկա արտադրանքի մեջ առատորեն երեան է բերված և դեռ շարունակվում է Երևան բերվել գրամատուրգիայի «Հին բարեկամ» և մարդկության հայլիտենական թշնամին՝ դավաճանը։ Մի դեպքում նա կոչվում է Լյազուշկին («Հրաբսի վրա»— Արաքուրման), մյուս դեպքում Սիսյադին («Հայրենիքի զավակը»— Տ. Հախումյան), երրորդ դեպքում Յուղին Ստեղան («Յասում» Ա. Գուլակյան)։ Սրանք հայտնի են, բայց մեծ թիվ են կաղմում լույս չտեսած և չբեմադրված պիեսների դայլաճանները։ Դավաճանության թեման ինքնին վերցրած արդեն կրկնվում է՝ անցնելով մի պիեսից մի այլ պիեսի, իսկ եթե հայկական պիեսներին ավելացնելու վիճակը ուռւսական մի քանիսը (օրինակ «Ինժեներ Սերգեև»— Սոյկինի կերպարը) ապա կստացվի դայլաճանների մի ամբողջ շղթա։ Հասկանալի է, որ առանց դավաճանի դժվար է սյուժե կառուցել և ինտրիգներ հօրինել — այս իմաստով էր ասլած, որ դավաճանի կերպարը դրամատուրգիայի «Հին բարեկամն է», սակայն մինչև ե՞րբ մեր բեմերում կթափառի այդ դայլաճանը՝ դրավելով այնպիսի կերպարների տեղն ու դոյությունը, որոնք կարող էին իրական-կենսական մեծ օրինաչափություններ արտահայտել։ Դավաճանության թեման անկասկած աղքատացնում է դրամատուրգիայի թեմատիկան առհասարակ։ Սրա մասին է խոսքը։

Ամենայն իրավամբ խոչոր ցանկություն ունեինք և այդ ցանկությունը օրեց օր աճում է մեր մեջ՝ տեսնել բե-

մի վրա ժողովրդական մեր խիզախ և փառապահն ծ վրեժառութեան բարեկան : Գրամատուրդիայի մեջ, չնչին բացառություն առ ի պարտիգան : Պիեսներում երեան բերդեցին տասնյակներով պարտիգաններ : Դրանք այսպես են կոչվում — «Պատ» Անդրեյ Երմոլայ («Անտառի խորքում»— Գ. Սարյան) կամ ուղղակի «Կարմիր պարտիգաններ» (Նախիրի Զարյան «Վրեժ»), Զերնեցով, Պախովիչ, Օրեշկին, Կարպուստին «Ծախ և Մաթ»— Ա. Փալանջյան), Տրուրաչ, Շուառի, Շեստին («Անտառները շարժվում են»— Արաքսյան) : Մի այլ պիեժի որդող անձինք ուղղակի այսպես են տրված՝ «պարտիգան պապը, պարտիգաններ» Երկուայ, Վորոն, Պավիլի, պարտիգանի աղջիկի, այլ պարտիգաններ : Պիեսներում կղանենք ամեն հասակի պարտիգան պապից մինչ թռունիկ, տատիկեց մինչ դարձյալ թռոնիկ : Վերցնելով գլուխածքի պարտիգաններին՝ մեր դրամատուրգներն զգուշությամբ «անցան կրակի զիճը» և սովետական թիկունքից իրադրեցին զերմանական թիկունքը : Այդ վայրկանից սկսած մենք մեր գրամատուրգներին այլևս չտեսանք. նրանք խորասուզվեցին իրենց գրվածքների «պարտիգանական անտառի մեջ»՝ թաքցնելով այստեղ իրենց գրական չնորհքը : Բայց եթե մեր դրամատուրգներին սովետական թիկունքում չենք տեսնում՝ զրա վոխարեն տեսնում ենք նրանց պապերին և թռոնիկներին, սակայն խկապես հերոս վրեժառուները բեմի վրա քայլում են լոկ որպես տժույն սալիքը : Սովետական հայ դրամատուրգիան չնայած իր խոր համակրանքին զեպի պարտիգանը, այնուհանդերձ սարից սահմանափակել է իրեն և իր եռանդի մեծ մասը նվազել գերմանական թիկունքին : Այսպես ահա զծակ բրդում է արդեն գրամատուրդիայի թեմատիկայի մի զգալի հատվածը — մի կողմից զավաճանություն, խոկ մյուս կողմից պարտիգանը գերմանական թիկունքում : Գուցե բացառություն է կազմում «Վրեժ» պիեսը, որի գլխավոր հարցերից մեկը գերմանական հրամանատարության երկու

Հատվածի հարցն է, և Գուլբակյանի «Յառում» պիեսը՝ որի
մեջ հակադրված են դաստիարակության զերմանական և
սովորական սխալմաները։ Փոքքեր են արված հաղթահա-
րելու թեմատիկայի սահմանափակությունը և լայնացնելու
այն։ օրինակ՝ «Հրաբխի վրա» պիեսում նյութ է վերցված
մեր մարդկանց գլուխությունը գերմանական օկուլա-
ցիայի դեմ, իսկ «Վրեժ» պիեսում Նախի Զարյանի մյուս
վլաստոր խնդիրն է եղել ցույց տալ սովորական ժողո-
վուրդների ներկայացուցիչների միատեղ կրկիվն ընդդեմ Գա-
շեզմի։ «Ծախ և մաթ» պիեսում արտահայտություն է դը-
տել զերմանական և ուռմինական հակասությունը, բայց
այդ տրված է հարեանցիորեն և հիմնական հարց չէ։
Կոտոնենք և դիվերսանտներ, ծպտյալ հետախույզներ և
այլն, և այս կարգի գործող անձանց մասին մեր դիտողաւ-
թյունը մնում է ուժի մեջ — սովորական հայ դրամա-
տուրդիան թեմատիկայով միատարր է և համարյա միա-
պաղապ։ Զնայած թեմատիկայի առատությանը՝ այս՝
մեր դրամատուրդիան թեմատիկայի կրկիվն է ապրում։
Այս մասին պետք է բարձրածայն խոսել, այս դրությունը
պետք է դիտակցել ամենայն շնորհակությամբ։ Օգտագործ-
ված թեմաների ակտուալությունն անշուշտ խիստ ակըն-
հայտ է, բայց պետք է նկատի ունենալ և այն գրությունը,
որ դրամատուրդիայի թեմատիկ սահմանափակությունը՝
սահմանափակում է նաև թատրոնի ստեղծագործական ագու-
խատանքը։ Այսպես օրինակ՝ եթե 1941—42 թ. ռեպերտուր-
ալում գերիշխում էր «Վրեժ» պիեսը և այն բեմադրվեած համեմատական ի համարյա բոլոր թատրոններում, նաև գրադարաններում թարգմանությամբ, 1942—43 թ. ձմեռային ամեներին զերիշխում է «Հրաբխի վրա» պիեսը։ Աւքեմն սովորական համարյա դրամատուրդիայից զգալիապես այս երկու դրամատիկան մեծահասակ հանդիսականի հոգեորդ անդամնորդ մեր բան, որ հիբավի սահմանափակում է թատրոնի գրադարանի փարական և դեղարվեստական դրություններան։ Այս
իսկ ի՞նչ բնույթ ունին օդտագործված թեմաները։

դանել ու բեմ հանել նրա վրամատիկական կողմերը:
Պարզ է, որ թիկունքը պատկերելլ հետ գործ չէ: Մեր
դրամատուրգի համար ուժեղ գիմագրության ուղին կլինի
թիկունքի պատկերման ուղին: Դրամատուրգն ըստ երևոյ-
թին խուսափում է գժվարություններից և մենք գեռևս
նույնիսկ որոշակի ասել չենք կարող — արդյո՞ք թիկունքի
պատկերման օրինակով չափեաք է ստուգվի դրամատուրգի
գործ լինելլ: Թվում է, որ թիկունքի մարդու նկարագիրը
դրամատուրգին կկանգնեցնի ստեղծագործական թեմաների
յուրացման անհրաժեշտության առաջ: Ոչ թե սիեմատիկ
գրություն և աբստրակցիա, այլ ունակ ամենօրյա իրակա-
նություն, ոչ թե դատողություններ, այլ մարդու հոգե-
կան աշխարհի շարժում — աչա թե ինչ կարող է բերել
իր հետ թիկունքի թեմատիկան:

Սովետական հասարակության կյանքը, քաղաքացու
անցումը զինվորականի, տեխնիկական մտքի և արդյունա-
րեցության ու ինտելեկտուալիայի համառ ստեղծագործական
աշխատանքը, ռազմաճակատի դրության անդրադարձումը
թիկունքի մարդու կենցաղում և հոգեբանության մեջ —
այսպիսի և էլ ավելի բազմազան խնդիրներ ու երեսութ-
ներ գրամատուրգի համար հետաքրքրության նյութ չեն
կարող չդառնալ: Զի կարելի հաշտվել նաև այն կարծիքին,
որ թիկունքում կոնֆլիկտներ չկան և դրամատուրգիան
ինքնին ժխտված է: Իսկ ի՞նչ չպիսի դժվարություններ է
հաղթահարում թիկունքի մարդը և ոչ թե դժվարություն-
ների մի ալիք, այլև երկրորդ, երրորդ ալիքը: Հոգեկան
ինչ ուժ է ստիլում երիտասարդ կնոջը, որի ամուսինը
ձակատումն է, ասել հրամանատարությանը, որ իրենց
տանը փոքրիկ չկա, մինչդեռ փոքրիկը կա, և մեկնել զին-
վորական ծառայության: այդ ինչ պրոցես է ապրել
դեղնուշի նախին, որի որդին ճակատում սպանվելուց հե-
տո, կախ խատորեն դժողում է զինկոմից, որ իր որդուն
ճակատ է ուղարկել և որի սպանության պատճառը հա-
մարում է զինվորական կոմիսարին, բայց իրականության

քաջմազան ապավորությունների ու մտածումների խաչաձև աղջեցության տակ պառայ նանին իր մինիթարությունը բանում է նույն զինկոմի մեջ. նանին այժմ վայելում է զինկոմի բարեկամությունը, իսկ ատելության դգացումներն ուղղված են ֆաշիզմի դեմ:

Գրամատուրզիայի թեմատիկայի մեջ մենք սպասում ենք շրջադարձի — դեպի բազմազանություն և թարմացում, դեպի ստեղծագործական թեմատիկա: Ռազմաճակատի հարուստ նկարագրությունից բացի դրամատուրգիան պետք է իր ուշադրությունը նվիրի թիկունքին՝ պատկերելով հայ ժողովրդի անձնվեր մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին. այս է խնդիրներից մեկը: Այս նպաւակին է ծառայում և 1943 թվի բավարույն պիեսի կոնկուրսը:

ԱՐՄԵՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԿԱԾՈՎԻ ԱՐՄԱՆԱԿԱԾՈՎԻ ԱՐՄԱՆԱԿԱԾՈՎԻ
ԳԵՂԱՐՔԵՍՏԱԿԱՎԻ ԶԴՅԱՑՈՂՈԽԹՅՈՒՆԸ

Բայց ձիչտ չի լինի, Ներե բավարարվենք միայն թեմատիկայի բազմազանությամբ և թարմացմամբ: Կարող են նոր երկեր գրվել և ներկայացվել նոր թեմաներով, բայց զա կլինի նմխնական մի քայլ գեպի մի ալելի բարդ խնդիր: Մենք նկատի ունենք իրականության ճանաչողությունը և նրա գեղարվեստական ռեալիստական գդացողությունը դրամատուրզիայի մեջ: Թեմատիկան պետք է բարձրացվի իրականության ճանաչողության մակարդակին: Իսկ ի՞նչ իրականության ճանաչողության չափագործ մեջ չափագործ է արեն մեզ հաճախ հրամցնում: Միայն չոր չափագործ և արձանագրություն: Գրամատուրգիան այսպես է իրականացնական, առօտե և սովորական հրամանագործական գրամանիտագրաբության թիմատիկան:

ԳՆԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՄՈՒՆԵՆՈՎԱՄ և ռազիոնին, հազնում է սափողերը և միացնում: Ապա համում է գրեսուեր և երրեմբ հշումներ կատարում: Պառւզա: Ակում է քրի տուի երգել (•): Ահա, վերջապես հազորդադրություն

է : Ի՞նչ, ... սա ո՞ր սաղխակայանն է : «Կենտրոնական
ճակատում, Ե... քաղաքի համար մզվող մարտերում...
15-րդ, 77-րդ մոստիկիվելիքան... 10-րդ տանկա-
յին... 13-րդ, 187-րդ, 293-րդ, 268-րդ գելիպիտաները
գլխավին ջախջախվել են... 8 դեմքիցիա... այդ ո՞ւմ
դեմքիաները... Ուրեմն մերոնք են...»

Այսպես շարունակվում է տպագրական մի ամբողջ
էջ... Հետո մեր մարդիկ այդ գնդապետին գերի են վերց-
նում և կտպիտանը ասում է : —

ԿԱՊԻՏԱՆ. — Մեր հայրենիքի պարծանք հերոսներ՝, ապ-
րե՛ք, շատ ապրե՛ք : Դուք արժանի եք ավելի մեծ առա-
ջաջրանքի և այդ կտպանաք : (Դեպի Փաշիստները)
Ահա՛, տեսնո՞ւմ եք այսպիս են դաստիարակվել մեր սե-
րունդները» և այլն :

Ներս է մտնում լեյաենանտ կորոտկովը, որ նոր միայն
առաջադրանք էր ստացել և այժմ զեկուցում է :

ԿՈՐՈՏԿՈՎ. — (Շտապ ներս է գալիս զեկուցման) Ընկեր
հրամանատար : Մեզ վրա դրված առաջադրանքները
լիովին կտպարված են : Թշնամու կողմից գետն անց-
նելու բոլոր փորձերը ձախողված են : Մեր թիկունքն-
իջեցրած օդային դեսանտների մինչև վերջինը ոչնչաց-
ված են : (Եվ այլն) : Սպասում ենք ձեր նոր հրամա-
նին :

ԿԱՊԻՏԱՆ. — (Կորոտկովին) Պատրաստ մարտի և այլն :
(Հ. Բեյլերյան — «Հայրենիքի համար», Պետհրատ,
պիեսներ էջ 114, 118—19-ը) :

Այս ամենը հիրավի արձանադրական թեմատիկ ստա-
յադրանք է, որ դեռ չափազանց հռուտ է արվեստ լինելուց :
Մի այլ պիեսում տրված է սովորական մարդու և գեր-
մանացու դիալոգը այսպիսի շարադրությամբ :

ՆԵՑԵԴՈՎ. — Եվ ո՞րն է ձեր այդ «վեհ» նպատակը :
ԿԻՐԻԳԵ. — Գերմանիան պետք է քայլի ամբողջ աշխարհով
թե ո՞վ և ո՞ր ժողովները կճզմվի այդ քայլերի տակ :

մեղ չի հետաքրքրում: Մեր ժողովուրդը կատարում է
իր պատմական մինիան:

ՆԵՑԵԴՈՎ. — Ժամանակակից սլատմությունը չի կարող
արյունով գրվել:

ԿԻՐԻԳԵ. — Պատմությունը գրվել է արյունով և հավիտյան
պետք է դրվի արյունով:

Եվ այլն և այս ոգով շարունակվում է, մինչև որ Նե-
Փեղովին այցի է գալիս իր հոր ուրվականը և զրուցում որ-
դու հետ, ապա և հեռանում:

Կրկեն ներս է մտնում Կիրիկեն և Նեփեղովից նոր
խոսքեր լսելով՝ Հիստերիկ ծիծաղով բացականչում է. —
«Հիանալի՛ է, հիանալի՛... Ուրեմն դո՞ւք եք հրամանա-
տար Նեփեղովը: Իի դանքե իհնեն... Ծնորհակալ եմ ձե-
զանից: Մեծ բավականություն օբեր-լեյտենանտ Գեվորգ
Կիրիկեի համար: Ինձ շատ է հետաքրքրում սովետական
հրամանատարի անատոմիան: (Նույն տեղ, էջ 62—65,
Արաքսման):

Դժվար չէ տեսնել, որ Հեղինակների թեմատիկ ճիշտ
էկատառումները գործող անձանց բերանում ոչ սակագ ան-
դամ լոկ բացականչությունների, հաճախ անխմաստ բացա-
կանչությունների բնույթ են ստանում: Գրական շարա-
դրության մեջ սա այն օրինակն է, երբ թեմատիկ առաջա-
դրանքը դեղարվեստական պատկեր չի դարձել:

Զենք տեսնում թե էմպիրիկ նյութը ե՛րբ է փոխանց-
վում դեղարվեստական պատկերի: Զենք նկատում, որ թե-
ման հագենա իդեայով և փոխակերպվի ու անցնի կամ ստա-
նա դեղարվեստական արտահայտություն: Այլ կերպ ասած
այս կարգի պիեսներում չկա նյութի դեղարվեստական դգա-
ցողությունը:

Մեր դրամատուրգիայի մեջ խոշոր տեղ է բռնում գա-
տողական ենթադրությունը: Այդ դատողական ենթադրու-
թյամբ, օրինակ՝ մեր երիտասարդ դրամատուրգը փոխա-
զրվում է Գերմանիայի ժամանակակից գյուղը, Ընդհանուր
սիեմայի համաձայն հակադրում միմյանց սոցիալական-

ուագրելը խավեր և մեր մարդկանց, որոնց վերեվարել են
Գեղմանիա, զարձնում այդ խավերի կռվահնձոր։ Սրան
ավելանում է սասարական մոմենտը։ Սկսվում է մի կա-
տարյալ իրարանցում հարցերի, թեմաների, դատողու-
թյունների և ենթադրությունների մեջ։ Իբականության
ճանաչողության, այդ ճանաչողության կոնկրետության և
նրա գեղարվեստական գործողության ոչ մի նշույլ չե-
քում։

Ո՞ր պիեսում երևան չի բերված սասարականության
հարցը՝ բայտը պիեսներում։ Բայց և ո՛չ մի պիեսում դրա
գեղարվեստական պատկերը չկա։ Մեր թշնամին մեր պիես-
ներում անվերջ հայնայում է մեզ—«Դուք չուն եք, ստոր,
դուք ապրելու արժան չեք, դուք ցածր սասարի ժպղվութ-
ներ եք, մենք ենք ապրելու, դուք համար եք, մենք մար-
դին ենք»—և այսպես անվերջ։ Դրամատուրգը նույն ձևով
է պատասխանում հակառակորդին՝ նեղություն չկրելով
զեղարվեստական պատկերը ստեղծելու այդ երիցս նորվա-
րի և գարշելիի և իսկապես բորենու։ Դրամատուրգը բա-
ռեր է գործածում, երբ դրամատուրգիայում հարկավոր է
գործեր գործածել, և թե ոչ հայտարարել, այլ պատկերել։

Խարկավին վերաբերող նկարագրության մեջ խկական
գայլութ է առաջացնում մանրուք թվացող այն հիշատա-
կությունը, որ ուկրաինացին ուղում է փաղոցի անունն ի-
մանակ, բայց ցուցանակի վրա դրված է եղել գերմաներեն։
Ի՞նչու գերմաներեն և ո՛չ ուկրաիներեն և ոչ ոռւսերեն—
որովհետեւ ալդախին է գերմանական խմբերի լիգմը։ Երբ
մենամի «Արշավանք» պիեսում գերմանացին գնդակահա-
սում է ոռւսին միայն այն պատճառով, որ այդ ոռւսը
հիացական ինքնամոռացության մեջ ընկած համարձակվեց
գերմանացին կուկայությամբ ոռւսերեն բարձրաձայն
խոսել։ Մեր առաջ գծագրվում է գերմանական Փաշեզմի
պատկերը։ Երբ «Ծիածան» վիպակում Վանդա Վասիլեսկա-
յան, առանց որևէ ավելցորդ բառ գործածելու, ապագա-
կան 7-8 էջի վրա նկարագրում է գերի ընկած և հղի,

և՝ սեպէկ, և՝ ստոնամանիքում մեռնող պարտիզանուհի Օլենայի ազգությամբ մենք ցնցվում ենք և անսահման ատելությամբ լցվում դերմանական մարդակերների դեմ: Երբ նույն վկանակում Օլենային մի կտոր հաց տանող փոքրիկ Միշայի մայրը երեխայի գիտակն անարդանքից փրկելու համար երեք հարյուր մետր ձյան վրա սահմելով՝ այդ գիտակը բերում է իր խրծիթը և իր մյուս փոքրիկների հետ մատներով խըրճիթի հաշուում հողը փորելուց հետո գերեզման է դնում— ուր առաջ կանդնում է Հետյերն իր ճիվաղային կերպարանքով: Վասիլեսկայան և Լեռնովը պատկերում են և իրենց վերաբերունքը արտահայտում են արգեստին հատուկ ճանապարհով և զա է որ և ցուցադրում է, և մեկնարանում, և զատապարտում, և վրեժի կանչում: Բոլորովին համեստ ոճով և զեղարվեստավետի զբացողությամբ Սիմոնովը «Ծուռ մարդիկ» պիեսում կերտել է դերմանացի Ռոզենբերզի տիպը, որը նման չէ դրամատուրգիական բաղմաթիվ գերմանացիների, բայց որի էությունը իսկապես, ֆաշիստական է: Այդ Ռոզենբերզը եկել է Ռուսաստան, և թալանելու, և հոգեբանական «Էտյուդներ» կառուցելու համար: Եթե Վերները սպանում է բացարձակապես, Ռոզենբերզը սպանում է սադիստական դանդաղ մահով — նախ արյունալի և արյան ուրիշականը հիշեցնող ակնարկներով, սպա և ոչնչացնելով մարդու մեջ մարդկայինը: Նրան մեծ հաճույք է պատճառում, ասել կարմիրանակալինի մորը, որ նրա որդին սպանված է; Դիմելով որդեկորույս սովորական մորը՝ Ռոզենբերզը պահանջում է հայտարարել, որ որդու կորուստը բախտավորություն է, ինչպես ստիպված է հարտարարել նաև հայրը: Ամրագծ պիեսում ճշացող ոչ մի Փրադ չենք դատնի: Բայց արտաքուստ խացաղ այդ պիեսում եռում են կրքեր, մտքեր են հարոնվում, ինչպես օրինակ՝ Վալյան, երբ խոսում է հայրենիքի մասին, որոնք պարզ են թվում, բայց որոնց մեջ կա կենսական մեծ բովանդա-

կություն և այդ բովանդակության գեղարվեստական գողությունը:

Դուք պատկերացնում եք թե գերասանը կամ գերակատարների խումբը ի՞նչ գրության մեջ է վանվում, երբ բեմադրում և խաղում է արարակատ ենթադրություններով լեցուն գործեր, որոնք աղաղակում են իրենց գոյության իրավունքը պահանջելով։ Որքան անդամ ավելի պետք է աղաղակել, ուղեազի դրամատուրգի աղաղակը դառնա համոզիչ։ և մեր բեմերում սկսում է գերիշխել բարձրածայն խոսքը, երբ դրա պահանջը չկա։ Թատրոնի ոճը և գերասանական խաղարկության ոճը խարսխալած է դրամատուրգիայի ոճին և եթե այսօր իրականության ճանաչողության և նրա գեղարվեստական զգացողության հարցն է սրվում, ապա դա մի գետի չափով դրամատուրգի գրող լինելու հարցն է։ Թող տարօրինակ չթվա այս, որովհետեւ եթե դրամատուրգ լինելու իրավունքը սահմանափակված չէ, ապա ո՞վ է խլել նրանից դրող դառնալու իրավունքը։ Իսկ սա նշանակում է ամենից առաջ ճանաչել իրականությունը և էկոնոմ միջոցներով գեղարվեստորեն զգալ ու պատկերել այն։

Ս Յ Ո Ւ Փ Ե

Ի՞նչ սյուժեներով երեան եկալ մեր դրամատուրգը՝ ի՞նչ բնույթի սյուժեներ են գրանք։

Նոր պիեսներում սյուժեներ կազմվեցին՝ կապված նախ և առաջ պատերազմական իրադրության հետ։ Գ. Սարյանի «Անտառի խորքում» պիեսի սյուժեն օրինակ՝ կառուցված էր այն բանի վրա, որ թե՛ կարմիր բանակային դորամաը և թե՛ պարտիզանական ջոկատը ճգտում են տակտիկական մի խնդիր լուծել— պայթեցնել մի կամուրջ՝ հակառակորդին վնասելու համար։ Այդ նպատակի համար են գործում բանակի մարդիկ, որոնց թվում մի հայ՝ Սուրեն Մելյան անուն աղջանունով։ Ենթակա գիծը վարում է քույր

Գալինա Մատվեևան, որը և ծալոյալ ներկայանում է գերմանացիներին, իսկ Մելյանը գերի է ընկնում պարտիզան ների ձեռքը, որոնց նա անհայտ էր և միայն պարտիզանուն չի Պելաղեյայի շնորհիվ ազատվում է գերությունից ու միահամուս ուժերով խնդիրը լուծվում է:

Գուցե և այս պիեսը միակ համեստ տոն ունեցող պիեսն է: Բայց թող թույլ տրվի ասելու, որ տվյալ դեպքում այդ համեստությունը հարստությունից չի դալիս, իսկ չքավորությունը ամենից առաջ ոյուժեի և խարակտերների մեջ է: Խնդիրը միայն այն չէ, որ մեր ուշադրությունը դրադեցնում է մի տանկ. եթե խարակտերների խորոշամբ լրացվի ոյուժեի պակասը՝ այդ լավ է. աղքատ է և սյուժեն, և թույլ է գծագրված մարդկանց խարակտերը: Պիեսի կուլմինացիան կապված է Սուրենի թյուրիմացական գերության հետ՝ յուրայինների շրջանում, իսկ լուծումը՝ Գալինայի և գերմանացիների փոխհարաբերության հետ: Միասնական գործողություն չկա, այնպիսի՝ գործողություն, որ թափանցի երկի բոլոր մասերը:

«Վրեժ» պիեսում Նաիրի Զարյանը ավելի բարդ թեմա է շռչափում, քան թույլ է տալիս պիեսի սյուժեն: Նկատի ունենք գերմանացիների՝ կապիտանի և զնդապետի հարաբերությունները: Ոճի տեսակետից այս երկու պիեսների սյուժեները տարբեր են, մի գեղգում Գ. Սարյանը տանում է դեպի «մանրուք» և մանրացնում է թեման, մյուս դեպքում Ն. Զարյանը տանում է դեպի ամբիոն, խոշորացնում, հրապարակախոսացնում է թեման:

Սյուժե կառուցելու իմաստով «Վրեժ»-ն ունի այդ առավելությունը, որից զուրկ է առաջին պիեսը:

«Յասում» (Ա. Գուլակյան) պիեսում կդտնենք ավելի ընդարձակ մի սյուժե, քան վերոհիշյալ երկուսն են: Գուլյակյանը հակադրության մեջ է դրել սովորական և գերմանական ընտանիքներ, սովորական և գերմանական մայրեր, սովորական և գերմանական պատանիներ, ըստ որում երկու կողմից ևս մասնակցում են մեծահասակներ: Գործողությունը հյուսում է պատանի կոլյան, որին հաջողված

է զերի տանել զերմանացի պատանուն և դրանով իսկ նոր վայրում խորացնել երկու կողմերի հակագրությունը։ Կույան զուգում է, բայց հաղթանակը մնում է պարտիզաններին և Պյոտր Իլիչ ծեր ուսուցչին, որը և բորբոքում էր Ընդհանուր ատելությունը հակառակորդի ղեմ։

«Յասում» պիեսի, ինչպես նաև «Հրաբխի վրա» պիեսի սյուժեն դերազանցապես դրամատիկական բնույթունի ունի—մեջության, որով օժտված չէ Տ. Զախումյանի «Հայրենիքի զավակ» պիեսը Ա. Փալանջյանի «Շախ և մաթ» պիեսը, որը կոմեդիա է և դրամատիկական այուժե ունենալ չէր կարող։ Վերջին երկուսից առաջնի՝ Զախումյանի պիեսի սյուժեն պատմողական է, որի պատճառով գործողության բնիքը դանդաղում է և նվազել է սյուժեի հետաքրքրականությունը։ Կա նաև այն, որ Զախումյանը սյուժեային 2-րդ և 3-րդ պլաններ չեն սիրում, ավելացրած որպես արտավարագուրային էքսպոզիցիայի բացակայությունը—մի անհրաժեշտ տարր, որ բացակայում է առհասարակ շատ պիեսներում։ Դա արդեն տրված և պատրաստի ինտրիկի սկզբնավորության բացակայությունն է, որը վարագույրը բացվելուց հետո սկսում է իր դերը խաղալ և խճողել ու բարդացնել դրությունները՝ դրամատիկական հետաքրքրականություն առաջնային նպատակով, մինչդեռ դրամատուրգիան սիրում է սյուժեային դրությունների մի շերտի վրա այլելացնել 2-րդ շերտը, որպես՝ 3-րդը և ընթերցողն ու հանդիսատեսը չգիտեն, թե շերտ շերտի վրա եկած և ավելացրած ինտրիկը ո՞ւր կարող է բերել գործողության վախճանը։

Սրա հետ է կապված մեր պիեսների սկզբի և վերջավորության հարցը։ Երբ ինտրիկը և սյուժեային շերտերը շեմ՝ պիեսի սկիզբն ու վերջավորությունը նույնպես խիստ միատեսակ է արգում և ձանձրալի։ Ուրեմն չնայած մեր պիեսների սյուժեների փոփոխությանը և ընդարձակությանը՝ նրանք մինչև այսօր մնում են աղքատ վիճակում։

Բայց սյուժե կառուցելու թերությունը միայն այդ չէ։ Կա երկու հարց ևս—դա սյուժեի տեխնոլոգիայի և նրա

օրդանական լինելու հարցն է : Հայոնի է, որ կլասիկ դրամ մատուրդիան սյուժեի տեխնոլոգիան չէր բաժանում նրա օրդանական հատկությունից : Ոսսենք ավելի պարզ : Կլասիկ դրամատուրդիան մշակեց սյուժեներ, որոնք ունեն լրենց հարուստ տեխնոլոգիան և վարպետ կառուցումներ են : Բայց այդ հարուստ տեխնոլոգիան և վարպետ կառուցումը ենթարկված է խարսկաբերներին և երկի էությանը : Այս վերջին գեղքում սյուժեն՝ գառնում էր և միջոց երկի էությունը գրանորելու համար, և իր՝ հիմնական ուղղություններով նույն այլ սյուժեն արտահայտում էր կենսական օրինաչափություններ : Այս էր նրա օրդանականությունը : ՀIIX դարում Սկրիբը, Սարդուն և նրանց շկոլայի ու տիպե գրամատուրդներ համարյա թե մոռացության մատնեցին սյուժեի օրդանականության հարցը՝ մնալով, ինչպես ասել է Մ. Գորկին՝ «լիեսների ճարպիկ և խելացի Փաբրիկանուներ» : XIX դարում բուրժուական թատրոնը ենթարկեց իրեն Սկրիբին, Սարդուն և զարձրեց նրանց գրամագործության վարպետներ, հաճախ մեծ վարպետներ : Դա գերազանցապես սուր, հետաքրքիր, ճարպիկ, թատրոնին սաղական սյուժեի գրամագործություն էր, որ զնալով համարյա թե հոգավակ կյանքի ճանապարհությունից :

Սովորական գրամատուրդիան դրամագործներ չի դատիքարակում և գրամագործությունը նա ժխտում է : Սակայն մեր օքերի գրամատուրդիական մասսայական պրոդուկցիան իր աղքատ, բայց սարքովի սյուժեներով ձգտում է, զիտակցարար թե անդիտակցարար, ընթանալ գրամագործության ձանապարհով, և թատրոնները, և ոչ միայն թատրոնները, հայանություն ևն տալիս նախ և առաջ այն պետաներին, որոնք գոյն սյուժեներ ունեն, որովհետեւ սյուժեն թատրոնին հարկավոր է, իսկ առանց օրիգինալ պիեսի թատրոնը միանույն է՝ աշխատել չի ուղղում : Այսպիսով հրահրվեց և պաշտպանվեց նախ և առաջ սյուժեներ ունենալու դրամատուրդիան՝ երկրորդական նշանակություն տալով իրականության ճանաչողության և գործող անձանց տիպականության հարցերին : Այս կարգի պաշտպանու-

թյունը տվեց իր օգուտը և այդ օգուտն այն եղավ, որ դրամատուրգիան մի բան և մի պահանջ հաշվի առավ — հորինեց սյուժե և այդ հորինված սյուժեով թատրոն մատակ ու բեմ բարձրացավ: Բայց նույն պաշտպահությունն ունեցավ իր տիտուր հետեւանքները — դրամատուրգիան օդտվելով «սյուժեական հովանավորությունից», քիչ զբաղվեց իրականության ճանաչողությամբ և նրա գեղարվեստական տիպականությամբ և սյուժեի միջից հանեց նրա օրգանականությունը:

Մեր դրամատուրգիայում շարունակ կրկնվում են բեմական միևնույն դրությունները. օրինակ դուք անվերջ կտեսնեք Հարցաքննության տեսարաններ, երդումներ, հըրդեհներ: Զափաղանց շատ չարաշահվեց գործող անձանց ծալտելու մեթոդը: Սկսած Գ. Սարյանի Գալինա Մատվեևնայից, որ ծալտվելով գալիս է զերմանացիների մոտ հետախուզության, վերջացրած «Շախ և մաթ»-ով, որտեղ պարտիզանական ջոկատի պետ Զերնեցովը Հոֆման անվան տակ երկար ու անվնաս գործում է զերմանացիների միջավայրում, կամ նույն պիեսում գեստապոյական գործակալ Վոլֆը, որ ծալտված գործում է պարտիզանների շրջանում՝ ներկայանալով իրեւ սովորական մարդ: Արաքսմանի «Հրաբրի վրա» պիեսում դրամատուրգիական պարզունակ այդ պիեսումը օդտապործված է անսահմանորեն, երբ մի քանի մահերի կողքին՝ հանդիսատեսը ականատես է դառնում պիեսը լցնող կերպարանափոխումներով. — Մելնիկը, որ մանտյոր է և ընդհատակյա աշխատող, Ալլան աղախին, երբ փաստորեն աղախին չէ, Սաշան Յ-րդ գործողության մեջ մատնություն է առնում զերմանացիներին, երբ մատնիչ չէ, Գվայը ձևանում է միամիտ և լոյալ, երբ նույնական աշխատակյա առաջադրանքներ է կատարում, իսկ ծերունի Տիգրան Ստեփանիչը առաջին գործողությունից մինչև 4-րդ գործողության վերջը լուսում է և հանգիստունը նրա մասին ոչինչ չգիտի, երբ 4-րդ գործողության վերջում հանկարծ իմանում ենք, որ նա է գործարանն

այլքել: «Մազասեցեք ևս ձեզ ցույց կտամ», — ուզում է ա-
 սի զբամատուրդը և անվերջ կերպարանարիոխում է իր
 Հերոսներին կամ խորհրդավոր անհայտության մեջ ու-
 նաւմ: Ո՞րտեղ է խարակտերների բախումը, ո՞րտեղ է
 զբամատիկական հիմնական կոլլիգիան. դրանք չկան, բայց
 դրանց փոխարքն օրինակ՝ դավաճաններ լյազուշկինը
 («Հրաբոսի վրա») և Սիսլյադինը (Հախումյան — «Հայրե-
 նիքի դավակը») զարձել են սյուժե կառուցելու հիմնական
 հնարներ սովորական զբամատուրդի երկերում, ուր պետք
 է որ պատկերվեին մեծ զաղափարներ, բախումներ, հակա-
 զեր կենսական երևույթներ, ուր մարդը կարող էր երևան
 գալ բոլորովին այլ դրություններում: Դա մեր պիեսների
 սյուժեաիկայի ամենամեծ սրակասն է, երբ փոխանակ նոր
 երևույթներ ընդուրկելու և նոր դրություններ բացահայտե-
 լու՝ կրկնում է արդեն հայոնի դրությունները: Մինչդեռ
 սյուժեաիկայի զարգացումը թվում է, թե պետք է ընթա-
 նար կենսական նոր երևույթների ու դրությունների ար-
 տահայտության հետ զուլահեռաբար: Ինչո՞ւ «Ֆրոնտ»
 պիեսում չկան հայոնի և հնամաշ սյուժեային դրություն-
 ներ — որպէս նյութը բացասում է այդ դրությունների
 ներկայաւթյունը: Կորնեյչուկը կարծեք թե նույնիսկ այու-
 ժե չի հորինել, բայց ուշադիր աչքը կնկատի, որ սյուժե-
 կա — դա մի կողմից ուղղմական գործողություններից
 0դնենի համար բախող դրություններն են (3-րդ և 4-րդ
 պատկերներում), իսկ մյուս կողմից Գոռլովի խարակտերից
 բոլոր դրություններն են (1-ին և 2-րդ պատկերներում):
 «Ֆրոնտ» պիեսում լիդեան կրում է և սյուժեի Փունկցիան,
 այսինքն իդեայի արտահայտության եղանակը պայմանա-
 վորում է և գործողությունների ընթացքը: Ահա ինչո՞ւ մեզ
 թվում է, որ Միքոնի, Խվան Խվանովիչ և Սերգեյ Խվա-
 նովիչ Գոռլովների ազգակցությունը «Ֆրոնտ»-ի իդեայի
 տեսակետից նույնիսկ սյուժեային մի հետամնաց, մենք
 կասեինք ընազետների լիզվով՝ սուդիմհնտար դրություն
 է, առանց որի Գոռլովի և 0դնենի հակամարտությունն ան-

չուշտ կարող էր դրսեսրվել։ Աղքակցության մոմենտը,
 մեր կարծիքով միայն օժանդակ զեր է խաղում հիմնական
 գրություններն ավելի ընդգծելու համար։ Վերջապես
 Գորկու և Զեխովի օրինակն ասում է, որ կարող է ան-
 սյուժե դրամատուրգիա գոյություն ունենալ, միայն թե
 պետք է հասկանալ, որ Գորկու և Զեխովի երկերում սյու-
 ժեն արտաքին չէ, այլ ներքին և երկրորդ՝ նրանց պիես-
 ներում սյուժեն տարրալուծված է տիպերի հոգեկան և մտա-
 ծողական աշխարհի շարժման մեջ։ Սա անհամեմատ ավելի
 բարդ երեսույթ է և սակալ տաղանդներ կարող են Գոր-
 կու և Զեխովի ճանապարհով դնալ։ Դրամատուրգը, թատ-
 րոնը և հանդիսականը սյուժեի պաշտպաններ են, քայլ
 նրա տեխնոլոգիան և նրա օրգանական հատկությունը
 պետք է որ միաձույլ լինի և նպաստի ամենահիմնական
 խնդրի լուծմանը — արտացոլել բարդ իրականությունը
 տիպական դրություններով։ Այս տանչությամբ արեն
 ավելացնել, որ դրամատուրգիան, հատկապես պատմա-
 կան նյութ վերցնելիս՝ էպիզոդային սկզբունքից պետք է
 անցնի միասնական դորձողության սկզբունքին, միաժամա-
 նակ դաստիարակելով հանդիսականի մեջ ոչ թե լոկ
 սյուժեի զգացողություն, այլ նախ և առաջ, իդեանե-
 րի, էմոցիաների ու խարակությների զգացողություն՝ աըլ-
 ված սյուժետային օրգանական ու արարաբանական դրու-
 թյուններով։

ԱՆԹՈՅԻ ԵՎ ՏԻՊ

Կերողարի և տիպի ստեղծումը՝ դրամատուրգիայի ընդվի-
 ճեմ միասին, նրա ամենապատասխանարու բնագավառն
 է։ Դա էապես մարդու պատկերն ստեղծելու բնագավառն
 է։

Ի՞նչ է մտածել մեր դրամատուրգիան մարդու մասին,
 ի՞նչպես է հասկացել նրան։ Այժմ ավելի քան երբեմէ դրա-
 մատուրգիան դադավարական ակտուալ խնդիրներ է հե-
 րություններով։

տապնդում : Նա կարող է հզոր գործոն դառնալ՝ բոլըբոքե-
րով և քառապատկելով մեր հանդիսականի հայրենասիրու-
թյունը դեպի հայրենիքը և ատելությունը դեպի թշնամին :
Կամենալով այդ փառագոր խնդիրը կատարել՝ դրամատուր-
դիան ցանկացավ երեան բերել Հայրենական պատերազմի
հերոսի կերպարը մի կողմից և Հակառակորդի կերպարը
մյուս կողմից : Պիեսների գործող անձինք օժովեցին ի՞շ-
ինչ Փունկցիաներով, հանդես եկան ինչ-ինչ դրություննե-
րի մեջ : Այսպես, օրինակ՝ «Անտառի խորքում» պիեսում
Հրամանատար Բելովը կրում է սովետական մարդու բարձր
կոչումը, Հրամաններ է արձակում, ծրագիր մշակում,
կարգագրում և Հաղթանակում : Նույն պիեսում կղանենք
ուսու, ուկրաինացի, հայ, որոնք մտածում են Բելովի նման
և հաղթում են նրա հետ միասին : Տղամարդկանց կողքին
զործում են սովետական կանայք՝ Գալինա, Պելագեյա :
Մրանց բոլորին միացնում է գաղափարական նվիրվածու-
թյունը Հայրենիքին, անձնազոհ մարդիկ են և կոչված
օպտիմիստական տրամադրություն ներշնչելու հանդիսակա-
նի մեջ : Բայց գործող անձինք իրենց Փունկցիոնալ հատկու-
թյուններից արվեստի մակարդակին չեն բարձրանում :
Նրանք կատարում են իրենց գերը, խոսում են, ազգարա-
րում ճշմարտություններ, նրանց և հայրենասել Հանդիսա-
կանի միջև ստեղծվում է զաղափարական բարեկամու-
թյուն, սակայն դրամատուրգիան անչափ ժլատ է նրանց
բնութագրելու մեջ և Փունկցիոնալ հատկությունից այն
կողմ չի անցնում :

«Վեհեժ» պիեսում վասիլի Գելասիմովը, Մուշեղ Արամ-
յանը, Լարիսա Լիվշիցը կրում են նույն բարձր գաղա-
փարները : Մրանք ավելի համարձակ են, քան Գ. Սար-
յանի հերոսները, ավելի դատող և ավելի շատ են
առաջըլում նոր կուլտուրայի հետ : Հեղինակն օժտել է
դրանց մեր ժամանակի հասկացողություններով և յուրա-
քանչյուրը զրանցից այդ հասկացողությունների արտա-
հայտիչն է : Բնդհանուրն այն է, որ սրանք երդվել են հա-

վատարիմ լինել և հավատարիմ են մնում՝ չնայած տմհն
տեսակ խոշտանգումների։ Սակայն Զարյանը կենդանի
մարդու հոգեբանության հետ շատ չի սիրում հաշվի նը՝
տել և այն աստիճան, որ համարձակվում է սիրային հօյու-
նություններ կատարել սիրահարների Փիլիքական գոյու-
թյան ամենաաղետալի վայրկյաններին։ Գործող անձնաց
Փունկցիոնալ գերը — դաղակարարական ծառայությունը —
հերոսների համարյա միակ գլամուր գիծն է։ Դրանք ու-
ցիոնալիստական, դատողական կերպարներ են և ոչ էմո-
ցիոնալ կամ իդեալի և էմոցիայի միասնական արտահայ-
տությունը։

Ֆունկցիոնալ կերպարներ են նաև «Հրաբխի վրա» պե-
նսի այսակես կոչված դրական մարդիկ, օրինակ Մելնիկը,
որ մի կատարյալ սինմա է։ Հեղինակը կերպարների նը-
չումներ է կատարել, ցանկացել է մեկին գարձնել խորա-
մանկ և ճարպիկ, մյուսին, օրինակ Գվային՝ և՛ նայիվ,
և՛ ճարպիկ, և՛ ռոմանտիկ, բայց չե գոել կերպարի հա-
մեկը, որից կարող էր կերպարն աճել։

Մեր մարդիկ պիեսներում խիստ միօրինակ են, ներ-
կայացվում են մի գույնով, դրա համար նրանց պակասում
է էմոցիան և խոր մտածողությունը։ Այն տեսակետը կոմ-
այն տեսությունը գոյություն ունի, ըստ որի շարքային
թվացող մարդուց բարձր և բարդ կերպար չի կարող
սահացվել։ Հասարակ թվացող մարդը պարզություն ունի
և խոր է իր պարզության մեջ։ Ըստ երեսութին շփոթվում
է հասարակը և պարզը, որ պարզունակ չէ՝ այսինքն պրի-
միակը չ։ Որ հասարակ թվացող մարդու կերպարը կա-
րող է ողբիմիտիկ չլինել՝ այդ երեսում է նաև մեր գրամա-
տուրդիայից, օրինակ՝ Գուլակյանի նույն «Յասում» պի-
եսում։ Նկարագրված ծերունի ուսուցիչ Պյոտր Իլյչի կեր-
պարից։ Պյոտր Իլյչը մինչև պատերազմը քիչ է մտածել
հակառակորդի դեմ այրող առելություն հրահրելու մա-
սին։ Այժմ նա գուրս է մղված իր խաղաղ կյանքի հունից,
զգում է իր սիալը և չնայած այն բանին, որ զրկված է

գպարոցական շենքից ու տարբական հարմարություններից, թշնամու աչքից հեռու, փոսի մեջ սիրելի աշակերտների հետ գասի ժամանակ այժմ խոսում է ատելության մասին: Իր աշակերտներին Պյոտր Իլլին այսպես է ասում: «Ես մի մեծ սխալ եմ զործել, իմ դաստիարակության մեջ ժեծ թշնամություն եմ ունեցել, իմ սաների մեջ ինչպես հարկն է շեմ արթնացրել ատելության զգացումը դեպի մեր երկրի թշնամիները: Ես քարոզել եմ մարդասիրություն, բայց շատ քիչ եմ քարոզել ատելություն դեպի թշնամին... ես թշնամուն չեմ ճանաչել... Իմ չկայացած դասն եմ և այսօր ավտոնում: Մենք պետք է լցվենք կատաղի ատելությամբ դեպի դերմանացիները, այնպիսի ատելությամբ, որ դառնա ուժ, զենք՝ նրանց ոչնչացնելու համար...»:

Այսուեղ հատիկը դանված է, հասարակ թվացող Պյոտր Իլլին համար ատելությունն այժմ քաղաքական խնդիր է, և՛ աշխարհայնցողություն, և՛ աշխարհադպացողություն: Սա նույնպես շատ կարեոր է—ատելությունը դեպի Փառազգմբ դարձնել և՛ իդեա, և՛ էմոցիա: Առհասարակ դրամատուրգիան քիչ է մտահոգված երկի էմոցիոնալ հաղեցվածությամբ և սա խոչըր արատ է:

Մեր դրամատուրգիայի առաջ կանգնած է սովետական մարդու կերպարն ստեղծելու դժվարին, բայց վերին աստիճանի շնորհակալ խնդիրը: Մարդկային նոր որակ՝ իր բառզմապիսի հատկություններով և ամենից առաջ իր հոգեկան հատկություններով, զգացումներով ու մտավոր բարձր օժտվածությամբ — այսպիսին է այն հեռանկարը, որ բացում է սովետական մարդը դրամատուրգի առաջ:

Եվ ի՞նչ է բեմհարթակի բովանդակությունը: Ոչ թե ժարդկանց թիվը. բեմը լեցվում է ոչ թե ա՛յն ժամանակ, երբ այնտեղ կանգնած են 30—40 հոգի: Բեմը կարող է դատարկ լինել, երբ նրա վրա կանգնած են 100 հոգի. բեմը կարող է բովանդակալից լինել, երբ այնտեղ կարող է լինել միայն մի մարդ: Քայլում է այդ մարդը բեմի

վրա և նրա հետ քայլում է նրա պղոքը և նրա էմոցիոնալ աշխարհը; Մեր հանդիսաւում տեսնում է ներկայացումներ, որոնք ունին և՛ սյուժե, և՛ կոփկ, և՛ մարդասպանություն, բայց բովանդակություն չունեն: Իր հետեւ բովանդակություն քաշող մարդ—այս ենք մենք ուղում—որը և՛ ընդունակ կլինի շարժվելու, և՛ զարգանալու, և՛ աճելու իր ներսում և արտաքին շրջապատի հետ ունեցած վոխհարաբերությունների ամբողջ ընթացքում: Իսկ մեր պիեսներում մարդու շարժում չկա, ամեն ոք ստատիկ է և սահմանափակ: Այստեղ դեր է խաղում դըլ խովզրապես այն, որ գրամատուրդը չի տալիս իր կերպարների կենսական հիմնավորումը: Կերպարի տուաջացման կամ նրան սնող կենսական աղբյուրը մեզ մոռամ է անհայտ: Աւտի կերպարին քիչ ես հավատում: Վերցրեք «Վըեժ» պիեսում կապիտանի կերպարի տուաջացման կենսական սեղմանը յօվ, ինչ պարագաներում տուաջ բերեց կապիտանի մտածելակերպը: Հիտլերի իմպերիալիստական կառքին 10 տարի լծված այդ կապիտանը այժմ նույն Հիտլերին համարում է «վաճառված», «ստահակ» և «ատում է նրա լկտի մտրակը», համարելով նրան «ծաղրածու՝ տուաջնորդ դարձած»: Կապիտանն ինքը եղել է վայրագությունների հեղինակ, իսկ այժմ հայտարարում է. «Մի չնչին մարդուկ կախարդել է մեզ, տանում է անդուլ ոճի բեր ոճիր»: Բանն այնտեղ է հասնում, որ կապիտանը արտահայտվում է այսպիսի լեզվով և տերմիններով. «Ժողովությունների ատելությունն է մեր դեմ ծառադել»:

Երբ զնդապետը կապիտանին ասում է, որ «Մարքսիզմը այս իսկ վայրկյանից գլուխց հանիր»—նա պատասխանում է՝ «Ոչ, ևս մարքսիստ չեմ, ես մտածում եմ...»: Կապիտանը Գյոթեին լով է ճանաչում, բայց մարքսիստինելով՝ մտածում է, մեր մարդկանց համարում է քաջ և հերոս, թեև թշնամի: Կապիտանը այսպես է մտածում— վերադարձ դեպի կայզերական Գերմանիա, դեպի Շլիֆեն,

Անգլիայի վրա, նախ յուրացնել ֆրանսիան, ապա գալ ոռւսական հսկայի վրա: Ընթերցողը կամ հանդիսատեսը հարց է տալիս — եթե կապիտանի և զնդապետի միջև միայն տակտիկայի և ստրատեգիայի տարբերություն կա, եթե Հիտլերի և կայզերի տարբերությունը կա, ինչո՞ւ Զարյանը այդքան մեծ տարբերություն է տեսնում զնդապետի և կապիտանի՝ երկու խմբերի ամբողջականացնելու միջև: Կապիտանի խիզճը արթնացել է և նա այլևս չի ուղարձ շոկոլատի ուտել՝ զերազամելով «մի կտոր սև հաց», իսկ խայտառակության համար անձնասպանությամբ վերջ է տալիս իր կյանքին: Հեղինակը կամ եցել է տալ զերժանական երկու թեր ներկայացուցիչների կերպարներ, բայց եթե զտել է զնդապետի հիմնայինումը՝ չի զտել կապիտանի հիմնայինումը, որովհետև կապիտանի մասին նա հնդադրություններ է արել՝ մոռանալով այն, ինչ տիպական է իմակերտավոզի կառքին լծված զերժանացու համար, նրա նկարադրի համար և խզճի ու մի կտոր սև հացի սենտիմենտալ կատեգորիաներով քաղցր ու մեղցր է դարձրել նրան:

Մեր դրամատուրգիայի համար էական նշանակություն ունի գործող անձանց կերպարային նախնական նըշ շումներից անցնելը լրիվ և ամբողջական կերպարների, ապա և տիպերի: Զգիտես ինչու համար դրամատուրգը և քննադրությունը հրաժարվել են տիպ ըմբռնողությունից: Տիկին կառուցիուն զրված նամակում ինգելսը խոսում է այն մասին, որ դրվագների յուրաքանչյուր դեմք տիպ է, բայց միաժամանակ և բոլորովին որոշակի տնհատականություն — «այս» ինչպես կասեր ծերուել Հետելը: Այդ այլպիս էլ ողետք է լինի՛: Էնդելսը պահանջում էր յուրաքանչյուր դեմքի՝ անհատականացում և տիպական խարակտերների դրսեորում տիպական հանդամանքներում: Մի Զամբախով, մի էլիզաբետով—դա և՛ «այս էր», և՛ պատմական-սոցիալական երեսութիւն տիպականություն: Եվ դործող անձանց

տիպական ացման մեջ է մեր դրամատուրգիայի ելքը գեղեցիկ գրականություն :

Ե Ա Զ Շ Խ

‘Իրամատուրգիայի մեջ նրա թերությունները զայցայն ակնբախ չվիճեին, եթե նրա լեզվական կուտուրայի ոչ բայլարար մակարդակը նույնպես ակնբախ չվիճեր ։ Դրամատուրգի լեզվական ներկա մակարդակը իր հետեւց տանում է նրա մյուս պակասնեցը և մեր այն եզրակացությունը, որ դրամատուրգիան ելք ունի դեռի դրականություն՝ հիմնված է այն լավասահսական հեռանկարի վրա, որ դրամատուրգիան ելք կդառնի գեղի դեզրայնատկան լեզու։’

Որո՞նք են դրամատուրգիայի լեզվական թերությունները։

Նկատի չունենալով կլսուիկ դրամատուրգիայի լեզվի գեղարվեստականության տրագեցիան՝ մեր դրամատուրգիան վերջին շրջանում իր լեզվի առանձնահատկության վրա քիչ է ուշադրություն դարձնում։ Մնդիքը անգրագետությունները չեն, որոնք չպետք է լինեն. լիդուն կարող է գրադետ լինել, սակայն գեուես հեռու վիճել գեղարվեստական լեզվից։

Վերցնենք թեկուղ լեզվի պատկերայնության հարցը։ «Մի խսք մի աշխարհք է»—ասել է Թումանյանը։ Խոսքի գերագույն խոտացում արտօնակերպային համեմատության միջնորդ—այսուհետ լեզվի փոխարեն մեր դրամատուրգը հաճախ մեզ հետ խոսում է արձանագրության լեզվով և ժբառ լինելով մտքերի արտահայտության մեջ՝ առանաձեռն է բառի գործածության մեջ։ Պատանի կոլյան գեկուցում է սովորական կարիստանին. — Ընկեր հրամանատար։ Ֆաշխատական իժերի որջը շրջապատված է։ Նրանց գեկավարներին գերի ենք վերցրել։ Օրվա հերոսներն ահա սրանք են՝ մեր քաջարի սերունդը։ Կապիտանը պատաս

իսրայելը է .—«կեցցե՛ք, ձուտիկնե՛ր»: (Պիեսներ, էջ 117—118): Քերականորեն ամեն ինչ թվում է կանոնավոր, բայց չկա համեմատությունների մեջ արամարանություն: Եթե խոսքը իմերի մասին է՝ զեկավար պատկերը «իժեր» հասկացողությանը չի համապատասխանում, իսկ «օրիա հերոսներ» համեկացողությունը չի համապատասխանում «մեր քաջարի սերունդ» ընդհանրացնող խմաստին, իսկ «ծուտիկներ» պատկերը կատաղի հակասության մեջ է «քաջարի սերունդ» պատկերին: Նույն դրամատուրգը դը բում է .—«Զփորձե՛ք «Մեծ Գերմանիայի» դումարտակի սկետին մոռենալ», երբ պետք է լինի «Մեծ Գերմանիա» գումարատակ, որ տարբեր իմաստ է հաղորդում նախադասությանը: Դրամատուրգը դը բում է «Թիկունքն իջեցրած օդային գեսանտների մինչև վերջինը ոչնչացված են», երբ պետք է լինի ոչնչացված է և միհնույն ժամանակ ինչո՞ւ է մոռացված, որ գեսանտը մի զինվոր չէ, այլ հավաքականություն:

Պիեսներում գործածվում են բառեր, որոնք ոչ մի կապ չունեն տեքստի հետ, բայց բեմական են համարվում: Դրանցից է «Արլապե՛ս, այլպես» բառը, որը գերասանը դրամատուրգի թույլալությունը և կամ առանց թույլալության՝ գործ է ածում այն բոլոր գեղքերում, երբ հարկավոր է վերաբերմունք ցույց տալ և մտքեր հայտնել: Այս բառի գործածությունն ականջ է ծակում «Հրաբխի վրա» պիեսում, որին միանում է Լյազուշիինի անվերջ գործածվող «այսպես ասած»-ը: Այս անշուշտ միասին վերցրած՝ աղքատացնում է պիեսի լիգուն: Պիեսներում քաղվածքներ են բերվում հողվածներից ճիշտ և ճիշտ լրադրական հողվածի նման՝ առանց զեղարվեստագետի միջամտության: Նույն «Հրաբխի վրա» պիեսում կա այսպիսի նախադասություն՝ «Պլակատների կարպակցությամբ ձերքակալվելու են 100 մարդ ինտելիգենցիայից» և այնումի բառակաղմություն, որ հատուկ չէ զեղարվեստական գրվածքի լեզվին:

թելքի և հրապարակախոսության լեզվի մեջ տարբաժ-
վելու հետ միասին մեր պիեսների լեզուն ձեռք է բերել հի-
պերբոլիկ սոմանատիկական մի ամբողջ շերտավորում, որ
զալիս է «պոետական» ներբողական լեզվից: Հերոսները
ճառեր են տառւմ, դիմումներ են անում արևին, լուսնին
և աստղերին, խոսում են այնպես՝ կարծես ամբիոնից
պատմության, ուազմազիառության կամ բարոյականության
դասեր են տալիս: Օրինակ՝ Ն. Զարյանի նույն կապիտանի
մի մենախոսության մեջ կդանենք մի ոճ, որ ոչ միայն
անհատականացված չէ, այլ և գրքային է, և երեան են
բերված բազմաթիվ հարցեր մի քանի վայրկյանում ուրա-
հայոելու համար:

Ես նոր եմ զղում, որ թե ինչ կորցրինք մենք այն
օրվանիք, երբ այդ նստեց Բիսմարկի աթոռի վրա:
Մինչդեռ Շլեֆենը և Ռայխալերը մարչալները հին
Գծադրիլ էին Մեծ Գերմանիայի հաղթական ուղին
Դեպի Արևմուտք... Մեղ հարկավոր էր ամենից առաջ
Չուրացնել մրանսիան, Մեծ Բրիտանիայի ուժը

իսրաւակնել,

Աշխարհի բոլոր օվկիանոսները նրա դեմ փակել,
Տանյակ տարիներ խաղաղ ամրանալ, զառնալ աննվաճ,
Եռ' ր այն ժամանակ նետվել ոռուսական հօկայի վրա:
Ֆրիդրիխն ասում էր, զգույշ լինենք Ռուսաստանի դեմ,
Տասնյոթ թիվին Վիլհելմ կայզերը զղջաց անիմա,
Որ հարձակվել էր երկու ճակատով... Բայց ուշ էր արդեն:
Հիտլերը նրանց այդ մեծ դասերը մոռացման մատնեց. և
այն:

Կա և առաջկաւթյուն չվերցնող լեզվի օրինակը: «Հայ-
րենիքի զավակը» պիեսում Հայրումյանի հերոսները խո-
սում են կանոնավոր լեզվով, որը և համեստ է, և ունի իր
բնական ձայնը, ինչպես նաև Գեղամ Սարյանի լեզուն է
«Անտառի խորքում» պիեսում: Բայց առարկություն չվեր-

ցնող այս լեզուն միաժամանակ չեղոք լեզու է, այսինքն
ոչ կրքոտ և դարձյալ ոչ անհատականացված։ Հախումքա-
նի մարդկանցից մեկը խոսում է այսպես։

Դաւթին. — Այստեղ, սիրելին, գիտես ի՞նչ.
Դրությունն այնպես է, որ շնորհ ասած,
Երկար մտածելու միջոց չկա. . . Ինչ դնով լինի,
Պիտի զնունք այստեղ, որտեղ կախում են կախաղանը.

Քարդ է։

Եթե չկա հարմար միջոց,
Փորձենք ուրեմն, այս. և այլն։

Աճի զգացողությամբ մեծ է տարբերությունը Զարյա-
նի և Հախումյանի լեզուների միջև, բայց և մեծ է տար-
բերությունը սրանց և Լեռնովի «Արշավանք» պիեսի լեզվի
միջև, որի մասին կարելի է ասել, թե իրոք գեղարվեստա-
կան լեզու է և՝ անհատականացված և՝ ոճավորված ըստ
զործող անձանց խարակարելու ու հոգերանության։

Եթե անկամ ոճավորելու հարց է ծաղել՝ մեր դրամա-
տուրդներից ոմանք չեն դրսեւում միջավայրի և նրա լեզ-
վական յուրահատկության զգացողություն։ Հակառակ՝
ոքեզքում ի՞նչով կամ լընչպես բացարձի, որ օրինակ՝
պիեսներից մեկում, որի մեջ զործողությունը տեղի է ու-
նենում Արեմայան Ռուկրախնայի որեւէ դյուլում, ուկրաի-
նացիները խոսում են արարատյան բարբառով։

Զինա. — Մտել են գոմը խոզը վերցրել, տարել են։
Բա սա օրենք ա՞ . . .

Քսենյա. — Մեզնից էլ եկել, հավերին են տարել։
Բա սա կարդ ու կանոն ա՞ . . .

Հեղեցնենք դրամատուրգ Տրենյովի կարծիքը. «Ամեն-
նաշլամավորը մեր պիեսների լեզուն է։ Յավոք սրտի մեր
սովուտական դրամատուրգը դեռ համարձակ կերպով էր
մասին կարող է ասել հետեւալ առածով. — «Լեզուն իմ՝
թշնամին է իմ»։ Բայց ինչպես հայտնի է՝ թշնամու հետ

պայքարում են և եթե սովհատական դրամատուրգիան հրապարակ է հանել որակի պայքարի լոգունքը, ապա իմ կարծիքով այդ պայքարը պետք է լինի նախ և առաջ լեզվի համար: Գրականության ամբողջ գալուստիքը լիզվի մեջ է, իսկ դրամատուրգիան այն չափով է դրամատուրգիա, ուշափով որ նա գրականություն է»: Այսպես է մտածում սովհատական դրամատուրգ Տրենյովը: Պատերազմը չի նշանակում անփութություն լիզվի բնակավառում: Լեզվի մեջ արտացոլվում է մարդու սոցիալական փորձը: Լեզվի հարցը դրամատիկական երկում զառնում է սինթետիկ հասկության մի հարց, որովհետեւ և՛ խարականեր, և՛ կենցազ, և՛ ժիշտավայր, և՛ մտածողություն խաչածեված եղանակով արտացոլվում են լեզվական մտածելակերպի և լեզվական գեղարվեստական պատկերի մեջ: Խոսելով խարականեր ըստեղծելու ուղիների մասին՝ Գորկին դրամատուրգներին դիմում էր այս խոսքերով: «Դրամատուրգն իրավունք ունի, վերցնելով որևէ մեկը այդ հատկություններից (մարդու բնավորության հատկություններից, Ա. Հ.) խորացնել լոյնացնել այն, տալ նրան սրություն և արտահայտչականություն, դարձնել պիեսի այս կոմ այն դեմքի դիմավոր և որոշիչ բնավորությունը: Հենց դրան է հանդիպում բնավորություն ստեղծելու աշխատանքը, և համկանակի է, որ դրան կարելի է հասնել միայն լեզվի ուժով, ամենաուշացկուն, ճշգրիտ խոսքերի մանրակրկիտ ընտրությամբ, ինչպես անում էին Ելքուայի մեծագույն դրամատուրգները: Մեզանում օրինակելի ուսուցանող պիեսը Գրիգորովիի իր կատարելությամբ հրաշալի «Խելքոց պատուհաս» կատակերգությունն է, որը ծայրահեղորեն էկրնում, ոչ մեծ քանակությամբ Փրադներով ստեղծել է այնպիսի դեմքեր, ինչպես ֆամուսվը, Սկալազուրը, Մուչչակինը, Ինպետիլույլը—դեմքեր որոնց մեջ էպոփիան արտացոլված է պատմականորեն ճշգրիտ, յուրաքանչյուրի մեջ պայծառորեն տրված են նրան դասակարգային և ռարութեանունաց նշանները, և որոնք հեռաւ հեռացան իրենց է-

պութայից՝ ապրելով մինչեւ մեր օրերը, այսինքն արդեն ոչ
թե խարակտերներ են, այլ տիպեր, ինչպես օրինակ՝
Եեջապերի Ֆալստաֆը, ինչպես Մոլիերի Միզանթրոպը և
Տաբայուֆը, և այս կարգի այլ տիպեր։ Պիեռում մարդը
այնպես պետք է ստեղծվի, որ նրա յուրաքանչյուր Փրա
զը, դործողությունը բոլորովին պարզ լինի, որ հնար լինի
նրան որպես կենդանի մարդու արհամարհել, առել և
»իրել»։

Սրան կարելի է պատասխանել, թե պահանջները շատ
մեծ են։ Բայց այդ պահանջները իրավացի պահանջներ են
և խորապես կարող են նպաստել դրամատուրգիայի զար-
գացմանը եթե նկատի տանիվեն և եթե յուրաքանչյուր
դրամատուրգ կիրարի այդ պահանջներն իր ստեղծագոր-
ծության մեջ՝ իր չնորոքի ու տաղանդի չուփով։

Յ Յ Ն Բ Յ Բ

Վաղուց հայտնի ճշմարտություն է, որ դրամատուր-
գիայի կուլտուրան արտահայտվում է և ժանրերի գիտակ-
ցությամբ ու բազմազանությամբ։ Բայց մեր այս օրերի
դրամատուրգիան այզարիսի գիտակցությամբ ու բազմազա-
նությամբ շատ պարծենալ չեն կարող, թեև վերջերս ա-
ռաջ եկան պիեռներ, որոնք առանձին-առանձին ժանրային
հոր անուններ են կրում։ Այսպես օրինակ՝ «Հրաբիսի վրա»
պիեռը հեղինակի կողմից ստացել է «դրամա—պոեմ» ա-
նունը։ Երբ Ն. Զարյանի «Վըեժ» պիեռը կոչվում է դրա-
մատիկական պոեմ՝ դա հասկանալի է թեկուղ և միայն
արտաքին հատկությունների համար, որոնցով օժտված է
այն—չափածո տողեր, ներքին սլացիկ մի ոիթմ, իրեն
հասուկ բարձր ոճ և այլն։ «Հրաբիսի վրա» պիեռի ժանրը
եթե գիտելու լինենք «դրամա-պոեմ» անվան տեսանկյու-
նով՝ մեզ անհայտ է մնում։ Գուցե Գովայն է պոեմը մտք-
մնավորում իր ջութակով, որը երբեք Փուալյար չունե-
ցավ։ Ի՞նչ է այդ անվանակոչության ներքին հիմնավո-

հաշարի չլարվեն։ Եվ դրա համար փառարանել մեր պայմանը գոհերին, պատկերել այժմ աբդեն հաղթական պայմանի գոհերը—այդ անկասկած ժամանակակից տրագեդիա։ Համար կարելուրագույն խնդիր է և հիանալի հիմք» (1938 թ., էջ 25)։

«Յասում» դրամայում պատանի կոլյան զոհվում է գերմանական զավթիչների դեմ մղված կրվում և նրա մահը այսպիսի ռեակցիա է առաջ բերում կարենի մեջ։ «Ես խոհաբհում եմ քո առաջ, փոքրիկ ուսւ տղա, քո մեծ սրտի, քո մեծ սիրո, քո մեծ ատելության առաջ»։

Կոլյան, չնայած իր կորստյան, որ միշտ էլ պարտապետ չէ, դառնում է խորհրդանշան՝ հաղթանակի համար, թեև եղելությունը դրամատիկական է և բիսել է Հայրենական ազատագրական պատերազմի և գերմանա-Վաշինգտոնական ազրեսիայի միջև տեղի ունեցող պայքարի կոնֆլիկտից։

Հաղթական—դրամատիկական վրացմունքը իր օպակ միստական ելքով մեր դրամայի համար կարող է և պետք է ընդունելի լինի։ Առհասարակ մեր դրամատուրգիան պետք է ձգտի բազմազանության և ժանրային որոշակիության գոմե իր հիմնական գծերով՝ նախատակ ունենալով դարձյալ նույն բազմազանությունը։ Դեռևս չկա լիրիքական դրամա, չկա լիրիքական կոմեդիա, չկա գրված իրոր բովանդակությամբ պատմական ողբերգություն՝ նույնպես իր օպտիմիստական փիլիսոփայությամբ։

Դրամայի ողբերգության նոր ըմբռնումը՝ պատմական սլոցների մարդքարտական մեկնաբանության պայմաններում՝ կարող է թարմություն բերել պատմական նյութուննեցող բնմական գրվածքներին։ Հայրենական պատմագրմեն շըջանում պատմական նյութը մեր հանդիսականին մատուցվեց Մուրացանի և Ռաֆֆու երկերի փոխադրություններով։ «Գեվորդ Մարզպետունի» պիեսը ոչ մի կերպ չի պահպանել իր սկզբնաղբյուր վեպի գրական լրջությունը և պատմական այն տրամադրությունն ու կոլորիտը,

պատմական այն հաստ կեղեր, որով տված է վեպի բովանդակությունը, այս դեպքում՝ այսինքն փոխադրության մեջ չի պահպանված, չխոսելով նաև լեզվի մասին, եթե Մուբացանի լեզվական սբառմական հատկությունը փոխարինված է ոչ ճիշտ հասկացված լեզվական, էալիքական լեզվի վոխարեն՝ ոռմանտիքական վերամբարձ բանաստեղծական լեզվով։ Պատմական նյութի դեպքում ժամանքի խորացումը ավելի քան հնարավոր է և ավելի քան անհրաժեշտ, իսկ կան դրամատուրգներ, հատկապես երիտասարդների շրջանում, որոնք չեն օգտագործում այդ հնարավորությունը։ Վիպական երկերի փոխադրության հակառակ Գերենիկ Գեմիքը յանը «Երկեր հայրենի» պիեսի օրինակով ցույց տվեց սկզբնաղբյուրների վրա աշխատեցու ուղին, որ հայ դրականության մեջ արդեն հայրուն ուղի էր, միայն թե հարկավոր էր նոր, սովորական դրամատուրգիայի մեջ այդ ուղին բարձրացնել գրական-պիեսան, մեթոդոլոգիական նոր հիմքերի վրա։

Այսպիսով ժանրերի հարցը զառնում է էական հարց, եթե իրականության ճանաչողությունը կհասցնի և ժամանքի գիտակցության, որովհետեւ ոչ ոք չե կարող ժիանել այն ճշմարտությունը, որ ժանրը նույնպես սբառմական կատեգորիա է և իրականության արտացոլման եղանակը թելադրում է իր առեկվատ ձևը և կերպը դրականության ու դրամատուրգիայի մեջ։

Սակայն այժմ մեծ է հոդը և կարեռությունը նաև քաղաքական կատակերգության համար։ Ֆաշիզմը, որի նախակարապետներին հանձնարեղ կերպով ծաղրել է պետքեղբինը, պետք է զանի իրեն ոչնչացնող սատերիկին և կատակերգակ հեղինակին։ Եյութ—որքան կուտեք—առօտ է և սպասում է հնձվորին։ Այս իմաստով միակն է մեր օրերի դրամատուրգիայի մեջ Ա. Փալանջյանի «Շախ և մաթ» կատակերգությունը, որի վրա մեր քննադատությունը և թատրոնը կարող են ուշադրություն դարձնել։ Այս պիեսում կա պրիմիտիվություն և անհասունություն,

բայց անուրանալի է նաև այն, որ հեղինակը մտածել է
 զոտնել այնպիսի տարրեր, որոնք կատակերգության հա-
 մար լինեն հատկացուցիչ։ Խնդիրն այն չէ միայն, որ
 ուռւմինական մայորի անունը պիեսում Փախչեսկու է,
 որովհետեւ, իսկապես, սովետա-դերմանական ճակատնե-
 րում ուռւմինական բանակն արդեն ջախջախված է։ Խնդի-
 րը նաև այն չէ, որ դերմանական դնդապետի սպասյակ
 ուռւմինացի Անտոնը, որից հեշտությամբ առաջ է դալիս
 Անդոնիսկու անունը, ըստ իր դրության և վիճակի, դը-
 ղուհութ է դերմանա-ուռւմինական դաշինքից և ամեն առար-
 փուտ մաքրելով հիտլերյան դնդապետի սապոդները՝ թքում
 է դրանց վրա և դերմանա-ուռւմինական դաշինքի վրա։ Այդ
 Անտոնին աչք է տնկում դնդապետի և բոլորի սիրուհի
 իշխան և սովիպում դնդապետին «կլլել» դրանից առաջ ե-
 կող կոմիտական դրությունները։ Բոլոր այս տեսարաններ-
 ուռւմ հեղինակը գտել է սատիրայի տարրեր և նրա ծաղրը
 արհամարհական է։ Սովետական միջավայրում նրա ծաղրը
 արդեն ծիծաղ է, բայց մեկի՞ պարտիզան Կապուտինի
 և կատամամբ դժուված են խարակութերի ծիծաղերի կողմեր-
 ոյն, որ ուղիւրիրյոյի շրջանային դրասենյակի նախկին
 դորժամիաբ, իսկ այժմ պարտիզան Կապուտինը տառապում
 է բարեհոգության տիմար հիվանդությամբ և շարունակ
 ընկնութ է Զախորդ Փանոսի դրության մեջ։ Այս պիեսը
 թարմացում է և սրա վրա ինչ-որ չափով գրողի աչք է
 դիմել։ Միաժամանակ սա ցույց է տալիս, որ զգացու լի-
 նելու գեղքում, երբ ելակետը դրական շահն է, իրակա-
 նությանը կարելի է ավելի խորը նայել և իրականության
 ճանաչողության ու նրա գեղարմինուական դդացողության
 ճանապարհով դիմել ու գտնել նաև դրմածքի ժանրային
 առանձնահատկությունը։

ՄԻ ՔԱՌԵ ԽՈՍՔ ԱԵՐՁՈՒՄ

Մեղ կարող են ասել, —ինչո՞ւ եք ի մի հավաքել Արիս-
 տոտելիքց—Հեղել, Բելինսկուց—Գորկի մշակված և հայո-

նի բոլոր կատեգորիաները և պահանջում դըմաց կենսա-
գործումը պատերազմի հրատապ ղայմաններում, երբ
դրամատուրգը կատարում է աղիտացիոն—պրոպագանիչո-
տական Փունկցիա: Նախապես պատասխանում ենք—ճիշտ
չէ, որ այսաեղ հիշատակածն այն ամենն է, որով սպառ-
վում է խոսքը զբամատուրգիայի մասին: Ծայրահեղ մե-
ծամտություն կլիներ այդպես մտածել: Ճիշտ կլինի եթե
ասենք, որ հիշատակած կատեղորիաները միայն անհրա-
ժեշտ նախադրյալներ են դրամատուրգիական աշխատանքն
է՝ ավելի արդյունավետ զարձնելու համար: Մի ցանկու-
թյուն ունեինք՝ վերհիշեցնել այն, ինչ կարող է պատահել
մոռացել ենք կամ վատ ենք հիշում—դրամատուրգիան
բարձրացնելու նրա ապրած նոր էտապի խնդիրների մա-
կարդակին, որովհետեւ այս օրերին նա ավելի նվազ շափով
է առաջադիմել, քան թատերական արվեստը մի կողմից և
դեռևս հեռու է դրամատուրգիայի դրական հասուն արար-
դիցիաներից—մյուս կողմից:

Իսկ պատերազմը—արդարացնում է արդյոք դրամա-
տուրգիայի այժմյան վիճակը: Աչ միայն չի արդարացնում,
այլև օրըստօրե խատացնում է իր պահանջնեցը: Ի-
չորդին անուրանալի է մեր այս օրերի դրամատուրգիայի
աղիտացիոն—պրոպագանիտիստական նշանակությունը, բայց
այդ նշանակությունն անհամեմատ մեծ կլինի, եթե խո-
րանա նրա արվեստը: Դրամատուրգիայի և թատրոնի
պրոպագանիտիստական նշանակությունը ուղղակի հարաբե-
րություն ունի նրանց որակի հետ: Որքան խոր է արվես-
տը, այնքան մեծ է դրամատուրգիայի պրոպագանիտիստա-
կան Փունկցիան:

Այն, ինչ ասվեց—թիմատիկայի յուրացում, դրակա-
նության ճանաչողություն և նրա գեղարվեստական զդա-
ցողություն, այուժե, կերպար և տիպ, լեզու, ժանրեր—
այդ ամենը դրամատիկական երկերի մեջ դանվում են մի
ներդաշնակ միասնությամբ տրված և ամբողջական դրա-
մայի կամ կատակերգության միասնական սիստեմն է կազ-

մում : Այս, ինչ ասվեց անհրաժեշտ էք ոչ միայն պատերազմից առաջ և անհրաժեշտ կլինի պատերազմից հետո եկող դրամատուրգիայի համար . այդ ամենը գիտակցել և կենսագործել է հարկավոր հենց Հայրենական պատերազմի ժամանակաշրջանի դրամատուրգիայի մեջ : Նորից վերհիշենք կերպարի ստեղծման հարցը այս վերջին առումով : Մեր հարդելի դրամատուրգը մեղ ասում է , — «Ես տալիս եմ կերպարներ» : Այժմ մենք նրան բարեկամաբար սլատասխանում ենք . — Սիրելի՝ դրամատուրգ , — ձեր կերպարը լրիվ կերպար չէ , այլ նրա նախնական նշումը , որովհետեւ գուշ նախադեմը որոշմամբ գործող անձնավորությունն ուղեցել էք օժտել այս կամ այն հատկությամբ և ուրիշ ոչինչ : Մտածողական — հոգեբանական և մարդկային չարժումներ , և բազմազանություններ գուշ նկատի չեք առնում , իսկ մենք ոչ միայն ձեր նախնական նշումով չենք ուղում բավարարվել , այլև հիմա առաջ է քաշվում այս ձևակերպում՝ կերպար—խարակտեր—տիպ :

Դրամատուրգը մեղ կրկին միջամտում է , — «Ես դրում եմ կրքոտ» : Ընթերցողը և հանդիսասեսը նրան պատասխանում են . — Կիրքը մեծ առավելություն է , բայց այդ կիրքը պետք է պատկեր դարձնել և հրապարակախոսական եղբան արտահայտել հոգեկան—զգացումային թրթիոներով :

Դրամատուրգը արդիական թեմատիկայի ջերմ պաշտ պանն է , բայց ընթերցողը և հանդիսասեսը շտապում են նրան ասել , — դա կրկին ասավելություն է և այդ առավելությունը պատկանում է համարյա թե մեր ամբողջ դրամատուրգիայն , որովհետեւ նա իսկապես որ արդիական թեմատիկան վերցրել և դարձրել է իր ստեղծագործության հիմք , բայց թեման գեռ առաջին քայլն է , իսկ դրա հետ միասին ընթերցողը և հանդիսասեսը ուղում են , որ մեր դրամատուրգը կատարի երկրորդ քայլը — թեման կերպարանափոխի գեղարվեստական կերպարի , խարակտերի և տի-

պականության և երկը բարձրանա իդեական, թեմային
պատշաճ բարձր մակարդակի վրա:

«Ես ունեմ սյուժե և գտել եմ կոնֆլիկտներ»: Դրամա-
տուրգը լուսմ է այդ խոսքերի այս պատմախանը—սյուժե,
այդ՝ կա և դա նույնպես լավ է, որովհետեւ վերջիվերջո
ավելի լավ է ունենալ սյուժետավոր դրամատուրգիս, քան
թէ ոչինչ չունենալ և սյուժե դունելը կրկին մեր դրամա-
տուրգի առավելությունն է: Բայց արդիական դրամատի-
կական և րկի սյուժեն պետք է կրի արդիականության օրի-
նաշափ ընթացքի ազդեցությունը և մյուս կողմից՝ կոն-
ֆլիկտը չի կարող նույնպես ինքնանպատակ լինել: Եթէ
ընույթով սյուժեն և կոնֆլիկտը,— ասում է հանդիսանե-
սը և ընթերցողը դրամատուրգին, — լինելու են այնքան
թարմ և այնքան նոր, որքան ինքը թեման, ապա թե ոչ,
մենք հին ձեւին նոր բովանդակություն ենք տալիս, որ
արգեն դիսոնանս է սաեղծում: Ուրեմն ընթերցողին ու
հանդիսատեսը գալիս են դրամատուրգին օդնելու և եթէ
երբեմն նրանք խիստ են՝ դրա պատճառը հանդիսատեսի և
ընթերցողի ավելորդ խստությունը չէ, այլ ինքը դրամա-
տուրգը, որին ընծայաբերլած է Ծիսալուրիկայի թատերա-
կան ցանցը, միլիոնից ավելի հանդիսատես, թատրոնն իր
մարդկային ուկե ունեցվածքով, իր հեղինակությամբ, ո-
րին վերջապես ցույց է տրվում պետական բարձր հովանու-
կորություն: Դրամատուրգին վերապահված է թատրոնի
միջոցով ժողովրդական դանսվածների գաղափարական
դաստիարակության և նրանց գեղարվեստական ճռչակի
մշակման անսահմանորեն օլատվավոր գործը: Ո՞ւնի իրա-
վունք դրամատուրգը կասեցնելու դերասանական վարպե-
տության զարգացումը և կամ հարմարվելու հետամնաց
հանդիսատեսին: Այդ իրավունքը նա չունի և երբ նրա
դործը ընթերցողին և առաջավոր հանդիսատեսին չեն բա-
վարարում, մենք հիշեցնում ենք նրան իր իրավունքները:
Հանդիսականը և ընթերցողը դրամատուրգին վերապարձ-
նում են գուցե և հենց նրա կողմից մոռացության արված

վարպետության իրավունքը և բուռն ցանկություն ունեն,
ուր դրամատուրգը տեր կանգնի այդ իրավունքին։ Որով
հետեւ ամեն ինչ տրված է դրամատուրգին—և՛ թատրոն,
և՛ հանդիսասրահ, և՛ բարձր հովանավորություն—նրանից
մի բան է պահանջվում չպիշել որակի իրավունքը և դա-
տապարտել բոլոր նրանց, ովքեր կարծում են, որ դրա-
մատիկական երկի նկատմամբ ունեցած մեր կարիքը վաս-
դրամատիկական երկը փրկում և դարձյալ առավելություն
է գարձնում։ Կարծում ենք դրամատուրգը պետք է դրանց
պատասխանի այսպես։ — Զնայած իմ դրվածքի հսկայա-
կան կարիքին՝ վատորակ երկը առավելություն չէ և չի
կարող մեզել այդ կարիքը։

Այժմ կարծեք թե նպատակը պարզ է—բարձրացնալ
վարպետուրյամբ լավ ծառայել Հայրենական պատերազմի
իրավությունից բխող խնդիրներին։

Իսկ ո՞րն է դիմավորը այդ խնդիրներից։

Դրամատուրգիայի վարպետությունն ի սպաս քերել
եերասականի արտացոլմանը նոր երկերում և քեմի վրա։
Հերոսականը— բոլոր բնագավառներում — ճակատում և
թիկունքում, ամենուրեք և ամենայն ժամ արտահայտվող
սովետական հերոսականը։ արտացոլել հերոսականը, ըս-
տեղծել հերոսի հերարքը, խարակտերը և տիպը — նրա
մահացու առելությամբ ընդդեմ Փաշիզմը։ Սրա չուրջն է
այժմ կազմավորված սովետական մարդու մտածողությու-
նը և հոգեկան աշխարհը՝ իր բոլոր կողմերով ու արտա-
հայտություններով։ Սա սահմանափակ խնդիր չէ։ Մեր
կյանքի պատմական այս մոմենտին այս խնդիրը համայ-
նապարփակ բովանդակություն ունի, որովհետեւ չկա ավե-
լի մեծ և ավելի սպնիվ հարց, քան մարդու ոխակալ թը-
նամու կործանման հարցը, որի մեջ արտացոլվում և ան-
դրադապնում են բոլոր մյուս հարցերը, գոյավիճակները և
դրությունները։

Սովետական հասարակայնությունը հրահրում է ստեղ-

ծագործական մըցակցություն դըամատուրգիայի ասպարից զում բազմաթիվ միջոցներով, որոնցից լավագույն պիհով հայուարարված էրնկուրսը թերեւ ամենալուրջ միջոցներից մեկն է, որը պետք է խթան հանդիսանա դըամատուրգիայի որակական նոր թոփչքի համար՝ դադարական շատ որոշակի նպատակադրմամբ, ինչպիսին է՝ արտացոլել հայ ժողովրդի մարտական գավակներին ուազմաճակատի իրադրության մեջ, արտացոլել հայ ժողովրդի հերոսական աշխատանքը թիկոններում, Անդրկովկասյան եղբայրական ժողովրդների համատեղ պայքարը Փաշիովմի դեմ, նրանց հղբայրական պայքարը օտարերկրյա նվաճողների դեմ պատմական անցյալում:

Այս նորատակադրումն ամբողջովին համընկնում է դըամատուրգիայի ապրած նոր էտապի հարցերին: Թամարոնը և հանդիսատեսը համոզված են, որ մեր գըամատուրգիայի հին վաստակի փորձված կաղըրերը և նրա երետասարդ աճող սերունդը, ներդաշնակ ջանքերով կընդառաջեն նրանց նոր խնդիրներում, իսկ հաղթանակող հերոսականի արտացոլումը բարձր վարպետությամբ թող լինի այն կետ նպատակը, որին ձգտելու են բոլոր նրանք, որոնք իրենց ամբողջ էությամբ ուղղում են ապահովել մեր հաջողությունը նաև դըամատուրգիայի ասպարիզում:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅ ԴՐԱՄԱԹՈՒՐԳԻԱՅԻ ԶԱՐԴԱՅՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ԱԽՎԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱԹՈՒՐԳԻԱՅԻ Ս. Ա. Ա. ՆԵՐԱԾՈՒՅՑ
ԿՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական դրամատուրգիայի զարգացման խնդիրներն ույս համարումարում քննության են դրվում, երբ արդեն հրապարակվել է Համկ(բ) Պարտիայի կենտկոմի ս. թ. օգոստոսի 26-ի որոշումը «Դրամատիկական թատրոնների ու հարթակուարի և նրա բարելավման միջոցառումների մասին»։ Սովետական դրամատուրգները և թատերական աշխատազները երջանիկ են, որ իրենց աշխատանքում այսուհետեւ ղեկավարվելու են և արգեն ղեկավարվում են այդ որոշման մեջ սպառուչ կերպով լուսաբանված գրույթներով և ցուցումներով։ Որոշումը բազմակողմանի կերպով մեկնաբանում է մեր անելիքները դրամատուրգիայի և թատրոնի բնակարգառում՝ պահանջելով «ստեղծել գաղափարապես և գեղարվեստորեն լիարժեք սլիքներ և ներկայացումներ»։

Սովետական դրամատուրգիան ստացել է զարգացման բացառիկ պայմաններ։ Սովետական պետության ստեղծած ունաւուածկան հաստատուն հիմքը և նրա վրա կառուցված ու աճող թատերական ցանցը դրամատուրգիայի առողիտուրիան հասցրին մինչ այդ պատմության մեջ չտեսնիված չափիքի։ Դրամատիկական մի երկ այժմ կարող են դիտել մի քանի հարյուր հազար հանդիսական միայն ՀՍՍՌ առաջնական մասներում։ Ահա այս հարյուր հազարամյոր հանդիսականների առողիտուրիան և ընդարձակվող պետական թատերա-

կան ցանցը հրահրում են սովորական մարդու բոլոր հասակների դաշտափարական ու էթետիկուկան պահանջները բարձրագելու հրատապ խնդիրը:

Բայց այդ հնարավորությունները լոկ մի ռատն Էն զրամատուրդիայի համար բարենպաստ այն պայմանների՝ որ ստեղծել է «սովորական կարգի կենսական հիմքը» նըտ քաղաքականությունը»:

Կարևորագույն ուայմաններից մեկն այն է, որ սովորական հայ զրամատուրդիան (և թատրոնը) թևակորիսեց իր պամության նոր զբանը, երբ հայ ժողովուրդն ակսեց ապրել ինքնուրույն, անկախ սովորական պետականության մեջ, հակառակ անցյալի դազութային, ազգային ստորացման և ճնշման իրականությանը: Գրականության (նաև զրամատուրդիայի) դործը, Լենինի բնորոշմամբ դարձավ «կազմակերպված», պլանաչափ»:

Սովորական դրամատուրգիայի համար կենսական հսկայական նշանակություն ունեցավ Լենինի—Մատվինի ուսմունքը, մեր ժամանակի անընդմեջ ստեղծագործական մեծ ձանապարհներավ ընթացող, քաղաքական միտքը: Այդ միտքը փարոսի պես լրացավորել է դրամատուրգիայի ուղին, միշտ թարմություն և կենսունականություն հաղորդել նրան: Սա այնպիսի մի առավելություն է, որ չեն ունեցել անցյալում դրամատուրգները և ո՛չ մի ժամանակի, և ո՛չ մի երկրում: Գտնվեց անցյալը լայն ու մեծ հայագքով մեկնաբանելու բանալին և մանալանդ արդիականությունն իմաստավորելու հնարավորությունը: Ազգային այլևս մաքրվեց աղջայնականի հաշեցից: Նոր վերաբերմունք մշակվեց մարդու նկատմամբ՝ աղատարկելով մարդու մեկնաբանությունը բխողովիական, նիցշեական, ստայական Փաշիստական «ուսմունքներից», ընդգծելով մարդու մեջ մարդկայինը, սոցիալականը, ինտելեկտուալը, սուածաղիմական մարդու զգացումների հումանիտարական ուղղությունը: Այս աեսակետից անգնահատելի դարձավ ուսանական կամքական ծամանակակից աղջայնության ու արվեստի ծառայությունը:

Սովորական հայ դրամատուրգիային արված է եղել սովորական բոլոր ժողովուրդների կյանքի, նրանց կուլտուրայի (և դրամատուրգիայի) ստեղծագործական փորձի ճանաչողության հարավուրությունը, իսկ այս բոլորովին նոր երանցներ և նոր հասկություն՝ ինտերնացիոնալիտական-հումանիտարական բնույթ է հազորդում նրան :

Արոշիչ գեր խաղացին ոռւս կուլտուրան և դրամատուրգիան : Աղջեցության և կուլտուրական հարակցության գլխավոր աղքյուրն այժմ դառնում է սովետական ոռւս կուլտուրան :

Մեր դրամատուրգիայի դարձացման մեջ այլ ուժաժմանը հանգիստացալ դասական ժառանդության օպտագործման լենինյան ուսմունքը : Բուրժուական հաւաքակությունը դասական ժառանդության տերը չէր և արգելակում էր նրան ճանաչելու գործը : Միայն սոցիալիստական դրամատուրգիայի առաջացման պայմաններում դասական դրամատուրգիան իր իսկական արժեքավորումն ստացավ, վերածնից և ձեռք բերեց կենդանի օրինակի նշանակություն : Այդ նշանակությունը պահպանված է մինչև օրս :

Մեր դրականության և արվեստի դարձացման նոր ոլորժանը սոցիալիստական ուսալիդմն է՝ իրեւ ստեղծագործական հիմնական մեթոդ : Սոցիալիստական ուսալիդը դրամատուրգիային առաջադրեց իրականության լայն ուսոր ճանաչողության սկզբունքը, հեռանկարայնություն, ուժմանաթիկական վեհություն :

Դրամատուրգիան (և թատրոնը) դարձավ ժողովրդային՝ իր էռթյամբ և համաժողովրդական՝ իր հեղինակությամբ: «Արվեստը պատկանում է ժողովրդին: Նա իր խորագույն արժանիքը պետք է զնա աշխատավոր լայն մասսաների ստվար զանգվածների մեջ: Նա պետք է հակացիք այդ մասսաներից և սիրված լինի նրանցից: Նա պետք է միացնի այդ մասսաների զգացմունքը, միաբը և կամքը, բարձրացնի նրանց» (Լենին): Լենինը գտնում էր, որ բանվորները և գյուղացիները «իրավունք են ստացել իսկական մեծ արվեստի համար», դրանով իսկ որոշելով

Վրամատուրզիայի և թագոնի մեծ արվեստ դառնալու խնդիրը:

Այս է սովորական դրամատուրզիայի առանձնահատկությունը: Հասկանալի է այն լայն շահագրղությունը, որ մեր հասարակայնությունը ցույց է տալիս դրամատուրզույթի (և թատրոնի) վիճակի և զարդարման հարցերին՝ ձգտելով տեսնել թե ո՞քափ խորը և կրքոտ կերպով է արտացոլում այն սովորական ժողովրդի շահերը, պետության շահերը, պարտիայի շահերը: Դրամատուրզիայի (ապա և թատրոնի) դերն ու նշանակությունը երբեք այնքան ովետականորեն չեն ընդգծվել, որքան այժմ:

Աբգեսղի գեթ մի վարքը չափով պատկերացնենք մեզ դրամատուրզիայի առաջ ծառացած խնդիրները և զբանց մատչաբները, ըալվական կլինի ամել, որ մենք, նախ, համաշխարհային երկրորդ պատերազմից զուրս հկանք որպես հաղթող և կ' ավելի ամրացած երկիր ու պետություն, և ապա, բարձր պահելով մեր միջազգային հեղինակությունը, իրականացնում ենք աստիճանաբար սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ծրագիրը: Պատերազմում հաղթանակնց սովորականը կյանքի, իրականության, կուտառչայի, տեխնիկայի, կրթության, բարոյականացման՝ բոլոր բնագավառներում և մարզերում հասակ առած սովորականը: Պատերազմում հաղթանակեց սովորական ժողովուրդը, նրա ուսումնական, աշխատանքային և գտաղափառական ու բարոյական հզորությունը: Մեր առաջնորդ ընկեր Ստալինի հոգատար ձեռքով աճեցրած մարդը պատերազմից դուրս եկավ կ' ավելի տոկուն, խիզախ, կ' ավելի կենսամեր, հայրենասեր, կենսահայտաստ և կյանքի առաջընթացին նախանձախնդիր: Ժամանակակից պատմության մեծագույն բախումը — պատերազմը — մենք լուծեցինք հաղթանակով: Այժմ հաղթանակի ողին իշխում է աշխատանքային, գործունեության բոլոր լնագավառներում: Այլպիսին է սովորական մարդը՝ նա օպտիմիստորեն պայքարեց և հաղթանակեց մեծ ուսուցիչայի օբերին, նա օպտիմիստորեն մաքառեց և հաղթանական մարդը՝ նա օպտիմիստորեն կոխվին:

րի ապահովերին, նա օպտիմիստորեն պայքարեց իր տնտեսության վերականգնման համար: Սովորական մարդկան սովորված իստորիան պայքարեց և լուծեց արդյունաբերության սոցիալիստական վերակառուցման խնդիրը. հաղթանակող օպտիմիստով նա ապահովեց դյուզի սոցիալիստական հեղաշրջումը, կենսագործեց ժողովրդական կուլտուրական ուսուցիչան: Սովորական մարդը մարտականորեն կենսագործեց ստալինյան հնգամյակների վիթխարի ծրագրերը և ավարտելով պատերազմը՝ ձեռնտմուխ ևղագի 4-րդ հնգամյա աղյամի իրադրության: Հատկանալի չէ¹⁰ միթե, որ մեր օպտիմիստը և հաղթանակի մեր հողերանությունն ունեն իրենց խոր արմատները մեր պայքարի անցյալում, մեր ներկայում և ապագայում: Արգեստի, դրականության և դրամատուրգիայի համար սրանից բխում է էական և արդեն հիմնավորված այն հատկանիշը, որ իրենք օպտիմիստական և հաղթական ողով հաղեցած արվեստ և դրամատուրգիա պետք է լինեն և որ այդ հատկանիշը նրանց օրգաճական էությունն է: Ժամանակը ծնում և մեզ հուշում էր արագիական դրամայի հիմնական հատկանիշները իրեն մի նոր որակի դրամայի, որի մեջ կենտրոնական դեմքը լինելու էր նոր մարդը, խել դրաման իր ընդհանուր բնույթով՝ ժողովրդական: Արգեստի դրաման, իրեւ ժողովրդական դրամա, կենտրոն ունենալով նոր մարդուն՝ իրականում պետք է արտացոլներ ժամանակի պայքարը, մաքառումները և դրանց բովից ծնված հաղթանակը, հաղթանակ, որ տարվել է մեզ անցյալից ծանր ժառանգություն մնացուկների դեմ, կապիտալիզմի և խմանիալիքովի դեմ, դյուզում մնացած բուրժուական դասակարգերի դեմ, ժողովրդի թշնամիների դեմ. հետամնացության, ոռւտինայի, հին՝ դիշտուչ բարոյականության դեմ՝ հանուն կյանքի, կենցաղի, շինարարության և ապաղայի կատարյալ ձեերի և մարդու իրական բարօրության:

Թոնչ ավելի մեծ երազ կարող է ունենալ հայ դրամատուրգիան, եթե ոչ հայ ժողովրդի վերածննդի գեղարվես-

տական պատկերումը։ Հայ ժողովրդի վերածնունդը բացում է մեծ մտքերի, հույղերի, պատկերների ստեղծագործման անվերջ և չնորհակալ աշխատանքի առարկեղ։ ուրդրամատուրդիան առիթ ունի հակադրելու հին՝ կործանվող աշխարհը և նոր՝ հարության երկիրը, պատկերելու ժողովրդի հավաքն իր վաթանի երկնակամարդի տակ, նրա փրկությունը՝ բնաջնջումից, նրա նոր ընդվզումն՝ ապահովելու և պահպանելու վերածնունդը։ Սովետական Հայ ժողովուրդն արդեն նոր պատմական երեսույթ է, հին ժողովրդի նոր որակ, որի կյանքը խարսխած է քաջարակարթության ամենակատարյալ հիմքերի վրա և որի մասնակցությունը Հայրենական պատերազմին՝ նրա զայտակներին տարավ համամարդկային առաջադեմ պատճեն։ Այսօր կենսագործվում է նոր հնդամարկը, մոխավում երկրի անտեսական և Փիղեկական /քաջանկը/, մոխում և վերափոխում մարդու մտածովությանը և հոգեբանությունը սոցիալիստական աշխատանքի մեջ։ Այդ ամենը պետք է, որ մարմնավորվի մեր դրամատիկական արվեստում, հագեցած խսկական դրամատիվով, իրական, կենդանի դրամատիզմով։

Բայց ի՞նչ ունենք մեր դրամատուրգիայի մեջ առաջօր։

ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅԻ ԵՐԿԱՐ ԷԽԱԳ

Քննության ենթակա դրամատուրգիան կարելի է բաժանել երկու էտապի։ Սովետական Հայ դրամատուրգիայի պատմությունը մի դդալի չափով արդեն ակադեմիական ուսումնասիրության նյութ է և մեր խորհրդն այսօր արդ չէ։

Առաջին համակումարից մինչև ներկա մոմենտը դրամատուրգիան ապրեց խսկապես որ երկու էտապ՝ 1934 թիվց 1941 թիվը և պատերազմի ատրիների շրջանը՝ 1941—1945 թիվը։ Առաջին էտապում ակտիվ գործունեություն՝ ծա-

վալեց Դերենիկ Դեմիրճյանը : «Ֆոսֆորային չող», «Կապուտահն», «Նապոլեոն Կորկուտյան», «Երկիր Հայքենի», որանք Դեմիրճյանի դրամատիկական երկերն էին, որ գըրվեցին իր հետաքրքրությունը և արժեքը մինչ այսօր պահպանած «Քաջ Նազար»-ից հետո : Իրեւ դրամատուրգ երեան հկան է . Վաղարշյանը՝ հրապարակ բերելով բացի «Օղակում»-ից, «Ֆինանսների մինիստր», «Նավթ», «Սառուցի Դավիթ» պիեսները, Ա. Գուլակյանը՝ հրապարակ բերելով «Արշակույսին», «Մեծ բարեկամություն», «Փանձ» պիեսները, Տ. Հախումյանը՝ հրապարակ բերելով «Թշնամին» պիեսից հետո «Մայր» դրաման : Միջին և երիտասարդ սերընդից հենց այդ ժամանակամիջոցում հասարակությանը հայտնի գարձան է . Միքայելյանը («Գոչի» և «Վարազդատի» հեղինակը), Վաչե Հարությունյանը («Զալիլի» հեղինակը), Արաքսմանը («Էմանվելի» հեղինակը), Մելիք-Քոչարյանը («Կույր երաժշտի» հեղինակը), Հացադործյանը — Խուդայինդյանը («Թող բացվեն վարդերը» կոմեդիայի հեղինակները) : Բանաստեղծ Գևորգ Սարյանի գրչին են պատկանում «Երեք երդ» և «Զբաղարտություն» պիեսները : Պրոֆետարական դրամատուրգիայի առաջին ներկայացուցիչ Ա. Վարդանյանը հրապարակեց մի նոր պիես՝ «Արաքսի ավելն» :

Իր հիմնական մասով վերոհիշյալ դրամատուրգիան նվիրված է արդիականությանը և պատմա-ռեռլուցին անցյալին : Նրա լոկ մի հատվածը չոչափում է պատմական և ֆոլկուրային թեմատիկա : Այս տենդենցը՝ իրականությանը մոտ կանգնելու տենդենցը՝ ծաղկել էր գեուես սովետական դրամատուրգիայի արշալույսին, բայց թույլ էր նրա զարդարումը և միայն ստալինյան հնդամյակների ըրջանում, մեր կյանքի սոցիալիստական վերակառուցման տարիներին դա ուժեղացավ : «Ֆոսֆորային չող», «Կապուտահն», «Նավթ», «Մայր», «Կույր երաժիշտ», «Արաքսի ավելն» պիեսներում առանձնապես չեղածած էր չինուրարական թեմատիկան, գյուղի վերակառուցման և բուրժուատիկանի վնասարարության մերկացման թեմատիկան :

Հնատանիքի և նոր բարոյականության հարցը աել էր զոնել
դրանց մեջ և այլ սրբաներում՝ դարձյալ ընդգծված
շարիթներով։ Իրականությանը մոտ կանգնելու մխառումը,
որ առողջ մխոռում էր, իր դրական գերը կատարեց պատե-
րազմի առաջին խակ ըրջանում։ Պետք է նկատել, որ թատ-
րոնների ռեսլերուարից կարճ ժամանակ անց հանվեցին և
կամ երկար կյանք չունեցան «Ձրպարտություն», «Երեք
երգ», «Նալիք», «Գանձ» պիեսները։ Շատ քիչ օդապարզ-
վեց «Ալրաքար ափին» սիեսը։ Հենց այլ ժամանակ նկատ-
վեց մինչ օրս աղբող այն երեսությը, որ թատրոնների
ըրջանային ցանցն ավելի թույլ դրամատուրգիա ստացավ,
քան մայրաքաղաքի և Լինինականի թատրոնները։ Հարթ ու
սահուն չանցավ և Գեմիքյանի նոր գրամատուրգիայի
կյանքը՝ սպիտերվ ոչ երկար տարիներ։ Բացառություն
կազմեց «Երկիր Հայրենի» դրաման, որը այսօր էլ մնում
է սեպերուարի մեջ։ Ավելի քիչ պատմության ճանաչողու-
թյուն և ավելի շատ սանտիմենտալ սյուժե, որ լավանու-
թյուն և մելոդրամատիկ ուժեղ տարր էր մացրել դրամայի
մեջ — այդպիսին է «Վարազգատը»։ Մեր ժողովրդական
էպոսը դրամատիկորեն մշակելու մի խնդախ փորձ կատա-
րեց Վարչարշյանը։ Բայց պիեսում նա վաճառականությանն
ինքնուրույն սոցիալական գեր հատկացրեց Մասնա հասա-
րակության մեջ, այդպիսով հավասարազոր դրամաներով
արտաքին և ներքին թշնամիների՝ Հայաստանին և Երկայաց-
ված վտանգը, մինչդեռ հայտնի է, որ մեր էպոսի քաղա-
քակրն սրությունն ուղղված է նախ և առաջ արտաքին աշ-
խարհակալությունների դեմ։ Դռեհիկ սոցիոլոգիական մո-
տեցումը և վեպի մոդեռնիզմացիան դրաման զրկել է ինք-
նուրույն արժանիքներից։ Պատմառեկոլուցիոն թեմատիկա
պարունակող դրամատուրգիայի մեջ մեզ հիանթափություն
չէր սպասում։ Վաղարշյանի «Օդակում»-ից հետո երեան
եկան «Արշալույսին» գրամայում մենք տեսանք ժողովրդա-
կան սայքարի դրվագներ, որոնք հենց գրվածքին ժողո-
վը պահան գրամայի ընույթ են տալիս։ Մայր Աննայի կեր-
պարը հերոսական մարդու հատկանիշներով է օժտված։

«ՄԵծ բարեկամություն» պիեսում տրված է կարևորագույն մի թեմա՝ առաջնորդ ընկեր Ստալինի և նրա զինակից ու աշակերտ Սուրեն Սովանդարյանի ռեոլուցիոն բարեկամության թեման: Ռուսական սովետական դրամատուրգիայի խորձով, մեզանում ևս խիզախսինց բեմի վրա ցուցյալ Սովաճնորդի կերպարը, նրա զինակիցների՝ Օբյոնիկիձենի, Շահումյանի կերպարները: Անհրաժեշտ է դիտել, որ Հեղինակը իր մտաշղացումները տարածելով մեծ թվով գործող անձանց մեջ և միջադեպը դարձնելով հիմնական դորոդողություն՝ չի դառնել կերպարների խորացման ուղին:

Առաջին էտապի դրամատուրգիայի բնութագրմանը պետք է ավելացնել ևս մի հատկանիշ, և դա վերաբերում է դրամատիկական ժանրին՝ այսինքն ժանրերի բարձագանությանը, որ մեխանիկական երևույթը չէ, որովհետեւ և՛ դրամայի և՛ կատակերգության և՛ հոգեբանական պիեսի կերպարները խոր կազ ունեին իրավանության ճիշտ ճանաչողության և նրա արտացոլման պրոբլեմների հետ: Այսպես օրինակ՝ ամենեին չի կարելի երգիծանքի հին հղանակներով հանդես դալ մեր օրերում և կամ վերականգնել գոգոլյան կատակերգության ժանրը՝ եթե ծաղրի ուսարկան բացարձակապես թշնամական չէ: Վաղարշյանը ճիշտ է վարդել «Թինանաների մինիատոր» սատիրայում ծաղրելով գաշնակցական ճահիճը զողովյան կատակերգության եղանակով: Նրան խանդարել է ինքնակոչ ժառանդի հետ կազմած սյուժեի չափեց ավելի խճողված լինելը և մեկի փոխարեն երկու ինքնակոչ ժառանդների ինտրիկով հարգչութակվելը, որը և արհեստականություն է Հաղորդում սատիրայի կառուցվածքին՝ ի վնաս կերպարների: «Նասպալիոն կորկոտյանի» մեջ ընդհակառակը՝ կատակերգության կառուցվածքի թերությունը բխել է մեր իրականությունը լայն կերպով ըլնդուրկելուց, բայց այդ կատակերգությունում ստեղծված սովորողի զիրեկտոր Բարեղամ Գարշումտիչի տիպը ակնառու ներդրում է մեր դրամատուրգիայի մեջ:

Արդիականությանը նվիրված դրամատուրգիան ունի

մեկ ընդհանուր թերի կողմ ևս : Դա կյանքի սխեմատորիկ վերաբարելությունն է, սխեմատիզմ, որ չհազթահարվեց և որի պատճառներին մենք կանդրադառնանք ստորև :

Այսպիսի հատկանիշներով մեր դրամատուրգիան թևակոմահց երկրորդ էտապը՝ պատերազմի վըջանը : Դրամատուրգիայի առաջ ծառացած խնդիրները բխում էին սպառտիայի և պետության հիմնական պահանջից՝ «ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» : Դրամատուրգիան հանդես եկավ իր քաղաքացիական պարտքի դիտակցությունը և ըմբռնեց նոր շրջադարձի կարևորությունը : Գրվեցին հարյուրավոր պիեսներ : 1942 թվին լույս տեսած պիեսների ժողովածուն արագ որոշեց կրամատուրգիայի հիմնական թեմատիկան՝ արդիականության պատկերման անհրաժեշտությունը, բայց այսուղի զետեղված պիեսները շատ չուտ մոռացվեցին : Գուլայշանը վրեց «Յասում» պիեսը, «Վաղարշյանը՝ «Վան Հանրու» դրաման, Սաղաթելյանը՝ «Կարմիր մանյակ» մելոդրաման : Պատերազմի ժամանակ նորույթ էր նախը Զարյանի դրամատուրգիան՝ «Վրեժ», «Այրող վիմակ», «Ամենառազան», առաջ և «Արա գեղեցիկ» : Գ. Սարյանն առաջիններից մեկը արձագանքեց նոր պահանջին և հրապարակ եկարվ «Անտոռի խորըում» պիեսով : Ինտենսիվ աշխատեց Ալեքսանդր Արաքսմանը՝ տալով «Անտառները չարժվում են», «Հրարըխի վրա», «Արծվիկ», առաջ և «Մեսրոպ Մաշտոց» դրամաները : Հախումյանը մրցանակարաշխության մեջ չահեց «Պարզ հոգիներ» դրամայի համար : Աչքի ընկարվ դրամատուրգիական մի նոր սերունդ՝ Աշոտ Փալանջյան, Բեներյան, Պապայան եղբայրները, Շողերյան, Տարոնցի, Գրասիկ, Հանգուցյալ Հուրյան, Դաշտենց, Կորյուն, Յաղջյան :

Ռուսական սովետական դրամատուրգիան պատերազմի շրջանում ևս տվեց մեզ մի նոր չափանիշ : Մենք նկատի ունենք Ա. Կորնեյչուկի «Ռազմաճակատ» , կ. Սիմոնովի «Ռուս մարդիկ» և լ. Լեռնովի «Արշավանք» պիեսները : Այդ չափանիշը մորիկիդացնող դեր կատարեց նաև մեր

Դրամատուրգիայի կյանքում՝ պարզելով, թե որն է արդի գրամատուրգիայի թույլ կողմը և որն է նրա ուղին:

Հարկ է ընդգծել, որ պատերազմի շրջանում արդիականությանը նվիրված գրամատուրգիայի կողքին ինքատծումարդկան անցյալը և Փոլկորը նյութ ունեցած ուժատուրգիան։ Պատմական անցյալը և Փոլկորը նյութ ունեցող գրմածքների արատն այն է, որ դաշտաճանակը առատությամբ ցուցադրվեցին և դա միակողմանի դարձրեց պատմական պրոցեսի պատկերումը։

Մյաս արատն այն է, որ հին հայրենասիրության և նոր սոցիալիստական հայրենասիրության միջև չէր դիտվում նրանց բաժանող սոցիալական բովանդակությունը և միենուն գաղափարն ընդհանրացվում էր հասարակական բոլոր ֆորմացիաների համար։ Վերջապես պատմական և Փոլկորացին նյութ ունեցող մի քանի պիեսներում և նրանց քիմառըստյուններում («Վարագդատ», «Գեորգ Մարզպետունի», «Սամուել», «Տուլան») մեր նախնիները նման էին ահտառարմակների, քան թե նորմալ մարդկանց, որոնք պետք է որ ընդունակ եղած լինեին և՛ հուզվելու, և՛ սիրելու, և՛ սիրվելու, և՛ միաժամանակ լինեին քաջակորով։ Նրանց մեծապես պակասում էր մարդկայինը, իսկ գտ իր վատ հետևանքներն ունեցավ նաև թատերական արվեստում, որքանով որ այդ երկերում և ներկայացումներում ուսալիղմը տեղի տվեց կեղծ պաթուսին և անհող ու աննյութ ռոմանակղմին։ Բայց որովհետեւ արդիականությանը նվիրված գրամատուրգիան քիչ է օգտագործվել և կամ փսխարինվել է անքովանդակ և անորակ երկերով, իսկ պատմական գրամատուրգիան մնացել է ու ալահպանվել, ուստի միանգամայն իրավացի է պարտիայի կենտրոնական կոմիտեն, երբ իր հայունի որոշման մեջ նշում է այն իրողությունը, որ շատ գրամատուրգներ գնացին դեսլէ անցյալը, որ թատրոնները ևս հափշտակվեցին անցյալին վերաբերող պիեսների բեմադրություններով, մի երեսույթ, որն այդ գրամատուրգներին և թատրոնները հեռացրեց արդիակա-

նության արմատական հարցերից։ Այդ դրամատությունները «չգիտեն ժողովրդի կյանքը և պահանջմունքները, չեն կարողանում արտացոլել սովորական ժարդու լավագույն կողմերը և հատկանիշները»։ Հարկավոր է հիշատակել այն փաստը, որ սովորական հայ դրամատուրգիայի հաջողած երկերից են համ և առաջ Դ. Դեմիրճյանի «Բաջ Նազար», «Երկիր Հայրենի» և ն. Զարյանի «Արտ Գեղեցիկ» պատմական թեմա ունեցող դրամատիկական գործերը։ 1922 թ. սկսած մեղանում հրապարակ են զալիս Եկատերինա Բահմանուրի «Սրտարմագո», Մամիկոն Գևորգյանի «Վարդապար» դրամաները, որոնք ունեն առավելություններ, բայց դրանց՝ հատկապես «Վարդապար»-ի մեջ տիրում է հայեցաղականությունը և ժողովրդական մարդու՝ արտաքին թշնամու դեմ ուղղված պայքարը տրված է շատ պատսիկ կերպով, իսկ թշնամին՝ (իրանի տեսարանում) բարոյական մեծ առաքինությամբ։ Այդ օրերից սկսած մինչև առենտական երիտասարդ բանաստեղծ Աշոտ Գրաշին, որ Հրապարակել է «Ամող բերդ» զբաժան, պատմական թեմատիկան խորացել է ի վնաս արդիականության պատկերմանը։ Մյուս կողմից, պատմական թեմատիկայի առատությունը հաղ ստեղծեց անցյալի իդեալացման համար՝ չարաշահելով ընթերցողի և հանդիսատեսի ազլային զգացմունքը և թաքնավերով ազդային պատյանի մեջ, կենդանություն տալով բուրժուական նացիոնալիզմի սեցիզիլիներին, որն «ուղղված է մասսաների կոմունիստական դաստիարակության և սովորական կարդի դեմ»։ Պատմական թեմատիկան խռապ չի ժիտվում, բայց արդիական թեմատիկան պետք է ինի առաջատարը և վճռականը։ Սա բոլորովին անկատած է։

Ի՞նչ ուժեղ և ի՞նչ թույլ կողմեր ունեցավ պատերազմի շրջանի արդիականությանը նվիրված դրամատուրգիամ։ Նրա ուժեղ կողմն այն կրքոտությունն էր, որով նա հարձակվեց թշնամու վրա և ատելություն հրահրեց նրա նկատմամբ։ Այդ դրամատուրգիան օպտիմիստական էր։ Նրա թույլ կողմը գաղափարական ոչ մեծ մասշտաբներին են

և գեղարվեստական միջոցների ռահմանարկակությունը : Եթե Ն. Զարյանի, Գուրակյանի, Վաղարշյանի դրամատուրգիայում գործող անձինք կանգնած են ինտելեկտուալ զարդացման մի որոշակի մակարդակի վրա, մյուս գեղարքուամ (Արագսման, Բարսեղյան և այլն) այդ մակարդակն իշխում է, իսկ Բարսեղյանի պիեսներում («Կովածաղիկ», մասամբ նաև «Հայ կինը») մարդիկ, ըստ մեծի մասի, կարծեք նույնիսկ անդւուի են, անկուվառուրական, հնին կառչած, իսկ իրենց բեմադրություններում թատրոններն այդ կողմերը խոտացնում էին : Պարտիզանական թեմատիկայի մեջ մեր դրամատուրգիան մնում էր վերացականության շրջանակում, կոնկրետ չէր, նյութը չդիմեր : Անցակ բարձրական ժամանակ, մինչև որ դրամատուրգիան ակսեց պատկերել թիկունքը և նրա հերոսներին («Վանքաճոր» և այլն) : Բացի դրանից, գերմանական Փաշվատներին նկարագրելիս մեծ մասամբ իշխում էր պլակատը : Պատերազմի շրջանում հայ դրամատուրգիան անշուշտ լայնացրեց իր թեմատիկան : Բայց սովորական հայ դրամատուրգիայի համար ընորոշ դարձող հիմնական արատը — մեր դարաշրջանի դաղավարական բարձրության չհասնելը և սիեմատիզմը — դարձյալ մնում էր ուժի մեջ :

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ԿԱՐՊԱՐԸ ՀԱՅ

ԴԻՍ.ՄԱ.ՇԱ.ՇՈՒՐԳԱ.Խ.Ա.ՋՈՒՐ

Հարցը վերաբերում է մարդկային հասարակության մեջ հանդես եկած նոր մարդուն, նորի զգացումը կբող մարդուն, որն անընդհատ ուկոլուցիոն պրոցեսի մեջ է, անընդհատ ներգործում է շրջապատի վրա, ձեւափոխում է իրական կյանքը՝ մարդկային կեցության կատարյալ ձեւերին հասնելու համար : Այս մարդու ընորոշ գիծը բոլոր կյանքականությամբ հազեցած դիալեկտիկական-մատերիալիստական աշխարհայեցողությունն է և ակտիվ շինարար գործունեությունը հասարակության մեջ : Գաղա-

փարականությունը սովետական մարդու առաջին հաստիանիցն է։ Սովետական մարդու կերպարը դրական մարդու կերպարը է և նրա մեջ են խոտանում ժամանակակից բարքեցը, իդեաները և բարոյականությունը։ Թվում էր, թե սովետական մարդը դրամատուրգիայի մեջ կլինի իրոք դրամատիկական դեմք, իրոք դործունյա, բոլոր և ամեն տեսակի խոչընդուներ հաղթահարող։ Բայց ահա Նախը Զարյանի «Վրեժի» հերոսները՝ Վասիլի, Մուշեղ, Լարիսա՝ գաղափարներով սովետական մարդիկ են, բայց պիեսի սյուժեն այնքան փոքր է, որ գաղափարների ծավալման փոխարեն մենք լսում ենք մեծ չափերի հասնող ուսուրիկա և դատողություններ։ Իր հերոսների հարկություններին Զարյանը չի ալիքացրել նրանց հողերանության և հուրական աշխարհի նկարագիրը։ «Այսող դիմակ» դրամայում մենք ունենք սովետական մարդկանց մի չափ կերպարներ՝ Երվանդյան, Նաղենիկ և այլն։ Ազգարարլող մտքերից մենք դիտենք, որ այս մարդիկ սիալ չեն դործի և կմնան հայրենիքին նվիրված մարդիկ։ Հեղինակի մտահղացմամբ հերոսուհին դրվել է դժվար կացության մեջ — գերմանացու մոտ գերի մնալուց հետո նա պետք է պահպաներ իր բարոյական և Փիղիկական մաքրությունը։ Բայց Հերոսուհու փոխարեն գործում են պարտիզանները, որոնք դերմանացու վրա բեմի ետևում կրակ են բացում, ուրեմն երկրորդ դործողության մեջ նա արդեն հիվանդ է, երրորդ դործողության մեջ նաղենիկը չկա, իսկ չորրորդ դործողության մեջ ոլիեան ավարտվում է, որովհետև քաղաքը կարծիք դորամասերը ետ էին վերցրել, երբ Նաղենիկն էլ իր նետած ուռմբից վիրավորված է և Երվանդյանին մնում էր փարատել իր խանդը և կասկածները կնոջ նկատմամբ։ Պարզ չէ միթե, որ հեղինակի նպատակը դործ չի դարձել և արտաքին հանդամանքներն արհեստական ություն են արել սյուժեին։

Սովետական մարդկանց նկարագրի մեջ ներմուծած իր սիեմատիզմից դրամատուրգ Արաքսանը փորձեց հեռանալ՝

հրատարակ թերեւով Արծվիկի կերպարը (Համանումն պիտի սից) : Արծվիկը դերասանուուհի է և պատերազմի օրերին անձամբ համոզվում է, որ իր արդիսան աննպատակ չէ : Բայց ահա այլանդակված վիճակում նա հանդիպում է իրեն պիտի մարդուն : Ի՞նչ անել : Արծվիկը ուժ պետք է դառներ հաղթահարելու անձնական վիշտը : Արծվիկի սիրելի մարդն առողջանում է և կրկին մեկնում բանակ : Բայց նա պետք է բաժանվի Արծվիկից ու նոր վիշտ է բարդմում հերսունություն : Թեման այս դեմքում ներփակվում է անհատի մեջ, գործողության ընթացքում իր դաղափարական լիաբանք և հասարակական արտահայտությունը չի ստանում, ուրեմն և մանրանում է այն նպատակը, որ դրեւ էր իր ու այլ հեղինակը :

«Հայ կինը» պիեսում դրամատուրգ Բարսեղյանը հակադրության մեջ է դրեւ դրական և բացասական կերպարներ՝ կոլտնտեսության նախադահ Սիրուշին և պահեստապետ Կոսիոյին, որը հանրային բարիքը խժողով դեմքերից է : Դրականի և բացասականի պայքարն այս պիեսում չէր ստեղծում այն անհրաժեշտ տպափորությունը, որ դրականը պետք է հաղթանակ տանի ըստ էության և ոչ ըստ այն ռեժիսորիկների, որ գրեւ էր գրամատուրգը : Բացասականը՝ Կոսիոն սուացվել էր մարմնեղ և ուշադրություն էր գրավում, փոխելով և պիեսի ժանրը դրամայից կոմեդիայի, իսկ հայ կինը փոքրացվել էր, առանց այն էլ նրան խճողել էին կենցաղային անհիմն մեղադրանքների մեջ : Առհասարակ մեր դրամատուրգիայի մեջ սա դառնում է ընդհանուր երեսություն, որը և մատնանշված է պարտիայի Կենտկոմի որոշման մեջ — սովորական մարդիկ թշնամիներից թույլ են սուացվում : Գյուղական միջավայրը նկարագրելիս մեր դրամատուրգները սկրում են հերոսներին խճողել կենցաղային կապերի մեջ՝ փակելով նրանց առաջ սոցիալական և գաղափարական պայքարի մեծ ճանապարհները : Ամելի դրական նկարագիր ունի Գյուտը Իլլիչի կերպարը Գուլակյանի «Յասում» պիեսից) : Սա հենց պատերազմի առաջին

օրենքին զգացել է, որ տառապում է բարեհոգության հիմար հիմանդրությամբ, իսկ այժմ ընդհատակյա դպրոցում այրող ատելություն է քարոզում դեսի թշնամին: Ռեալիստ մարդու, կյանքն արարող մարդու ընալուրությամբ է օժարված Լուսիկը (Վաղարշյանի «Վանքաձոր» պիեսից): Նա կուտանառությունը դուրս է բերում առաջախորների շարքը: Եվ այնուամենայնիվ մենք դիտենք Լուսիկի կերպարի մեկ կողմը և ոչ մի քանիսը, դիտենք նրան միայն դյուզի միջամբայրում: Լուսիկին ևս հատուկ է դառնում գործունեության սահմանափակությունը:

Այս բոլորից երեսում է, որ սովորական մարդը մեր պրամատուրդիայի մեջ տիրապետող դեմքը չէ, մինչդեռ նա պետք է կադմի մեր դրամատուրգիայի էական բովանդակությունը: Սովորական մարդու պատկերն այնքան պակասավոր է ներկայացված, որ չի կարող համեմատվել մեր դարաշրջանի մարդու հետ:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՈՐ, ՇԱՀԱՄԱՆԱԴՄԱՆԻ ՃԱՆԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

Ինչպես կարող էր պատահել, որ օրինակ պատերազմին նվիրված պիեսում («Սմբատի խորքում» Գ. Սարյանի) ամբողջ խնդիրը հանդեր մի կամուրջի պայթեցմանը, կոմ «Ժառանակ Բերդինա» պիեսում (հեղինակ Մ. Երկնկյան) սարքոյով հերոսուհին լսում է, որ իր առնուսինը ողջ է, բայց հիմանդր, և երբ մեկնում է նրա մոտ, տեսնում է իր ամուսնու անուն և ազգանուն ունեցող մեկ այլ մարդու և որոշում է մնալ հիմանդին խնամելու համար: Այս դեսկրում նույնպես մի փաստ է վերցված, կյանքի մի փոքրիկ արտահայտություն: Մեր դրամատուրգիան այսպիսի օրինակներ չես ունի: Բացասական կերպարներ ունեցող պիեսներում երեան է բերմում կյանքից բերված մի փաստ և այդ փաստը գոհարերմում է ճշմարտությանը: Քաղքենիական մտածողությունը կանգ է առնում մեկ փաստի վրա, կառչում է

Արամեց, բոլոր Երանգներով զունավորում այն։ Քաղքենի-
ական մտածողության ուժը մեկ փաստի մեջ է, բայց և
զրա մեջ է նրա ամբողջ թուլությունը և ողորմելիությունը։
Դրա հետեւնքով ստացվում է խղճուկ, աղքատիկ մի երկ։
Քաղքենիական մտածողության մեկ ուրիշ կողմն այն է,
որ ցանկալի փաստը նա անջատում և մեկուսացնում է իրեն
ոչ հանկարչ փաստերի տրամաբանությունից և այդպիսով
լսաբառ աղքատացնում և աղճատում իրականության նկա-
րությունը։ Միայն իրականության խոր և բազմակողմանի
ձևաչփությամբ կարելի է հասկանալ կյանքի իրական
կացությունը և գրանով իսկ հաղթահարել քաղքենիական
մտածողությունը, որը վերջիվերջո վախենում է կյանքից,
խուսափում է նրանից և չի հավատում նրան ճանաչելու
հնարավորությանը։ Մինչդեռ սովորական դրամատուրգը
պետք է նետի իրեն կյանքի մեջ, խորամուխ լինի երեսությ-
ունքի և փաստերի կապակցություններին, պատճառներին ու
հիմնավորումներին և կարողանա կյանքը ճանաչել լայնա-
հուն ընթացքի մեջ։ Ահա ինչու դրամատուրգիայի համար
էական նշանակություն ունի կյանքի արդ ընթացքը բազ-
մակողմանիորեն լուսաբանող մարքս-լենինյան փիլիսոփա-
տությանը խորապես տիրապետելի, սովորական պետու-
թյան քաղաքականությանը շատ լավ ծանոթ լինելը, ու
բովածեակ դրամատուրգիան, ինչպես նշում է պարտիայի
կենտրոնական կոմիտեն, որտեղ է ստանձնի արդ քաղաքա-
կանության պրոպրեգանդիստի գերը։ Միայն այս պարմա-
նով դրամատուրգիան ի պիճակի կլինի իր ստեղծագործու-
թյան մեջ կենսագործել կենինի այն դրույթը՝ ատված
մարդկային ճանաչողության մասին, որ մարդկային ճա-
նաչողությունն է «կենդանի, արդյունաստեղծ, ճշմարիտ,
չկոր, ամենակարող, օբեկտիվ, արսույթ»։

Մեզանում շատ հաղվալյուս են այնպիսի երկեր, ո-
րոնց մեջ ցույց տրվի մեր շարժման հեռանկարը։ Դրանցից
է «Վանքաձորը», բայց այստեղ էլ արդ հեռանկարը դիտ-
վում է միայն տվյալ կողտնտեսության տեսանկյունով։

եվ, որպեսզի դրամատուրգը տեսնի հեռանկարը՝ պետք է նկատի ունենա, որ իրականությունը դառնվում է անընդհատ դարձացման ընթացքի մեջ, երբեք կանգ չի տունում և մահավանդ չի կրկնում իրեն։ Պարտիայի կենտրոնական կոմիտեի ցուցումների մեջ մեր կյանքի առաջընթացի պատկերման հարցը առանձին կարեռը ուժություն է ստացել։ Իսկ այն դրամատուրգը, «որը չի ըմբոնում զարգացումը, երբեք ճշմարտությունը չի տեսնի, — որովհետեւ, ասում է Լուսաշարսկին, — ճշմարտությունն ինքն իրեն նման չէ, նա չի նստած մի տեղում, ճշմարտությունը թուշում է, ճըշմարտությունը զարդացում է, ճշմարտությունը կոնֆլիկտ է, ճշմարտությունը պայքար է, ճշմարտությունը զմորչաօրն է, և ճշմարտությունը հենց այդպես էլ պետք է տեսնել, իսկ ով ճշմարտությունն այդպես չի տեսնում։ Զարուժուական ուելքատ է և դրա համար՝ պեսինիստ, մրթմբթացող և հաճախ խարերա ու կեղծող և համենայն դեպք, կամա թե ակամա, հակառակուցիոներ և վնասաբար»։

Մեր դրամատուրգիայի հետամնացության պատճառներից մեկն է այս և նրա հաղթահարման ուղին իրականության խոր և բազմակողմանի ճանաչողությունն է՝ նրա զարդացման պրոցեսի մեջ, ճանաչողությունն, որ պետք է կատարի մարքս-լենինյան ուսմունքի հիման վրա։

ԹԵՄԱՏԵԽԱԾԻ ՍԵՅՈՒՄՆ ԻԴԵԱՆԵՐԻ

Ի՞նչպես է պատահել, որ մեր դրամատուրգիայի մեջ մեծ է եղել պիեսների «մահացության տոկոսը»։ Առանձնապես ի՞նչն է պատճառն այն բանի, որ օրինակ «Արաքսեափին» (Ա. Վարդանյան), «Հայրենիքի համար» (Հ. Բեյլերյան), «Հրաբխի վրա» (Ա. Արաքսման) և այլ պիեսներ, թեև արդիական, բայց շատ քիչ են ապրել։ Պատճառն այն է, որ դրանք եղել են թեմատիկ առաջադրանքի պիեսներ։ Հեղինակը որոշել է այսինչ կամ այնինչ թեմացով պիես-

զրել և գրել է, թեման կա, բայց չկա կյանքի շնչառությունը, մարդը չկա: Ընտրելով կոլանտշինարարության թեման՝ ընկ. Վարդանյանն ամբողջ ուշադրությունը դարձրել է իր թեմայի իլյուսորացիային, մոռացության տարրի դրամատուրգիային: Համար ամենաէական խնդիրները, որոնց մեջ նախ և առաջ կարեռը՝ թեմայի անցումն իդեաներին, որովհետեւ թեման ինքնին դեռ ոչինչ չի որոշում, նա իդեա չէ: Գրվածքի մեջ որոշիչ դեր ունի կատարելու ոչ թե թեման, այլ իդեան, իդեան է երկի բովանդակությունը: «Հրաբխի վրա» պիեսում գրվածքի թեման որոշված է եղել որպես թշնամութիկունքում սովորական մարդկանց պայքարի թեմա: Բայց երկը շարադրում է մեղ պիեսի թեման և չի ընդհանրացնում իդեան: Այստեղ սիստեմիկ է սայքարի ովիտվոր գեմքը՝ Մելնիկը: Նույն այդ սիստեմատիզմը տարածվել է մյուս գործող անձանց վրա, և հայ զգամատուրդիայի մեջ երեացած պարտիզանների մեծագույն մասը, ինչպես նաև թշնամութիկունքում գործող մարդկանց կերպարները, կենդանի մարդու հատկություննեցան:

Թեմատիկ առաջադրանքը դրամատուրգիայի մեջ չի ըմբռնիել որպես իդեական ընդհանրացման առաջադրանք՝ դերազնահաստելով նյութը և թերագնահատելով իդեան: Հետևանքը եղել է այն, որ արդիականությանը նվիրված պիեսների մեջ հաճախ ազդակարարվում է գրվածքի թեման, իսկ մարդու կերպարը խղվում է գաղափարից և ժամդը դառնում է թեման զեկուցող մեքենա:

ԿԵՐՊԱՐԻ ՄՍԱԿՆ

Ի՞նչպես է պատահել, որ մինչև այժմ մեր դրամատուրգիան չի տվել սովորական մարդու ամբողջական կերպարը: Այս կերպարները՝ Զոյա, Արծվիկ, Սիրուշ, Վասիլի, Մուշեղ, Լարիսա, Նաղենիկ, Պյուտր Իլիչ, Կոլյա, Առլան ամի, Լուսիկ — այսօր մեղ չեն դոհացնում: Մեր

դրամատուրգները չտեսան մեր մարդուն և դեռ չեն տեսնում՝ որպես մատ անհատականություն, իսկ անհատականության աճի հիմքը կրկին մեր ժամանակն է, նրա բովանդակությունը, անհատի դերը հասարակության ու պետության մեջ, ըստ որում, ինչպես նշել է պարտիայի կենացքնական կոմիտեն, սովետական մարդուն հասուկ կողմերը հասուկ են միլիոնավոր մարդկանց և ո՛չ առանձին մարդկանց, առանձին հերոսներին։ Խնդիրն այն է, որ մեր դրամատուրգիայի մեջ մարդը վերցվում է մի անկամ ընդմիջու տրված վիճակում։ Դրամատուրգները վորխում են հերոսի դիրքը (զյուղատնտեսը դառնում է կուտակառության նախագահ, լեյտենանտը՝ գնդապետ, և այլն), և կամ փոխվում են հերոսի չուրջը տեղի ունեցող վեսդերը։ Մեր դրամատուրգիան դեռ չի տվել մարդուներին դարդացումը (բացառությունը միայն Աեթո դաշին է «Վանքածորից»)։ Մեր դրամատուրգները բացառում են մարդու հոգեբանության զարգացումը պարզեց բարձրը, վերլուծությունը, ազգումների ինքնատիպությունը։ Հակառական այն է, որ դրամատուրգները տեսնում են սովորական հասարակության զարգացումը, բայց չեն անմեռում անհատի զարդացումը։ Դրամատուրգն առաջադրում է թեզ և ուզում, որ մարդիկ հավատան իր թեզին, ախտաֆիելով այն բանով, որ հերոսի սովետական պատկանելիությունը նրա պիետում կիրկի ամեն ինչից։ Մինչես կարևոր է համոդել, թե ինչո՞ւ հերոսի վարքագիրն այս է և ոչ այն։ Բոլոր այս թերությունների սկզբնապատճառն այն է, որ մեր դրամատուրգիայի մեջ մարդը նկարագրվում է կերպարի նախնական աստիճանի վրա։ Դրամատուրգիական պրակտիկայում ատացվել է այնպես, որ կերպարից խլել են նրա ընալորությունը։ Ի՞նչ են «Վրեժի» և «Ալյուդ դիմակի» հերոսները։ կերպարները, բնավորությունները, թե տիպերը։ Նրանք կարող են տիպեր լինել, սրավետե նրանց միացնում է սովետական մարդկանց համար զարդարականությունը, բայց նրանք կոնկրետ չեն։

Մինչաւ կառւասկում գրած նամակում էնդելսը ասում է, թե վաղառանուհու յուրաքանչյուր դեմքը տիպ է, բայց և բոլորովին որոշակի անձնավորություն — «այս», ինչպես կասմբ ծերուկ ձեզելը: Այդպես էլ պետք է լինի, — ուժնեպացնում է էնդելսը: Մեր դրամատուրգիայի համար ելքն այն է, որ սովորական մարդու կերպարը կերպվի և ուղարկած բնավորություն, որպես տիպ, և որպես «այս» — ուս կլինի ժամանակակից մարդու լիարժեք պատկերման արդեւաբ:

ԳՐԱՄԱՏՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԵԼԻԱՏԵՍԵՐԻ ՀԱՐՑԸ

Սովորական հայ դրամատուրգիան վերջին տարիներին րախումներ չեն նկարագրում կամ թույլ է նկարագրում: Պատերազմի շրջանում դրամատիկական բախումները վոխաղքանցին ֆաշիզմի դեմ մզվող պայքարի միջամայրը: Եվ դա միանգամայն համականալի է: Երկու սիստեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի միջև գոյությունը պահպանած հակառակությունները մնում են և այսօր: Դրամատուրգիան արտեզ կտեսնի շատ երկույթներ, որոնք կրում են այդ հույսությունները: Անշներով մեր կյանքի պատկերմանը՝ դրամատուրգները մտածում են այսպես. Գորկին, Սունդուկյանը, Պարոնյանը, Շիրվանզադեն, Շեքսպիրը, Իրանը գործ ունեին մեծ բախումների հետ, դրանից էլ նրանց դրամատուրգիսն աշխուժ էր և գործողությամբ հարուստ: Մեր երկրում դասակարգային հակամարտություններ չկան, անհատի շահերը ներդաշնակում են պետության և Հայարքներության շահերին, անհատի ողբերգություն չկա: Այս ամենը բոլորին հայտնի ճշմարտություն է: Բայց մեր մրու պարամատուրգներ մոռացության են մատնել լենինիզմի արև գրույթը, որ սոցիալիզմի կառուցումն ինքնին չի արգել, այլ ձեռք է բերվել ժողովրդի և մարդու հակարածավալ և լայնիած աշխատանքի ու պայքարի հիմքանքով: Երբ

պարտիայի կենտրոնական կոմիտեն գրականությունից, գրամատուրիչիայից և թատրոնից պահանջում է այնպիսի երթաւատրդություն զաւարակակել, որը արգելքներից չվախենա, պատրաստ լինի հաղթահարել ամեն առաջի արգելքներ — սա նշանակում է զաւարաբնակել երթաւատրդությունը պայքարի ուժով: Վերցնենք կապիտալիզմի մնացուկների վերացման խնդիրը: Որքա՞ն դրամատիկական նյութ է տալիս դա մեր հեղինակներին: Վերցնենք Օդնեի և Գոռովի միջև կատարվող բախումը, որը նորի զգացման և Հնին կառչած մնալու բախումն է: Մեր զբաժառութիւնի մեջ հերոսը նկարագրվում է որպես մի Ռուբինոն: Ռօբերից են վերցրել այդքան ուժ «Արծովիկի» Հրաչյան, «Վանքածորի» գնդապետ Դանիելը, Զոյան, «Վիեժի» Մուշեղը, «Այրող դիմակի» // Նաղենիկը: Դրամատուրգներն այս հարցի պատասխանն ունեն, բայց նրանց պիեսները պատասխան չունեն: Ո՞ւմ հետ է բախվել հերոսը, ի՞նչ է հաղթահարել նա իր ճանապարհին, ի՞նչ միջավայրում — այս հարցերը մնում են անլուծելի: Մենք չունենք սովետական մարդու լինելիության ընթացքն ընդունակության պարձակորեն պատկերող դրամատուրգիա և այդ այն պատճառով, որ դրամատուրգները որոշել են բախումներ չունենել: Դրամատուրգիան չվեաք է խուսափի ցուց տաշլուց հետամնաց տարրերի հաղթահարումը մեր տուաջտղեմ ուժերի կողմից, մարդու էվոլուցիան, որպես կենդանի բախումների մի պլոցին, թույլ մտքից և ոլորտնակ դղայմունքներից հղոր մտքերին: և ուժեղ զգացումներին հառնելը, հողերանության պահպանողական կողմերի հաղթահարումը, մարդու կոխվը բնություն հետ, ժարդու, մանկան, պատանու, երիտասարդի իրական դատավարեկությունը, հաղթական օրինաչափության հաստատումը մեր կյանքում: Բախումների ցուցադրման ուղին է ընտրել Բողիս Լավրենյովը «Ծովայինների կենացը» ստուդիայի մրցանակի արժանացած դրամայում, պատկերելով սովետական մարդուն, որպես սմբողջականության ձգտող մարդու:

Սյունիցի և դրա հետ կապված դրամատիկական երկի կոմողիցիայի հարցը այժմ հասունէ կարևորություն է ստանում: Մեղանում դեռևս սյունի ստեղծման մեծ փոքր չկա: Հին դրամատուրգիան մշակել է հայտնի սյունիներ, կայուն սյունիներ: Դրանցով բուրժուական կուլտուրան դրամատուրգիայի մեջ հավերժացնում էր տիրող հասարակության կեցության ձեռքը և դրությունները: Մենք ոչինչ քարացնել չենք կարող: Բայց իրականության խոր և բարձրակողմանի, ճանաչողությունը մեղ կստիպի որոնել և դըտնել նրա արտահայտության համարժեք ձեւը: Խնդիրն այն է, որ մեք բովանդակությանը տրվի նոր ձեւ: Դրամատուրգիայի ձեւի տարրերի ընդհանուրը թիվը մեծ է: Նրանց մեջ է մտնում և՛ լեզուն, որը միայն ձեւի վարակետության կարևորագույն մոմենտ է, այլ և կերպարի կերտման ամենանորը գործիք: Անհրաժեշտ է նկատել, որ մեր դրամատուրգիայի լիովին չեն գիտակցել դրամայի հեղինակային լեզվի սկզբունքային կարևորությունը — հեղինակային լեզու, որ պետք է ներդաշնակի աղջային լեզվի նորագույն ու ամենաբարձր աստիճանի լեզվաշինարարության շահարին: Երկրորդ՝ դրամատուրգիայի մեջ հաճախ է բացակայում պերսոնաժի լեզուն, որ պետք է նպաստի նրա տիպականացմանը: Պարտիայի կենտրոնական Կոմիտեն վճռականապատճեն է լեզվին չտիրապետելը, և պահանջում, որ թատրոնը և դրամատուրգիան լինեն կուլտուրայի բարձր ախարի օջախներ:

Մեր դրամատուրգիայի մեջ սյունին, որպես տեխնիկական սլրիոմների մի դումար, դեռ նոր է մշակվում, իսկ սյունին՝ որպես օրդանական կառուցվածք՝ այսինքն կյանքի տիպական երևույթներն արտահայտող մի միջոց, նույնիսկ դեռևս չի դիտակցված: Մենք պետք է ստեղծենք նոր դրամատուրգիայի նոր սյունիներ ու կոմպոզիցիա: Սա ևս նովատորության մի բնադրտիւ է: Անդրադառնալով

մեր օրինակներին, հիշատակենք «կալմիր մանյակի» ոյուժնեն: Հայտնի է, որ Նավասարդը սովետական 20 առարին տառապում է իր չգործած հանցանքի համար: Անինքը աղեց վերադառնալով սպանված Նազիկի որդի Զավենը՝ հանկարծ հիշում է, որ մոր սպանության ժամանակ կառուցից երեւացել են զույլ աչքեր: Եթե ոյուժն ըստ բնիքներ որպես մեր կյանքում առաջացած նոր հարաբերությունների արտահայտության միջոց, Նավասարդը չէր կաթաղ լուել, այն էլ 20 տարի: Սյուժեի աշխույժ ժամանակական գեղագում Զավենն իր դերը կկատարեր շատ տաքիներ առաջ և Նավասարդը կփրկվեր անտեղի տառապանքներից, ու պիեսի սուր ծալլը կուղղվեր մարդասպան և զառակարգացն թշնամի Խոջա Ներսոյի կողմը: Ճթի ոյուժն ըստ բնիքներ իրեն մեր կյանքի տիպական դրույթներն արտահայտալ միջոց՝ «Վանքաճորում» ցորենի դողությունը չէր զանա գրամայի ոյուժեի հիմնական գործողությունը: «Այսուկ դիմակ» պիեսի այուժեն, վորխանակ նպաստելու հերթունուն, ուղղված է նրա հոգեկան ուժերը բաշտայտելու հման: Մյուս կողմէց Հայտնի է գրամատուրք Մելիքի չարյանի փորձը, որն առողջ հասարակության փախարարքությունները սիրում է զբուորել կույրերի միջոցով: Սյուժեի կառուցման մի տարօրինակ եղանակ: Պատերազմին նվիրված պիեսներում չարաշահելու չափ կրկնվեցին ոյուժեալին այնպիսի գրություններ, ինչպես՝ անվերջ ծագումներ, փոխադարձ խարեւություններ, դավաճանություններ, հրդեհներ, կամուրջի պայթեցումներ, հարցադննության տեսարաններ և այլն: Սյուժետային այսպիսի հայրքներով անհնարին էր ճիշտ արտացոլել մեր կյանքի իտր բովանդակությունը:

ԳՐԱՄՄԱՏԵԿԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԻ ՀԱՐՑԸ

Սովետական զբամատուրքիալի մեջ նկատվեց անցյալի դրամատուրգիայի ժամանակը «նորմաները» մեխանիկություններ, հրդեհներ, կամուրջի պայթեցումներ, հարցադննության տեսարաններ և այլն: Սյուժետային այսպիսի հայրքներով անհնարին էր ճիշտ արտացոլել մեր կյանքի իտր բովանդակությունը:

բեն մեր պիհոները վտխազքնելու երկույթը։ Դրամատուրգիները միան մի պահ մոռացան, որ ժանրը նույնպես պատմական կամակարիք է, ունի իր ծնունդը, կյանքը և վախճանը, մեխանիկորեն չի կարող վերածնվել, եթե նրա սրահանջը չկա և եթե նա չի դանի արտահայտչական նոր եղանակներ՝ համապատասխան իր նոր բովանդակությանը։ Մեխանիկորեն ըմբռնելով կատակերգության ժանրը՝ մեկանում մկնվեց տարածվել թյուրիմացություններ հորինելու տեխնիկան և սովորական մարդիկ նետվում էին թյուրիմացությունների լարյուրինթոսը՝ խելակորույս լինելու առաջնորդություն։ Դա մի անընդունելի եղանակ է, որը ծուռ հայելու մեջ է ցույց տալիս մեր իրականությունը։ Կատակերգություն ստեղծելու այդ եղանակն ամենից ամելի տարածված է ամերիկյան արհեստական, անրովանդակ և դաշտարարագուրի, ինչպես նաև եվրոպական ժամանակակից կատակերգության մեջ, որոնց նմուշները հասան նաև մեր թատրոններին, օրինակ՝ «Ճաշի եկած Հյուրը» (Մուսականի թատրոնում)։ Մեղանում թյուրիմացություններով տարինցին, որպեսզի ինչ գնով էլ լինի հանդիսականից ծիծող կարգեն։ Այդ նպատակով գրվեց «Երեք ամուրիներ» դաշտարարագուրի կատակերգությունը (Ա. Տեր-Հովհաննյան)։ Թյուրիմացությունների կերպն օգտագործված է և «Մեծ Հարստնիք» կատակերգությունում, սակայն այդ ենթակամ պահպանված է չափի զգացումը հօգուտո բովանդակության։ Այսակազմ պերսոնաժները սոցիալական դրական դեր են կատարում։ Մեղանում օգտագործվեց և խոչքի կոմիզմը, սակայն օրինակ «Ճայ կինը» պիեսում հեղինակը դրան համուռմ է բառերի ազալվազումով, իսկ նույն հեղինակի «Վովածաղիկ» կատակերգության հերոսները՝ կոկոլ և աղք, վերին աստիճանի պրիմիստիկ լեզու ունեն։ Մեր համեդիկան կարող է և պետք է իդեական լինի։ Միջազգային թեմաներ՝ մշակելիս մեղանում զրվեցին «Ամենազազան» երգիծանքը (Ն. Զարյան), «Շախ և մաթ» կատակերգությունը (Ա. Փալանջյան), որոնք չնայած իրենց դրական

քննադրաւելի, կողմէրին, ունեն գաղափարսկան սրություն։
 Իմպերիալիզմի և Փաշլովի մնացորդների ոչնչացնող ծաղ-
 թը մեր կատակերգության նողատակներից մեկը պետք է
 լինի։ Մեր իրականությունից նյութ վերցնելիս, սովորա-
 կան կատակերգությունը պետք է օդնի մեկ վճռական ոլայ-
 քար մղելու մարդկանց զիտակցության և վարքադժի մեջ
 կատակերգությամբ մնացուկները վերցնելու համար։ Այս կա-
 պակցությամբ տեղին և խօսու իրավացի է հետեւյալ հար-
 ցադրումը, որ վերաբերում է «Կրոկոդիլին», բայց կարող
 է վերաբերվել և կատակերգության — «սատիրայի զենքը
 ամենասուր զենքն է։ Ծիծաղի զենքով «Կրոկոդիլ» կոչ-
 ված է հարվածել սոցիալիստական շինարարության թըշ-
 նամիներին, այսին մոլորդուները, որ խանդարում են սո-
 վետական հասարակության հետագա առաջընթացին զետքի
 կամունիզմը։ Սատիրայի զենքով ամսավիրը կոչված է մեր-
 կացնել հանրային սեփականությունը վատնողներին, դը-
 մովուներին և գողերին, սամողուրներին և զործամոլներին,
 ուսումնար բյուրոկատներին և մարտնչող ակտոներին։ Ծի-
 ծաղի զենքով շատ բան կարելի է անել, «բակեռի ավելի
 արագ հաղթահարվեն կատակուալիզմի մնացուկները՝ կաշա-
 ռակերությունը, պետական դույքը հափշտակելը, շահա-
 մոլությունը և էպոխմը, սնամարձությունը և հաճոյակա-
 տարությունը, սին փառասիրությունը և զգվելիությունը»
 («Կուլտուրա ի ժիղն» № 3, 1946)։ Ահա և երդիծական
 կառակերգության խնդիրը։

ՄԵՐ ՀՐԱ.ՑԱ.Պ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համկ(μ)Պ կենտկոմի որոշման մեջ առված է։ «Սովե-
 տական Գրուների Միության վարչությունը, որի ոլարտա-
 կանությունն է ուղղություն տալ դրամատուրգների ստեղ-
 ծագործությանը հօգուտ արվեստի և դրականության հե-
 տապահագաժան, շահերի, փառարեն հեռացել է դրա-
 պահագաժան, շահերի, փառարեն հեռացել է դրա-
 պահագաժան գործունեության զեկավարությունից, ոչինչ

չի անում արանց կողմէց ստեղծվող երկերի գաղափարաւ-
կան-զելաբրիեստական մակաբդակի բարձրացման համար,
չի պայքարում գրամատուրդիայում տեղ գտած զգիլիու-
թյան և խոտանի գեմ»:

Այս իրազոր թերաւթյունն ամբողջությամբ վերաբերում
է և՝ Հայրատանի Սովետական Գրողների Միության վար-
չությանը: Գրողների Միությունը ոչինչ չձեռնարկեց դրա-
մատարդիայի գարդացման համար: Գրողների Միությու-
նում բարորդին չեն զրադիել երիտասարդ դրամատուրդ-
ների գաստիաբակությամբ, նրանց դադափարական-ստեղ-
ծագործական օգնություն ցույց տալու հարցով, իսկ այդ
օգնության կարիքն զգում են այսօր և՛ Արագամանը, և՛
Պատպաշտանը, ևյուգիիկ Միքայելյանը, Շողերյանը, Բար-
սեղյանը: Գրողների Միության Վարչությունը բոլորովին
չի պայքարել գրամատուրդիայի մեջ երեան եկած ան-
կուլատրականության, գաղափարագրկության և խոտանի
զեմ: Այս անուարբերությունը դրամատուրգիայի վրա ան-
դրագարձավ քացասաբար, և մենք այսօր սովորված ենք
արձանագրել, որ դրամատուրգիան իբրև դրականություն
չի ըմբռնվել, իբրև դրական ամենաբարդ տեսակ չի հառ-
կացվել:

Այս գրությունն այլևս անհանգուրժելի է:

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն պահանջում է ամ-
բոցնել թատրոնների և դրամատուրգների ստեղծագործա-
կան կառը: Այս գործում մենք ունենք և լավ օրինակ: Առունելի անվան Պետական թատրոնն օգնեց դրամա-
տուրդ Լեռն Արդաթելյանին՝ բեմադրելու նրա «Կարմիր
ժամանակ» պիեսը: Լեռնականի Պետական թատրոնն օգնեց
Արագամանին, Միքայելյանին: Բնկ. Միկոյանի անվան
Պատանի Հանդիսատեսի թատրոնն օգնել է Բեմերյանին,
Յաղջյանին: Բայց մեզ հայտնի են և այնպիսի օրինակներ,
երբ Արվեստի Վարչությունում և թատրոններում ձգձգվել
է սովորական պիեսների քննարկումը: Ամիսներ շարունակ
չեն լուծվել օրինակ վ. Վաղարշյանի «Իմ հերոսները» նոր

պրամայի հարցը: Պատահել է, որ պիեսը թատրոն կամ Արվեստի Վարչությունն է մտել մեկ կոնցեպցիայով, ուրաք է եկել հակառակ կոնցեպցիայով: Թատրոնների ուղղեցաւարներում սովորական պիեսները քիչ տեղ են դուք, իսկ գտնելուց հետո պատշաճ վերաբերժունքի չեն արժանացել: Վաղարշյանի «Վանքածոր» դրամայի ննը կայացման մեջ թերին այն էր, որ հեղինակի բովանդակութիւնը կիալով խոր գրականություն չունեալ: Սատանիսավակուու անվան Պետական թատրոնում տեղ գտան ցածրուակ պիեսներ: Նա չկարողացավ «Ֆրոնտից», «Արշավանքից» ու Սիօնուիլի պիեսներից հետո պահել այս առողջ գիծը և իրադր ետևից բնականությունը և «Մակույկալար աղջիկը» և «Արտավարդ օրենքը» և այժմ Կատակեի «Հանդստյան օր» կատակերգությունը, իւ չխոսելով «Հյուրը ճաշին» և «Եյու-Յուքի ճանապարհին» բուրժուական բարյախտություն պարունակող պիեսների բեմադրության մասին: Այս գույներն առանձնապես խոտացան լենինականի թատրոնում, որտեղ «Ռուս սարդիկ», «Արքես էլ կլինի», «Կարմիր ճանյակ» պիեսները բեմադրել են միայն երկրորդ ուժիշտորները՝ տալով հազնեագ, հում հիմներկայացումներ:


Երջանային, թատրոններում դրությունն ավելի ճանր

է:

Այս ամենը լուրջ թերություններ են և խանգարում են թատրոնների ու դրամատուրդիայի առաջական գիմությանը: Դրանց արտադ վերացումն է պահանջում գիմիտիայի կենտրոնական կոմիտեն: Այս միջոցներից մենապարտիստ է ապահովել դրամատուրդիայի զարգացումը, համամիութենական և Հայաստանում հայտարարված մրցանկաբաշխություններն են՝ նվիրված Հոկտեմբերյան Առշխալիստական Մեծ ռևոլուցիայի 30-ամյակին: Այս մրցանակաբաշխություններին մասնակցելը մեր դրամատուրդների պատվի գործն է: Ամենաէկալուն ինդիրն է՝ ուսեղել Հաղափարապես բարձր, արվեստով անզիջում դրամատուրդիա և անթատիք ներկայացումներ: Նոր մարդ

դեռ պետք է լինի մեր զբաժանութեայի կենտրոնական
դեմքը։ Պարուիան, պետությունը և ժողովուրդը պահան-
ջում են ստեղծել մեր ժամանակի հարուստ բավանդակու-
թյամբ հաղեցած դեղարվեստական բարձրորակ գործեր։
Այսօր առանձին խմբացությունը է ստանում էնդեկսի սլովյանով ա-
պագա զբաժայի մասին՝ «Գաղափարական մեծ խորո-
թյան... պատմական զիւակցական բովանդակության լիո-
կուտար միաձուլումը շեքսպիրյան կենդանության և գոր-
ծողության հարստության հետ՝ հավանորին կիրագործվի
միայն ապագայում, և զուցե բոլորովին էլ ոչ գերմանացի-
ների ձեռքով։ Ճիշտ է, հենց այդ միաձուլման մեջ եմ ես
տառնում դրամայի ապագան»։ Այս ապագան մեր զբաժա-
ռութիւնի ձեռքին է։

1946, սեպտեմբեր,
Գրողների և Համակումար:



ՅՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից	3
Սայաթ-Նովա	
I. Սայաթ-Նովայի ստեղծագործությունը	5
II. Սայաթ-Նովան դրականագիտական մտքի պատմության մէջ	18
Ազնիակը հսահակյան	31
Կազարը Վաղարշյան	60
Շեքսպիրը և հայ սպիտակելան թատրոնը	80
Սովետական հայ գրամատուրգիան հայրենական պատերազմի եր- կու տարում	106
Սովետական հայ գրամատուրգիայի զարգուցման հարցերը	151

Պատ. խմբագիր՝ Ա. ԶԱՐՅԱՆ

Ահ 00997. Գ. 457. Տեքստ 3000. 11^{1/4} տպ. մամ. հեղ. 8,25մամ:

Ստորագրված է տպագրության 25/1-47 թ.

ՀԱՅԱ ՄԵՆԻԱՊԵՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻց ՊՈՂԻԳՐ. և ՀՐԱՄ. ՎԱՐՀ. № 1
տպարան, Երևան 1947.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031070

(In 204)

ԳԻՒԼ 12 Ա.

-9841

